

Ուղերձների տասնհինգերորդ շրջան (դեկտեմբեր, 2011 թ. – հունվար, 2012 թ.)

Սանատ Կումարա
27 դեկտեմբերի, 2011 թ.

Ձեր ժամանակներում բաց են բոլոր հնարավորությունները

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան:

Տարեկան շրջանի այս վերջին օրերից մեկում ես եկել եմ, որպեսզի տամ հետագա Ուղու անհրաժեշտ ըմբռնումը: Եկել եմ, որպեսզի ամրապնդեմ ձեր Ուղու ընթացքը և ձեր արտաքին գիտակցությանը հասցնեմ այն բացատրությունները, որոնք անհրաժեշտ են ձեր հետագա առաջընթացին:

Եվ այսպես, այսօր մենք կշարունակենք մեր գրույցը Ձեռնադրումների Ուղու վերաբերյալ՝ այն մասին, թե ձեր ժամանակներին համապատասխանող Ձեռնադրումների Ուղին որքանով է տարբերվում նախկին ժամանակներում մարդկանց հայտնի դարձած Ձեռնադրումների Ուղուց:

Ձեզ արդեն հայտնի է, որ նախկին ժամանակներում մարմնավորված մարդկության շատ փոքր տոկոսը պատկերացում ուներ Ձեռնադրումների Ուղու վերաբերյալ, և շատ քիչ մարդկանց էին մատչելի դառնում այն գիտելիքները, որոնք անհրաժեշտ էին այդ Ուղով ընթանալու համար:

Հիմա ժամանակը փոխվել է: Այժմ մարդկությունը կանգնած է իր զարգացման նոր փուլի շեմին: Եվ այդ նոր փուլին նախ և առաջ բնորոշ է առավել մեծ թափանցիկությունը, առավել մեծ ազատությունը: Եվ մենք գալիս և ազատ ու բաց այնպիսի գիտելիքներ ենք մատուցում ձեզ, որոնք դեռևս ոչ շատ վաղ անցյալում գաղտնիքի բողոքով ծածկված էին մարդկությունից:

Հասել է այն ժամանակը, երբ գործնականում բոլոր գիտելիքները թափանցիկ ու ազատ կերպով մատչելի են դառնում գրադարակների վրա և համացանցում:

Սակայն սկսվող դարաշրջանի յուրահատկությունն այն է, որ ճշմարիտ գիտելիքները մարդկանց առջև բացվում են ճիշտ այնպես, ինչպես այն գիտելիքներն ու տեղեկությունները, որոնք ճշմարիտ չեն, այլ հանդիսանում են մարմնական խելքի մտակառուցումների ու խորհրդածությունների արդյունք:

Աստծո Իմաստությունն ու մարմնական խելքի արգասիքները կողք կողքի հայտնվել են գրախանութների դարակների վրա, որտեղից էլ տեղափոխվում են ձեր տներում եղած գրադարակների վրա:

Որքանով է դա անվտանգ ձեր հոգիների զարգացման համար, և որքանով է դա արդարացված էվոլյուցիոն տեսակետից:

Եկեք դիմենք այսպիսի մի օրինակի:

Ծնողներն իրենց երեխաներին աշխատում են հետ պահել այնպիսի քայլերից, որոնք իրենց մեջ վտանգ են պարունակում: Երեխաներից հեռացվում են լուցկին, ծակող ու կտրող առարկաները, որպեսզի նրանք դրանցով իրենց չվնասեն: Եվ ահա գալիս է այն ժամանակը, երբ երեխաները հասունանում են և սկսում ճանաչել իրենց շրջապատի աշխարհը: Ծնողների համար արդեն դժվարանում է իրենց զավակներին հսկելը, քանի որ նրանք դուրս են եկնում փողոց, մտնում են դպրոց, համացանց: Թե ի՞նչ են նրանք տեսնում, ինչերի՞ հետ են բախվում, դուրս է մնում ծնողների ուշադրությունից:

Ահա և հիմա եկել է այնպիսի ժամանակ, երբ մարդկությունը վերջապես դուրս է գալիս իր երեխայական գիտակցության վիճակից և տեղափոխվում մեծերի աշխարհը:

Սակայն այդ աշխարհում ոչ ամեն ինչն է համապատասխանում աստվածային կերպերին: Եվ շատ բաներ ուղղակի հակադիր են Աստծո Աշխարհին:

Ինչպե՞ս զանազանել ու ճանաչել: Իմաստուն ծնողները չեն շտապում իրենց երեխաներին ծանոթացնել ժամանակակից տեխնոլոգիաների հրաշալիքների կամ ժամանակակից քաղաքակրթության նվաճումներին: Իմաստուն ծնողներն առաջին հերթին ձգտում են իրենց երեխաներին նախ պատկերացում տալ բարոյական օրենքների և ներքին կողմնորոշիչների վերաբերյալ: Իմաստուն ծնողները շտապում են իրենց երեխաներին օժտել սրտի իմաստությամբ: Եթե մարդ իր ներսում ճիշտ կողմնորոշիչներ ունի, ապա դրանք կամերտոնի ձայնի պես կառաջնորդեն նրան իր կյանքում: Եվ այն, ինչ համահունչ չի լինի իր սրտի կամերտոնի ձայնին, կանցնի նրա գիտակցության կողքով՝ առանց հոգում որևէ հետք թողնելու:

Բուդդան հանդարտ անցնում է կյանքով՝ բոլորից աննկատ, և կյանքի ոչ մի կեղտ չի կաշում նրա աուրայի ոսկե հանդերձին:

Այդպես էլ մենք ենք ձգտում ձեզ ճշմարիտ կողմնորոշիչներ տալ, որոնք ձեզ կյանքում առաջ կտանեն՝ ուղղություն ցույց տալով ու ձեզ պաշտպանելով: Երբ ձեր ներսում առկա է Աստծո Իրականության զգացողություն, ապա այն ամենը, ինչ ցածր է Աստծո Կատարելությունից, կանցնի ձեր գիտակցության կողքով՝ այնտեղ որևէ հետք չթողնելով: Եվ դուք կմղվեք դեպի ձեր Հաղթանակը, դեպի նյութականի կապանքներից Ազատությունը:

Իսկ այն մարդկային անհատները, որոնք իրենց ներսում չեն ունենա կամերտոնի պես հնչող՝ աստվածայինի զգացողություն, ստիպված կլինեն անցնելու իրենց կյանքի դասերը, որպեսզի ձեռք բերեն այն զանազանումն ու ըմբռնումը, որոնք անհրաժեշտ են հետագա Էվոյուցիայի համար: Եվ կյանքը հարուստ ու բազմազան նյութ է տալիս նման զարգացման համար:

Պատրանքի և նրա եզրաշերտերի նրբացումը ստիպում են ձեզ, որպեսզի կատարելագործեք ձեր զանազանման կարողությունը և այդ զանազանման ճանապարհին հասնեք նվաճումների:

Կան և այլ տեսակի մարդիկ, որոնք չեն ուզում իրենց ծանրաբեռնել որևէ լարվածությամբ և շրջապատի ողջ աշխարհը դիտում են որպես իրենց ցանկություններին ու պահանջմունքներին հագուրդ տալու աղբյուր:

Ինչ արած, այդ տեսակի մարդկանց էլ է հնարավորություն տրվում, որ բավարարություն տան իրենց ցանկություններին ու ձգտումներին: Այն հույսով, որ երբևէ հոգնելով խաղալիքների ու հաճույքների մրցավազքից՝ կանգ կառնեն և իրենց հայացքը կհառնեն անասն Իրականությանը:

Դեռևս որոշակի ժամանակ կա, որպեսզի ամեն մի մարդկային անհատ մոտենա այն եզրագծին, որից այն կողմ սկսվում է Աստծո իրական Աշխարհը: Յուրաքանչյուրին հնարավորություն է տրված:

Եվ ձեր ժամանակներում բոլոր հնարավորությունները բաց են:

Բոլոր գործընթացներն արագանում են: Այդ թվում՝ նաև ձեր նախընտրանքների գործընթացները:

Իսկ եթե համառեք և շարունակեք վազել պատրանքների հետևից, փոխափխելով ձեր խաղալիքները, այն դեպքում, երբ արդեն անհրաժեշտ է, որ զբաղվեք մեծական գործերով, ապա ձեզ ցույց կտրվեն ձեր սխալներն ու վրիպումները: Սկզբում՝ մեղմորեն, այնուհետև ավելի ու ավելի ակնառու և համոզիչ: Յուրաքանչյուրին հնարավորություն է տրվում: Յուրաքանչյուրին ցույց է տրվում Ուղին:

Եվ եթե դուք խրված չլինեիք պատրանքային գործընթացների մեջ և ձեր կյանքը դիտեիք մի փոքր ավելի բարձր տեսանկյունից, ապա կկարողանայիք հասկանալ ու զգալ, թե որքա՛ն խնամք է տածվում ձեր հոգիների նկատմամբ:

Սակայն կա ազատ կամքի օրենք, որն անխափան կերպով գործում է համայն տիեզերքում և նաև ձեր մոլորակի վրա: Ոչ մի Համբարձյալ Վեհապետ չի կարողանա ձեզ օգնել, եթե դուք, տասնյակ ու հարյուրավոր հազարամյակների ընթանցքում անցնելով մի մարմնավորումից մյուսին, ձեր ազատ կամքով մշտապես ընտրեք անցողիկ աշխարհը:

Այդպիսի անհատների համար վաղ թե ուշ կլրանա երկրային իրականությունում փորձարարություն անելու ժամկետը: Եվ երկտարեցիների նման նրանք ստիպված կլինեն իրենց ուսումը շարունակել արդեն ուրիշ իրականության մեջ: Նրանց կրկին հնարավորություն կտրվի միլիոնավոր ու միլիարդավոր տարիներով անցնել Էվոյուցիայի ճանապարհով:

Իսկ ձեզ համար, որ առաջնորդվում եք մեր պատվիրաններով, պատրանքի մեջ մնալու օրերը կկարճացվեն: Ձեզ համար չտեսնված հնարավորություններ կբացվեն ձեր հոգու աճի և հետագա Էվոյուցիայի այն ուղով ընթանալու համար, որը մատնանշում են Համբարձյալ Վեհապետները՝ Իմաստության Տիրակալները:

Ուղու սայթաքուն հատվածներում մենք մշտապես ձեր կողքին ենք: Բավական է միայն ուզենաք, և անմիջական հաղորդակցության մեջ կմտնեք մեզ հետ:

Հարկավոր է միայն, որ հմտություն ձեռք բերեք և շրջապատող պատրանքից դուրս գաք դեպի Աստծո Իրականություն: Եվ դրա համար ուրիշ ոչինչ պետք չէ, բացի ձեր ներքին ջանքերից:

Ինչպես մարզիկներն են մարզում իրենց մկանները, որպեսզի կարողանան հաղթել մրցումներում, այնպես էլ դու՛ք պետք մարզեք ձեր հոգու «մկանները», որպեսզի հաղթանակի հասնեք Ձեռնադրումների Ուղու վրա:

Ձեր նկրտումն ու ձեր ամենօրյա հոգևոր գործառնությունները մեր օգնությամբ անդառնալիորեն ձեզ կբարձրացնեն հաջորդ Էվոյուցիոն աստիճանի վրա:

Ես ուրախ եղա այսօր ձեզ մեկնելու իմ օգնության ձեռքը և մեկ անգամ ևս ճիշտ ուղղություն տալու ձեր նկրտումներին:

ԵՍ ԵՄ Մանաստ Կոմսարան: ՕՄ

Ընդունեք նոր էներգիաները, նորացման էներգիաները, և հետևեցեք մեզ

ԵՍ ԵՍ Աթենաս Պալլասը՝ եկել եմ, որպեսզի տամ իմ Ուղերձը: Ես հազվադեպ եմ գալիս, սակայն այսօր հասել է ձեզ դիմելու իմ հերթը, ձեզ, որ լսում և ընկալում եք իմ խոսքերը:

Շատ հարյուրամյակներ և նույնիսկ հազարամյակներ առաջ ինձ գիտեին և երկրպագում էին Երկիր մոլորակի վրա: Հիմա միայն քչերը գիտեն իմ անունը: Այնուհանդերձ շատերի համար իմ խոսքերը նշանակալից կլինեն: Քանզի հասել է դրա ժամանակը: Հասել է Ճշմարտությունը ճանաչելու ժամանակը, և ձեր գիտակցության մեջ այդ Ճշմարտության բեկումը Երկրի մարդկությանը կմոտեցնի այն կարևոր փուլին, որի շեմին հիմա նա գտնվում է:

Ձեզ համար դժվար է պատկերացնել այն հնարավորությունը, որը հիմա բացվում է մարդկության առջև: Սակայն կանցնի պատմական ժամանակի ոչ մեծ մի հատված, և ամեն ինչ կփոխվի: Ամեն ինչ արդեն իսկ փոխվում է: Ձեր գիտակցության փոխվելու պատճառը տիեզերական ժամկետներն են: Եվ այդ ժամկետները կրերեն նոր էներգետիկական մակարդակի անցման:

Երբ հարթավայրերում բնակվողները հայտնվում են լեռներում, անհարմարություն ու տկարություն են զգում: Նմանապես դուք էլ հիմա ձեր տեղը չեք կարողանում գտնել: Բանն այն է, որ ժամանակը փոխվել է, և փոխվել են մոլորակի թրթիռները: Դա նման է այն բանին, որ հայտնվեիք տարածության մի այլ՝ ավելի բարձր վայրում: Թեև, ինչպես ձեզ է թվում, ձեր շուրջը նույն իրականությունն է, բայց իրականում ամեն ինչ փոխվել է և շարունակում է փոխվել: Ուստի և ձեր գիտակցության մեջ տեղի են ունենում վիթխարի փոփոխություններ: Ամեն մի հաջորդ քայլը կատարվում է մեծագույն դժվարությամբ, քանզի տարածությունը փոփոխություն է կրել:

Երբ մոտենում եք խնձորենուն և սկսում թափահարել այն, ապա ճյուղերից թափվում են ոչ միայն հասած պտուղները, այլ նաև որդնած, սմբած և խակ պտուղներ: Նույն բանն այժմ տեղի է ունենում մարդկության հետ: Թրթիռները բարձրացել են, և դա թափահարելու պես ձեզ ստիպում է լքել ձեր սիրած նստատեղերը և տեղաշարժվել:

Հասարակության կյանքի բոլոր ոլորտներում փոփոխություններ են տեղի ունենում: Ոչ այն պատճառով, որ ինչ որ մեկը հրաման է տվել, այլ որովհետև եկել է դրա ժամանակը, և այլ կերպ չի կարող լինել: Ամեն մի փոփոխություն կհամապատասխանեցվի էվոլյուցիոն հաջորդ փուլի համար Արարչի կողմից նախանշված մտահղացմանը: Եվ եթե նույնիսկ ձեր ողջ էությանը դիմադրեք ու համառեք ձեր հին մոտեցումներով, վարվելակերպի հին կարծրատիպերով և հին սովորություններով, ապա, միևնույնն է. վաղ թե ուշ ստիպված կլինեք նահանջել Արարչի Մտահղացման առաջ:

Եվ ահա դուք ձեր շուրջը հենց այդ գործընթացն եք տեսնում: Թրթռանքների բարձրացմանը հետևել է ձեր ներքին խնդիրների սրացումը, որին հաջորդել է այն հասարակության խնդիրների սրացումը, որում ապրում եք, և ապա սրվել են նաև ամբողջ մարդկային հասարակության խնդիրները: Եվ սա վերաբերում է մարդկային կյանքի բոլոր ոլորտներին:

Սկսվել է նոր փուլ: Եվ որքան հասարակական գիտակցությունն ավելի արագ ընկալի ու հարմարվի նոր պայմաններին, այնքան ավելի քիչ քանակ կկազմեն կորուստները, այնքան ավելի քիչ կբախվեք մոտակա ժամանակներում սոցիալական պայթյունների ու արհավիրքների հետ: Բանալին, որը կօգնի ճիշտ գործել նոր պայմաններում, ձեր ըմբռնումը կլինի, որ վրա հասած փուլը ենթադրում է անցում մարդկանց միջև առավել աստվածային փոխհարաբերությունների: Դուք անհրաժեշտություն կզգաք վերածնելու բարոյականությունը հասարակության մեջ: Դուք կզգաք, թե որքան հրաշալի բաներ են բարեկամության, համագործակցության փոխօգնության և փոխադարձ սիրո վրա հիմնված փոխհարաբերությունները:

Այն ամենը, ինչ հիմա գտնվում է ձեր հետաքրքրությունների շրջանակից դուրս, նորից կյանք կմտնի: Եվ դրանք այն ցուցադրական դրական հատկանիշները չեն լինի, որոնք երբեմն ցուցադրում եք ձեր փոխադարձ հաղորդակցության ժամանակ: Դրանք կլինեն ճշմարիտ աստվածային հատկանիշներ, որոնք, ձեր սրտերից բխելով, աստիճանաբար կընդգրկեն ողջ աշխարհը:

Մարդկությունը կվերադառնա անանց արժեքներին: Այն ամբողջ հինը, որ բաժանման է տանում, այն, ինչ հիմնված է վախի և Աստծուց հեռանալու վրա, աստիճանաբար կփոխարինվի նոր հատկանիշներով, աստվածային, հավերժական հատկանիշներով:

Մարդիկ հոգնել են կեղծավորությունից ու կոպտությունից: Սկսվող դարաշրջանը կվերածնի գեղեցիկ արվեստները: Նոր սերունդը կձգտի աստվածային կերպեր դրսևորել ֆիզիկական

ոլորտում: Եվ որքան էլ հինը դիմադրի, նրա ժամանակն արդեն անցած է: Նոր գիտակցության, նոր հարաբերությունների, նոր աշխարհի ժամանակն է գալիս...

Եվ հիմա ամենադժվարին փուլն է, նոր գիտակցության ու նոր մտածողության անցնելու փուլը: Հենց դրանով էլ ձեր ժամանակն առանձնահատուկ է և հետաքրքիր:

Ես դիմում եմ այն մարդկանց հոգիներին, որոնք հիշում են ինձ: Մի ժամանակ դուք գալիս էիք ինձ նվիրված տաճարները, և ես հնարավորություն էի ունենում անմիջականորեն շփվելու ձեր հոգիների հետ: Այժմ դուք պետք է հիշեք ձեր առաքելությունը: Ձեր սրտերն իրենց մեջ կրում են այն ճշմարտությունը, որը պետք է իր դրսևորումը գտնի ֆիզիկական ոլորտում: Դուք հենց այն մարդիկ եք, որոնց գործելու ժամանակը հասել է:

Ձեր շրջապատի փոփոխությունները հնազանդորեն կհամապատասխանեն այն փոփոխություններին, որոնք տեղի կունենան ձեր սրտերում: Յուրաքանչյուր մարդ էներգիայի զենեքատոր է: Եվ միայն ձեզնից է կախված, թե ինչ տեսակի էներգիաներ կառաքեք աշխարհ:

Երբ ձեր թրթիռները համահունչ են կատարվող փոփոխություններին, դուք զգում եք հոգու վերելք, ուրախություն, սեր: Դուք երջանիկ ու նպատակասլաց եք դառնում:

Իսկ երբ ձեր թրթիռները հակադրվում են նոր էներգիաներին, դուք զգում եք անբավարարվածություն, վախ, ագրեսիվություն: Ձեր այդ վիճակը փոխելու բանալին կլինի այն, որ կամենաք հետևել Արարչի մտահղացմանը: Հավատացե՛ք ինձ, չարժե՛ դիմադրել: Ընդունե՛ք նոր էներգիաները, նորացման էներգիաները և հետևեցե՛ք մեզ:

Դուք պետք ընդունեք նորը: Պետք է հետևեք ձեր մտքերի ամեն մի խաղին և ձեզնից հեռացնեք այն ամենը, ինչը վերելքի ճանապարհով ձեզ չի տանում դեպի ճշմարտություն:

ԵՍ ԵՄ Աթենաս Պալլասը, այսօր եղա ձեզ հետ

Գուան Ին

29 դեկտեմբերի, 2011 թ.

Ձեր աշխարհի բոլոր փոփոխությունները կբխեն ձեր ներսից

ԵՍ ԵՄ Գուան Ինը: Ես եկա: Այսօր նույնպես մենք կխոսենք հավերժական թեմաներից: Կխոսենք անանցի մասին: Քանզի ձեր աշխարհում շատ են ունայն բաները, սակայն խիստ հազվադեպ են հավերժին պատկանողները:

Եվ ամենակարևոր բանը, որ պակասում է ձեր կյանքերում, Աստծո Հավերժական Օրենքն է, որը գործում և թափանցում է համայն տիեզերքով մեկ: Երբ կարողանում եք ձեր գիտակցությունը վեր հանել մինչև աստվածային մակարդակներ, ապա կտրվում եք պատրանքից և ունակ եք դառնում ընկալելու այն, ինչն անանց է:

Ձեզնից յուրաքանչյուրի ներսում նույնպես կան Հավերժին պատկանող հատկանիշներ: Եվ այդ աստվածային հատկանիշները հարկ է, որ փնտրեք ձեր սրտերի խորքում, որպեսզի դուրս հանեք դրանք և տարածեք ձեր շրջապատի աշխարհում:

Ձեր շրջապատում դուք փոփոխությունների եք սպասում: Դուք կանխազգում եք վերահաս փոփոխություններ և սպասում դրանց: Այժմ հասել է ժամանակը հասկանալու, որ բոլոր փոփոխությունները, որոնց սպասում եք, պետք է ձեր աշխարհ մուտք գործեն հենց ձեր ներսից: Իսկ դրա համար ձեր գիտակցությամբ դուք պետք է մոտենաք Աստծո Իրականությանը: Այնժամ, երբ կկարողանաք խորանալ ձեր ներսում՝ մտնել ձեր սրտի գաղտնի մենաստանը, դրանով իսկ կմոտեցնեք ձեր աշխարհի փոփոխությունները:

Եվ դա է այն Ուղին, որի մասին մենք անխոնջ կրկնում ենք: Մի Ուղի, որը գտնվում է ձեր ներսում:

Հավատացե՛ք ինձ, ձեզնից դուրս չեն տեղի ունենա այն փոփոխությունները, որոնք կմոտեցնեն մարդկության Ոսկեդարը: Այդ փոփոխությունները տեղի կունենան ձեր էության ներսում:

Այն ամենը, ինչ այժմ գոյություն ունի արտաքին աշխարհում, ձեզ շեղում է ձեր սրտերի մեջ առկա ճշմարտությունից: Առանձնացե՛ք ձեր սրտի լռության մեջ, զգացե՛ք հավերժի անդորրությունն ու երանությունը: Ահա հենց այդ կետից դուք կկարողանաք ճիշտ հայացքով նայել ձեր շուրջը եղած արտաքին աշխարհին:

Քանի որ ձեզ այցի եմ եկել տարեկան շրջանի ավարտին, ապա իմ պարտքն եմ համարում նաև ձեզ պատկերացում տալ գալիք փոփոխությունների մասին: Դուք տեսնում եք, որ նորացման էներգիաներն ավելի ու ավելի գործուն կերպով են ներթափանցում ձեր աշխարհ, ձեր գիտակցության մեջ: Եվ հարցը միայն այն է, թե որքանով կկարողանաք հաղթահարել ձեր արտաքին գիտակցությունը և նախապատվություն տալ ներքին փոփոխություններին: Առայժմ իմ

խոսքերը ձեզնից շատերի համար առնվազն տարօրինակ են թվում: Քանի որ ես խոսում եմ այնպիսի փոփոխությունների մասին, որոնք սովորական մարդկային հայացքի համար տեսանելի չեն: Ես խոսում եմ ձեր էության մեջ տեղի ունեցող նուրբ գործընթացների մասին: Իսկ այդ նուրբ գործընթացները ձեր աշխարհի վրա ավելի մեծ ազդեցություն են թողնում, քան ցանկացած արտաքին գործողություններ: Արտաքին աշխարհի բոլոր դրսևորումները՝ արհավիրքները, տարերային աղետները, ցույցերն ու հեղափոխությունները, պատերազմներն ու ահաբեկչական գործողությունները, երկրորդական բաներ են: Եվ այդ ամենից հնարավոր է հեշտությամբ խուսափել, եթե միայն չալարեք ուշադրությամբ կարդալ մեր Ուղերձներն ու առաջնորդվել մեր տված խորհուրդներով:

Ձեր հոգու ամեն մի նուրբ տեղաշարժն անխուսափելի փոփոխություններ է առաջացնում ֆիզիկական աշխարհում: Եվ եթե ապրում եք երջանկության, սիրո կամ խաղաղվածության զգացում, ապա դրանով իսկ ազդում եք ձեր շրջապատի հսկայական տարածքների վրա, երբեմն էլ նույնիսկ ամբողջ մոլորակի վրա: Որքան ավելի նուրբ, աստվածային զգացմունքներ եք դուք ունենում, այնքան ավելի մեծ ազդեցություն եք թողնում շրջապատի ֆիզիկական աշխարհի վրա: Դրանով է բացատրվում այն, որ ընդամենը մի քանի սրբեր ունակ են լինում համակշռելու ամբողջ մոլորակի իրադրությունը:

Բացասական հույզերն ու մտքերը նույնպես ազդում են ֆիզիկական աշխարհի վրա: Բարեբախտաբար, ցածր թրթռանքի պատճառով այդ էներգիաներն էական ազդեցություն չեն թողնում, քանի որ տարածվում են ոչ մեծ հեռավորությամբ: Եվ եթե գիտակցության այդ բացասական վիճակները չտիրեին մարմնավորման մեջ գտնվող անհատների մեծամասնության մտքերին ու զգացմունքներին, ապա դրանց ազդեցությունը լրիվ կարելի կլիներ անտեսել: Բայց հարցն այն է, որ, այսպես կոչված, զանգվածային գիտակցությունը գերակայություն ունի ձեր աշխարհում: Եվ մարդկության զարգացման այս փուլում այդ զանգվածային գիտակցությունն արդեն վտանգավոր է դառնում աշխարհի հետագա ճակատագրի համար: Ուստի ձեզ խորհուրդներ են տրվում, թե ինչպես ձերբազատվեք զանգվածային գիտակցության ազդեցությունից:

Միայն հավերժության վրա մտասնեղվելու և նախապատվություն տալով, որը բացվում է ձեր սրտերում՝ հնարավոր կլինի ազատվել այն բացասական էներգիաներից, որոնք չափազանց շատ են տարածված ձեր հասարակության մեջ:

Բարեփոխություններն անխուսափելի են, քանի որ դրանք պայմանավորված են ամբողջ մոլորակի թրթռանքների բարձրացմամբ: Մարդկությունը որքան ավելի շատ կառչած մնա նախկին կենսակերպերից և վարվելակերպերից վրա հենվելով զանգվածային գիտակցության և տեղեկատվական զանգվածային միջոցների մեծ մասի բացասական ազդեցության վրա՝ ներառյալ նաև համացանցը, այնքան ավելի խիստ փորձությունների կենթարկվի մոտակա ժամանակներում: Եվ հակառակը, եթե մարդկանց գիտակցության մեջ տեղի ունենան որակական փոփոխություններ, ցատկ կատարվի դեպի աստվածային գիտակցության կողմը, ապա փոփոխությունները կընթանան սահուն կերպով:

Մնում է միայն սպասել ու տեսնել, թե ինչ ուղի կընտրի մարդկությունն այս անգամ: Նախկին դարաշրջանների ընթացքում մարդկությանը վիճակված ամենախիստ փորձություններից առաջ ես բազմիցս մարմնավորվել եմ Երկրի վրա: Ոչ միայն ես, այլ նաև Լուսի Էակներից շատերը: Այժմ ես գալիս եմ միջնորդավորված ձևով՝ օգտվելով դեսպանորդի մարմնական տաճարից: Սակայն դրանից իմ խորհուրդների ու պատվիրանների արժեքավորությունը չի պակասում:

Մոտակա ժամանակներում բոլորիդ կվիճակվի վերջնական ընտրություն կատարել, թե ո՞ր ուղով եք ընթանալու՝ Աստվածայի՞ն Ուղով, թե՞ շարունակելու եք ձեր իսկ կամքով կառչած մնալ այն ճանապարհից, որը ոչ մի տեղ չի տանում:

Այսքանն ավելի պարզ ու հստակ երբևէ չէր ասվել. ահա եկա և հերթական անգամ նախազգուշացրի ձեզ:

Արդյո՞ք սա վերջինը կլինի...

*ԵՍ ԵՄ Գուան Ինը՝
ձեր հոգիների նկատմամբ խորին կարեկցանքով ու գթասրտությամբ համակված*

Վեհապետ Սեն Ժերմեն
30 դեկտեմբերի, 2011 թ.

Ավելի համարձակ մուտք գործեք Նոր Դարաշրջան, Ջրիոսի դարաշրջան

ԵՍ ԵՄ Սեն Ժերմենը՝ կրկին ձեզ այցի եկածը, տիկնայք և պարոնայք...

Ես եկել եմ Նոր տարվա նախօրյակին, որպեսզի տեղյակ պահեմ ձեզ, որ մտադիր եմ եկող տարում ավելի ակտիվ կերպով վերահսկել մոլորակի իրավիճակը:

Եկել եմ ձեզ հիշեցնելու, որ հատկապես ե՛ս եմ սկսվող դարաշրջանի Հիերարխը: Ուստի հատկապես ե՛ս եմ այսօր եկել, որպեսզի ձեզ ասեմ, որ նոր էներգիաները, սկսված Ջրիոսի դարաշրջանի էներգիաները, վերջապես լիովին ու ամբողջովին մտել են իրենց իրավունքների մեջ:

Վերջապես մարդկությունն ամբողջովին սուզվեց նոր էներգիաների մեջ...

Ձեզ համար այս ամենը նոր ու անսովոր է երևում: Դուք կգարմանաք, վիատության մեջ կընկնեք: Քանզի ամեն ինչ կսկսի փոխվել: Ես եկել եմ ձեզ տեղյակ պահելու, որ այս պահին հրատապ անհրաժեշտություն է դարձել վերահաս փոփոխություններին պատրաստ լինելը:

Նրանք, ովքեր կկարողանան իրենց գիտակցությունը պահել Ուրախության, Սիրո, ներդաշնակության ու երջանկության թրթիռներով, լրիվ չափով երանություն կզգան սկսվող փոփոխություններից: Իսկ նրանք, ովքեր հին ձևով պարուրված են անբարյացակամությամբ, կասկածանքով ու վախով, մոտակա ժամանակներում կկարողանան հեշտությամբ ձերբագատվել անցյալ դարաշրջանի այդ էներգիաներից:

Ես եկել եմ ազդարարելու Նոր Դարաշրջանի, Ջրիոսի Դարաշրջանի սկիզբը: Եվ որպես սկսվող դարաշրջանի Հիերարխ՝ ես ձեզ համար անակնկալ եմ պատրաստել... Այդ անակնկալը բոլոր նրանց համար է, ովքեր կհավեն իմ այս ամանորյա ուղերձի էներգիաներին: Ձեզ համար սկսվում է այն ժամանակաշրջանը, երբ ձեր մտքում կամ բարձրաձայն արտահայտված մեն մի ցանկությունը, որ ձերբագատվեք հին էներգիաներից, բավարար կլինի, որպեսզի ձեր գիտակցությամբ անցում կատարեք թրթիռների նոր մակարդակի:

Հատկապես հիմա է բաց այդ հնարավորությունը: Հատկապես հիմա է վրա հասել այն ժամանակը, երբ կկարողանաք փոխել ձեր գիտակցությունն ու կյանքի նկատմամբ ձեր մոտեցումները: Ձեզնից պահանջվում է միայն, որ ձեր մտքում կամ բարձրաձայն արտաբերեք ձեր ցանկությունը:

Բոլոր Համբարձյալ Դասերը պատրաստ են ձեզ օգնություն ցուցաբերելու: Նաև ես՝ որպես մի Վեհապետ, որը պատասխանատու է Նոր Դարաշրջանի հաջող սկզբի համար, մի Վեհապետ, որն իր վրա է ընդունում անցյալի էստաֆետը, որպեսզի մղվի դեպի ապագան, հանձն եմ առնում ձեր հոգիների նկատմամբ խնամք տաձել: Ուստի հենց հիմա, առանց հապաղելու, դիմե՛ք ինձ: Օգնություն ցույց կտրվի բոլորին, ովքեր հստակորեն կարտահայտեն անցյալից ազատվելու և նոր էներգիաներ, նորացման, նպատակնդվածության և ուրախության էներգիաներ ձեռք բերելու իրենց ցանկությունը:

Նոր Դարաշրջանին բնորոշ կլինի այն, որ ձեզնից յուրաքանչյուրը, ով ցանկություն ունի, հնարավորություն կստանա անցավ ու համարյա ակնթարթորեն իր թրթիռները բարձրացնելու այն մակարդակի վրա, որն անհրաժեշտ է ունենալ Նոր Աշխարհում որակյալ գոյատևման համար:

Ձեզ հնարավորություն է տրվում հրաժեշտ տալու անցյալին. հենց հիմա կա՛ այդ հնարավորությունը...

Իսկ այժմ, երբ արդեն ձեզ հաղորդեցի նոր թողության շնորհի ուրախ լուրը, պատրաստ եմ ևս որոշ ուրախալի խոսքեր ասել ձեզ, որոնք վերաբերում են մեր ապագա համագործակցությանը:

Մի՛ կարծեք, թե Համբարձյալ Դասերն ինչ-որ հեռավոր վայրում են գտնվում և չեն կարող լսել ձեզ: Ես լսում եմ ինձ ուղղված ձեր ամեն մի կանչը: Ուստի այնժամ, երբ ձեր գիտակցությունը կհայտնվի որևէ բացասական կամ ցածրակարգ վիճակում, խնդրում եմ, հիշե՛ք իմ գոյության մասին և բոցավառ կանչ-խնդրանքով դիմե՛ք ինձ, որպեսզի ձեզ ազատեմ այդ բացասական վիճակից: Այդպես մենք աստիճանաբար կկարողանանք մեկը մյուսի հետևից հաղթահարել ձեր գիտակցության բոլոր ցածրակարգ վիճակները:

Ես ձեզ համար մի մեծ գաղտնիք կբացեմ: Թեև այդ գաղտնիքն արդեն առանց ինձ էլ հայտնի ձեզ. խոսքս այն մասին է, որ ինքներդ՝ ձեզնից յուրաքանչյուրը, ինքն է իր ներսում որոշում՝ ընկնե՞լ գիտակցության բացասական վիճակի ազդեցության տակ, թե՞ ոչ: Գալիս է պահը, երբ դուք ձեր ներսում որոշում եք՝ ենթարկվե՞լ վատ տրամադրությանը, թե՞ ոչ. պախարակե՞լ այս կամ այն մարդուն, թե՞ ոչ. նեղանա՞լ, թե՞ ոչ. թախծե՞լ, թե՞ ոչ:

Դուք և միայն դուք եք որոշում կայացնում: Եվ երբ որոշում եք ենթարկվել հին էներգիաների ազդեցությանը, ապա գլխովին թաղվում եք դրանց մեջ, և նման դեպքում նույնիսկ ե՛ս չեմ կարող

ձեզ օգնել: Ուստի հենց որ բացասական էներգիան վրա է հասնում, անմիջապես օգնության խնդրանքով դիմեք ինձ: Ես կօգնեմ, որ վեր հանեք ձեր գիտակցությունը: Ես կառաքեմ ձեզ իմ ժպիտը և կմեկնեմ իմ օգնության ձեռքը: Ձեր կյանքի ամենադժվար պահին: Ահա այդպես մենք կհաղթահարենք հին էներգիաները: Եվ քանի որ բնությունը դատարկություն չի սիրում, ապա անմիջապես ձեր գիտակցության ամեն մի բացասական վիճակի փոխարեն կանչ հղեք դրա հակառակ՝ գիտակցության դրական վիճակի համար:

Վախը ձեր աշխարհի ամենամեծ չարիքն է: Կատարյալ Սիրով կարելի է փոխարինել ցանկացած վախ: Ընդհանուր առմամբ, ամեն մի բացասական հատկանիշ կարելի է լուծել այդ համապիտանի լուծիչով: Գործնականում ձեր շրջապատի բոլոր բացասական էներգիաները կարելի է կլանել ու չեզոքացնել Սիրո էներգիայով:

Ուրախությունն ու Սերը ձեզ այցելում են այնժամ, երբ ամուր է ձեր հավատը. երբ ձեր գիտակցությամբ դուք հենվում եք Աստծո և Համբարձյալ Դասերի վրա:

Ըստ այդմ, ես ձեզ հիշեցնում եմ այն մասին, որ ձեզ անհրաժեշտ է մշտապես օգնության համար դիմել ինձ: Քանզի այժմ հենց ես եմ այն էակը, որի վրա դրված է մարդկության գիտակցության նոր որակական մակարդակի վրա անցնելու պատասխանատվությունը:

Ես և դուք՝ մենք միասին, ունակ ենք ի կատար ածելու այն հրաշքը, որն անխուսափելիորեն պետք է տեղի ունենա: Եվ ես հիմա ևս մի գաղտնիք կբացեմ: Այս նոր գաղտնիքը վերաբերում է այն նոր թողության շնորհին, որը վերջերս շնորհվեց Երկիր մոլորակին:

Քիչ առաջ՝ Կարմայական Վարչության նիստի ժամանակ, որոշում կայացվեց Երկիր մոլորակին լրացուցիչ էներգիա հատկացնելու մասին: Դա Աստծո էներգիայի նոր չափաբաժին կլինի: Նոր տարում և հետագա տարիներին այն ամենը, ինչ կթրթռա Ուրախության, Սիրո և աստվածային Ազատության հաճախություններով, օժանդակություն կստանա Երկնոլորտների կողմից: Իսկ այն ամենը, ինչը կհրաժարվի իր մեջ ներառել նոր էներգիաները, աստիճանաբար կգրկվի աշխարհում ունեցած իր արտոնյալ վիճակից: Հին հաստատությունները, հասարակության այն հաստատությունները, որոնք հենվում էին հին էներգիաների և անցնող դարաշրջանի թրթիռների վրա, աստիճանաբար կփոխարինվեն նոր հաստատություններով:

Ես օժանդակում եմ նրանց, ովքեր չեն երկյուղում բարեփոխումներից, ովքեր պատրաստ են պաշտպանելու աստվածային Ազատության սկզբունքները, համայնքային կյանքը: Ես օժանդակում եմ բոլոր նրանց, ովքեր պատրաստ են համագործակցության՝ հիմնված ոչ թե անձնական շահի, այլ Ընդհանուր Բարօրության ու Բարու սկզբունքների վրա:

Նոր սկզբունքներ են մուտք գործում աշխարհ: Դրանց էջքի համար պահանջվում են պատրաստակամ սրտեր, այնպիսի սրտեր, որոնք աներկյուղ կերպով նվիրվել են Էվոյուցիային: Ես մեծ հույս ունեմ, որ այս ուղերձը կարդացողների մեջ կգտնվեն մի քանի հարյուր մարդիկ, որոնց միջոցով անձամբ ես կկարողանամ գործել և իմ էներգիաները փոխանցել ձեր աշխարհին...

Ես պատրաստ եմ աշխատելու և համագործակցելու Երկիր մոլորակի կենսահոսքերի հետ:

Իսկ դուք պատրաստ եք արդյոք: Ես լիահույս եմ, որ եթե նույնիսկ այսօր պատրաստ չեք, ապա վաղը կկարողանաք հաղթահարել անցյալի էներգիաների մնացորդները և խիզախորեն հայտնել Երկնքին Լույսի Ուժերի Հիերարխիայի աշխատակիցը դառնալու, Համբարձյալ Դասերի, Իմաստության Տիրակալների համագործակիցը դառնալու մասին:

Ես հրաժեշտ եմ տալիս ձեզ: Սակայն խնդրում եմ չմոռանալ իմ այս ուղերձը և ամեն անգամ կարդալ այն, երբ անցյալի էներգիաները կփորձեն մուտք գործել ձեր գիտակցության մեջ:

Պահպանե՛ք ձեզ և խոսափե՛ք անցյալի ամեն տեսակի բացասական էներգիաներից:

Ավելի համարձակ մուտք գործեք Նոր Դարաշրջան, Ջրհոսի Դարաշրջան...

ԵՍ ԵՄ Սեն Ժերմենը

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ

31 դեկտեմբերի, 2011 թ.

Միստիկական պահ

ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ: Եվ ես քո ներսից եմ գալիս:

Այժմ, երբ ավարտվում է մի տարեշրջանը, և սկսվում հաջորդը, ճիշտ ժամանակն է հավերժի մասին մտածելու:

Մոտ է տարվա և դարաշրջանի փոխվելու միստիկական պահը:

Սակայն դա չի նշանակում, թե դարաշրջանը փոխվում է հենց այս պահին, այլ միայն նշանակում է, որ հավերժության այն պահը, երբ տեղի է ունենում դարաշրջանի փոփոխություն, արդեն մոտեցել է:

Եվ հենց այդ պահին, ինչպես երբեք, անհրաժեշտ է հայացքն ուղղել հավերժին, միստիկականին, գաղտնախորհրդին:

Այժմ շատ քիչ կան Բարձրագույն աշխարհները զգացող մարդիկ: Հավերժության կանխագագույնը մի շնորհ է, որը մարդը ձեռք է բերում ո՛չ մեկ մարմնավորման ընթացքում: Եվ որքան շատ են լինում մարմնավորման մեջ գտնվող այնպիսի մարդիկ, որոնք ունեն Բարձրագույն աշխարհները զգալու շնորհ, այնքան ավելի ներդաշնակ են ընթանում ֆիզիկական աշխարհի բոլոր իրադարձությունները:

Քանզի ձեր էության ներսում հատկապես ներքին, միստիկական կապի բացվելն է, որ թույլ է տալիս, որ աստվածային փոփոխություններ տեղի ունենան ձեր աշխարհում:

Ձեր աշխարհի լայնածավալ փոփոխությունները տեղի են ունենում ո՛չ կառավարությունների, ո՛չ էլ առանձին երկրների ու անձանց շնորհիվ: Բոլոր այդպիսի մեծ փոփոխություններն աշխարհում միշտ էլ տեղի են ունեցել բարձրագույն էներգիաների՝ ձեր աշխարհ ներթափանցելու շնորհիվ: Եվ երբ բարձրագույն էներգիաներն ի վիճակի են լինում ներթափանցելու ֆիզիկական աշխարհ, ամեն ինչ սկսում է շատ արագ փոխվել՝ բառացիորեն հենց ձեր աչքի առաջ:

Եվ հիմա մենք կանգնած ենք հենց այն ժամանակի, այն դարաշրջանի շեմին, երբ մարմնավորման մեջ գտնվող ավելի ու ավելի շատ մարդկային անհատների ներսում աշխարհները կմիանան իրար:

Շատ կենսահոսքերի կյանքի խնդիրը, նպատակն ու իմաստն այժմ հատկապես այն է, որ իրենց գիտակցության մեջ պահեն ու պահպանեն Բարձրագույն աշխարհների հետ կապը, աշխարհների միջև հաստատվող կապը:

Այնժամ, երբ բավարար քանակությամբ մարդկային անհատներ ունակ են լինում իրենց գիտակցությամբ հասնել Բարձրագույն աշխարհներին, բոլոր փոփոխությունները, աստվածային փոփոխություններն ի կատար են ածվում:

Այսպիսով, ես պնդում եմ, որ ձեզնից յուրաքանչյուրը ժամանակ գտնի, որպեսզի անցկացնի իր միստիկական փորձը, միստիկական իր փորձարարությունը:

Դուք պետք է ժամանակ գտնեք, որպեսզի մտորեք հավերժականի ու անցողիկի մասին: Հավերժական արժեքների և ժամանակավոր հրապուրանքների մասին: Չգաք դրանց տարբերությունները և հասկանաք, թե հատկապես ո՛ր ուղղությամբ եք ուզում շարժվել:

Ներկայումս յուրաքանչյուրին, ով ունակ է միստիկական փորձառության, համարում են տարօրինակ և կյանքին չհարմարվող: Սակայն միշտ չէ, որ այդպես կլինի: Այսուհետ ավելի ու ավելի շատ կմարմնավորեն այնպիսի մարդկային անհատականություններ, որոնք իրենց հիշողության մեջ կունենան Բարձրագույն աշխարհների հուշը: Եվ շատ շուտով նման անհատականությունները տիրապետող դիրք կգրավեն աշխարհում: Որովհետև դրա՝ ժամանակն է եկել: Ժամանակը հասել է, և տարածությունը փոխվում է: Աշխարհները մերձեցել են և պատրաստ են փոխներթափանցման:

Երբ պատրանքն իր վերջին ջղաձգությամբ փորձում է պահպանել իր դիրքերը, ավելորդ չի լինի, որ ձեզ հիշեցնեմ ձեր աստվածային ծագման մասին: Նաև ձեր այն ներքին բնույթի մասին, որը հատուկ է ձեզ և թույլ չի տալիս քաղցր քնի մեջ մնալ պատրանքի մեջ:

Ժամն է արթնանալու Բարձրագույն իրականության համար: Հասնել է դրա ժամկետը:

Դուք դանդաղում եք և չեք ուզում բաժանվել պատրանքի ձեր քաղցր քնից, սակայն Աստծո Իրականությունն իր ուժով ու գեղեցկությամբ գերազանցում է ձեր ֆիզիկական աշխարհի ցանկացած ամենալավ դրսևորմանը:

Արդ, մղվե՞ք դեպի ձեր իրական բնույթը՝ դեպի Աստվածայինը: Փնտե՞ք ձեր ներսում խաղաղ միստիկական նշաններ: Եվ այնժամ, երբ կհամալարվեք Բարձրագույն իրականության հետ, ֆիզիկական աշխարհի փոփոխությունները տեղի կունենան ինքնբերական:

Արդյոք ձեր շուրջը շա՛տ եք տեսնում այնպիսի մարդկանց, որոնք մտածում են Բարձրագույն իրականության մասին և համալարված են այդ Բարձրագույն իրականության հետ:

Կարծում եմ, որ ոչ: Այդպիսի մարդիկ քիչ կան մարմնավորման մեջ: Եվ հենց դա է պատճառն ամեն մի անարդարության, որ գոյություն ունի ձեր աշխարհում. դա է պատճառը բնության երևույթների բոլոր աններդաշնակ դրսևորումների և մարդկային հասարակության մեջ տեղի ունեցող զանգվածային անկարգությունների:

Ձեր գիտակցության մեջ պետք է բևեռափոխություն տեղի ունենա, որպեսզի կողմնորոշվեք դեպի հավերժական արժեքները. ահա դա՛ է մարդկային էվոլյուցիայի այն փուլը, որի շեմին այժմ կանգնած է մարդկությունը:

Ձեզ անհրաժեշտ է գիտակցել այս պարզ ճշմարտությունը, որի շեմին հիմա կանգնած եք: Ուղղակի անհրաժեշտ է, որ ձեր գիտակցության մեջ հնարավոր համարեք Բարձրագույն իրականության գոյությունը:

Եվ դա այն անհրաժեշտ ու բավարար քայլը կլինի, որն ունակ կլինի ձևափոխության ենթարկելու ձեր շուրջը եղած ամեն ինչ:

Համբարձյալ Դասերը պատրաստ են ձեզ օգնություն ցուցաբերելու: Սակայն, որպեսզի այդ օգնությունը հասնի ձեզ, դուք պետք է հավատաք այն իրականությանը, որում գոյություն ունեն Համբարձյալ Դասերը: Հավատ Բարձրագույն իրականության նկատմամբ, ձգտում դեպի Բարձրագույն աշխարհները. ահա այն, ինչն ունակ է մարդկությանը դուրս հանել պատրանքի քաղցր քնից:

Հասել է արթնացման ժամը:

Ծագում է հավերժական իրականության արևը:

Ես կանչում եմ ձեզ դեպի այդ անանց իրականությունը: Հենց հիմա:

ԵՄ ԵՄ ՈՐ ԵՄ

Հառաժան Բուդդա

1 հունվարի, 2012 թ.

Տարեսկզբի ուղերձ

ԵՄ ԵՄ Հառաժան Բուդդան: Ես այսօր ձեզ այցի եմ եկել:

Ուրախ եմ, որ հնարավորություն ունեմ ձեզ ուղերձ տալու տարվա սկզբին: Նույնիսկ ո՛չ այն բանի համար, որ այս տարին առանձնահատուկ է, այլ որ ավանդույթ է դարձել ամեն տարվա սկզբին ուղերձ տալս:

Ինչպես դուք կարող եք զգալ, ձեզ շրջապատող իրականության էներգիաները փոփոխության են ենթարկվում: Եվ այդ նոր էներգիաները կարող են նորացնել ձեր աշխարհը: Եվ ես՝ որպես Աշխարհի Տեր, պարտավոր եմ ձեզ տեղյակ պահել, որ դուք մուտք եք գործում էվոլյուցիոն զարգացման պատասխանատու շրջան: Հասել է այն պահը, երբ ձեր յուրաքանչյուր նախընտրանքից կախված կլինի այն, թե մարդկությունը որքանո՞վ անվտանգ կզարգանա և առաջ կընթանա էվոլյուցիոն զարգացման աստիճաններով: Եվ այդ իմաստով այս նոր տարին խիստ նշանակալից է և բացում է նոր տարածություն, ապագայի տարածությունը:

Այս պահին ես հայացք եմ նետում Երկիր մոլորակի նուրբ ոլորտների վրա: Մոլորակի ոչ բոլոր տիրույթներն են պատրաստ վերահաս փոփոխություններին: Սակայն ես գոհունակությամբ կարող եմ նշել, որ շատ ու շատ մարդկանց գիտակցությունն սկսել է փոխվել դեպի լավը. հոգածություն կա շրջապատի նկատմամբ, ավելի մեծ նպատակամղվածություն՝ ի բարօրություն բոլոր կենդանի էակների:

Մոլորակի վրա տեղի ունեցող համամոլորակային փոփոխությունների ըմբռնումը սկսում է մուտք գործել մարդկության լավագույն ներկայացուցիչների գիտակցության մեջ, որից հետո այդ ներկայացուցիչների միջոցով գրավում է հասարակության առաջավոր հատվածի մտքերը:

Եկել է այն ժամանակը, երբ սեփական նեղ ու անձնական բնույթի հետաքրքրությունների վրա կենտրոնացումը հակասության մեջ է մտնում ժամանակի պահանջի հետ: Եկել է այն ժամանակը, երբ միայն համայնքային գիտակցությունը, մերձավորների նկատմամբ խնամք տածելու վրա կենտրոնացված գիտակցությունը, մոլորակի Ընդհանուր Բարօրության և ամեն մի առանձին կենդանի էակի մասին հոգ տանող գիտակցությունը հեռանկար կունենա իր զարգացման համար:

Մարդկության գիտակցության այդ շրջադարձը մոտ ապագայում կգրավի առաջատար դիրք: Հատկապես այն գիտակցությունը, որը կենտրոնացած կլինի մերձավորի մասին հոգալու, երկրի վրա ապրող ամեն մի կենդանի էակի օգնելու վրա, հնարավորություն կունենա շարունակելու իր էվոլյուցիան:

Այժմ սկսվել է ձեր էվոլյուցիայի պատասխանատու փուլը: Որպես Երկիր մոլորակում բնակվող բանական էակներ՝ դուք պատասխանատու եք ձեր մոլորակի համար:

Ձեր ամեն մի հաջորդ քայլը, ամեն մի հաջորդ ընտրությունը, որ գերադասում եք կատարել, կա՛մ ձեզ առաջ կմղի էվոլյուցիայի ուղով, կա՛մ կնետի պատմության հետնաբակը: Եվ այդ ընտրությունն ինքնե՛րդ կանե՛ք՝ ամեն մեկդ ինքնուրույնաբար:

Այո՛, մենք գալիս ենք, նախազգուշացնում ենք, Ուսմունք ենք տալիս, բայց դուք ինքներդ ձեր ազատ կամքով կարող եք ականջալուր լինել մեր խորհուրդներին, կա՛մ ոչ. կա՛մ հետևել մեր հանձնարարականներին, կա՛մ առաջնորդվել ձեր թույլտվության ցանկություններով ու մղումներով:

Ամեն ինչ շատ պարզ է, սիրելիներս: Երբ դուք ընդլայնում եք ձեր տեսադաշտը, երբ ձեր գիտակցությամբ բարձրանում եք որոշակի մակարդակի վրա, ապա հնարավորություն եք ստանում ձեռք բերելու մարդկության զարգացման հեռանկարների աստվածային տեսլականը:

Իսկ երբ մնում եք ձեր գիտակցության մույթ անկյուններում և չեք ուզում հարմարավետ ճեղքերից՝ սովորական դարձած փոշեկոյուղ ու հոտած վայրերից, որտեղ ինքներդ եք ձեզ խցկել՝ վերհաս փոփոխություններից երկյուղելով, լույս աշխարհ դուրս գալ, ապա ձեր տեսադաշտը նեղանում է, և դուք ձեզ պարտւրած վախից բացի այլ զգացմունք ապրելու ունակ չեք լինում:

Ամբողջ բանը, սիրելիներս, ձեր նախընտրանքի մեջ է, այն նախընտրանքի, որը կատարում եք ձեր գիտակցության մեջ: Դուք կարող եք ձեր կյանքը նվիրել Երկիր մոլորակի կենսահոսքերին ծառայելուն, և ձեր առջև կբացվեն աստվածային գիտակցության հորիզոնները: Կամ էլ կարող եք ձեր ամբողջ կյանքը նվիրել սեփական էգոյին ծառայելուն և դրա անհագ ցանկություններին հագուրդ տալուն, և այդ դեպքում ամբողջ աշխարհը ձեզ համար կսահմանափակվի աշխարհի այն փոքրիկ կտորով, որն ինքներդ եք ձեզ համար ստեղծել:

Գալիք աշխարհում տեղ չունի այն գիտակցությունը, որը կենտրոնացել է իր էգոյի քմայքները բավարարելու վրա: Միայն այն գիտակցությունները, որոնք ունակ կլինեն իրենց ուշադրության տիրույթն ընդլայնել մինչև աստվածային հորիզոններ, իրենց առջև բացված կտեսնեն Էվոլյուցիայի Ուղին: Ահա այդպիսին է հիմա իրավիճակն աշխարհում:

Ժամանակին պաշտելի Հիսուս ասել է, որ կգա որոմը հատիկից ջոկելու ժամանակը: Եվ ահա ես ձեզ համար կրկնում եմ, որ հասել է այն պահը, երբ ձեզնից ամեն ոք պետք է ընտրություն կատարի՝ կա՛մ հետևել Էվոլյուցիայի ուղուն, կա՛մ գորշ կյանք վարել պատմության հետնաբակերում:

Ձեզնից յուրաքանչյուրն ստիպված կլինի ընտրություն կատարել, քանի որ դրա ժամանակը եկել է, և նոր տարածությունը բաց կլինի միայն նրանց համար, ովքեր կընտրեն Էվոլյուցիոն զարգացման Ուղին:

Ամեն ինչ շատ պարզ է: Եվ ընտրության գործն էլ է շատ պարզ: Դուք կա՛մ ընտրում եք Աստծուն, կա՛մ ձեր մահկանացու գիտակցությունը, ձեր էգոն:

Որին նախապատվություն կտաք, վերջին հաշվով, դրա հետ էլ կմնաք:

Եթե կամենում եք մնալ ձեր անիրական մահկանացու մասի հետ, եթե ինքներդ ձեզ նույնացնում եք ձեր մարմնի հետ և ամբողջովին կապված եք դրան, ապա այդպես կապված էլ կմնաք և մահ կճաշակեք:

Իսկ եթե ձեր մարդկային գիտակցությունը բարձրացնեք աստվածայինի մակարդակին, ապա որպես պարզև՝ անմահություն կստանաք և հավերժական կյանք:

Ձեր ընտրությամբ ինքներդ եք որոշում ձեր հետագա ուղին:

Ես միայն կարող եմ ուղղություն ցույց տալ: Բայց ես չեմ կարող առաջ ընթանալ ձեր փոխարեն:

Այսպիսով, իմ այսօրվա գալստյան նպատակն այն էր, որ մարդկությանը մեկ անգամ ևս հիշեցնեմ վերահաս ժամկետների մասին:

Նաև կուզենայի ձեր մեջ վստահություն ներարկել, որ ձեր յուրաքանչյուր շարժումը նույնիսկ մտքի շարժումը, որն ուղղված կլինի դեպի Էվոլյուցիոն ուղին, աննախադեպ օժանդակություն կստանա Երկնից:

Մենք գիտակցում ենք պատրանքի հաղթահարման ողջ դժվարությունը, որը հիմա իր ծաղկման գագաթնակետին է գտնվում: Ուստի դեպի Բարձրագույն աշխարհներ ձեր ամեն մի ձգտումը բազմակիորեն կուժեղացվի և կօժանդակվի Համբարձյալ Դասերի կողմից:

Արդ, ոչնչից մի՛ վախեցեք: Ուղու ամենադժվարին հատվածներում ձեզ կօգնեն հոգաճու ձեռքեր: Միայն թե հայացք նետեք մեր՝ Իմաստության Տիրակալներիս կողմը. միայն թե օգնություն խնդրեք, և այն ձեզ կհասնի:

ԵՍ ԵՄ Հառթամա Բուդդան

Վեհապետ Էլ Մորիա
2 հունվարի, 2012 թ.

Ես հստակորեն ձեզ ցույց եմ տալիս ուղին և ձեր շարժման ուղղությունը

ԵՍ ԵՄ Էլ Մորիան...

Ես եկել եմ ձեզ հայտնելու, որ այս դեսպանորդի միջոցով տրվող թելադրությունների ձմեռային շրջանը մոտեցավ իր ավարտին:

Շրջանը թեև կարճ, բայց ոչ պակաս կարևոր էր: Ձեզ հիմա կարող է թվալ, թե ոչ մի հիմնարար բան չասվեց այս ընթացքում, կամ դուք որևէ նշանակալից բան չսեցիք: Սակայն մի՛ շտապեք հետևություններ անել: Շատ շուտով այն գաղտնի բանալիներն ու նոր էներգիաները, որոնք մեզ հաջողվեց այս ուղերձների միջոցով փոխանցել ձեր աշխարհ, իրենց զգացնել կտան: Եվ դա անխուսափելիորեն տեղի կունենա՝ անկախ ձեր արտաքին գիտակցությունից:

Այն հրաշքը, որի մասին մենք խոսեցինք, որոշակի նախապատրաստվածություն է պահանջում: Եվ մենք ձեր գիտակցության մեջ ցանցեցինք Աստծո Իմաստության սերմեր, որոնք անպայման ծիլ կտան: Եվ դա նման կլինի հրաշքի:

Մեր ցանած ոչ բոլոր սերմերը կկարողանան ծլարձակել, քանի որ ոչ բոլոր հոգիներն են պատրաստ, որ Աստծո Իմաստության սերմը ծիլ տա այնտեղ: Սակայն պետք է ձեզ հայտնեմ, որ այնքան էլ քիչ չեն նրանք, ովքեր իրենք իրենց՝ իրենց հոգիները, նախապատրաստել են այն ամբողջ ժամանակահատվածում, երբ մենք թելադրություններ էինք տալիս այս դեսպանորդի միջոցով: Բավարար է ձեր քանակը, որ այս յոթ տարիների ընթացքում կանոնավորապես ընթերցում և վերընթերցում էիք մեր ուղերձները և արդեն հասել եք գիտակցության այն անհրաժեշտ ու բավարար մակարդակին, որպեսզի անցում կատարեք որակապես նոր զարգացման մակարդակի:

Մենք կանխատեսել էինք, որ ամեն ինչ չէ, որ բարեհաջող կլինի: Մենք ավելին էինք սպասում, բայց նույնիսկ այն, ինչ հիմա ունենք, կարող ենք բավարար համարել: Եվ մենք գոհունակությամբ փաստում ենք այն կարևոր հանգամանքը, որ մարդկության լավագույն ներկայացուցիչների գիտակցության զարգացման դեռևս անբացահայտ գործընթացներն ընթանում են ճիշտ ուղղությամբ և կայուն տեմպերով:

Ես լիովին որոշակի ու հստակ ձեզ կարող եմ ասել, որ սկսվել է մի դարաշրջան, երբ միայն այն անհատները, որոնք կարողացան ընկալել մեր Ուսմունքը, կկարողանան Երկիր մոլորակի վրա հաջողությամբ շարունակել իրենց էվոյուցիան: Եվ, որքան էլ քիչ լինի այդպիսիների քանակը, մենք լիահույս ենք որ ծլարձակումները երկար չեն սպասեցնի:

Ներկայումս ձեզ համար դժվար է պատկերացնել, որ ամեն ինչ կարող է փոխվել: Սակայն կլինի հենց այդպես, և դա նման կլինի հրաշքի:

Ավելի համարձակորեն ձեր գիտակցությամբ մղվեք դեպի նորն ու անսովորը... Ավել՛ք հիմն ու իր դարն ապրածը... Եթե համարձակ ու վճռականորեն կարողանաք դա անել, ապա ակնթաթյորեն ձեր աշխարհ մուտք կգործի նորն ու նորագույնը:

Բնությունը դատարկություն չի սիրում: Հենց որ որոշում ընդունեք ձերբազատվելու ձեր որևէ բացասական հատկանիշից կամ սովորությունից, այդ անկատարության փոխարեն կկարողանաք ձեր մեջ ներքաշել աստվածային կատարյալ հատկանիշ: Այդպես հրաժեշտ տալով հինի՝ դուք նորն եք մտցնում ձեր աշխարհ: Մղվելով դեպի բարձրաթիթիոր՝ դրանով փոխարինում եք հիմն ու իր դարն ապրածը:

Ավելի համարձակ եղեք: Ձեր մղումները հենց հիմա է, որ կողջունվեն ու վճռականորեն կօժանդակվեն Երկնային ուժերի կողմից: Որովհետև դրա ժամանակը հասել է: Մեծագույն փոփոխությունների ժամանակն է հիմա, բոլորաշրջանի փոխման ժամանակը: Եվ տիեզերական էներգիայի ալիքով դուք շատ շուտով կբարձրանաք աստվածային գիտակցության այն մակարդակին, որն այս փուլում անհրաժեշտ է մարդկությանը:

Այնժամ, երբ ձեր գիտակցությունն ունակ կլինի բարձրանալու աստվածային մակարդակին, հասարակության կյանքի բոլոր ոլորտների համար անհրաժեշտ փոփոխությունները տեղի կունենան կարծես ինքնուրույն:

Հասարակության կյանքի բոլոր ոլորտները որոշվում են գիտակցության միջին մակարդակով: Հատկապես այն հասարակությունը, որում գերակշռում են վախն ու անհանդուրժողականությունը, ատելությունն ու հակասիրո դրսևորումները, դիմում է սպառազինության ու սահմաններ կառուցելուն: Իսկ այն հասարակությունը, որում գերակշռում են սերն ու ներդաշնակությունը, բացում է սահմանները, և աստվածային Ազատությունը հնարավորություն է ստանում դրսևորվելու այնտեղ, որտեղ դեռ երեկ իշխում էին քաոսն ու սարսափը:

Ավելի համարձակ եղեք... Սրանից վատ վիճակ այլևս հնարավոր չէ, որ լինի: Անաստված դրսևորումները շատ շուտով ստիպված կլինեն լքել ֆիզիկական աշխարհը:

Եվ հիմա, երբ դուք տարակուսում եք, թե որ ուղղությամբ շարժվեք ու մղվեք առաջ, ես ձեզ հստակ ցույց եմ տալիս ուղին և ձեր շարժման ուղղությունը:

Միայն ձեր գիտակցության մեջ առկա շղարշը թույլ չի տալիս, որ հասկանաք իմ խոսքերը և յուրացնեք Աստծո Աշխարհի ամենապարզ հասկացությունները:

Ավելի համարձակ հրաժեշտ տվեք հետտոնական զարդարանքներին և արհեստական կրակների փայլփյոցին: Մո՛տք գործեք տիեզերական լայնարձակություն...

Բացահայտե՛ք ձեզ համար հեռավոր աշխարհները, նվաճե՛ք ձեր ներսում աստվածային գիտակցության ձյունաճերմակ ու պայծառափայլ գազաթները:

Դուք շա՛տ անելիքներ ունեք. Հիմա ձեզ մե՛ծ աշխատանքներ են սպասում: Սկսե՛ք ձեր առաջխաղացումը: Անհրաժեշտ ամեն ինչ արդեն տրված է: Տրված են բոլոր առաջնորդող ցուցումները, և ցույց են տրված բոլոր ստորջրյա խութերն ու գաղտնի հոսանքները:

Տեղից շարժվե՛ք: Առա՛ջ...

ԵՍ ԵՄ Է՛լ Մորիան

Ուղերձների տասնվեցերորդ շրջան (հունիս, 2012 թ.)

Սանատ Կումարա
21 հունիսի, 2012 թ.

Ես մաղթում եմ ձեզ, որ հասնեք գիտակցման այնպիսի աստիճանի, որը թույլ կտա ձեզ առաջ մղվելու ամենավերին Ուղով

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան՝ կրկին ձեզ այցի եկածը:

Աշխարհները, աստղերը, Երկինքը ցնծում են այն աննախադեպ հնարավորությամբ, որը կրկին բացվեց Աստծո Ողորմածության շնորհիվ:

Ես ձեզ այցի եմ եկել ամառային արևադարձի այս օրով, որպեսզի իմ էներգիաները գորեղացնեմ, և դուք կարողանաք զգալ մեր Միասնությունը, կյանքի ամեն մի մասնիկի Միասնությունը Միագո և անբաժանելի Երկնավոր Հոր հետ:

Աննախադեպ տիեզերական հնարավորությունն ի հայտ եկավ այն բանից հետո, երբ Կարմայական Վարչության այսօրվա նիստում որոշում կայացվեց, և այն իր հաստատումը գտավ Մեծ Կենտրոնական Արևում՝ Միրիուսում:

Ես չեմ եկել, որ սոսկ ձեզ հնարավորություն ընձեռեմ կարդալու հերթական Ուղերձը: Այլ եկել եմ, որ դուք գիտակցեք ձեր աստվածային առաքելությունը: Ձեր Էվոյուցիոն զարգացման ներկա փուլում շատ քիչ է պարզապես Ուղերձներ կարդալը: Դուք պետք է գործադրեք ձեր բոլոր ջանքերը, որ ձեր գիտակցությունն ընկալունակ դառնա Աստծո Ճշմարտությունների նկատմամբ: Իսկ այդ Ճշմարտություններից մեկն այն է, որ ձեր մոլորակը փոխում է իր թրթռանքը: Եվ այդ փոփոխությունը ձեր առջև հնարավորություն է բացում, որ ընթանաք զարգացման աստվածային Ուղով:

Դուք հասունացել եք: Արդեն պատրաստ եք, որ անեք ձեր Էվոյուցիոն զարգացման հաջորդ քայլը: Բառացիորեն դեռ երեկ Կարմայական Վարչությունն ու այս տիեզերքի Բարձրագույն խորհուրդը դեռևս տատանվում էին՝ տա՞լ, թե՞ չտալ նոր հնարավորություն. տրված թողության շնորհը շարունակե՞լ, թե՞ ոչ: Եվ ահա այսօր որոշումը կայացված է... Պետք է ասել, որ կշեռքի նժարներին էին դրվում ոչ միայն նախորդ դժվարին ամիսների ձեր գործողություններն ու արարքները, այլև ձեր հոգու յուրաքանչյուր շարժը:

Մենք ստիպված եղանք փաստել մեզ հակադիր ուժերի վիթխարի դիմադրությունը: Եվ մենք պարտավոր էինք հաշվի առնել փոքրաթիվ հոգիների գործադրած ջանքերը: Կշեռքի նժարները հավասարակշռվեցին, և շատ քիչ բան էր պահանջվում, որպեսզի աստվածային հնարավորությունը շարունակություն ստանա: Ես օգնության ձեռք մեկնեցի: Եվ տիեզերական բանկում ներդրած իմ նվաճումների մոմենտումի շնորհիվ Ես և մյուս Վեհապետները հնարավորություն ստացանք կրկին գալ և Ուղերձներ տալ Երկրի մարդկությանը:

Այս հնարավորությունը մարդկության նվաճումը չէ: Այն հիմա ձեզ տրվում է կանխավճարի ձևով: Ուստի դուք պետք է մշտապես հիշեք, որ մոտակա ժամանակներում ձեր յուրաքանչյուր գործողությունը, միտքը կամ հույզը կարող է որոշիչ լինել աշխարհի հետագա ճակատագրի համար:

Երբ դուք բանկից վարկ եք վերցնում, առկա է լինում փողերը չվերդարձնելու վտանգը: Ես երաշխավորեցի, որ դուք կկարողանաք կատարել ձեր պարտավորությունները, որոնք ստանձնել էիք մարմնավորվելուց առաջ: Ես մաղթում եմ ձեզ, որ հասնեք գիտակցման այնպիսի աստիճանի, որը թույլ կտա ձեզ առաջ մղվելու ամենավերին Ուղով:

Պաշտելիներս, բավական է միայն, որ ընդամենը մի քանի անհատականություններ ցուցադրեն նոր գիտակցություն և նոր մտածողություն: Ծա՛տ դժվար գործ է, բայց անհրաժեշտ է դա անել: Քանզի հենց որ մի քանիսը ցուցաբերեն նոր գիտակցության ու մտածողության վրա հիմնված հարաբերությունների նոր տեսակ, միլիոնավոր մարդիկ կկարողանան օգտվել նվաճումների այդ մոմենտումից: Մարդկության ընդհանրական ենթագիտակցականն ունակ է իր մեջ կուտակել ինչպես մարդկային գիտակցության բացասական դրսևորումները, այնպես էլ առանձին անձանց դրական նկրտումները: Ուստի ընդամենը մեկը, ով այս դժվարին պայմաններում ունակ կլինի դրսևորել գիտակցության անհրաժեշտ մակարդակ, դրանով իսկ իր նվաճումները կդնի մարդկությանը Սպասավորելու գոհասեղանին: Եվ ամբողջ մարդկությունը կստանա հետագա Էվոյուցիայի հնարավորություն:

Ա՛յդ է սկզբունքը, և ա՛յդ է Ուղին: Ամեն ոք, ով անցյալում հասել է գիտակցության որոշակի մակարդակի, դրանով իսկ հարյուրավոր ու հազարավոր տարիների ուղի է պատրաստել

մարդկության համար: Երկու հազար տարի առաջ մարմնավորվեց Հիսուս, դրանից ավելի վաղ՝ Հաուլթամա Բուդդան, իսկ մարդկությունը ցայսօր օգտվում է նրանց նվաճումների մոմենտումից:

Ձեզնից յուրաքանչյուրն ունակ է ցուցաբերելու նոր գիտակցություն: Ձեզնից յուրաքանչյուրն ունակ է վեր ելնելու Էվոյուցիայի հաջորդ աստիճանին և օրինակ ծառայելու: Նոր դարաշրջանի համար բնորոշ է այն, որ ձեր բոլոր նվաճումները կարող են շատ արագ տարածվել ամբողջ երկրագնդով մեկ: Ճիշտ ուղղությամբ արված ձեր յուրաքանչյուր քայլը կսատարվի Երկնքի աննախադեպ օժանդակությամբ:

Բայց նաև արդար կլինի, եթե այն անհատները, որոնք ընտրել են Աստծուց կտրվելը, շատ արագ արժանանան իրենց բացասական կարմայի պտուղներին: Այն ամենը, ինչ չի համապատասխանի Էվոյուցիոն ուղու նոր փուլին, հետընթաց կապրի և կչքանա Երկրի երեսից: Եվ այն, ինչ կհամապատասխանի նոր փուլին, ծաղկում կապրի Երկնքի Ողորմածության շնորհիվ:

Այդ երկու դրսևորումներն էլ դուք տեսնում եք ձեր շուրջը: Եվ ամենքիդ հնարավորություն է տրված ընտրելու մահը կամ անմահությունը, իր համար ապրելը կամ հանուն Ընդհանուր Բարու ապրելը, անցողիկը կամ հավերժական Կյանքը:

Ավելի պարզ ու հստակ երբևէ չի ասվել: Եվ դա ժամանակի հրամայականն է:

Ես կկամենայի ասածս ամրապնդել մեկ օրինակով: Եվ այդ օրինակը հենց կյանքն է տվել: Հիմա, երբ իմ ներկայության ժամանակը սպառվելու վրա է, պետք է ասեմ, որ հավերժական կյանքն ու անմահությունն այժմ ձեզ այնքան մոտ են կանգնած, որ հնարավորություն ունեք հենց հիմա հասնելու դրանց: Նախկին ժամանակներում երբեք այսպիսի հնարավորություն չի ընձեռվել: Այլասերվածությունն ու անկումը որքան մեծ են ձեր շուրջը, այնքան ձեր նվաճումներն ավելի արժեքավոր են երևում Աստծո աչքին:

Հապա տեսե՛ք, թե ինչպես են աճում լոտոսի ծաղիկները ճահճում: Չնայած համատարած քայքայմանն ու փտումին՝ Աստված ցույց է տալիս Կյանքի ծաղիկի հրաշքը:

Ձեզնից յուրաքանչյուրն Աստծո ձեռքի հրաշքն է: Ամեն ինչ որոշվում է ձեր գիտակցությամբ և դեպի Աստվածայինն ունեցած ձեր նկրտումով:

ԵՍ ԵՄ Սանատ Կուսարան: ՕՄ

Տեր Շիվա
22 հունիսի, 2012 թ.

Այժմ սկսվում է ձեր աշխատանքն Աստծո համար

Ես եմ Շիվան...

Ես եկա...

Այսօր կամենում եմ, որ լսեք ինձ: Ոչ այն պատճառով, որ ես եմ այդպես ուզում, այլ որ հասել է այն ժամանակը, երբ պետք է սա ասեմ ձեզ:

Եվ այսպես, ամեն իմ գալստյան, ինչպես և ամեն մի Վեհապետի գալստյան ժամանակ, տեղի է ունենում մեր երկու աշխարհների հաղորդակցության հրաշքը: Եվ ամեն անգամ մեր թելադրությունների ընդունման վայրում Լույս է հորդում: Իսկ այն բարեշնորհանքները, որոնցով իմ ուղերձի տվյալ պահին լուսավորվում է երկիրը, չեն հապաղի իրենց ազդեցությունը թողնել Երկրի ժողովուրդների ճակատագրերի վրա:

Այսօր ես եկել եմ մի այնպիսի ժամանակ, երբ մեր դեսպանորդը գտնվում է Լատվիա կոչվող երկրում: Եվ եկել եմ այն պահին, երբ ինքը՝ արևն է նպաստում իմ էներգիաների փոխանցմանն այդ երկրին:

Ուղերձի ամեն մի ընդունման և ընթերցման ժամանակ դուք օրինանքի արժանապատիվ հնարավորություն եք ստանում: Իսկ դա այնպիսի բան է, որը հնարավոր չէ արտահայտել բառերով: Այն, անկախ խոսքերից, իմ սրտից փոխանցվում է ձեր սրտերին:

Արժանացե՛ք օրինանքի: Ընդունեցե՛ք իմ սրտի շնորհը:

Ձեզ կվիճակվի շատ բան անել: Հենց հիմա է հասել այն ժամանակը, երբ մարմնավորման մեջ գտնվող ձեզնից յուրաքանչյուրից է կախված Երկիր մոլորակի Էվոյուցիայի հետագա ողջ ընթացքը: Քանզի ձեր օկտավայում տեղի է ունենում էներգիաների վճռական շրջադարձ: Եվ այն, ինչ գահավիժում էր ցած, այժմ պետք է սկսի վեր բարձրանալ դեպի մեր աշխարհը՝ դեպի Համբարձյալ Դասերի աշխարհը:

Մոտակա ժամանակներում ձեր ձեռքերով ու ոտքերով պետք է ի կատար ածվի տիեզերական բոլորաշրջանի այդ մեծ շրջադարձը: Եվ ես, որ հանդիսանում եմ պատրանքի հետ հավաքման պատասխանատու Տերը, պատրաստ եմ ձեզ փոխանցել հինավուրց ժամանակների գիտելիքը:

Ձեզնից ամեն որ դառնում է անփոխարինելի: Ամեն որ, ով ունակ է և պատրաստ է ընկալելու իմ խոսքերն ու էներգիաները: Քանզի դրա ժամանակը հասել է, և այս պահին բոլոր Երկնային Դասերը հետևում են Երկիր մոլորակի էվոլյուցիայի ընթացքին: Հասել է մոլորակի պատմության ամենաբեկումնային պահը: Եվ ձեզնից յուրաքանչյուրի ընտրությամբ է որոշվում ամբողջ մոլորակի ապագան:

Դա այն ընտրությունն է, որը հիմա դուք պետք է կատարեք:

Ահա ես ասում եմ ձեզ, որ ձեր կյանքում չկա ավելի կարևոր բան, որ կարողանայիք անել: Մի կո'ղմ նետեք այն ամբողջ ունայնը, որը շրջապատում է ձեզ:

Ձեր գիտակցությունը բևեռե՛ք ձեզ համար հնարավոր առավելագույն բարձր կետի վրա: Մտածե՛ք հավերժականի մասին:

Մտածե՛ք անվերջ ու անսահման Աստծո մասին:

Մտածե՛ք Նրա Փառավորության մասին:

Դուք Աստծո մաս եք:

Ձեզնից յուրաքանչյուրի ներսում Նա կարող է ներկա լինել:

Եվ ձեր օգնությամբ այս տիեզերքի Արարիչը կկարողանա շրջադարձել տիեզերական բոլորաշրջանը:

Մտորե՛ք ձեզ վիճակված առաքելության վեհության մասին: Ձեզնից ամեն որ կարող է և ունակ է ի կատար ածելու պատրանքի հետ հավաքման՝ Աստծո վիթխարի մտահղացումը:

Ժամանակը հասավ, և բոլորաշրջանը փոխվեց: Այժմ պատրանքը հետ հավաքելու ժամանակն է արդեն: Եվ դա կատարվում է ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ, երբ սկսվեց Արարումը. եկավ այն շրջադարձային կետը, երբ Արարվածը պետք է հետ հավաքվեր: Տարածությունն ու ժամանակը սկսում են նոր բոլորաշրջան: Պատրանքը սկսում է հետ հավաքվել:

Ձեզնից յուրաքանչյուրը կոչված է մասնակցելու պատրանքի հետ հավաքման այդ գործընթացին: Այժմ ո՛չ ես, ո՛չ էլ որևէ մի ուրիշ Բարձրագույն Վեհապետ չենք կարող ներկա գտնվել ձեր աշխարհում: Չափազանց կոպիտ է ձեր աշխարհը, և չափազանց ցածր են նրա թրթռանքները: Միայն դուք կարող եք կատարել այդ աշխատանքն աշխարհի համար: Միայն դուք կարող եք ձեր նախընտրանքներով ու գործողություններով իրականացնել պատրանքի հետ հավաքման այդ աշխատանքը:

Միայն ձեր գիտակցության օգնությամբ Աստված կարող է կատարել այդ աշխատանքը, վիթխարի այն աշխատանքը, որի իրականացման համար պահանջվում են միլիոնավոր տարիներ:

Այժմ ձեզ հնարավորություն է տրվում ձեռնամուխ լինելու այդ առաքելությանը: Եվ եթե դուք վերընթերցեք այս վերջին տարիներին մեր դեսպանորդի միջոցով ձեզ տրված բոլոր թելադրությունները, ապա դրանցում կգտնեք բոլոր անհրաժեշտ հանձնարարականները, որպեսզի կատարեք ձեր աշխատանքը և ավարտեք ձեր աստվածային առաքելությունը:

Յուրաքանչյուր թելադրություն պարունակում է ձեզ անհրաժեշտ գիտելիք ու տեղեկատվություն: Ձեր ամենօրյա նախընտրանքները, օրվա ընթացքում կատարած ձեր ամեն մի ընտրությունն ու արարքը, եթե ունեն աստվածային բնույթ, ապա հենց այն աշխատանքն են առաջ տանում, որը դուք պարտավոր եք կատարել: Իսկ եթե առաջվա պես նախընտրում եք կենտրոնանալ պատրանքի վրա, տրվել հաճույքներին ու ձեր էգոյի քմայքներին, ինչպես էլ դրանք արտահայտվելիս լինեն, ապա դրանով հակադրվում եք Աստծուն և Նրա պլաններին:

Նշանակություն ունի ձեր յուրաքանչյուր միտքը:

Նշանակություն ունի ձեր յուրաքանչյուր հույզը:

Նշանակություն ունի ձեր յուրաքանչյուր գործողությունը:

Այժմ սկսվում է ձեր աշխատանքն Աստծո համար: Պատրանքի կողմն ուղղված ձեր ամեն մի գործողությունը կամ ուշադրության կենտրոնացումը կհակադրվի Աստծո պլաններին:

Համընդհանուր Բարօրությանն ու Բարուն ուղղված ձեր ամեն մի գործողությունը կողջունվի Երկնքի կողմից և մեզ համար նշան կլինի, որ մարդկությունն ունակ է ընթանալու էվոլյուցիոն զարգացման ուղով և անցնելու իր զարգացման նոր փուլին:

Այժմ ձեր գիտակից լինելուց, նկրտումներից ու հավատից շատ բան է կախված: Եվ այս օրով ես եկել եմ, որ ձեզ հիշեցնեմ ձեր պարտքի և այն աշխատանքի մասին, որը ձեզնից բացի ոչ ոք չի կարող կատարել, պատրանքի հետ հավաքման վիթխարի աշխատանքի մասին: Եվ դա ձեր ամենակարևոր աշխատանքն է՝ գիտակցության մեջ հավերժական անցողիկից բաժանելը:

Ձեր ներսում և ձեզնից դուրս իրականը պատրանքայինից առանձնացնելու գործը ձեր ամենակարևոր աշխատանքն է հիմա: Որտեղ կենտրոնացված է ձեր ուշադրությունը, այնտեղ էլ հոսում է ձեր էներգիան: Եվ եթե մշտապես կենտրոնացած եք պատրանքային աշխարհի վրա, ապա գործում եք ընդդեմ Աստծո՝ բազմապատկելով պատրանքը: Իսկ եթե մշտապես կենտրոնացած եք Բարձրագույնի՝ Աստծո Աշխարհի վրա, ապա Երկինքը կփառավորի ձեզ:

Հասել է այն ժամանակը, երբ Երկինքը սպասում է ձեր աշխատանքին:
Խնդրում եմ, գիտակցե՛ք ձեր պատասխանատվությունը և սկսե՛ք հենց հիմա: Ամեն ինչ արդեն գիտե՛ք: Սկսե՛ք...

Ժամանակի ամեն պահի դուք արարում եք: Կառավարում եք ձեր էներգիան: Մնում է միայն, որ համալարվեք Աստծո հետ, որպեսզի ձեր էներգիայի հոսքը մշտապես աստվածային հոսքի հետ լինի:

ԵՄ ԵՄ Շիվան...

Բարաջի
23 հունիսի, 2012 թ.

Ձեր գիտակցությունն ու զանազանելու ձեր կարողությունը հնարավորություն կտան շարունակելու Էվոյուցիան

ԵՄ ԵՄ Բարաջին:

Այս օրով ես եկել եմ, որ նորացնեմ մեր հաղորդակցությունն ու մեր գրույցները, որ մենք վարում ենք այս դեսպանորդի միջոցով:

Այսօր ես շատ բան կուզենայի ձեզ ասել: Եվ մեր գրույցը կշոշափի ամենագլխավոր թեմաները, հավերժական թեմաներ, որոնք իրենց հրատապությունը չեն կորցնում մարդկային Էվոյուցիայի միլիոնավոր տարիների ընթացքում:

Ամեն ինչ անցողիկ է: Անցողիկ են ձեր մարմնավորումները: Նույնիսկ ձեր մոլորակը կդադարի գոյություն ունենալ, երբ կավարտի իր առաքելությունը:

Այժմ ես անմիջականորեն կանցնեմ մեր այսօրվա գրույցի թեմային: Ձեզ հայտնի է, որ այժմ Երկրի վրա տեղի է ունենում բոլորաշրջանների հերթափոխություն: Իսկ ամեն մի նոր բոլորաշրջան բերում է իր էներգիաները, որոնք կոչված են շտկումներ ու ճշգրտումներ մտցնելու Երկրի մարդկության Էվոյուցիայում:

Այժմ գալիս է մի բոլորաշրջան, երբ դուք պետք է ձեր գիտակցությունն անցողիկից շրջեք դեպի հավերժականը: Դա հեշտ չի լինի անելը, բայց ստիպված կլինեք: Եվ այն ժամանակ, երբ ես մարմնավորման մեջ էի, գործադրում էի իմ բոլոր ջանքերը, որպեսզի աշխարհի բոլոր ծայրերից ինձ մոտ եկած մարդիկ կորցնեն իրենց հետաքրքրությունն արտաքին դրսևորումների նկատմամբ և իրենց ողջ էությանը մղվեն դեպի անանց աշխարհը: Դեպի այն աշխարհը, որը տեսանելի չէ և չի ընկալվում մարդկային զգայարաններով, սակայն երբ հոգին ձեռք է բերում որոշակի որակներ, այդ աշխարհը զգալի է դառնում և ձեզ՝ ձեր ողջ էությունը, դեպի իրեն է քաշում, որովհետև դուք ձեր ներքնաբանությունով զգում եք, որ դա հենց այն է, դեպի ուր պետք է մղվեք:

Ձեր գիտակցության վիճակով է որոշվում այն ամենը, ինչ ձեզ հետ տեղի է ունենում ձեր կյանքում: Եվ ոչ միայն այս կյանքում տեղի ունեցածը, այլ նաև այն ամենը, ինչ ձեզ հետ կկատարվի ապագայում՝ ձեր հաջորդ կյանքերի ընթացքում: Ուստի և մենք գալիս և ձեզ հետ գրույց ենք վարում, որպեսզի դուք կարողանաք փոխել ձեր գիտակցությունը, շրջել այն դեպի Աստծո ճշմարտությունը՝ Աստծո Իրականությունը:

Բացատրելը դժվար է, բայց կարելի է զգալ Աստծո Աշխարհի հետ համահունչ լինելը: Առավոտյան աղջամուղջի խաղաղ ժամերին կամ մայրամուտից հետո ինձ հաջողվում էր առավոտվա և երեկոյի սպասավորության ծեսերի ընթացքում ներկաներին փոխանցել այդ վիճակը: Բոլոր ներկաների վրա ես այն տարածում էի իմ ներսից: Եվ այն բանից հետո, երբ մարդը գոնե մեկ անգամ զգում էր Աստծո Աշխարհի հետ համահունչության վիճակ, դրանով իսկ ձեռք էր բերում Աստծո հետ հաղորդակցվելու անձնական փորձ, որը մինչև իր այդ կյանքի ավարտն այլևս չէր լքում նրան: Կարող ես մարդուն հեշտությամբ համոզել, որ ոչ մի Աստված էլ չկա, բայց եթե Աստվածայինի զգացողությունը գոնե մեկ անգամ հավել է նրա սրտին, նա երբեք չի հավատա քեզ:

Ուստի այն ամենը, ինչ ձեզ անհրաժեշտ է, Աստվածայինի հետ հաղորդակցվելու սեփական միստիկական փորձ ունենալն է: Այնժամ պատրանքային աշխարհի ոչ մի հաճույք կամ խաղալիք այլևս չի գրավի ձեր ուշադրությունը: Պատրանքի ամբողջ բազմազանությունը կխամրի հոգևոր աշխարհի այն հարստությունների կողքին, որոնք դուք պետք է ձեռք բերեք:

Ուրիշ մարդկանց պատմածներին դժվար է հավատալ, բայց երբ մարդ ինքն է առնում հավերժական աշխարհի շնչառությունը, երբ նա հավում է հավերժությանը, ապա դրանից հետո պատրանքային աշխարհի ոչ մի զայթակղություն այլևս չի գրավի նրա ուշադրությունը:

Ուստի և ես պնդում եմ, որ ձեզ անհրաժեշտ է սեփական միստիկական փորձ ունենալ:

Այսօր մենք կանդիդատանք այն հարցին, թե ինչպես ճանաչել, թե Լինելիության ո՞ր ոլորտին է պատկանում ձեր միստիկական փորձը, որն ունեցել եք: Ամերևույթ աշխարհում բազմաթիվ շերտեր կան: Եվ դրանց մեջ կան այնպիսիները, որոնք աստվածային չեն: Այդ պահանջով դեպի Աստված մղվող մարդը ոչ միշտ է կարողանում զանազանել և զգալ ամերևույթ աշխարհի տարբեր ոլորտների միջև եղած տարբերությունները:

Երբ ես իմ աշակերտներին հնարավորություն էի ընձեռում զգալու Աստծո Աշխարհը, վարվում էի հնարավորինս զգույշ և նրբանկատորեն: Սակայն կան այնպիսիները, որոնք մոռացել են Աստծուն, բայց չեն կորցրել աստեղային աշխարհի և նրա բնակիչների հետ ձեռնածություններ անելու իրենց կարողությունը: Նման մարդիկ կարող են ձեռնածություն անել նաև Աստծուն փնտրող մարդկանց հետ՝ նրանց ընդգրկելով իրենց խմբակներում և հաղորդակից դարձնելով իրենց ծեսերին:

Ուստի ես ուզում եմ նախազգուշացնել ձեզ: Պատրանքի նրբացմանը զուգընթաց ավելի ու ավելի դժվար է դառնում առանձնացնել այն մարդկանց, ովքեր իրենց կյանքն ամբողջովին նվիրել են Աստծուն ծառայելուն, այն մարդկանցից, ովքեր աստծուն ծառայելը պարզապես իրենց մասնագիտությունն են դարձնում:

Զգացե՛ք Աստծուն ծառայողների և կուռքերին ծառայողների միջև եղած տարբերությունը:

Միայն ձեր Բարձրագույն Ես-ը, երբեմն ձեր ներըմբռնումը (ինտուիցիան) կարող են կատարել այդ նրբագույն զանազանումը: Եվ հատկապես այնժամ, երբ բոլոր ծեսերից ու արտաքին բնորոշիչներից անդին կկարողանաք Աստծո ճշմարիտ ծառաներին զանազանել սեփական Էգոյին ծառայողներից, պատրաստ կլինեք հրաժեշտ տալու ձեր աշխարհի պատրանքին և բարձրանալու դեպի Լինելիության ավելի բարձր ոլորտները:

Հիմա եկել է այնպիսի ժամանակ, երբ շատերը կխոսեն Աստծո հետ: Հազվագյուտ կլինեն այնպիսիները, որոնք կհանդգնեն մերժել Աստծուն: Սակայն, աստված ասելով, ամեն ոք այլ բան կհասկանա: Ձեր խնդիրն է այնպես զարգացնել ու մարզել ձեր հոգևոր մկանները, որ արտաքին ցանկացած հանգամանքների առկայության դեպքում կարողանաք իրականացնել ձեր զանազանումը:

Արտաքին աշխարհի ունայնությունը պետք է նահանջի: Ժամանակի ընթացքում դուք կզգաք արտաքին ունայնի և ներքին անդորրի միջև եղած տարբերությունը: Եվ նախապատվությունը կտաք անդորրի ու ներդաշնակության ներքին զգացողությանը:

Ունայնը կլքի ձեր աշխարհը: Այնժամ դուք կկարողանաք հաղորդակցվել Աստծո Աշխարհի հետ: Ամենայն անցողիկ բան ժամանակի ընթացքում կլքի ձեր աշխարհը: Բայց դա կլինի ոչ ավելի վաղ, քան դուք կսովորեք զանազանել ճշմարիտ Աստծո Աշխարհը պատրանքային աշխարհից:

Ձեր գիտակցությունն ու զանազանելու ձեր կարողությունը հնարավորություն կտան շարունակելու Էվոյուցիան:

Ձեզ կվիճակվի ձեր գիտակցության մեջ հաղթահարել նրբին շատ շերտեր, մինչև որ կարողանաք ամուր մնալ գիտակցության աստվածային վիճակի ժայռի վրա:

Իսկ մինչ այդ դուք կընկնեք ու վեր կբարձրանաք, փորձ ձեռք կբերեք և սխալներ կգործեք:

Եվ կարևոր չէ, թե քանի անգամ կսխալվեք, այլ կարևոր է այն, որ վերադառնաք Աստծո մոտ՝ ձեր Տուն:

ԵՍ ԵՄ Բարաշին՝ ձեր նկատմամբ սիրով լի

Տեր Հիսուս

24 հունիսի, 2012 թ.

Ես կամենում եմ օգնել ձեզնից յուրաքանչյուրին

ԵՍ ԵՄ Հիսուս:

Հիմա՝ այս օրով, ես ձեզ այցի եմ եկել, քանի որ ասելու բան ունեմ ձեզ: Ես և մյուս Վեհապետներն Աստծո ողորմածության շնորհիվ առաջվա պես կարող ենք գալ և ուսուցանել Երկրի մարդկությանը: Իմ պարտքն է ձեզ իրազեկել այն Ուղու մասին, որով ես անցել եմ, և որը կարող է անցնել ձեզնից յուրաքանչյուրը: Դա Միտ Ուղին է, մի Ուղի, որն առկա է ձեր սրտերում: Քանզի ձեր սրտի մակարդակում են չքանում բոլոր հակասությունները և այն ամենը, ինչ բաժանում է ձեզ իրարից: Միայն այնժամ, երբ մարդկանց մեծամասնությունն իր թրթիռները կբարձրացնի այնքան, որ դրանք մոտենան սրտի չակրայի թրթռանքին, գիտակցության այդ մակարդակում կչքանան բոլոր բացասական դրսևորումները՝ ձեր շուրջը եղած բոլոր այն բաները, որոնք չեն համապատասխանում աստվածային չափորոշիչներին:

Ուստի ձեզնից ամեն ոք, ով կամենում է մոտենալ Աստծուն, կարող է ջանքեր գործադրել և ցանկանալ ընթանալ իմ Ուղով, այն Ուղով, որը ես ուսուցանում եմ:

Շատերը կան, որ ուզում են բուժարարությամբ զբաղվել, է՛լ ավելի շատ են նրանք, ովքեր ուզում են հրաշքներ գործել՝ քայլել ջրի վրայով, մեռածներին կենդանացնել: Բայց ես ուսուցանել եմ անհամեմատ ավելի կարևոր բաներ, որոնք վրիպում են ձեր գիտակցությունից, քանի որ դրանք արտաքին դրսևորումների տիրույթին չեն պատկանում, այլ գտնվում են ձեր հոգու թաքուն հատկանիշների տիրույթում:

Հարկ է, որ ձեր հոգու պահեստարաններում փնտրեք աստվածային կարողությունը, դեպի հավերժական աշխարհ տանող ձեր Ուղին, դեպի անդորր ու երանություն տանող ձեր Ուղին, հեզության ու խոնարհության Ուղին:

Հատկապես ձեր հոգու հատկանիշներով է որոշվում ձեր հետագա էվոյուցիան, և այն ոչ մի ընդհանուր բան չունի արտաքին դրսևորումների հետ:

Ներքին Ուղի, աստվածային Ուղի: Ձեր մարմնավորման ողջ ընթացքում այդ Ուղին միշտ ձեզ հետ է: Սակայն շատ քչերն են նկատում այդ Ուղին և ընթանում դրանով:

Քանզի շա՛տ են հրապուրանքները ձեր աշխարհում: Եվ ժամանակակից հաղորդակցության ու զանգվածային տեղեկատվության միջոցներն այնքան բարձրագույն են, որ դրանց աղմուկի և խառնաշփոթի հետևում դուք չեք լսում ձեր սրտի ձայնը:

Ես կարող եմ ներկա լինել միայն ձեր սրտերում: Այնժամ, երբ ունակ եք լինում լսելու ձեր սրտի ձայնը, ունակ եք դառնում նաև ճանաչելու ինձ: Դուք ունակ եք դառնում տեսնելու և գրուցելու ինձ հետ:

Մեզ իրարից բաժանում է այն պատրանքը, որով դուք շրջապատված եք: Սակայն ունայն աշխարհը լռում և չքանում է նրանց ջանքերով, ովքեր նկրտում ունեն, ովքեր նվիրված են Աստծուն, հավատում են և սիրում:

Ուստի այս օրով ես եկել եմ, որ խոսեմ ձեր նկրտման մասին: Ձեր նկրտման ու կայունության հատկանիշն ունակ է հաղթահարելու ցանկացած պատենշ, որը հայտնվում է իմ և ձեր միջև:

Միայն թե կամեցե՛ք ջանքեր գործադրել, միայն թե կամեցե՛ք ընթանալ իմ Ուղով: Ես յուրաքանչյուրիդ խոստանում եմ իմ օժանդակությունը: Եվ որքան ուժեղ լինի ձեր նկրտումը, այնքան ավելի ուժեղ կլինեն իմ օժանդակությունն ու օգնությունը:

Ես կամենում եմ օգնել ձեզնից յուրաքանչյուրին: Եվ շատ լավ եմ հասկանում ձեր դժվարությունները: Պատրանքն իր վերջին ջղաձգությամբ փորձում է հետ պահել ձեզ Աստծո մոտ վերադառնալուց: Եվ դա ավելի ու ավելի ակնհայտ է դառնում: Ամենակոպիտ զինամիջոցներն են գործի դրված, որպեսզի հետ քաշեն ձեզ Աստծուց և իմ Ուղուց: Դրանք են կոպիտ երաժշտությունը, ակոհոլը, թմրանյութերը, առարկաներով հրապուրելն ու դրանք ձեռք բերելու անհագ ցանկությունն գրգռելը: Այդ ամենը հակադիր ուժերի ծայրահեղ դրսևորումներն են: Եվ այնժամ, երբ դուք ունակ եք լինում ձեր գիտակցությամբ վեր կանգնելու ձեր կապվածություններից ու քմայքներից, պատրանքի կախարդանքը լքում է ձեր ստորին չորս մարմինները, և դուք ունակ եք դառնում տեսնելու ինձ և ընկալելու Աստծո Աշխարհը:

Միայն ձեր նկրտումից ու ներքին նախընտրանքից է կախված ձեր վերադարձն իմ Աշխարհ: Պետք չէ, որ փորձեք որևէ մեկին տանել ձեզ հետ: Պետք չէ բարձրագույն պահանջել, որ մարդիկ գնան դեպի Աստված:

Ես ձեզ համար մի գաղտնիք կբացեմ: Դա այն է, որ ձեզնից ամեն ոք կարող է միլիոնավոր հոգիների դուրս քաշել պատրանքի փշոտ թավուտից և նրանց ցույց տալ Ուղին՝ հենց ինքը դառնալով այդ Ուղին: Բայց դրա համար պետք չէ որևէ մեկին կանչել ու ստիպել, որ ձեզ հետ միասին ընթանա Ուղով: Աստծո Աշխարհն ավելի նուրբ է գործում: Ձեր փոխարեն կաշխատի այն համահնչունությունը, որին կհասնեք ձեր ներսում: Ձեր թրթիռներն ու գիտակցության վիճակն իրենք Ուղի ցույց կտան այն հոգիներին, որոնք պատրաստ են բռնելու Տունդարձի ճանապարհը:

Ձեր պատրանքը թանձր է, քանի դեռ հավատում եք դրան և կապված եք դրա հետ ձեր գիտակցությամբ: Հենց որ բացահայտեք մի այլ իրականություն, որը ձեր ներսում է, ձեր աշխարհի պատրանքը կմարմրի ու կքանա գիշերվա մշուշի պես: Ձեր գիտակցության աղջամուղջը պայծառանում է Աստծո այն Լույսով, որը դուրս է հորդում ձեր սրտերից:

Աստվածային աշխարհը յոթ սարի հետևում գտնվող ինչ-որ հեռավոր վայրում չէ: Աստծո Աշխարհը մշտապես ձեր կողքին է: Եվ միայն ձեր ամենօրյա ջանքերից է կախված, թե կկարողանա՞ք արդյոք անցնել մեր աշխարհների միջև ընկած շեմը և մոտենալ ինձ:

Ես այնտեղ եմ, որտեղ Դուք եք: Ես կանգնած եմ ուղիղ ձեր առջև և դեպի ձեզ եմ մեկնել իմ օգնության ձեռքը: Կարողացե՛ք տեսնել ինձ: Յրե՛ք պատրանքի մշուշը, որը փակել է ձեր աչքերը, և բռնե՛ք իմ ձեռքը:

Դուք կարող եք հաղթահարել ձեր Ուղու բոլոր արգելապատնեշները: Հենց որ կարողանաք հավատալ Աստծուն և ընդունել Նրա օգնությունը, դուք թելթելություն կզգաք: Եվ կյանքի այն իրավիճակները, որոնցում հայտնվում եք, այլևս ձեզ չեն քթացնի: Քանզի կունենաք այն ըմբռնումը, որ բոլոր դժվարությունները կկարողանաք հաղթահարել: Որքան էլ Ուղին դժվարին լինի, ձեզ կառաջնորդեն հույսը, հավատը և սերը:

Բոլոր խոչընդոտները հաղթահարելի են, եթե Աստծո հետ եք:

Եվ կյանքի ամենածանր իրավիճակներում ներքին Լույսը կլուսավորի ձեր Ուղին:

Ես հավատում եմ ձեզ՝ ձեր նկրտմանն ու նվիրվածությանը: Մենք միասին կհաղթահարենք ցանկացած դիմադրություն և կհասնենք Ուղու այն հատվածին, որտեղից արդեն երևում է աստվածային գազաթի հոգեզմայլ տեսարանը:

ԵՄ ԵՄ Հիմու

Մայր Մարիամ
25 հունիսի, 2012 թ.

Գալիս է խավարի վերջը, և ձեզ առջևում միայն Լույս է սպասվում

ԵՄ ԵՄ Մայր Մարիամը՝ այս օրով ձեզ այցի եկածը:

Այսօրվա իմ գալուստն այնքան ուրախ չէ, ինչքան առաջ: Քանզի տրտմած եմ ես: Եվ իմ տրտմությունը պայմանավորված է հակադիր ուժերի շատ դրսևորումներով, որոնք շփոթեցրել են մարդկությանը և թույլ չեն տալիս տեսնել աստվածային Ուղու հեռանկարը:

Ես նայում եմ երիտասարդությանը, դիտում հասուն ու տարեց մարդկանց: Յուրաքանչյուր սերունդ աշխարհ է գալիս իր առաքելությունն իրագործելու համար: Եվ տխուր է տեսնել, թե ինչպես են մարդիկ տանջվում առանց Աստծո. փնտրում են Նրան և չեն կարողանում գտնել այն աղջամուղջում, որի մեջ այժմ խորասուզված է մոլորակը:

Էվոլյուցիայի ավելի ուրախ ընթացք է ձգտում մուտք գործել ձեր կյանքերի մեջ: Բոլորդ կարիք ունեք, որ ձեզ համար դրսևորվեն Աստծո էներգիաներ, դրանց թվում նաև Աստվածամոր էներգիան, որը ես եմ ձեզ բերում:

Իմ հույսը չի մարում և չի կարող մարել: Ես փորձում եմ իմ ներկայությունը զգալի դարձնել ամենուրեք, որտեղ հնարավոր է: Եթե մտնեք անտառ, ծառերի մեջ ինձ կտեսնեք. եթե բաց դաշտ դուրս գաք, ինձ կտեսնեք երկնքի ամպերի ետնապատկերի վրա. եթե նայեք ճրագին, ես էլի ձեզ հետ եմ, և իմ ներկայությունը դուք կզգաք պատրույգի ճարճատյունի և կրակի բոցի խաղում:

Իսկ եթե սովոր եք նայել իմ սրբապատկերին կամ նկարին, ապա իմ ներկայությունն ամեն անգամվա հետ ավելի ու ավելի զգալի է դառնում, երբ ավելի ու ավելի շատ ժամանակ եք հատկացնում իմ պատկերի վրա մտասևեռվելուն:

Ես ձեզ հետ եմ ձեր կյանքերում: Եվ մեր միջև չկա որևէ պատնեշ: Իմ ներկայությունը ես ցուցաբերում եմ ամեն մի ձգտողի՝ յուրաքանչյուրին, ով իր սիրով ունակ է իր շուրջը ստեղծելու այնպիսի ներդաշնակ մթնոլորտ, որում ես կարող եմ ցուցաբերել իմ ներկայությունը:

Ամեն անգամ, երբ դուք մտածում եք իմ մասին և դիմում ինձ, մենք մերձենում ենք իրար: Եվ մեր հաղորդակցությունը հնարավոր է դառնում՝ անկախ արտաքին անբարենպաստ պայմաններից, անկախ ձեր աշխարհում անորակ էներգիաների գերակայությունից:

Ես ձեզ հետ եմ՝ անկախ ամեն ինչից: Դա իմ սպասավորությունն է: Եվ ամեն անգամ, երբ դուք ժամանակ եք հատկացնում աղոթքին կամ աղոթքային արթնությանը, ես ձեր ջանքերը հազարապատիկ ուժեղացնելու հնարավորություն եմ ստանում: Այդ եղանակով մենք կարող ենք հաղթահարել մութ ուժերի ցանկացած դիմադրություն: Եվ, որքան էլ ծանր լինի, որքան էլ հետին թվով մոլեգնեն խավարի ու քառսի կամայական դրսևորումներ, ես գիտեմ, որ իմ զավակները վաղ թե ուշ իմ կողքին կլինեն:

Ես պարզ տեսնում եմ այն օրը, երբ ձեզնից յուրաքանչյուրը, սիրելի՛ զավակներս, փրկված կլինի և ազատված խավարի ու պատրանքի գերությունից:

Ես պարզ տեսնում եմ այն օրը, երբ դուք կկարողանաք հաղթահարել ձեր գիտակցության բոլոր անորակ վիճակներն ու անցյալի ոչ ճիշտ արարքների հետևանքները:

Ես պարզ տեսնում եմ այն պահը, երբ ձեր դեմքերը կպայծառանան Աստծո Լույսով, և աստվածային երանության այդ վիճակն այլևս երբեք չի լքի ձեզ:

Ես միշտ ձեզ հետ եմ ձեր բոլոր դժվարին կացությունների ժամանակ, որոնցում հայտնվում եք ձեր կյանքերի ընթացքում: Եվ հիմա, երբ կարողացա ձեզ նվիրել իմ սիրո և հոգածության մի մասնիկը, կուզենայի դիմել ձեզ մի խնդրանքով:

Սիրելիներս, մի՛ վիստվեք, մի՛ տրտմեք և մի՛ թաղվեք թախծի մեջ: Ձեր ներսում մի մեխանիզմ կա պահված, որի միջոցով կարող եք ելք գտնել ցանկացած դժվարին խարավիճակից: Ձեր ներսում կուրացուցիչ փայլատակում է Աստծո մասնիկը: Հարկ է, որ օրվա ընթացքում միշտ ժամանակ հատկացնեք Աստծո հետ հաղորդակցվելուն: Հարկ է, որ ձեր ներսում մշտապես աճեցնեք Աստվածայինի զգացողությունը:

Ինքներդ ձեզ ուժով աղոթել մի՛ ստիպեք: Գիտակցության աղոթքային վիճակը բնական պետք է լինի: Եվ դուք պարզապես միշտ պետք է հիշեք մեր համահնչունության և մեր Միասնության մասին: Այնժամ, երբ մտածում եք իմ մասին, դուք արդեն մոտենում եք Աստծուն:

Հարկ է, որ օրվա ընթացքում ավելի շատ ժամանակ հատկացնեք Աստծո հետ ձեր հաղորդակցությանը: Եթե Աստված ամենուրեք ձեզ հետ է, փողոցում լինի, աշխատավայրում, տանը, թե խանութում, ապա ձեր շուրջն ամեն ինչ սկսում է փոխվել, Եվ ձեր կյանքը փոխում է իր հունը՝ մղվելով դեպի զարգացման աստվածային ուղին:

Շատ քիչ ջանք է պետք գործադրել, սիրելիներս: Ես պնդում եմ, որ մշտապես պետք է ձեր գիտակցությունը համալարված պահեք Աստծո Իրականության հետ: Օգտագործե՛ք միջոցների այն ամբողջ զինանոցը, որը մատչելի է ձեզ՝ իմ պատկերները, աստվածային երաժշտությունը, աղոթքը, Վարդարանները: Այն ամենը, ինչ կարող է ձեր գիտակցությունը վեր հանել ձեր աշխարհում տիրող ունայնությունից, ձեզ կմոտեցնի այն Լուսավոր Ուղուն, որն սպասում է ձեզ և անմիջապես կբացվի ձեր հայացքի դեմ, հենց որ ինքներդ ձեզ նախապատրաստած կլինեք:

Այլևս գետնախորշերում թափառելու հնար չկա: Անհրաժեշտ է դուրս գալ լուսավոր Ուղու, աստվածային Ուղու վրա:

Վերջ տվեք ձեր դժբախտությունների ու թշվառությունների համար ուրիշ մարդկանց, որիշ երկրների ու ժողովուրդների, ձեր կառավարությանը, ձեր պետական մարմիններին ու կառույցներին մեղադրելուն: Ձեր շրջապատի ամեն ինչը համապատասխանում է ձեր գիտակցության մակարդակին: Փոխե՛ք ձեր գիտակցությունը, մոտեցրե՛ք այն Աստծուն, և մարդկանց ընդամենը մեկ սերնդի ընթացքում ձեր կյանքերում ամեն ինչ կփոխվի:

Ես ասում եմ ձեզ, որ լուսավոր աստվածային հնարավորությունը շոգարձակում է ուղիղ ձեր քթի դեմ, բայց դուք այն չեք տեսնում: Դուք պետք է ձեր շրջապատը լուսավորեք Աստծո Լույսով, որը դուրս է հորդում ձեր էության խորքից. այնժամ դուք կստանաք ըմբռնում և գիտելիք, որոնք ձեզ անհրաժեշտ են, որպեսզի խավարից դուրս գաք դեպի Լույսը:

Ես այսօր եկա, որպեսզի ձեզ հիշեցնեմ, որ Աստծո հետ ամեն ինչ հնարավոր է դառնում: Եվ դեպի Ընդհանուր Բարօրությունն ու Բարին ուղղված ձեր նկրտումը կօժանդակվի համայն Երկնքի կողմից, ինչպես նաև վրա հասնող Նոր Դարաշրջանի էներգիաներով:

Չարժե՛ տխրել և անելանելիության կրքեր բորբոքել: Ահա ես ասում եմ ձեզ, որ գալիս է խավարի վերջը, և ձեզ առջևում սպասում է միայն Լույս...

*ԵՍ ԵՄ Մայր Մարիամը՝
բոլորիդ նկատմամբ սիրով ու հոգածությամբ լի*

Վեհապետ Սեն Ժերմեն
26 հունիսի, 2012 թ.

Նրանք, ովքեր Աստծո հետ են, վախենալու ոչինչ չունեն...

ԵՍ ԵՄ ՍԵՆ ԺԵՐՄԵՆԸ...

Տիկնա՛յք և պարոնա՛յք, ես կրկին ձեզ այցի եմ եկել, որպեսզի հաստատեմ իմ ներկայությունը և հայտնեմ հարգանքներիս հավաստիքը նրանց, ովքեր անխոնջ աշխատում են իրենց վրա՝ կարդալով մեր Ուղերձները:

Դուք, հիրավի, վիթխարի աշխատանք եք կատարում, պաշտելիներս...

Հասել է այն ժամանակը, երբ միայն աստվածային գիտությունները յուրացնելու ձեր ամենօրյա ջանքերն ունակ կլինեն փոխելու աշխարհի իրադրությունը: Հիմա այն ժամանակն է եկել, երբ ձեր բոլոր ջանքերը կբազմապատկվեն... Եվ թող ձեզ չվրդովի այն, որ ձեր շուրջը տեղի ունեցող փոփոխությունները չեն ընթանում ցանկալի արագությամբ: Ցավոք, մատերիային բնորոշ է իներտությունը, և ձեր ջանքերի արդյունքը կերևա միայն ընթացիկ տասնամյակի վերջում: Իսկ ես

իմ հերթին խոստանում եմ ձեզ, որ Աստծո էներգիայի նոր չափաբաժինը երկիր մոլորակին կհատկացվի խիստ մոտակա ժամանակներում... Շատ շուտով մոլորակի թրթռանքները կբարձրանան նոր մակարդակի վրա...

Ի՞նչ է տեղի ունենում, սիրելիներս, երբ դուք սկսում եք ջանքեր գործադրել, որ կարգ ու կանոն հաստատեք ձեր սեփական տանը կամ գրասենյակում: Այո՛, սկզբում ամեն ինչ շատ անդուր տեսք է ունենում: Դուք տեղաշարժում եք իրերը, որոշ անպետք բաներ դնել եք նետում և մնացած իրերը դասավորում նոր տեղերում: Նույն բանն այժմ տեղի է ունենում ձեր մոլորակի և հենց ձեզ հետ: Նոր Դարաշրջանի էներգիաները բառացիորեն ձեր ստորին չորս մարմիններից դուրս են մղում այն կարմայական նստվածքները, որոնք այնտեղ կուտակվել են միլիոնավոր տարիների ընթացքում: Այդ ձեր հին գիտակցության և հին մտածողության փվածքներն են ձեր շուրջն այդպիսի անդուր տեսք ընդունել: Եվ, իհարկե, առաջին տեղում ձեր վախերն են: Քանզի հենց ձեր և մարդկության ընդհանրական անգիտակցականի այն մասը, որը սերտանել է մութ ու բացասական էներգիաների հետ, վախ է ապրում: Նոր աշխարհում տեղ չկա և չի կարող լինել հին էներգիաների և այն հին մտածողության համար, որը վախի վրա է հիմնված: Ուստի Աստծո ամենակուլ Սիրո էներգիան վախ է առաջացնում ամենայն հնի մեջ: Եվ շատ շուտով ամբողջ հին աշխարհը կփլվի անուժ... Իսկ նոր մտածողությունն ու նոր գիտակցությունը կստանան իրենց իրավունքները:

Սա օրենք է... Ուզենաք թե չուզենաք, ձեր արտաքին գիտակցությամբ ընդունեք թե չընդունեք, նոր կարգը մուտք կգործի աշխարհ:

Առայժմ ձեզ ամեն ինչ անդուր ու անհաճո է թվում: Վստահեցնում եմ ձեզ, որ դա ժամանակավոր բնույթ ունի: Եվ ես պատրաստ եմ ձեզ խորհուրդներ տալու, թե ինչպես նվազագույն դժվարությունների գնով անցում կատարեք զարգացման նոր գալարին: Դրա համար ներքուստ պետք է անվախանաք և հենվեք ձեր իսկ այն մասի վրա, որը փոփոխություններից չի վախենում: Անհրաժեշտ է, որ վերագտնեք ձեր իսկ աստվածային մասի հետ ձեր համահնչունությունը: Միայն Աստծո Աշխարհի հետ համահնչունության այդ դիրքից նայելու դեպքում է, որ դուք կկարողանաք աշխարհում տեղի ունեցողը դիտել ճիշտ տեսանկյունից:

Երբ սկսում եք ձեր բնակարանը մաքրելու գործը, սկզբում տեսարանն այնքան էլ հաճելի չի լինում: Սակայն աշխատանք թափելուն զուգընթաց աստիճանաբար ամեն ինչ նոր տեսք է ստանում և կարգավորվում:

Նույն բանը տեղի է ունենում դարաշրջանների հերթագայման սահմանագծին: Սկզբում ամեն ինչ անհաճո է երևում, և թվում է, թե հնարավոր չէ նոր դարաշրջանի համար պիտանի բաներն առանձնացնել իրենց դարն ապրած բաներից, որոնցից պետք է արդեն հրաժարվել: Բայց եթե զինված եք ընթացող գործընթացներին վերաբերող գիտելիքներով, ապա ավել հեշտ եք կողմնորոշվում և ավելի հեշտ եք դիմանում այն քառսին, որը դեռ առկա է, բայց շուտով կվերածվի նոր կարգավորվածության:

Այս օրով ես եկել եմ, որ ձեզ վստահություն ներարկեմ վաղվա օրվա նկատմամբ: Քանզի այն բանից, թե ներքուստ որքան վստահ կլինեք, որ առջևում ձեզ սպասվում են անհամեմատ ավելի ուրախ ու լուսավոր ժամանակներ, կախված է այն, թե որքան կտևի անցումային ժամանակաշրջանը:

Հարկ կլինի, որ փոխեք ձեր գիտակցությունը, ձեր վերաբերմունքն այն ամենի նկատմամբ, ինչ շրջապատում է ձեզ: Քանզի նոր դարաշրջանը հիմնված կլինի բոլորովին նոր սկզբունքների վրա: Եվ եթե կառչեք ձեր վախից, անհատապաշտությունից ու սահմանափակումներից, ապա հետ կմնաք և կուշանաք Եվոյուցիայի գնացքից:

Քանզի նոր դարաշրջանին բնորոշ կլինեն համայնքայնությունը, ազատությունը և այնպիսի հարաբերությունները, որոնց հիմքում ընկած են բարեկամությունն ու սերը:

Փոխել գիտակցությունն ու մտածողությունը. ահա այն, ինչ հիմա պետք է անել առաջին հերթին... Եվ որքան արագ կարողանաք վերադասավորել ձեր գիտակցությունը, այնքան ավելի քիչ արհավիրքների և դժվարությունների հետ կբախվի մարդկությունը մոտակա ժամանակներում: Քանզի արտաքին անհաջողությունները պայմանավորված են լինում ձեր չկամությամբ, որ վերադասավորվեք և ընդունեք նոր դարաշրջանի էներգիաները:

Ես պարզորոշ կերպով շարադրեցի ձեր առջև դրված խնդիրները: Եվ հիմա ևս մի փոքր ժամանակ պետք է հատկացնեմ, որպեսզի ասեմ, թե ձեզ ինչ կրեքի վրա հասնող դարաշրջանը:

Այնժամ, երբ ձեզ կթվա, թե շրջապատված եք անհաղթահարելի պատնեշների օղակով, հենց այդ պահին պետք է վեր բարձրացնեք ձեր գլուխը և դիմեք Աստծուն: Քանզի նոր դարաշրջանին բնորոշ կլինի վերադարձը անհավատությունից հավատին, այթելզմից՝ աստվածապաշտությանը:

Հարկ կլինի, որ կրկին կարդաք մեր բոլոր Ուղերձները: Պետք է հասկանաք, որ այդ Ուղերձները ձեզ համար Զրիոսի նոր դարաշրջանին անցում կատարելու ուղեցույց են: Կարող եք դրանք դիտարկել որպես աստվածաշունչ նոր դարաշրջանի համար կամ որպես

հանձնարարականներ՝ տրված անցումային ժամանակաշրջանի համար: Ամեն դեպքում, ձեզնից նրանք, ովքեր կկարողանան հաղթահարել ներքին դիմադրությունը և լրջորեն խորասուզվել նոր դարաշրջանի հանձնարարականներն ուսումնասիրելու գործում, առավելություն ձեռք կբերեն այն մարդկանց նկատմամբ, որոնք այնքան անխելք են, որ փորձում են նոր դարաշրջանին հարմարեցնել անցած դարաշրջանի չափանիշները:

Ես ուրախ կլինեմ օգնության ձեռք մեկնելու և օժանդակելու այն խիզախ առաջամարտիկներին, որոնք համարձակություն են ունեցել հետևելու մեր խորհուրդներին և անվախ մղվելու դեպի Նոր դարաշրջան՝ իրենց էության առազաստները բացելով բարեփոխումների քամու դեմ:

Մի՛ վախեցեք ոչնչից: Նրանք, ովքեր Աստծո հետ են, վախենալու ոչինչ չունեն:

ԵՄ ԵՄ Սեն Ժեռմենը

Վեհապետ Լանելլո

27 հունիսի, 2012 թ.

Զրույց դեսպանորդության և Աստծո ողորմածության մասին

ԵՄ ԵՄ Լանելլոն:

Ինչպես կարող եք նկատել, մեր դեսպանորդի միջոցով մեր Ուղերձների փոխանցման աստվածային ողորմածությունը շարունակվում է:

Ես պետք է ասեմ, որ այս հրաշքում, որը շարունակվում է արդեն ութ տարի, առանձնապես ներդրում չունեն այն մարդիկ, ովքեր գտնվում են մարմնավորման մեջ և անմիջական մերձավորություն ունեն մեր դեսպանորդի հետ: Այո՛, սիրելիներս, ամեն անգամ, երբ Երկինքն իր թողության շնորհն է բացում և դրսևորում իր ողորմածությունը մարդկությանը, մենք հույս ենք կապում, որ մեր ու մեր դեսպանորդի ջանքերն առավել մեծ օժանդակություն կստանան ձեր աշխարհում:

Բարերախտաբար, դեռևս առկա է ընձեռված հնրավորության շարունակությունը: Ես պետք է ամենայն որոշակիությամբ ու պատասխանատվությամբ հայտարարեմ, որ այս անգամ ողորմածությունը շարունակություն ստացավ Տեր Սանատ Կումարայի երաշխավորանքի և միայն Նրա շնորհիվ:

Մռայլ ու դաժան դրսևորումներն անպակաս են ձեր կյանքերում: Եվ եթե Համբարձյալ Դասերը չհասկանալին ձեր այն դժվարություններն ու սահմանափակությունները, որոնցում ստիպված եք գոյատևել, ապա մենք չէինք փորձի ձեզ ցուցաբերել հնարավոր ամբողջ օգնությունը: Հուսով եմ, որ իմ այս Ուղերձը հենց այնպիսի օգնություն կհանդիսանա, ինչպիսին ձեզ հասցնում են Համբարձյալ Դասերը:

Ես եկել եմ, որպեսզի տամ ոչ մեծ հանձնարարականներ, որոնք, հուսով եմ, ձեզ համար օգտակար կլինեն, և դուք դրանք կօգտագործեք մոտակա ժամանակներում:

Օրինակ՝ դուք պետք է հասկանաք ու գիտակցեք, որ Ուղերձների փոխանցման հնարավորությունը շարունակություն կունենա միայն այնքան ժամանակ, քանի դեռ մենք ունենք համապատասխան ուսուցում անցած փոխանցիչ՝ մեր դեսպանորդին: Վերջին շատ հազարամյակների ընթացքում Իմաստության Տիրակալները մշտապես օգտագործել են դեսպանորդության ինստիտուտը, որպեսզի գիտելիքներ և Ուսմունք փոխանցեն մարդկանց: Իհարկե, ամեն մի դեսպանորդ իր թրթիռների և իր ընկալումների կնիքն է դնում այն տեղեկատվության վրա, որը փոխանցվում է: Սակայն այդպիսին է ժամանակը, որով անցնում են մոլորակն ու մարդիկ: Մատերիական աշխարհի չափազանց մեծ թանձրությունը հնարավորություն չի տալիս բավարար մաքուր և առանց աղավաղումների տեղեկատվություն փոխանցելու եթերային օկտավաներից: Մեզ հաջողվում է սոսկ պահպանել շարժման ընդհանուր ուղղությունը՝ ցույց տալով ձեր հոգևոր առաջընթացի և հոգևոր որոնումների ուղղությունը:

Իսկ առանց այդ առաջնորդության մարդկությունն ի վիճակի չէր լինի թեկուզ մեկ հարյուրամյակի ընթացքում շարունակելու իր հետագա էվոյուցիան: Ուստի կանոնավորապես Լույսի առաքելություններ են առաքվում դեպի ֆիզիկական աշխարհ: Յուրաքանչյուր հարյուրամյակում մարմնավորված են լինում մի քանի դեսպանորդներ և ավետաբերներ: Սակայն ոչ բոլոր առաքելություններն են հաջող ընթացք ստանում: Շատ առաքելություններ ընդհատվում են իրենց ուղու ամենասկզբում: Գաղտնիք չէ, որ իր առաքելությունն սկսելուց առաջ մեր ամեն մի դեսպանորդ խստագույն թեստեր է անցնում: Բոլոր այդ թեստերն ստուգում են նվիրվածության և գործունեության արդյունքին ու ֆիզիկական աշխարհին կապված չլինելու աստիճանը:

Քանի որ աշխարհն այժմ չափազանց թանձր է, ապա դեսպանորդների համար ավելի ու ավելի է դժվարանում թեստեր անցնելը, նաև ավելի դժվար է դառնում առաքելության ողջ ընթացքում մշտական ծանրաբեռնվածությանը դիմանալը: Դժվարություն է հարուցում աշխարհիկ, ներկայացուցչական առաքելության և նուրբ ոլորտներում կատարվող ներքին աշխատանքի համակցումը, ինչը վիթխարի ջանքերի գործադրում է պահանջում: Դեսպանորդի ուսերին բեռ է դրվում թե՛ ֆիզիկական ոլորտի, թե՛ Լինելիության նուրբ ոլորտների կողմից: Սկզբունքորեն իրարից տարբերվող որակներ են պահանջվում, որպեսզի դեսպանորդը և՛ հաղորդակցվի Համբարձյալ Դասերի հետ, և՛ համարժեք կապ պահապանի իշխանական աշխարհիկ մարմինների ու կառույցների հետ:

Եվս մեկ անգամ կրկնեմ, որ այն բեռնվածությունը, որը դեսպանորդը կրում է իր ուսերին, հաճախ մարդկային հնարավորությունների սահմանագծի վրա է: Ավելին ասեմ. եթե Համբարձյալ Դասերի օգնությունը չլիներ, Լույսի ոչ մի առաքելություն չէր կարող իր գոյությունը շարունակել մի քանի ամսից ավելի երկար: Լույսի բոլոր առաքելությունները պահանջում են վիթխարի պահուստային ուժերի ներդրում և էներգետիկական ծախսեր, որոնք հատկացվում են Կարմայական Վարչության և Մեծ Կենտրոնական Արևի կողմից:

Ուստի, որպեսզի մեր առաքելություններն ավելի հաջող ընթանան, նաև ձեր ներդրումն է պահանջվում՝ ձեր ջանքերն ու ունակությունները:

Պատկերացրեք մի մարդու, որն իր փողերը ներդնում է մի բիզնեսի մեջ, որը գտնվում է երկրագնդի մյուս ծայրին: Ամեն մի հաշվետու ժամանակահատվածում այդ գործարարը պետք է վստահություն ձեռք բերի, որ իր ներդրումները եկամուտ են բերում, այլապես նա ստիպված կլինի իր գործունեությունը տեղափոխել երկրագնդի մի ուրիշ վայր: Եվ եթե այն երկրի բնակիչները, որում տեղի է ունենում դրամական միջոցների ներդրում, ոչ թե նպաստում են նրա գործունեությանը, այլ նույնիսկ խանգարում, ապա 100 տոկոս հավանականությամբ այդ գործարարն իր աշխատանքն ու բիզնեսը կտեղափոխի մի այլ երկիր, որն իր համար կապահովի ավելի բարենպաստ պայմաններ:

Դեսպանորդության հետ համամանությունն այստեղ լիակատար է: Մենք էներգիա ենք ներդնում Լույսի առաքելության իրականացման համար: Եվ մենք որոշակի պարբերականությամբ վերահսկողություն ենք իրականացնում, որ մեր ներդրումներն արդարացված լինեն:

Եթե վերոհիշյալ դատողությունները կիրառենք մեր դեսպանորդի առաքելության նկատմամբ, ապա ի՞նչ կտեսնենք...

Ութ տարիների ընթացքում ամենաբարձր տիեզերական խորհուրդների որոշմամբ էներգիա է հատկացվել մեր դեսպանորդի առաքելությանն օժանդակելու համար: Աստծո էներգիան զուգակցվում է նաև զուտ մատերիական էներգիայի հոսքով, որն ինքնաբերաբար հասնում է այն երկրին, որում իրականացվում է մեր առաքելությունը: Եվ եթե հետևեք վերջին տարիների ընթացքին, ապա կտեսնեք, որ ամենազարմանահրաշ ձևով Ռուսաստանը ծանր ժամանակներից անցում է կատարել հարաբերական ֆինանսական բարեկեցության:

Եվ հետո ի՞նչ ենք տեսնում. արդյոք այդ բարեկեցությունը նպաստում է, որ ապահովվի որոշակի կրթական մակարդակ, որպեսզի ապագա սերունդը հնարավորինս ավելի շուտ պատկերացում ստանա Աստծո և Աստծո Օրենքի մասին, որը գործում է այս աշխարհում:

Որքանո՞վ է ավելի շատ ուշադրություն դարձվում ընչազուրկներին և զրկյալներին օգնելու աշխատանքին. դեպի լա՞վն են փոխվում արդյոք սոցիալական քաղաքականությունն ու առողջապահությունը...

Ես պետք է ձեզ ասեմ՝ որևէ նման բան մենք չենք տեսնում: Աստծո էներգիայի այն ամբողջ հոսքը, որը դրսևորվում է որպես դրամական էներգիա, ծախսվում է զվարճանքի կենտրոնների ու խանութների կառուցման համար, քարոզվում է սխալ կենսակերպ՝ ազատ վարք և սեռական սանձարձակություն:

Ի՞նչ եք կարծում. Աստծո Օրենքը թույլ կտա՞ արդյոք շարունակել Ռուսաստանին հատկացվող աստվածային հնարավորությունը՝ մի երկրի, որում այս ամբողջ ընթացքում գտնվել է մեր դեսպանորդը:

Ես չեմ կարող ասել, թե այս անգամ ինչպիսին կլինի Կարմայական Վարչության որոշումը: Նիստն առայժմ շարունակվում է: Բայց եթե նույնիսկ դատենք մարդկային գիտակցության մակարդակով, ապա կարճաժամկետ միայն էներգիայի ապարդյուն ծախս:

Ուղերձներ փոխանցելու հնարավորության հատկացումը Երկնքի մեծագույն ողորմածությունն է: Եվ ստիպված ենք զարմանալ, թե որքան են արժեզրկվել ձեր աշխարհում ճշմարիտ արժեքները: Երկնքի ողորմածությունը դուք դիտում եք որպես թուլության նշան և ինքներդ ձեզ արժանի էք համարում Աստծո էներգիայի հոսքի առատությանը:

Քանի դեռ դուք չեք վերանայի ձեր արտաքին ու ներքին կողմնորոշիչների ուղղվածությունը, կշարունակեք դասեր քաղել ձեր սխալ նախընտրանքների կարմայի վերադարձով:

Կարո՞ղ եք մի պահ պատկերացնել, թե ինչպիսի կարմա է ստեղծում այն ժողովուրդը, որն Աստծո էներգիան օգտագործում է ոչ թե աստվածային կերպերի, այլ դրանց ճիշտ հակառակ կերպերի հաստատման համար:

Գովազդների ու տեղեկատվության զանգվածային միջոցների օգնությամբ քմայքների փքումը հանգեցնում է ֆիզիկական ոլորտում ոչ ճիշտ արարքների, որոնք կարմա են ծնում: Իսկ կարման վաղ թե ուշ պետք է բեռնաթափվի, որովհետև այդպիսին է Օրենքը:

Եվ հենց այստեղ է, որ Աստված հնարավորություն է ընձեռում և դրսևորում ողորմածություն: Ապաշավանքի, սխալ գործողությունների ու մեղքերի գիտակցման միջոցով կարելի է քավել արարքների հետևանքները: Սակայն ազգի գիտակցությունը դեռ պետք է հասնի ապաշավանքի մակարդակին:

Եթե վերհիշենք այդ երկրի ոչ շատ վաղ անցյալը, երբ տեղի ունեցավ ցարական ընտանիքի գնդակահարությունը, և դրան հետևեցին խավարում անաստված դեգերումների տասնամյակները, ապա կարող ենք արձանագրել, որ ներկայումս այդ երկրում մարմնավորվածների մեծամասնությունը հիմա էլ չի զգում ապաշավանքի և գղջման անհրաժեշտությունը:

Յուրաքանչյուր արդար արարքի համար Աստված ձեզ դրա հազարապատիկը կտա: Բայց ինչու՞ դուք չեք կատարում այն...

ԵՄ ԵՄ Լանդլոն

Վեհապետ Կուրծիումի
28 հունիսի, 2012 թ.

Որոշ պարզաբանումներ Կարմայի և Վերամարմնավորման Օրենքների վերաբերյալ

ԵՄ ԵՄ Կուրծիումին:

Այսօրվա մեր գրույցի թեման կրկին ձեր գիտակցությունը կլինի: Քանզի ներկայումս ձեզ համար չկա դրանից ավելի կարևոր բան: Ձեր գիտակցության միջոցով է, որ կա՛մ մոտենում եք Աստծուն, կա՛մ հեռանում եք Աստծուց: Այսպիսով, ձեր կյանքում ամեն ինչ որոշվում է ձեր գիտակցության մակարդակով:

Ուստի առանց շտապելու եկեք մտորենք հավերժական թեմաների շուրջ:

Նախքան ձեզ այցի գալս իմ մենաստանում ես գրուցել եմ Դեսպանորդի հետ: Եվ այդ գրույցի ընթացքում ես փորձում էի հասկանալ, թե ինչպես ավելի լավ կլինի ձեր գիտակցությանը հասցնել այն խնդիրները, որոնք օրախնդիր հարցեր են դարձել մարմնավորված մարդկության համար: Եվ գիտե՞ք, ես զարմանքով նկատեցի, որ բոլոր այն գիտելիքներն ու ըմբռնումները, որոնք անհրաժեշտ է հացնել ձեզ, մենք արդեն տվել ենք այն թելադրություններով, որոնք պարբերաբար և ընդհատումներով այս վերջին ութ տարիների ընթացքում ձեզ ենք փոխանցել մեր Դեսպանորդի միջոցով:

Արդեն ասվածին ոչինչ չունեմ ավելացնելու:

Եվ միայն այն բանի համար, որ օգտագործեմ ընձեռված աստվածային հնարավորությունը և շարունակեմ այսօրվա գրույցը, ես կկրկնեմ որոշ ճշմարտություններ ձեզ համար, ձեզ, որ մոտեցել եք, որպեսզի ծանոթանաք այսօրվա Ուղերձի բովանդակությանը:

Մերթ ընդ մերթ ես գալիս եմ, և մեր գրույցները հիշեցնում են այնպիսի տեսարան, կարծես նրբագույն գործիքներով՝ ունելիով ու հերյունով, փորձում եմ գտնել ու ցույց տալ ձեզ այն նուրբ պրոցեսները, որոնք ընթանում են ձեր գիտակցության մեջ: Քայլ առ քայլ ես ցույց եմ տալիս ձեզ, թե ինչպես պետք է վարվեք այս կամ այն իրավիճակում, որ կարողանաք պահպանել ձեր ներսի Աստծո մասնիկը և դրա հետ անմիջական կապ հաստատեք:

Եվ մեծ է լինում իմ զարմանքը, երբ մեր գրույցներից հետո դուք ձեր էությունը տրամադրում եք մի ամբողջ բեռնատար լիքը անկատարությունների՝ ներառյալ հեռուստացույցն ու զանգվածային խրախուսանքներին ձեր մասնակցելը:

Կարո՞ղ եք պատկերացնել, թե զանգվածային գիտակցության ինչպիսի՜ ահռելի աղբակույտ եք ընդունում ձեր ենթագիտակցության մեջ, երբ մասնակցում եք անորակ երաժշտությամբ ու ցածր թրթիռներով լի զանգվածային միջոցառումներին, որոնց հավելվում է նաև խորոված մսի ու ակոհոլի հոտը:

Մեր վարած գրույցները և հեռուստացույցի ու մարդկանց հոծ զանգվածների հետ անցկացրած ձեր ժամանցային զվարճանքներն իրարից խիստ տարբեր քաշային կարգերի պատկանող բաներ են: Եվ դուք պետք է մեկընդմիջտ կողմնորոշվեք և որոշում կայացնեք, թե ո՞ր ուղղությամբ եք մտադիր գնալ՝ դեպի աստվածային գիտակցության գագաթը, թե՞ դեպի պատմության աղբանոցը:

Ո՛չ, ես չեմ կարող ձեզ ինչ-որ բան արգելել, ձեզ զրկել ձեր զվարճանքներից կամ ձեր սիրելի կապվածություններից որևէ մեկից: Միայն ինքներդ կարող եք որոշում կայացնել և գործել դրան համապատասխան: Իմ խնդիրն է ձեզ պարզապես գիտելիք և ըմբռնում տալ այն մասին, թե ինչ կկատարվի ձեզ հետ թե՛ մեկ և թե՛ մյուս դեպքում:

Նկատի՛ ունեցեք. ես ձեզ չեմ ահաբեկում և որևէ բռնության չեմ դիմում: Մենք պարզապես խաղաղ գրույցում ենք, և ես ձեզ բացատրում եմ ձեր արարքների հետևանքները:

Մեր ուսուցման գլխավոր անկյունաքարերից են Կարմայի Օրենքը և Վերամարմնավորումների Օրենքը: Քանզի մնացած ամեն ինչը սոսկ Ուսմունքի այդ երկու հիմնարար դրույթների հետևանքն է:

Օրինակ՝ ոչ ոք վեր չի կենա ու ձեզ արգելի, որ կամայականորեն տնօրինեք ձեր սեռական էներգիան: Դուք կարող եք ուզածներիդ չափ չարաշահել այն: Բայց պետք է հասկանաք, որ որքան շատ շռայլեք ձեր սեռական կարողությունը, այնքան ավելի քիչ էներգիա կմնա ձեզ, որպեսզի շարունակեք ձեր էվոլյուցիան. այնքան ավելի թույլ կլինի ձեր սերունդը, եթե այն ընդհանրապես լինի, և այնքան ավելի շատ հիվանդություններով կծանրաբեռնեք ձեզ ու ձեր մերձավոր ազգականներին:

Ի վերջո, դա ինչի՞ կհանգեցնի՝ միայն հետընթացի և այլասերման: Եվ ընդամենը մի քանի սերնդից հետո ձեր ընտանիքն ու ձեր տոհմը հասարակության առողջ բջջից կվերածվեն տնանկ ու հիվանդ մարդկանց խմբի, որոնք ունակ չեն լինի հետագա էվոլյուցիայի:

Իսկ եթե ուզում եք, որ ձեր տոհմը բարգավաճի, և դուք էլ մինչև ձեր կյանքի ավարտը հրաշալի առողջություն ունենաք, ապա ձեզ կվիճակվի սեռական զսպվածություն ու մաքրակյացություն պահպանել: Ինչպես տեսնում եք, ես ոչինչ չեմ հորինում, այլ պարզապես ձեզ տրամաբանորեն բացատրում եմ Կարմայի կամ հատուցման Օրենքի գործողությունը:

Իսկ եթե ավելի մանրամասն քննարկման դնենք Վերամարմնավորումների Օրենքը, ապա մեծագույն հավանականությամբ դուք նորից կծնվեք այն նույն տոհմի կազմում, որում այժմ մարմնավորված եք: Եվ եթե հիմա հոգ չտանեք ձեր ընտանիքի բարոյականությունը պահպանելու համար, ապա մի քանի տասնամյակ հետո դուք կմարմնավորվեք այդ նույն ընտանիքի կազմում, բայց այն արդեն ծանրաբեռնված կլինի բազմաթիվ հիվանդություններով, որոնցից շատերն անհամատեղելի կլինեն կյանքի հետ: Այդ եղանակով այլասերվում ու վերանում են նրանք, ովքեր հետևում են ոչ թե Աստծո Օրենքին, այլ այն զանգվածային գիտակցությանը, որն այժմ հաստատված է ձեր հասարակությունում:

Հավատացե՛ք ինձ, երկրային չափանիշներով այնքան էլ շատ ժամանակ չի անցնի, և զանգվածային գիտակցության բոլոր հետևորդները ստիպված կլինեն քարշ տալու իրենց խղճուկ գոյությունն անկատար մարդկանց համար ստեղծված այնպիսի ռեզերվացիաներում, ինչպիսիք հիմա Ավստրալիայի բնիկների բնակության վայրերն են:

Ես այսօր ձեզ հետ շատ կարևոր գրույց ունեցա: Եվ այն այնքանով է այժմեական, որքանով որ ավելի քիչ ժամանակ է մնացել ամբողջ մարդկության համար, որպեսզի որոշի, թե ո՞ր ուղղությամբ է ընթանալու՝ այն ուղով, որն ուսուցանում են Համբարձյալ Վեհապետներ՞ը, թե՞ այն ուղով, որը բռնի կերպով պարտադրվում է տեղեկատվության զանգվածային միջոցների կողմից:

Ես մեծ հույսեր եմ կապում, որ գոնե մեկ տասնորդական մասն այն մարդկանց, որոնք կծանոթանան իմ այս Ուղերձին, լրջորեն կմտորեն, թե իրենց գիտակցության վրա ինչպիսի՞ հետևանքներ են թողնում այն բաներից շատերը, որոնք ազատորեն քարոզվում են հասարակությունում՝ չլինելով ձեր էության համար այնքան օգտակար, որքան մեր Ուղերձները:

ԵՄ ԵՄ Կոլոթուսին

**Մենք այլևս հնարավորություն չունենք
շարունակելու մեր աշխատանքը Ռուսաստանի տարածքում**

ԵՍ ԵՄ Վեհապետ Մորիան:

Ես այս օրով եկել եմ, որ ասեմ այն, ինչ անհրաժեշտ է, և պահն էլ՝ հասունացած: Ինչպես գիտեք, այս շրջանի թելադրությունները մենք տալիս ենք Լատվիայում: Եվ թելադրությունների այս շրջանը նախապես պլանավորված չէր: Ավելի ստույգ, այն պետք է կայանար, սակայն այն խոչընդոտները, որոնք ի հայտ եկան ու տեղի ունեցան մեր դեսպանորդի Աշրամում, ի չիք դարձրին աստվածային հնարավորությունը Ռուսաստանի համար: Եվ թելադրությունների ամառային շրջանը կասեցված էր:

Նրանց համար, ովքեր ծանոթ չեն ընթացիկ իրավիճակին, համառոտ ասեմ, որ վերջին երկու տարվա ընթացքում Լինելիության բոլոր պլաններում հրեշավոր հարձակումներ եղան մեր դեսպանորդի դեմ: Եվ առաքելությունը շարունակվում էր անասելի ջանքերի գնով, քանի որ մենք ուրիշ հնարավորություն չէինք տեսնում, որ շարունակենք Երկրի մարդկությանն ուսուցանելու գործը:

Մենք շարունակում էինք մեր գործը և Ուղերձներ էինք տալիս ընդհուպ մինչև այն պահը, երբ դեսպանորդի Աշրամը հրդեհի ճարակ դարձվեց:

Առանձնապես խորաթափանց լինելու կարիք չկա՝ հասկանալու համար, որ դրանով սոսկ ֆիզիկական պլան իջավ այն ողջ բացասականը, որը նուրբ ոլորտում կուտակվել էր մեր դեսպանորդի շուրջ:

Նաև ձեզնից շատերը, որ շարունակում եք կարդալ մեր Ուղերձները, ոչ քիչ ջանքեր գործադրեցին՝ նուրբ ոլորտում հրդեհի նախադրյալներ ստեղծելով իրենց մտքերով, զգացմունքներով և նույնիսկ մեր դեսպանորդի դեմ ուղղված անմիջական գործողություններով:

Ձեզ հայտնի է, որ մեր դեսպանորդի դեմ ուղղված ցանկացած գործողություն շատ ծանր կարմա է առաջացնում, և այդ կարման ընկնում է նաև այն երկրի վրա, որի տարածքում իրականացվում է Լույսի առաքելությունը:

Այդ եղանակով էլ վերջին իրադարձությունները ծայրահեղ բացասական կարմա առաջացրին Ռուսաստանի համար: Եվ այդ կարման իր չափերով համեմատելի է այն կարմայի հետ, որն ստեղծվեց ցարական ընտանիքի գնդակահարության հետ կապված:

Ի՛նչ արած, շա՛տ ցավալի է ինձ համար... Ես և մյուս Վեհապետներն ավելի մեծ հույսեր էինք կապում մարմնավորված մարդկանց գիտակցության մակարդակի հետ: Մենք հուսավառ էինք նրանով, որ Ռուսաստանի տարածքում առաջին անգամ այդքան երկար ժամանակով հնարավորություն ունենք ազատորեն տալու մեր ուղերձները:

Մենք հուսավառ էինք այդ հնարավորությամբ և կանխավ պաշտպանիչ քայլեր չձեռնարկեցինք մեր դեսպանորդի համար: Լույսի ուժերի միջամտությունը տեղ հասավ հրդեհի ընթացքում դեսպանորդի հղած կանչից 7 վայրկյան անց: Մենք կատարեցինք անհնարինը. բոլորը կենդանի մնացին, և այն ամենը, ինչ Համբարձյալ Դասերի օգնությամբ կառուցել էր մեր դեսպանորդը, անվնաս մնաց: Տուժեց միայն Լույսի գործը՝ մեր առաքելությունը Ռուսաստանում:

Աստծո և Վեհապետների դեմ ձեռնարկված ցանկացած ուղիղ գործողություն պետք է իր հատուցումը ստանա: Սա օրենք է, որը գործում է համայն տիեզերքում:

Ես ստիպված եմ փաստել այն տխուր իրողությունը, որ մոտակա ժամանակներում Ռուսաստանին կվիճակվի բեռնաթափել անաստվածության նորաստեղծ կարման:

Եվ սա ահավոր բան է, քանզի այն ամբողջ Լույսը, որը հորդեց այդ երկրի տարածքում և չկիրառվեց Աստծո պլանների իրականացման գործում, այժմ որպես կարմայական բեռ նստած է այդ երկրի ժողովրդի ուսերին:

Լույսի ուժերը հավասար ու հակադիր ուղղված ազդեցություն են կիրառում խավարի ուժերի ձեռնարկումների դեմ: Հենց որ խավարի ուժերը դրսևորում են իրենց, Համբարձյալ Դասերն իրավունք են ստանում ուժով կապկպելու իրենց հակադիր ուժերին:

Աշխարհին տիրած անկատարությունը թույլ չի տալիս, որ ամեն ինչ տեղի ունենա առանց զոհերի և արյունահեղության:

Մարդկանց գիտակցությունը դեռևս հնարավորություն չի տալիս, որ ընտրվեն ավելի հավասարակշիռ և խաղաղ ուղիներ:

Ես այսօր ձեզ ավելին ասացի, քան կարող էր թույլ տալ Կարմայական Վարչությունը:

Իմ շարժառիթն այն է, որ ձեզ բացատրեմ տեղի ունեցածի ամբողջ ծանրությունը և թե ինչ իրադարձություններ կծնի դրա ստեղծած կարման:

Իսկ հիմա, երբ ձեզ բացատրեցի վերջերս տեղի ունեցած դեպքերի բուն էությունն այնպես, ինչպես դրանք երևում են իմ համբարձյալ գիտակցության մակարդակից, պետք է ասեմ նաև, որ մենք այլևս հնարավորություն չունենք շարունակելու մեր աշխատանքը Ռուսաստանի տարածքում: Որովհետև մեր բոլոր գործողությունները կառաջացնեն ավելի ու ավելի մեծ դիմադրություն: Իսկ մենք այլևս չենք ուզում վտանգի ենթարկել մեր դեսպանորդին ու նրա առաքելությունը:

Ես ձեզ ասացի բավարար շատ, որպեսզի մտորեք:

Ավելի շատ, քան ես ասացի, ձեզ ոչ ոք չի ասի:

Մտորե՛ք և հասկացե՛ք, որ դեռ երբեք այսպիսի հնարավորություն ընձեռված չէր եղել, ինչպիսին այս անգամ իրականացվեց մեր դեսպանորդի միջոցով: Դեռ երբեք մեր ուղերձները նույն օրվա ընթացքում այսպես չէին տարածվել միաժամանակ ամբողջ երկրագնդով մեկ:

Մարդկությունը որոշ ժամանակ անց կգնահատի մեր ջանքերը...

Ես լիահույս եմ, որ այդպես կլինի...

Իսկ այժմ ստիպված եմ հրաժեշտ տալու ձեզ...

ԵՍ ԵՄ Էլ Մորիա Խանը

Ուղերձների 17-րդ շրջան (դեկտեմբեր, 2012 թ.)

Սանատ Կումարա
21 դեկտեմբերի, 2012 թ.

Այժմ եկել է ձեր գործելու ժամանակը

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան: Ես կրկին եկել եմ:

Մենք այցելում ենք ձեզ՝ մարմնավորման մեջ գտնվողներիդ, որպեսզի ցուցաբերենք այն հնարավոր օգնությունը, որն անհրաժեշտ է ձեզ:

Ամեն անգամ նախքան գալստիս երթարային օկտավաներից ձեր թանձր աշխարհին մեր Ուղերձները տալու Աստծո նոր ողորմածության դուռ բացելու երկարատև ներխուժումով մանրագնին ընտրում եմ այն խոսքերը, որոնք տվյալ պահին կարող են առավելագույն օգնություն և օժանդակություն լինել ձեզ համար: Գիտեմ, որ ձեզնից շատերն սպասում էին այս մեծ ողորմածությանը և բազմիցս մտնում էին համացանցի մեր էջը՝ համոզվելու համար, որ Աստված և Վեհապետներն իրենց չեն լքել:

Այո՛, սիրելիներս, ֆիզիկական աշխարհում որքան ծանր է լինում լուսակիրների՝ մեր աշակերտների համար, այնքան ավելի մեծ ցանկությամբ ու հաճությամբ եմ ես գալիս, որպեսզի օգնության ձեռք մեկնեմ նրանց, ովքեր ծարավ են ազատագրման, ովքեր իրենց ողջ էությանը պատրաստ են ընկալելու մեր նորացման էներգիաները, որոնք մենք անխոնջ կերպով առաքում ենք ձեր աշխարհ՝ այդ թվում նաև մեր Ուղերձների միջոցով:

Ես գիտեմ, որ ձեզնից շատերը հատուկ սպասում էին իմ այսօրվա Ուղերձին: Եվ դա կապված է շատ պատճառների հետ: Իսկ դրանցից գլխավորն այն է, որ լուսակիրների համար ավելի ու ավելի է դժվարանում մոլորակի ֆիզիկական ոլորտի համակշռությունը պահպանելը: Իրոք, այդպես է:

Թույլ տվեք հիշեցնել նախքան ձեր մարմնավորվելը եղած այն ակնթարթները, երբ ձեզ տրվում էին հանձնարարականներ և խրատներ:

Դուք պետք է հիշեք ձեր առաքելությունը:

Պետք է հիշեք հենց հիմա:

Ամեն անգամ, երբ աշխարհի որևէ ճնշող էներգիա փորձում է տիրել ձեր էությանը, դուք պետք է հիշեք, որ պարտավոր եք չենթարկվել այդ էներգիայի ազդեցությանը: Անցյալի բոլոր այն բացասական էներգիաները, որոնք առկա են ձեր աշխարհում և հիմա թանձր օդակով շրջապատել են ձեզ, դուք պետք է հաղթահարեք ձեր ներքին ջանքերով:

Հատկապես հիմա է եկել ձեր գործելու ժամանակը: Ձեր ներքին ձեռքբերումները, որոնք դրսևորվում են որպես ձեր սրտի կրակներ, որպես ձեր աուրայի շողարձակում, որպես լուսապսակ ձեր գլխավերևում հենց այժմ ձեր կողմից պետք է կիրառություն գտնեն: Ցանկացած բացասական հատկանիշ, որը դուրս է լողում ձեր ներսից կամ ձեզ է հասնում շրջակա տարածությունից, պետք է ձեր աշխատանքով անհապաղ չեզոքացվի:

Դա ձեր ներքին աշխատանքն է մտքերի և զգացմունքների ոլորտներում, աստեղային ոլորտում: Դա ձեր հոգևոր թաքուն մկանների աշխատանքն է, որոնք պետք է մարզելիք այն տարիների ընթացքում, երբ կարդում էիք մեր Ուղերձները:

Հենց հիմա է, որ դուք պարտավոր եք ջանք թափել: Զանգի Երկիր մոլորակի ապագան կախված է հենց այն աշխատանքի արդյունավետությունից, որը դուք հիմա կատարում եք՝ հաղթահարելով ցանկացած բացասական վիճակ:

Եթե ձեզ հաջողվի գլուխ հանել ցանկացած բացասական վիճակից, որը պտտվում է ձեր գլխավերևում, եթե կարողանաք հաղթահարել ձեր գիտակցության բոլոր բացասական վիճակները, ապա երաշխիք կստեղծեք, որ ֆիզիկական ոլորտը չի ենթարկվի հերթական տարերային աղետի, բնապահպանական արհավիրքի կամ սոցիալական պայթյունի ազդեցությանը:

Մեփական գիտակցությունն ու ենթագիտակցությունը փոխելու ձեր նրբին աշխատանքն ունակ է կանխելու ցանկացած տարերային աղետ:

Եվ այնժամ, երբ Համբարձյալ Դասերը կհամոզվեն, որ բավարար քանակությամբ անհատականություններ կան, որոնք կարողանում են վերահսկել իրենց շրջակա տարածությունը և դեկավարել մատերիայում առկա էներգիաները Երկիր մոլորակի համար կբացվեն նոր թողության շնորհներ և աստվածային ողորմածություններ:

Այժմ եկել է ձեր այն հիմնական աշխատանքը կատարելու ժամանակը, որի համար դուք մարմնավորվել եք: Ձեր ներքին նվաճումների միջոցով անհրաժեշտ է մշտապես պահպանել էներգիաների համակշռությունը:

Ձեր էգոն կջանա ձեզ տանել կեղծ ճանապարհով, որ մեղադրեք ուրիշ մարդկանց, ձեր երկրի կառավարությանը, իշխանական մարմիններին: Միշտ էլ կան այնպիսի ուժեր, որոնք փորձում են էլ ավելի ճոճել նավակը՝ օգտվելով ամեն մի բացասական էներգիայից:

Մեր Ուսմունքի հիմնական դրույթը, որը մենք անխոնջ կերպով մատուցում ենք մարդկության զարգացման ամբողջ պատմության ընթացքում, այն է, որ եթե ձեզ հետ ինչ-որ բան է կատարվում, ապա դրա պատճառը ինչ-որ ժամանակ հենց ինքներդ եք ստեղծել:

Եվ բանի որ աշխարհը հիմա նրբանում է, ապա ձեզ համար հնարավորություն է բացվում մտքերի ու զգացմունքների ոլորտում հաղթահարելու ցանկացած բացասական էներգիա՝ նախքան դրանք կհասցնեն ֆիզիկական ոլորտում արտահայտվել փոթորիկների և համադետների տեսքով:

Ձեզ վիթխարի հնարավորություն է տրվում, որպեսզի ձեր գիտակցությունը փոխելու միջոցով վերափոխեք ֆիզիկական ոլորտը:

Քրիստոսի գիտակցության հասած մեկ մարդը կարող է համակշռել շատերի կարման, որոնց հետ ինքը կարմայորեն կապված է և ապրում է նրանց անմիջական հարևանությամբ: Դա է պատճառը, որ մարդիկ միշտ բարեհաճությամբ էին վերաբերվում իրենց բնակության վայրում հաստատված սրբերին:

Մոր կաթի հետ նրանք գիտելիք էին ստանում, որ իրենց կողմերում բնակվող սուրբն այն բանի երաշխիքն է, որ իրենց հողին, իրենց բերք ու բարիքին ոչ մի վատ բան չի պատահի: Եվ իրենց հետնորդներն էլ կլինեն առողջ ու երջանիկ:

Ձեր ժամանակներում այդպես չէ: Աշխարհը մոռացել է հինավուրց գիտելիքները: Իրենց սրբի տեղ դնողները սրբեր չեն, իսկ ով էլ որ սուրբ է, գրգռում է ու վանում:

Ձեր՝ լուսակիրներիդ, հիմնական խնդիրն այն է, որ աշխարհին տաք ճշմարիտ կողմնորոշիչներ: Դրա համար անհրաժեշտ է հենվել ներքին գիտելիքի վրա, որը բխում է ձեր սրտերից: Որպեսզի ներքին կապ ունենաք ձեր սրտի ներսի գաղտնախորհուրդ մարդու հետ, պետք է մշտական, ամենօրյա աշխատանք կատարեք ձեր գիտակցության ու ինքներդ ձեզ հետ:

Հայտնի է տասնորդի օրերը, համաձայն որի՝ ամեն ինչի տասներորդ մասը պետք է Աստծուն տրվի: Նմանապես ձեր ժամանակի տասներորդ մասը պետք է հատկացվի հոգևոր գործառնություններին և աստվածահաճ գործերին:

Օրվա ունայնության մեջ մի՛ մոռացեք Աստծո մասին: Եթե օրվա ամենաթունդ ժամին, երբ առօրեական էներգիաները ոտից գլուխ պարուրել են ձեզ, գիտակցության ինչ-որ մի անկյունում հուշ պահեք Աստծո մասին, ապա կենսական ոչ մի փոթորիկ կամ անհաջողություն այլևս սարսափելի չի լինի ձեզ համար:

Մշտապես պահպանե՛ք ձեր սրտի մաքրությունը, կենսական ինչպիսի իրավիճակում էլ որ հայտնվելու լինեք: Դա կօգնի ձեզ, որ կյանքում պահպանեք ճիշտ ուղղություն և ընթանաք այն վերին Ուղով, որն Աստված նախատեսել է ձեզ համար...

ԵՄ ԵՄ Մանատ Կունարան: ՕՄ

Տեր Շիվա

22 դեկտեմբերի, 2012 թ.

Ես եկել եմ ձեզ Աստծո մասին Ուսմունք տալու

ԵՄ ԵՄ Շիվան...

Ես եկել եմ...

Եկել եմ՝ ինչպես միշտ հզոր և իմ ամբողջ լիակատարությամբ...

Շիվան ԵՄ ԵՄ...

Այսօր ես եկել եմ ձեզ ասելու այն ճշմարտության մասին, որը դեռ չի տեղավորվում ձեր գիտակցության մեջ, բայց եթե երկար ու համառ մտասկզբովեք այդ ճշմարտության վրա, ապա աստիճանաբար ինքներդ կդառնաք այդ ճշմարտության դրսևորումը:

Ես եկել եմ ձեզ Աստծո մասին Ուսմունք տալու: Քանզի թե՛ այս, թե՛ բոլոր մյուս աշխարհներում Աստծուց բացի ոչինչ չկա: Եվ ձեր ունեցած գիտակցությունը հենց այն միակ բանն է, որը ձեզ բաժանում է Աստծուց և Նրա ճշմարտությունից:

Եթե ամեն օր մտասկզբովեք Աստծո և Նրա ճշմարտության վրա, ապա ավելի ու ավելի լիարժեքորեն կկարողանաք արտահայտել այդ ճշմարտությունը ձեր աշխարհում:

Ձեր մարմնավորման խնդիրն է հնարավորություն տալ, որ Աստծո ճշմարտությունը դրսևորվի ձեր միջոցով՝ ձեր էության միջոցով...

Ինչպե՞ս դա իրականացնել... Ինչպե՞ս իրագործել ձեր մարմնավորման նպատակը:

Իհարկե, ձեզնից շատերի համար իմ խոսքերը տարօրինակ ու անիմաստ կթվան: Բայց եթե այդպես է, ուրեմն ձեր գիտակցությունը հուսալիորեն արգելափակված է Աստծո ճշմարտությունից: Ուրեմն պետք է անհապաղ քայլեր ձեռնարկել, որպեսզի վերագտնեք ձեր գիտակցության ճիշտ վիճակն ու կյանքի ճշմարիտ կողմնորոշիչները:

Պատկերացրեք մեկին, որը մոլորվել է անտառում: Ծանոթ աշխարհը մնացել է հետևում: Չորս բոլորը բոլորովին ուրիշ իրականություն է՝ թավ անտառ, անանցանելի թփուտներ, բարձր ծառեր: Չեն երևում ո՛չ արևը, ո՛չ հորիզոնը: Ծուրջը կիսախավար է, իսկ օդը հագեցած է խոնավության ու փտած խաշամի հոտով: Ո՛չ քամի է խաղում, ո՛չ էլ որևէ լույսի շող:

Ձեր այժմյան գիտակցության վիճակը հիշեցնում է անտառում մոլորված մարդու վիճակ: Նույն կերպ դուք խորասուզվել եք պատրանքի թավուտի մեջ և չգիտեք, թե ո՛ր կողմ շարժվել: Երբեմն ձեզ թվում է, թե գտել եք ինչ-որ կաճան, որը, հույս ունեք, ձեզ դուրս կհանի թփուտների միջից: Դա այն է, երբ կառչում եք առաջին պատահած ուսմունքին կամ հավատամքին: Դուք ծանոթ խոսքեր եք լսում Աստծո մասին և ձեր էության խորքերից արձագանքում եք դրանց: Բայց որոշ ժամանակ անց հասկանում եք, որ սխալվել եք: Պարզվում է, որ այդ կաճանը ձեր գիտակցության հերթական խաբկանքն է:

Դուք կրկին հուսահատության գիրկն եք ընկնում և աղաչում Աստծուն, որ ձեզ ցույց տա Ուղին: Ձեզ թվում է, թե լրիվ անհուսալի վիճակում եք: Այլևս ուժ չկա, որ հաղթահարեք վախը, ձեր մարդկային գիտակցության աղջամուղջն ու ձեզ շրջապատող թավուտը: Պատրանքն ամբողջովին տիրում է ձեր գիտակցությանը: Թվում է, թե ձեր կենսակերպը ոչնչով չի կարող փոխվել: Ամեն ինչ գորշ է ու անհրապույր: Լսվում են միայն քաղաք-ջունգլիների վայրի կռիները, արգելակների ճնջումը, ահերն ու շրշումները:

«Մինչև ե՛րբ, Տե՛ր...», - կանչում է ձեր հոգին, - «Հնարավո՞ր է այս ամենին էլի դիմանալ...»:

Եվ այնժամ, երբ թվում է, թե ողջ աշխարհում ոչ մի լավ բան չկա, երբ շրջապատում ամեն ինչ թվում է թշնամական ու անբարյացակամ, կբացվի Ուղին և կերևա Աստծո ճշմարտությունը: Ո՛չ ձեզնից, ձեր էությունից դուրս ինչ-որ տեղ: Գոյությունը կբացվի ձեր ներսում: Եվ դա իրապես նման կլինի գերնոր աստղի բռնկման:

Դա անցում է գիտակցության նոր մակարդակի:

Դա պայծառացում է...

Դա ցնծություն է...

Դա երջանկություն է...

Դա երանություն է...

Ձեզնից շատե՛րն են արդյոք նման վիճակ ապրել:

Ձեզնից շատե՛րն են արդյոք սպասում այդ վիճակին:

Ես գիտեմ, և դուք էլ պետք է գիտենաք, որ այդ էքստազի և երանության վիճակին չէ, որ դուք պետք է ձգտեք: Դուք պետք է ձեր ներսում գտնեք ներքին վստահության, արժանապատվության, վեհանձնության, ներդաշնակության և անդորրության ավելի կայուն վիճակ: Դա է այն իսկական վիճակը, որը կօգնի ձեզ, որ հաղթահարեք ցանկացած դժվարություն և փորձություն: Պետք է ձգտեք ձեր ներսում գտնել համակշռության կետ, հենակետ: Սա շատ կարևոր է: Քանզի եթե դա ձեզ հաջողվի, եթե հենման կետ գտնեք ձեր ներսում, ապա միշտ անվրդով կլինեք, նույնիսկ եթե ձեր շուրջը ողջ աշխարհը փոթորկվի:

Հենման այդ կետը կապ է ձեր ճշմարիտ աստվածային էության, ձեր ներսի Աստծո հետ:

Այնժամ, երբ ձեռք եք բերում հավասարակշռության և անդորրության այդ վիճակը, հասնում եք վիթխարի հաղթանակի: Որոշ ժամանակով կարող եք կորցնել այդ վիճակը, կրկին ու կրկին խրվել պատրանքի մեջ, բայց արդեն ձեզ հայտնի կլինի, թե դեպի ուր պետք է մղվել:

Դա նման է կողմնացույցի, որն ուղղորդում է ձեզ, երբ մոլորված եք լինում անտառում: Եթե ուղղությունը պահեք, ապա վաղ թե ուշ դուրս կգաք թավուտից, և պատրանքի կիսախավարում ձեր դեգերումները վերջ կգտնեն:

Նկատի ունեցեք, որ դեպի իրականություն շարժվելու ձեր ջանքերը պետք է մշտական լինեն: Չե՛ք կարող մի օր մղվել դեպի Ուղին, իսկ հաջորդ օրը կիրակնօրյա հանգիստ տալ ձեզ:

Եթե մշտապես ջանքեր չգործադրեք, որպեսզի դուրս գաք անտառից, ապա վտանգ կստեղծեք, որ երբեք դուրս չեք գա: Վայրի գազանները հենց դրան են սպասում, որ թալկանաք ու պառկեք քնելու:

Այդպես էլ ձեր աշխարհում է, որտեղ ապրում եք. եթե այլևս ամենօրյա ջանքեր չեք գործադրում, ապա ձեր անհագ ցանկությունների վայրի գազանները հարձակման են անցնում, և լավ կլինի, եթե ժամանակին ուշքի գաք և հիշեք, որ պետք է շարունակել ընթացքը:

Ձեր Ուղու բոլոր ուղենիշները հայտնի են:

Բոլոր վտանգները նշված են:

Պետք է միայն ինքներդ ուժ գտնեք ձեր ներսում և սկսեք ընթանալ:

Գիտակցեք, որ ձեր աշխարհում ամեն ինչ չէ, որ իդեալական է: Ավելի ճիշտ՝ ամեն ինչ շատ հեռու է իդեալական լինելուց: Ուստի ձեզ համար հիմնականն ու գլխավորը կլինի այն, որ ձգտեք զանազանելու կարողություն ձեռք բերել՝ աստվածային տեսողություն:

Եթե դուք մանրագնին կերպով ձեր շուրջը եղածից ջոկջկեք և ընտրեք, հոգաք իրերի թրթիռների, ձեր կերած կերակուրի, ձեզ հետ շփվող մարդկանց, գրքերի որակի մասին, ապա որոշ ժամանակ հետո այն տարածությունը, որը ստեղծել եք ձեր շուրջը, կսկսի ձեզ օգնել և օժանդակել այն պահերին, երբ կորցրած կլինեք ներքին կողմնորոշիչները:

Կյանքում ամեն ինչ ունի իր նշանակությունը:

Ամեն ինչին պետք է շատ ուշադիր վերաբերվել:

Երբեմն մի առարկան, որի վրա դժվար պահին բևեռում եք ձեր ուշադրությունը, բավարար է լինում, որպեսզի ձեր թրթիռները փոխվեն և դուրս գաք բարձր, աստվածային թրթիռների գոտի:

Այժմ եկել է այն ժամանակը, երբ ձեր ամեն մի նախընտրանքից, ամեն կատարած քայլից և ամեն մի մտքից շատ բան է կախված:

Հանգամանքները մոլորակի վրա փոխվել են:

Հարկավոր է շատ ուշադիր լինել:

ԵՄ ԵՄ Շխվան...

Էլոհիմ Խաղաղություն
23 դեկտեմբերի, 2012 թ.

Ձեր հիմնական խնդիրն է՝ բարձրացնել Երկիր մոլորակի մարդկանց գիտակցությունը

ԵՄ ԵՄ Էլոհիմ Խաղաղությունը՝ Երկիր մոլորակի վրա ներկայումս ապրողներիդ այցի եկածը: Խոնարհ ողջույնս եմ հղում ձեզ, որ ձեր մեջ ուժ և արիություն եք գտել անցումային այս ժամանակներում մարմնավորվելու համար:

Ձեզնից շատերը հույսով ու սրտի թրթիռով իրենց հայացքը հառում են ձեզնից նրանց, ովքեր չեն մոռացել իրենց սպասավորության ու այն երդման մասին, որը տվել են մարմնավորվելուց առաջ:

Ձեր հիմնական խնդիրն է բարձրացնել Երկիր մոլորակի մարդկանց գիտակցությունը: Այդ խնդիրը հիմա ամենակարևորն է դառնում: Քանզի այն բանից, թե որքանով կհաջողվի լուծել այդ խնդիրը, կախված է ապագան: Բոլորովին չէի ցանկանա, որ վախ զգաք ապագայից: Բոլոր դեպքերում Համբարձյալ Վեհապետները ձեզ հետ են և պատրաստ են դժվար պահերին օգնության ձեռք մեկնելու: Նաև ես եմ այսօր եկել, որպեսզի խաղաղության էներգիա փոխանցեմ ձեր աշխարհին:

Իմ էներգիաների գործությամբ այս գիշեր ճեղքվեցին անհասկացողության, ատելության ու թշնամանքի կապարե զրահները, որոնք հոժ օղակով շրջապատել էին մոլորակը: Իմ էներգիաները ձեզնից շատերի հոգիներում վերածնեցին ձգտումը դեպի խաղաղություն և անդորրություն:

Ամեն ոք, ով կկարողանա այս դժվար ժամանակներում ներքուստ պահպանել էներգիաների համակշռություն, ներքին անդորր ու ներդաշնակություն, երաշխիք կստեղծի ամբողջ մարդկության կայուն զարգացման համար:

Ուստի մի՛ դադարեք մտածել խաղաղության մասին, արտաքին աշխարհին առաքել ներդաշնակություն և խաղաղության իմ էներգիաները փոխանցեք ձեր աշխարհին:

Այժմ ես կուզենայի կանգ առնել այն հանգամանքի վրա, որ ձեզնից յուրաքանչյուրը կարող է և ունակ է համակշռելու Երկիր մոլորակի իրավիճակը: Չեմ թաքցնում՝ լինում են պահեր, երբ դժվար է լինում այդ համակշռությունը պահպանելը: Եվ երբեմն մեկը, ով, գտնվելով կյանքի հորձանուտում և շրջապատված լինելով անբարենպաստ պայմաններով, անասելի ջանքերի գնով այնուամենայնիվ կարողանում է պահպանել ներքին համակշռությունը և աշխարհին առաքել իր սրտի սերը, դրանով իսկ կարողանում է կանխել հերթական պատերազմը կամ սոցիալական պայթյունը:

Անցնող տարվա ընթացքում նման դեպքեր բազմիցս եղել են: Ամեն անգամ, երբ մեզ հակադիր ուժերը ճոճում էին նավակը, և թվում էր, թե հերթական պատերազմն ու արյունահեղությունն արդեն անխուսափելի են, գտնվում էր մեկը, որն իր ներքին վիճակով, ներքին նվաճումների և անկեղծ աղոթքի միջոցով հանդարտեցնում էր բացասական տարերքը:

Համակշռության պահպանումը կհեշտանա, եթե մարդկությունն ամբողջապես գտնվի գիտակցության ավելի բարձր մակարդակի վրա: Գիտակցության մակարդակն է որոշում արտաքին հանգամանքները, կառավարում արտաքին ուժերի դրսևորումները և դասավորում ֆիզիկական աշխարհի հանգամանքները:

Ուստի ամեն անգամ, նախքան ձեր էներգիան ներդնելը համակշռությունը խախտող որևէ գործունեության մեջ, մի պահ կանգ առեք և մտորեք: Կա՞մ դուք ձեզ հատկացված Աստծո էներգիան ուղղորդում եք ավերածություն, բացասական դրսևորում և համակշռության խախտում առաջացնելուն, կա՞մ գերադասում եք պահպանել ներքին ներդաշնակություն և անդորրություն:

Աշխարհին երբեմն տիրում են անորակ էներգիաները, և տարերքների կույր հոսանքը բազում կենսահոսքերի քշում-տանում է անորակ ուղով: Անցած 20-րդ դարի բոլոր պատերազմներն ու ժամանակակից պատմական շատ իրադարձությունները հենց այն բանի օրինակներ են, երբ որևէ անորակ միտք տիրած է եղել որևէ երկրի բնակչության որոշակի կրիտիկական զանգվածի գիտակցությանը: Դրանից հետո մարդիկ այլևս դրության տերը չեն լինում և դառնում են անորակ էներգիաների պատանդը: Արդյունքում ինչ-որ մեկի գիտակցության մեջ ծագած անորակ մտքի գոհն են դառնում միլիոնավոր մարդկային կյանքեր:

Բայց նաև ճիշտ նույն կերպ, եթե որևէ բարերեր միտք տիրում է զանգվածների գիտակցությանը, ապա ունակ է լինում փոխելու պատմության ընթացքը և մարդկությանն ուղղորդելու ավելի դյուրին Ուղով:

Համբարձյալ Դասերը նուրբ ոլորտում նախապատրաստում են լուսավոր ապագայի ձևանմուշներ: Այդ ձևանմուշները պատրաստ են լինում իջնելու և փնտրում են այն հոգիներին, որոնք ունակ են դրանք կյանք մտցնել:

Սակայն, որպեսզի դուք համահունչ դառնաք մեր թրթռանքին և ունակ լինեք ձեր աշխարհ իջեցնելու լուսավոր էներգիաներ, պետք է նախապես համալարվեք Բարձրագույն աշխարհների հետ:

Սակայն պատրանքային ուժերն իրենց մերձիմահ կատաղության մեջ ջանում են զավթել և Ուղուց հանել հոգիներին՝ դրա համար օգտագործելով կեղծ ձևանմուշներ և դրսևորումներ:

Դուք պետք է շատ լավ գիտակցեք, որ ձեր աշխարհում գործում են բարու և չարի ուժեր: Եվ դուք ինքներդ եք ընտրում, թե ո՞ր ուժերի կողմը բռնեք: Հարկ է, որ կարողանաք գիտակից կերպով դասակարգել ձեր աշխարհի ամեն մի դրսևորում. այն է՝ ի՞նչ ուժեր են կանգնած տվյալ դրսևորման հետևում: Եթե ձեր մտքերով, հույզերով և գործողություններով աջակցում եք կեղծ, անաստված ձևանմուշներին, ապա ընդդիմություն եք դառնում զարգացման էվոլյուցիոն ուղու նկատմամբ: Դուք աջակցում եք պատրանքային ուժերին: Դուք ձեր գիտակցությամբ սահում եք դեպի ավելի ցածր մակարդակ:

Եվ հակառակը՝ եթե դուք թույլ եք տալիս, որ աստվածային դրսևորումներն արտահայտվեն ձեր միջոցով, եթե բարձրացնում եք ձեր և ձեր շրջապատի մարդկանց գիտակցությունը, ապա ընթանում եք ճիշտ ուղղությամբ և համակշռություն եք պահպանում շատ ու շատ մարմնավորված անհատների փոխարեն:

Պետք է ձեզ ասեմ, որ Բարու և Լույսի յուրաքանչյուր այդպիսի գեներատոր ունակ է չեզոքացնելու մահվան ու դժոխքի ուժերի ամբողջական հրոսակախմբերի:

Ես ի սրտե կամենում եմ, որ դուք միշտ հանդես գաք լուսավոր ուժերի կողմից: Այդ դեպքում մենք միասին կկարողանանք կանխել ցանկացած պատերազմ, ցանկացած ագրեսիա և ցանկացած ատելություն ու հակակրանք:

Հավատացե՛ք ինձ, միայն ձեր գիտակցության մակարդակն է արգելք հանդիսանում հաջորդ էվոլյուցիոն մակարդակին անցնելու համար: Եվ դուք ինքներդ եք պատասխանատու, թե դեպի ուր եք ուղղում ձեր էներգիան: Մշտապես՝ դեպքերի 100 տոկոսում, միայն ինքներդ եք պատասխանատու ձեր այն էներգիայի ծախսման համար, որը մշտապես հոսում է ձեր էության, ձեր նուրբ մարմինների և ձեր չակրաների միջով: Միայն ինքներդ եք կրում ձեզ հատկացված Աստծո էներգիան ծախսելու պատասխանատվությունը: Եվ համայն տիեզերքում չկա որևէ մարդ կամ էակ, որը ձեր փոխարեն ընտրություն կատարի:

Դուք միշտ հնարավորություն ունեք կանգ առնելու և մտորելու՝ գործում եք Աստծո կամքին համահունչ, թե՛ ընդդեմ Աստծո:

Ես շատ լավ հասկանում եմ, որ ձեր աշխարհում հաստատված պայմաններում շատ դժվար է ընտրություն կատարելն ու իրավիճակը գնահատելը: Այդ պատճառով ավելի հաճախ ձեր կյանքում

դիմեք Աստծուն և Համբարձյալ Դասերին, աստվածային խրատներ և Աստվածառաջնորդություն խնդրեք, և միշտ կատանաք դրանք:
Ես այս օրով եղա ձեզ հետ:

ԵՄ ԵՄ Էլոհիմ Խաղաղությունը

Սեն Ժերմեն

24 դեկտեմբերի, 2012 թ.

Արժանապատվորեն մուտք գործենք Նոր Դարաշրջան...

ԵՄ ԵՄ Սեն Ժերմենը...

ԵՄ ԵՄ կրկին ձեզ այցելողը, տիկնա՛յք և պարոնա՛յք...

Այսօրվա իմ գալստյան նպատակը մեր համատեղ նվաճումների հաստատագրումն է:

Այո, սիրելիներս, որպես Նոր Դարաշրջանի Հիերարխի՝ ես հաճույքով փաստում եմ, որ համատեղ ջանքերով մեզ հաջողվեց համայն վիթխարի ֆիզիկական աշխարհը հեռացնել անցյալի էներգիաներին վերադառնալու շրջման կետից...

Դա իրականացավ բառացիորեն մի քանի օր առաջ:

Այն ընթացքում, երբ մարդկությունը սպասում էր հերթական «աշխարհի վերջին», մենք վիթխարի աշխատանք կատարեցինք Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտի էներգիաների տեղաշարժման բնագավառում:

Եվ հիմա այլևս հնարավոր չէ չտեսնելու տալ, թե ինչպես են ավելի ու ավելի բացահայտ դառնում ֆիզիկական ոլորտի փոփոխությունները:

Հետդարձի կետը հաղթահարված է...

Ի՞նչ է տալիս դա մարդկությանը... Դա նշանակում է, սիրելիներս, որ այլևս ձեզ չի սպառնում այն էներգիաներին վերադառնալու վտանգը, որոնք անցյալ դարաշրջանում արդեն սպառել են իրենց:

Այլևս ձեզ չի սպառնում այն մղձավանջը, որը մարդկությունն իր վրա փորձարկեց անցած 2000 տարիների ընթացքում:

Նոր Դարաշրջանը մտավ իր իրավունքների մեջ...

Եվ ես՝ որպես Նոր Դարաշրջանի Հիերարխի, ուզում եմ ձեզ վստահեցնել, որ մարդկությունն ընդհանուր առմամբ պատրաստ է իր գիտակցությունը փոխելու ճանապարհով անցում կատարելու Նոր Դարաշրջանին:

Դուք հիմա տարակուսում եք, քանի որ ձեզ թվում է, թե ոչինչ տեղի չի ունեցել, և ձեր շուրջն ամեն ինչ նույնն է մնացել: Այդպես չէ, սիրելիներս: Հավաստիացնում եմ ձեզ, և ձեզնից շատերն իրենք էլ արդեն հասկացել են, որ Երկրի էներգիաները համամոլորակային փոփոխություններ են կրել:

Իհարկե, ձեզնից որոշները պատրաստ չեն ընդունելու նոր էներգիաները: Շատերը փորձում են վերադառնալ անցյալին, որտեղ իրենց համար հարմարավետ կյանք էին վարում:

Բայց արդյոք ձեզ համար այդքան լավ էր ամեն ինչ, սիրելիներս... Եվ արդյոք անցյալի ձեր կարոտախտը պարզապես վախը չէ՞ ապագայի նկատմամբ:

Խիզախությունն անհրաժեշտություն է ձեզ համար...

Ուրախությունը երբեք չպետք է լքի ձեզ...

Ձեր էությունը պետք է բաց լինի փոփոխությունների հանդեպ: Միթե՞ ձեզ չի հետաքրքրում, թե ինչ է նախապատրաստել ձեզ համար Նոր Դարաշրջանը...

Նոր Դարաշրջանում տեղ չեն ունենա այնպիսի եսասիրական դրսևորումները, ինչպիսիք են անհանդուրժողականությունը, արատավորությունը, ատելությունը, հակակրանքը:

Նոր Դարաշրջանին բնորոշ կլինեն հանդուրժողականությունը, ազատությունն ու անկախությունը:

Անկախություն՝ արտաքին հանգամանքներից: Դուք կկարողանաք ավելի ազատ ու համարձակ դրսևորել ձեր աստվածային բնույթը: Բայց այն ամենը, ինչը կհակասի Աստծո Օրենքին, ավելի ու ավելի շատ խոչընդոտների կհանդիպի իր ճանապարհին:

Եվ եթե դուք կապված եք անցյալին, եթե սովոր եք ապրել ահերով, ապա ստիպված կլինեք հրաժեշտ տալ ձեր սովորություններին: Անհապա՛ղ...

Այժմ դուք պետք վճռականորեն խորհրդածեք այն մասին, թե ձեր ներսում ի՞նչն է, որ չի համապատասխանում ժամանակի պահանջներին:

Եսասիրությունը, իր բոլոր դրսևորումներով հանդերձ, կփոխարինվի կոլեկտիվիզմով՝ աշխարհի և հարազատ մոլորակի ճակատագրի նկատմամբ կոլեկտիվ պատասխանատվությամբ:

Ահր, ինչով էլ որ այն արտահայտվելիս լինի, պետք է փոխարինվի վաղվա օրվա նկատմամբ վստահությամբ և արտաքին հանգամանքներից անկախ լինելով:

Եթե ձեր կյանքն անխզելիորեն կապել եք Աստծո և Վեհապետների հետ, և Աստծո Օրենքն է իշխում ձեր կյանքում, ապա ի՞նչը կարող է կանգնել ձեր ճանապարհին...

Այդ դեպքում ցանկացած խոչընդոտ, ցանկացած դժվարություն դուք հեշտությամբ հաղթահարում եք: Եվ երեկվա կենսակերպի այն դիմագրվերը, որոնք դեռևս ջանում են ձեզ կապել անցյալին, ստիպված կլինեն լքելու համաշխարհային թատերաբեմը: Նոր Դարաշրջանի աշխարհայացք ունեցող նոր մարդիկ կզան փոխարինելու ղեկավարների հին սերնդին: Եվ համաշխարհային կառավարության մեջ շատ շուտով տեղի կունենան այնպիսի փոփոխություններ ու տեղաշարժեր, որոնք թույլ կտան կառավարման աստվածային սկզբունքներ մտցնելու ավելի ու ավելի շատ երկրների կառավարման մակարդակներով:

Ձեզ հայտնի է, որ որպես կոմս Սեն-Ֆերմեն իմ վերջին մարմնավորման ընթացքում ես մասնագիտացել էի հենց այն բանով, որ օպտիմալ ձևով կարգավորեմ աշխարհի և հատկապես Եվրոպայի քաղաքական իրավիճակը:

Թվում էր, թե իմ ջանքերն առանձնապես մեծ օգուտ չտվեցին, սակայն Համբարձյալ Դասերը հսկայական փորձ ձեռք բերեցին, որի միջոցով պատրաստ են իրականացնել ներկայիս փոփոխությունները: Տեղի ունեցող փոփոխությունների բոլոր մանրամասներին դուք իրազեկ չեք դառնա: Պարզապես ամեն տարվա հետ ավելի ու ավելի շատ կզգաք աստվածային սկզբունքների հարաճուն ներթափանցումը ինչպես ձեր, այնպես էլ ամբողջ մոլորակի կյանքի մեջ:

Իհարկե, հինը դեռ կղիմադրի: Բայց այդ խղճուկ դառնացումներն այլևս չեն վախեցնի մարդկային համակցության հիմնական զանգվածին, որին վաղվա օրն ավելի ու ավելի մեծ վստահություն կներշնչի:

Ցավալի է, որ մեր խրատներն ու առաջնորդությունը մատչելի չեն Երկիր մոլորակի բնակչության ճնշող մեծամասնությանը: Սակայն Նոր Դարաշրջանին բնորոշ կլինի ամենայն դրականի ակնթարթային տարածումը, ինչը տեղի կունենա երկրագնդի ամենատարբեր անկյուններում՝ մարդկության լավագույն ներկայացուցիչների ուղեղներում:

Ամենայն առաջադեմ բան ակնթարթորեն կտարածվի երկրագնդի բոլոր տարածքներում ոչ միայն համացանցի շնորհիվ: Դրա նման մի բան էլ հիմա սկսում է գործել նաև մոլորակի նուրբ ոլորտում...

Դա դրական մտածողության համամոլորակային ցանցն է: Այդ ցանցով լույսի արագությամբ ողջ երկրագնդով մեկ կտարածվեն միայն աստվածային սկզբունքներն ու մեթոդները:

Այդ համամոլորակային ցանցին դուք կարող եք միանալ անմիջապես: Ես այն ձեզ համար հիմա մատչելի կդարձնեմ:

Ձեր մուտքագրվող անունն է՝ Նոր Դարաշրջան, գաղտնաբառը՝ Գիտակցության Նոր Մակարդակ:

Հենց որ ձեր էության ներսում լրացնեք նոր համացանցի մուտքի համար անհրաժեշտ այդ բառերը, կկարողանաք օգտվել այդ ցանցի բոլոր առավելություններից:

Ձեր գիտակցությունը, ձեր աստվածային գիտակցությունը նուրբ ոլորտում փոխազդում է նմանատիպ նուրբ գիտակցությունների հետ, որոնք մղված են դեպի Աստված և հավատարիմ են Վեհապետներին: Եվ այդ նոր համամոլորակային ցանցում բազմապատկելով մասնակիցների թվով՝ նոր գիտակցությունն ավելի ու ավելի մեծ հաջողությամբ կտարածվի Երկիր մոլորակում:

Ես ձեզ հետ եմ...

Մենք միասին ենք...

Արժանապատվորեն մուտք գործենք Նոր Դարաշրջան...

Հառա՛ջ...

ԵՄ ԵՄ Սեն Ֆերմենը

Տեր Սուրիա

25 դեկտեմբերի, 2012 թ.

Պարզաբանումներ մոլորակի իրավիճակի վերաբերյալ

ԵՄ ԵՄ Սուրիան՝ այս օրով կրկին ձեզ այցի եկածը:

Ես հեռվից եմ եկել՝ տիեզերքի հեռավոր լայնարձակություններից: Եվ որոշակի ժամանակ պահանջվեց, որպեսզի հարմարվեմ ու համալարվեմ Երկիր մոլորակի թրթռանքներին:

Իմ վերջին Ուղերձից հետո մոլորակի վրա շատ բան է փոխվել, և ես պետք է հաճույքով հաստատեմ այն փաստը, որ անխուսափելի փոփոխություններ են տեղի ունեցել դեպի լավը: Ձեզնից շատերի համար իմ խոսքերն առնվազն տարօրինակ կթվան, քանի որ չեք գգում, որ ձեր շրջապատում տիրող վիճակը թեթևացել է: Ընդհակառակը, ձեզ թվում է, թե աղջամուղջն ավելի է թանձրանում, և իրավիճակն ավելի է բարդանում:

Ձեզ թվում է, թե վիճակն անելանելի է, և տարակուսում եք, թե Համբարձյալ Դասերն ինչու՞ են ցնծում...

Պետք է հայտնեմ, որ իրավիճակի ձեր և մեր ըմբռնումներն իրարից տարբերվում են: Դուք աշխարհն ընկալում եք՝ հիմնվելով ձեր կենսափորձի և իրականության ընկալման ձեր զգայարանների վրա: Ուստի և ձեզ թվում է, թե իրավիճակը լարվում է և վատթարանում:

Իսկ մեր տեսակետից ընդհակառակն է՝ ամեն ինչ դեպի լավն է գնում:

Հարցն այստեղ թրթռանքների տարբերության մեջ է: Երբ ֆիզիկական ոլորտի թրթռանքը բարձրանում է, դուք դա կարող եք ընկալել որպես վատացում, զգալ ֆիզիկական զանազան տկարություններ և ձեր գիտակցության համար ծանր վիճակներ, որոնք ձեզ պարուրում են բացասական մտքերով ու հույզերով:

Պաշտելիներս, դա բնական երևույթ է: Միշտ էլ, երբ մարդկությունն անցում է կատարել գիտակցության մի մակարդակից մյուսին, սկզբում թվացել է, թե շրջապատում ամեն ինչ վատթարանում է: Որովհետև ձեր թրթիռները չեն համապատասխանում այն մակարդակին, որին տվյալ պահին անցնում է մոլորակը:

Հենց այդ պատճառով էլ դուք ձեզ վատ եք գգում: Միևնույն ժամանակ, ինչպես մենք ենք կարծում, մեզ հաջողվել է հասնել անդառնալի փոփոխությունների և ապահովել Երկիր մոլորակի թրթռանքի բարձրացման կայուն տեմպը:

Այժմ միայն ժամանակի հարց է, թե որքան արագ մարդկությունը կկարողանա ձերբազատվել իր հնամենի վերքերից և վարքի կարծրատիպերից:

Այն անհատների համար, որոնք ներքուստ կողմնորոշված են դեպի Բարձրագույն իրականությունը, որոնք իրենց ողջ էությանը ընդունեցին մեր Ուսմունքը և սրտի թրթիռով սպասում էին մեր աշխարհից առաքված յուրաքանչյուր նոր Ուղերձին, շրջապատող աշխարհի ճնշող իրավիճակը շատ շուտով կփոխարինվի թեթևության զգացումով ու վերելքով: Նրանք իրենց զգայուն բնույթով ուղղակի որսում են շրջապատող տարածության թրթիռները, և սեփական թրթիռներին դրանց անհամապատասխանությունը ստիպում է նրանց զգալ զանազան տկարություններ և հոգևոր թախիծ: Դա ավելի շուտ կարեկցանք է աշխարհի նկատմամբ և համաշխարհային կարմայի մի մասի բեռնում սեփական ուսերին, քան զուտ գիտակցության բացասական վիճակի արտահայտություն:

Մյուս անհատները, որոնք, ցավոք, Երկրի մարդկության մեծամասնությունն են, առաջվա պես հակված են դեպի հին արժեքները, և նրանց գիտակցությունը դեռևս պատրաստ չէ Աստծուն ընդունելուն: Նրանք փորձված հնարքներով փորձում են կրկին իջեցնել իրենց թրթիռները և հայտնվել իրենց համար բնական թրթռանքի մակարդակում: Բայց դա այլևս հնարավոր չէ, քանի որ մոլորակի թրթռանքն արդեն վեր է բարձրացել:

Դուք չեք կարող առանձնանալ այն նավից, որի վրա գտնվում եք: Դուք դեպի ապագա եք ընթանում մի նավով, որը կոչվում է Երկիր մոլորակ: Եվ որքան էլ ձեզ վրդովի այն ուղղությունը, որով ընթանում է ձեր մոլորակը, ստիպված կլինեք հաշտվելու դրա հետ: Քանզի մարդկության համար այդ ուղղությունը կանխորոշված է համայն Տիեզերքի Արարչի կամքով:

Իսկ եթե չեք ցանկանում հետևել այդ ուղղությանը, ապա ձեզ միայն մի ելք է մնում՝ դուրս ցատկել տախտակամածից և հայտնվել մարդկության պատմությունից դուրս՝ լրացնելով անցյալի ճախողված քաղաքակրթությունների աղբակույտը:

Իհարկե, տիեզերական հնարավորություն որոշ ժամանակով դեռևս կհատկացվի յուրաքանչյուրին: Տիեզերական էակները շատ զգուշորեն դեռ կաշխատեն ձեր հոգիների հետ՝ ձեզ տալով բոլոր անհրաժեշտ խրատները և ուսուցումը:

Սակայն եթե ձեզնից որոշներն այնուամենայնիվ գերադասեն ընթանալ իրենց ընտրած ուղղությամբ, ապա որոշ ժամանակ հետո մենք նրանց հանգիստ կթողնենք և թույլ կտանք, որ Կարմայի օրենքն ավարտի իր աշխատանքը՝ ապահովելով տիեզերական օրինականությունը:

Տիեզերական բարեգթությունն անվերջ մեծ է, բայց անսահման չէ: Մենք նույնիսկ անհնարինը կարող ենք անել ձեր հոգիների համար, բայց միայն այն դեպքում, եթե հանձն առնեք ենթարկվել համայն այս Տիեզերքի Օրենքին:

Իսկ եթե համառորեն շարունակում եք ընթանալ ձեր ընտրած ուղղությամբ, ապա ստիպված կլինեք հրաժեշտ տալ մեզնից օգնություն և օժանդակություն ստանալու հույսին:

Տիեզերական էներգիայի ոչ մի էրգ մենք այլևս չենք ծախսի, որպեսզի պահպանենք այն, ինչը կամավորապես ենթարկվել է մահվան ու դժոխքի ուժերին:

Հենց այդ է պատճառը, որ մոլորակն այժմ այսքան անհրապույր ու անհարմարավետ է երևում: Քանզի անցումային ժամանակներում, երբ Լուսին ամռանը շատ է խավար խառնվում, ապրելը շատ է դժվարանում: Ուստի և մենք գալիս ու պարզաբանումներ ենք տալիս մոլորակի իրավիճակի վերաբերյալ: Եթե ձեզ հայտնի է, թե ինչ է կատարվում, ապա կկարողանաք գործել ավելի մեծ հստակությամբ և ըմբռնումով:

Մենք ձեզ գիտելիք ենք տալիս անցումային գործընթացների վերաբերյալ: Այդ գիտելիքներն ու մեր օգնության ձեռքը, որը ձեզ ենք մեկնում աշխարհների միջով, անգնահատելի օգնություն կլինեն այն մարդկանց հոգիների համար, ովքեր համահունչ են էվոլյուցիային:

Իսկ եթե հետ եք քաշում ձեր ձեռքը՝ չցանկանալով բռնել մեր օգնության ձեռքը, ապա մենք կրկին ու կրկին կփորձենք գալ և տալ մեր Ուսմունքը, քանի դեռ աստվածային հնարավորությունը փակված չի լինի:

Թե երբ դա տեղի կունենա, ես ձեզ չեմ ասի: Բայց դուք մշտապես պետք է գիտակցեք, որ աստվածային հնարավորությունը կարող է ընդհատվել ցանկացած պահի, և օգտագործեք Երկրում լինելու ձեր ամեն մի ակնթարթը՝ ի բարօրություն ձեր հոգու:

Ես մեծ հույսեր ունեմ, որ այսօրվա իմ Ուղերձը ճշմարիտ ուղենիշ կծառայի ձեզ համար Երկիր մոլորակի շարունակաբար փոթորկվող կյանքի ծովում:

Եվ մենք միասին կկարողանանք հաղթահարել այս անցումային ժամանակը և հասնել այն ուրախ ժամանակներին, երբ խաղաղված կլինեն բոլոր փոթորիկներն ու մրրիկները, և արևի քնքուշ ճառագայթները շողալիս կլինեն ամպերի տակից...

Կկամենայի, որ մշտապես ձեր ներսում պահպանեք միայն դրական տրամադրվածություն: Ձեր աշխարհում տեղի ունեցող ոչ մի բանի թույլ մի՛ տվեք, որ ձեզ հանի հավասարակշռության և ներքին անդորրության վիճակից:

Այդ եղանակով դուք ոչ միայն ձեր հոգուն անգնահատելի օգնություն ցույց կտաք, այլ նաև Երկիր մոլորակի շատ ու շատ կենսահոսքերի:

ԵՄ ԵՄ Սուրիան

Վայրոչանա Բուդդա
26 դեկտեմբերի, 2012 թ.

Ձեր ներսում Բարձրագույն աշխարհների հետ ինքնահամալարման հսկայական ներուժ կա պահված

ԵՄ ԵՄ Վայրոչանան:

ԵՄ ԵՄ, որ իմ Ուղերձն այսօր ուզում եմ հղել նրանց, ովքեր պատրաստ են ինձ լսելու և ընդունելու իմ Ուսմունքը:

Մի՛ շտապեք հաղորդակից լինել իմ Ուղերձին: Նախ կենտրոնացեք ձեր սրտի, ձեր զգացողությունների վրա: Եվ եթե ունայն աշխարհին ու ունայն մտքերը կամ ձեր աշխարհի որևէ անհամակշիռ դրսևորում համակել է ձեզ, ապա հետաձգե՛ք իմ Ուղերձն ընթերցելը: Այն ձեզ օգուտ չի տա:

Մեր թրթռները պետք է հավասարվեն, համալարվեն իրար հետ: Միայն այդ դեպքում դուք կկարողանաք ընկալել իմ Ուղերձը, և դրա նեկտարը կթափանցի ձեր հոգու ամենագաղտնախորհուրդ անկյունները՝ ձեզ բերելով ոչնչի հետ չհամեմատվող երանություն:

Մեր Ուղերձները թափանցում են ձեր էության մեջ և նուրբ ազդեցություն են գործում ձեր էներգետիկական համակարգի վրա: Ձեզ կարող է թվալ, թե ոչինչ տեղի չի ունենում, բայց կարող է լինել նաև հակառակը. զգացվի էներգիայի ներհոսք ձեր էության մեջ: Երկու դեպքում էլ ձեր հոգու ստացած օգուտը հսկայական կլինի: Քանզի մեր աշխարհների փոխազդեցությունը տեղի է ունենում ձեր էության ներսում, երբ դուք համալարված եք լինում Բարձրագույն աշխարհների հետ և պատրաստ եք լինում ընկալելու Բարձրագույն աշխարհների էներգիաները:

Իսկ հիմա, երբ արդեն նախապատրաստեցի ձեր գիտակցությունը, ես պատրաստ եմ սկսելու իմ խոսքը:

Ձեզ հայտնի է, որ դուք միայն միս ու ոսկորից կազմված էակներ չեք: Դուք նրբակառույց էներգետիկական էակներ եք: Եվ քանի դեռ ուշադրություն չեք հատկացնում ձեր նուրբ բնույթին, այն չի կարող դրսևորվել: Մակայն յուրաքանչյուր կենդանի էակի կյանքում գալիս են պահեր, երբ նա պատրաստ է լինում ընկալելու նուրբ աշխարհները: Դա նման է ձեր էներգետիկական

համակարգի ծաղկմանը: Ձեր բոլոր չափերը բացվում և հիշեցնում են հրաշագեղ ծաղիկներ, որոնք գունագարդված են ամենանուրբ գուներանգներով, իսկ թերթիկները լինում են նրբորեն և որոշակիորեն կողմնորոշված: Ձեր չափերը նրբին լարք ունեցող մեխանիզմ են հիշեցնում և կարող են փոխադրել Բարձրագույն աշխարհների հետ: Դրանք այն ավեհավաքներն ու ավեհառաքներն են, որոնք ձեր գիտակցությանը հնարավորություն են տալիս թափանցելու Բարձրագույն աշխարհներ:

Եվ այնժամ, երբ ձեր էներգետիկական համակարգը ճիշտ լարվածք ունի, դուք անարգել կերպով հնարավորություն եք ունենում հաղորդակցվելու նուրբ աշխարհների և աշխարհների համակարգերի հետ:

Ցավոք, երբ ես մարդկությանը դիտում եմ իմ լինելիության ոլորտից, շատ հազվադեպ եմ տեսնում ձեր չափերի բացված ծաղիկները, որոնք վկայում են ձեր հոգևոր մակարդակի և Բարձրագույն աշխարհներն ընկալելու ձեր կարողության մասին: Որպես կանոն՝ մարդկային անհատների մոտ բացված է լինում միայն մեկ, երկու կամ երեք ստորին չափեր: Իսկ որոշ անհատներ այնպես են տարվել իրենց քմայքներով ու կրքերով, որ նրանց ջահերը՝ չափերը, հանգել են և վերածվել տարածական սև խռոչների, դեպի ուր հոսում է նրանց անհագ ցանկությունների էներգիան:

Ահավոր է տեսնելը, թե որոշ մարդիկ ինչի են վերածել իրենք իրենց: Փոխանակ լինելու աստվածային էակներ, նրանք վերածվել են Աստծո էներգիայի կլանիչների:

Հետագա էվոլյուցիոն զարգացման ամբողջ խնդիրն այն է, թե որքանով դուք կկարողանաք բացել ձեր էներգետիկական կենտրոնները՝ ձեր չափերը: Ընդ որում ոչ միայն ստորին չափերը, այլև ձեր էության ամբողջ էներգետիկական համակարգը: Որքան ձեր չափերն ավելի համակշռված լինեն, այնքան դուք ավելի կմոտենաք իդեալական Աստվածամարդուն:

Ձեզնից շատ շատերը զբաղվում են զանազան հոգևոր գործառնություններով: Սակայն ձեր այդ զբաղմունքները երբեմն անիմաստ են լինում, երբեմն՝ անօգուտ, երբեմն էլ վնասում են ձեր հոգուն ու ձեր զարգացմանը:

Ինչպե՞ս որոշեք՝ տվյալ գործառնությունը ձեզ համար օգտակար է, թե ոչ: Ինչպե՞ս գտնեք հենց այն, ինչը տվյալ պահին անհրաժեշտ է ձեր հոգուն:

Իհարկե, եթե ես դասախոսություն կարդալիս լինեի Արևելքի աշակերտների համար, ապա խորհուրդ կտայի դիմել այս կամ այն հինավուրց ավանդությանը հետևող Ուսուցչի: Հազարամյակներ շարունակ հոգևոր ավանդական շատ գործառնություններ հաստատել են դասավանդվելու իրենց իրավունքը և տվել են իրենց պտուղները՝ այդ ավանդական ուղղություններին հետևող աշակերտների հոգևոր նվաճումների տեսքով:

Իսկ ինչպե՞ս վարվել արևմուտքի մարդկության հետ, որը կորցրել է ճշմարիտ ավանդույթները, իսկ այն կեղծ գուրություններ, որոնք զալիս են ուսուցանելու, հենց իրենք այնքան էլ լավ չեն տիրապետում հոգևոր ավանդույթներին և շփոթության են մատնում նրանց, ովքեր ուզում են իրենց հետևել:

Այնուամենայնիվ ձեր աշխարհում կան հինավուրց գիտելիքների հատիկներ, կան ավանդույթներ ու գործառնություններ, որոնցում դեռևս կորսված չեն անցած դարաշրջանների Բարձր Ուսուցիչների տված Գիտելիքները:

Հատկապես այն ժամանակ՝ շատ հազարամյակներ առաջ, իմաստուններն ունակ էին ընկալելու մարդու էներգետիկական համակարգին վերաբերող ճշմարիտ գործառնություն ու գիտելիքներ: Նրանք այն իմաստունների և յոգերի հետևորդներն էին, որոնք պահպանում էին Գիտելիքը: Շատ հոգևոր Ուսուցիչների մարմնավորման խնդիրն ու նպատակը հենց այն էր լինում, որ մարդկությանը գիտելիքներ տան մարդու նուրբ էներգետիկական համակարգի վերաբերյալ: Քանզի ենթադրվում էր, որ Կալի Յուգայի ժամանակներում մարդկությունը կկորցնի հնամենի հիմնական գիտելիքները: Այդպես էլ եղավ: Ամենահիմնական գիտելիքները մարդկությունը կորցրեց: Եվ միայն հին գիտելիքի առանձին կայծեր են բռնկվում մոլորակի վրա այսուայնտեղ՝ որպես հինավուրց դպրոցների աշակերտների ձեռքբերումներ:

Ձեր գիտակցության մակարդակը թույլ չի տալիս, որ ձեզ հասանելի դառնան հինավուրց ճշմարտությունները: Այնուամենայնիվ մեր Ուղերձներով մենք այս կամ այն չափով տալիս ենք անհրաժեշտ բանալիներ, որոնք ուշադիր դիտարկման դեպքում կարող են բացել ձեր գիտակցությունն ու քնած ունակությունները և ցույց տալ ձեր հոգևոր որոնումների ճիշտ ուղղությունը:

Մենք քչից ենք սկսում՝ ճշմարիտ նմուշօրինակներից, որոնցով անփոփոխ կերպով պետք է շրջապատեք ինքներդ ձեզ: Ամեն մի առարկա կամ պատկեր, որը հայտնվում է ձեր տեսադաշտում, ազդում է ձեր էներգետիկական համակարգի վրա: Եվ եթե մշտապես դիտում եք ոչ ճիշտ նմուշներով գովազդներ, ապա դրանք ձեր էներգիան կենտրոնացնում են ստորին չափերի վրա

և Սրբազան Հրին թույլ չեն տալիս, որ հասնի ձեր էության բարձրագույն չակրաներին: Դուք ինքներդ եք կամավոր կերպով արգելափակում ձեր ողնաշարով վեր ելնող բարձրագույն էներգիայի հոսքը:

Անորակ երաժշտությունը, մտով սնվելը, թմրանյութերը, ակոհոլը, նիկոտինը, պոռնոգրաֆիայով տարվելը ձեզ քաշում են դեպի ցածրագույն էներգետիկական մակարդակները և թույլ չեն տալիս, որ ձեր հոգին զարգանա:

Հրաժարվե՛ք ոչ ճիշտ նմուշներից ու դրսևորումներից, և ձեր Բարձրագույն Եսն ունակ կլինի ձեզ հանելու ճիշտ Ուղու վրա: Դուք զանազանելու կարողություն ձեռք կբերեք և այլևս չեք նմանվի այն կույր կատվաձագերին, որոնք մի հոգևոր ուղղությունից վազում են մյուսին:

Ուղին ամբողջովին ձեր ներսում է: Եվ երբ ձեր էներգետիկական համակարգն ազատվի զանգվածային գիտակցության ձևաչափերից, կկարողանա ուղղորդել ձեզ: Ձեր ներսում Բարձրագույն աշխարհների հետ ինքնահամալարման հսկայական ներուժ կա պահված:

Եվ եթե կարողանաք ազատվել զանգվածային գիտակցության կապանքներից ու ձեր շրջապատի ոչ ճիշտ նմուշներից, ապա հաշված տարիների ընթացքում հոգևոր շնորհներ ձեռք կբերեք, այդ թվում՝ նաև զանազանման շնորհ:

Զանգվածային գիտակցությունը և այն կառույցները, որոնք կանգնած են դրա հետևում, չարի ուժերի մարմնացումն են: Եվ մարդկության հաջորդ փուլը պետք է նշանավորվի նրանով, որ ձերբազատվի այն ամենից, ինչը ձեր Կունդալինիի էներգիային թույլ չի տալիս բարձրանալու ողնաշարի հիմնամասից դեպի վեր:

Առայժմ Աշխարհի Մայրը ծածկված է պատրանքի ծածկոցով, բայց հաջորդ դարաշրջանն աշխարհի համար կբացի Աշխարհի Մոր դեմքը: Իսկ դրանից հետո ոչինչ չի կարողանա կասեցնել մարդկության ընթացքը դեպի Ոսկեդարի ժամանակաշրջան:

Այսօրվա մեր գրույցը շատ գաղտնի բանալիներ է պարունակում իր մեջ: Հայրական հոգածու ձեռքով ես հասա ձեր քնած գիտակցությունը: Եվ համբերությամբ սպասում եմ, թե մարդկության լավագույն ներկայացուցիչները ե՞րբ կարթնանան քաղցր քնից և կմղվեն դեպի աստվածային գիտակցության Արևը:

ԵՍ ԵՄ Վայրչանան

Սպիտամա Չրադաշտ
27 դեկտեմբերի, 2012 թ.

**Դուք ակնածալից երախտագիտությամբ պետք է
համակվեք այն մեծագույն գոհաբերության հանդեպ, որը
Սանատ Կումարան արել է հանուն ձեր կենսահոսքերի**

ԵՍ ԵՄ Չրադաշտը...

Ես կրկին եկել եմ...

Այսօր մենք կդիտարկենք Աստծո Ճշմարտության ևս մեկ եզրաշերտ:

Երբ ես մարմնավորման մեջ էի, դարձա մարգարեն մի կրոնի, որը հիմա այնքան էլ հայտնի չէ Երկիր մոլորակում: Բայց այն ժամանակվա համար ամենաառաջադեմ կրոնն էր դա: Իսկ եթե համեմատենք ներկայումս գոյություն ունեցող դավանաբանությունների հետ, ապա ինչ-որ բանով ես բավականին առաջ էի անցել ինչպես իմ ժամանակից, այնպես էլ ներկայիս դավանաբանական աշխարհայացքներից: Ես էի, որ հիմնեցի մարդկային բնույթի հրեղեն, բոցեղեն լինելու հասկացողությունը: Ես հաստատեցի հրի պաշտամունքը, հրեղեն, արևային Աստվածության պաշտամունքը, որին մարդկությունը պարտական է իր բանականության շնորհի համար: Ես հաստատեցի Արամազդի պաշտամունքը: Մարդկության պատմությանն այդ մեծագույն անհատականությունը հայտնի է բազմաթիվ անուններով: Իսկ հիմա այդ անհատականությունը ձեզ հայտնի է որպես Սանատ Կումարա:

Այո՛, ես եղա Սանատ Կումարայի մարգարեն: Եվ ցայսօր խոնարհվում եմ Նրա մեծության առջև, այդ Բարձր Ոգու մեծության առջև:

Այդ Ոգու շնորհիվ է, որ Երկրի մարդկությունը կարողացավ շարունակել իր Էվոյուցիան: Եվ չափազանց անարդար բան կլինի այդ բարձր անհատականության Ոգու սխրանքը մոռանալը: Մեծ երախտամոռություն կլինի, եթե մոռացության մատնվի այն Էակը, որի շնորհիվ մարդկությունը մինչև այժմ շարունակում է իր Էվոյուցիան:

Հարկ է, որ պատմեն ձեզ այդ պատմությունը: Այն, հնարավոր է, ձեզնից ոմանք շատ անգամ են լսել, ոմանք էլ գուցե առաջին անգամ կլսեն:

Անհիշելի ժամանակներ առաջ մոլորակի իրավիճակը սկսեց վատանալ: Ոչ ոք չէր կարողանում պահել ու պահպանել իր աստվածային բնույթը: Ոգու թրթիռները չէին մնում նույնիսկ ստորին չափերում:

Համայն մարդկությունն անհուսալիորեն արգելափակել էր Աստծո էներգիայի մատչելիությունը:

Դա եղել է միլիոնավոր տարիներ առաջ: Եվ այն ժամանակվա մոլորակի վիճակը շատ նման էր ներկայումս հաստատված վիճակին:

Մոլորակի վրա չկար որևէ մեկը, որ կարողանար իր չափերում պահպանել Կյանքի Բոցը՝ Աստծո Հուրը: Մոլորակի վրա չկար որևէ էակ, որ կարողանար Աստծո էներգիան փոխանցել աշխարհին:

Համաձայն Օրենքի՝ եթե աշխարհը կտրված է Աստծուց, ապա ենթակա է ոչնչացման՝ որպես ձախողված քաղաքակրթություն:

Աստված մտադրվել էր արդեն նոր խմոր հունցել Երկիր մոլորակի համար:

Սակայն գտնվեց շատ բարձր մի անհատականություն, որն իր հովանու տակ առավ մոլորակն ու նրա էվոլյուցիան:

Եվ ահա բառացիորեն վերջին պահին այսպիսի որոշում կայացվեց. Երկիր մոլորակի կենսահոսքերը կշարունակեն իրենց գոյությունը, բայց միայն այնքան ժամանակ, քանի դեռ Երկրի վրա մնացած կյանի մարմնավորման մեջ գտնվող գոնե մեկ մարդ, որը կպահպանի գիտակցության աստվածային մակարդակը:

Առաջինը, ով հանձն առավ խավար մոլորակի վրա կրելու մարմնավորման խաչը, Սանատ Կումարան էր: Նա իր բոլոր նվաճումները զոհաբերեց, որպեսզի մարմնավորվի և Երկրի կենսահոսքերի մեջ ներարկի Աստվածառաջնորդության սկզբունքներն ու Աստծո Օրենքի ըմբռնումը:

Ոգու այդ սխրանքի շնորհիվ միլիոնավոր կենսահոսքեր կարողացան Երկիր մոլորակի վրա շարունակել իրենց էվոլյուցիան:

Ես պետք է ձեզ համար հատուկ նշեմ, որ Երկիր մոլորակի այդ խավար ժամանակների ինչ-որ հատվածում ձեզնից յուրաքանչյուրը մարմնավորվել է մոլորակի վրա: Եվ բոլորդ հենց Սանատ Կումարային եք պարտական, որ հիմա շարունակում եք ձեր էվոլյուցիան:

Արդյոք ձեզնից շատերն են հիշում այդ մասին: Արդյոք շատերի՞դ սրտում պահպանվում է Սանատ Կումարայի նկատմամբ երախտագիտության զգացումը:

Այդ ժամանակներից միլիոնավոր տարիներ են անցել: Սանատ Կումարան կրկին ու կրկին գալիս էր Երկիր, որպեսզի այնտեղ պահպանվեր գիտակցության անհրաժեշտ մակարդակը: Եվ ես հպարտ եմ, որ պատիվ եմ ունեցել Նրա մարգարեն լինելու:

Սանատ Կումարան՝ Արամազդը, ինձ իր մարգարեն համարելով, իմ միջոցով տվեց Օրենքի ըմբռնումը:

Դրանից հետո էլի շատ ժամանակներ են անցել: Սակայն այն կրոնների հիմնադիրները, որոնք այս կամ այնտեղ առաջանում էին երկրագնդի վրա, իրենց ներսում ունենում էին այդ մեծ անհատականության՝ Սանատ Կումարայի ներկայությունը: Ուրիշ մեծ հոգիներ էլ են եղել, որոնք ներկա են գտնվել այս կամ այն մարգարեի կամ կրոնի հիմնադրի ներսում, սակայն բոլոր այդ ճշմարիտ մարգարեներից յուրաքանչյուրի ներսում, թեկուզ կարճ ժամանակով, ներկա է եղել Սանատ Կումարան: Եվ այն ներքին ուղղությունը, որը երկրագնդի տվյալ վայրում ու դարաշրջանում մարմին առած Երկնքի դեսպանը ստանում էր, դրանով իսկ կարողանում էր հաստատել Աստվածառաջնորդության սկզբունքները և համայն Տիեզերքի Օրենքը:

Այն բանի համար, որ մարդկային էվոլյուցիան շարունակվում է, մարդկությունը պարտական է Մեծ Ոգուն՝ Սանատ Կումարային:

Ես օգտվում եմ ստեղծված հնարավորությունից, որպեսզի գամ և տամ ահա այս Ուսմունքը: Քանզի վստահ եմ, որ այս Դեսպանորդը կներդնի բոլոր ջանքերը և կանի հնարավոր ամեն ինչ, որ իմ այս Ուղեբժը գրառվի ու մնա ձեզ ու ձեր հետնորդների համար:

Հինավուրց Ուսմունքի իմացությունն ու դրա հիմնական դրույթները պետք է մշտապես առկա լինեն երկրագնդի վրա, լինեն դրանք սրբազան տեքստերի տեսքով, թե անմիջականորեն մեր դեսպանորդների ու մարգարեների աուրաներում:

Մեծ ողորմածություն է աշխարհի համար, որ Սանատ Կումարան շարունակում է իր սպասավորությունը՝ հանուն Երկիր մոլորակի կենսահոսքերի:

Եվ հիմա, երբ արդեն գիտեք, թե ում եք պարտական ձեր էվոլյուցիայի շարունակման համար, այլևս չեք կարողանա անպատասխանատու կերպով տնօրինել ձեզ հատկացվող Աստծո էներգիան: Միլիոնավոր տարիներ Սանատ Կումարան գամված է մատերիայի խաչին, որպեսզի

ձեր հոգիներն ամրանան և կարողանան պատասխանատվություն վերցնել թե՛ մոլորակի, թե՛ իրենց սեփական էվոլյուցիայի համար:

Դուք այլևս չեք կարող այնպիսի տեսք ընդունել, թե ձեզ ոչինչ հայտնի չէ: Պարտավոր եք գիտակից լինել և ակնածալից երախտագիտությամբ համակվել այն մեծ զոհաբերության հանդեպ, որին Սանատ Կումարան գնացել է՝ հանուն ձեր կենսահոսքերի:

Ես այսօր եկա, որ բացեմ ձեզ համար այս հինավուրց պատմությունը, և որ դուք կարողանաք ավելի գիտակցված ու ակնածալից երախտագիտությամբ վերաբերվել Երկնքի այն մեծ ողորմածությանը, որը միլիոնավոր տարիների ընթացքում ցուցաբերվում է Երկրի մարդկությանը:

Սիրո և երախտագիտության ձեր յուրաքանչյուր առաքումը Սանատ Կումարային, անցյալի ու ներկայի բոլոր մարգարեներին, որոնք Աստծո Մեծ Ճշմարտություն են ուսուցանել մարդկությանը, Կարմայական Վարչությունը կդիտի որպես այն բանի նշան, որ մարդկությունը ցուցաբերում է գիտակցության այնպիսի մակարդակ, որը բավարար է նրան նոր ողորմածություններ ու թողություններ շնորհելու համար:

Ես եկա և հիմա լքում եմ ձեզ:

Աշխատեք չմոռանալ իմ այս Ուղերձը ձեր աշխարհում թագավորող ունայնության ու քաոսի պայմաններում:

Իմ այս Ուղերձի փոխանցումով ձեր ուսերին մեծ պատասխանատվություն ընկավ:

Պահպանե՛ք ձեզ և ձեր ներսի աստվածային կրակները...

ԵՍ ԵՄ Չրադաշտը

Վեհապետ Էլ Մորիա
28 դեկտեմբերի, 2012 թ.

Պետք է սկսել գործել...

ԵՍ ԵՄ Էլ Մորիան...

Հապճեպությամբ է թելադրված այսօրվա Ուղերձը:

Հենց նոր դուրս եկա Կարմայական Վարչության նիստից, որպեսզի ձեզ փոխանցեմ այդ նիստի վերջին նորությունները:

Դե ինչ, տարվա արդյունքներն ամփոփված են: Ձեզ համար ես պետք է նշեմ, որ արդյունքները մի կողմից ուրախալի են, քանի որ հաջողված համարվեց Երկիր մոլորակի թրթռանքի անցումը նոր մակարդակի... Մեզ հաջողվեց խուսափել արտակարգ իրավիճակներից, և դա ուրախալի է...

Մյուս կողմից՝ տխրեցնող բան էլ կա: Եվ դուք հավանաբար գլխի եք ընկնում, թե ինչն է դա: Ներկայումս մարմնավորման մեջ գտնվող մեր սաներից մենք ավելի մեծ ժրություն, գիտակցականություն և նվիրվածություն էինք ակնկալում:

Վերջին մի քանի տարիների ընթացքում մեզ հաջողվեց համարյա անհնարինն անել. Ռուսաստանի ֆիզիկական ոլորտում մենք ստեղծեցինք Եղբայրության առաջապահ կետը՝ Լույսի ամրակետը: Դա մինչև այժմ չտեսնված մի հաղթանակ էր, որն իրականություն դարձավ 2007 թվականին:

Իսկ այն, ինչ եղավ հետո, օրինակելի չի կարող համարվել: Համընդհանուր ափսոսանք է հարուցում այն, որ Ռուսաստանի լուսակիրները չկարողացան պահպանել Եղբայրության առաջապահ կետը: Մեր դեսպանորդի Աշրամի հողը բոլոր այս հինգ տարիների ընթացքում անընդհատ հարձակման էր ենթարկվում մեզ հակադիր ուժերի կողմից: Չէինք հասցնում հետ մղել մեկը մյուսին հաջորդող գրոհները: Մեր դեսպանորդի Աշրամի հետ կապված բոլոր տխուր իրավիճակների մասին մենք անհապաղ ձեզ տեղեկացնում էինք մեր Ուղերձներով: Ինքս շատ անգամ եկել և աղաչել եմ ձեզ, որ օգնեք:

Ձեր օգնության փոխարեն մենք տեսնում էինք մեր նախկին բոցաշունչ հետևորդների քարացած սրտերը: Մեկը մյուսի հետևից լուսակիրները լքում էին դեսպանորդին, և նրանցից շատերը դիմեցին վատագույն հանցագործության՝ դավաճանությանը:

Արդյո՞ք ուժերից վեր գործ կլինե՞ր համախմբվելն ու գրոհների ճնշմանը դիմագրավելը: Արդյո՞ք այդքան ծանր բան է Լույսի բեռը կրելը:

Շատ ափսոս, որ աստվածային հնարավորության պատուհանը, որն այսքան ժամանակ բաց էր Ռուսաստանի համար, փակվեց:

Կանխագու՞մ եմ, թե ինչպիսի խուճապային տրամադրության մեջ կհայտնվեն իմ այս Ուղերձն ընթերցող ու վերընթերցող մեր աշակերտներից շատերը:

Կանխատեսու՞մ եմ կասկածների և բացասական բռնկումների ալիք...

Արդյո՞ք արժանավայել պահվածք ունեցան մեր աշակերտները: Միթե՞ այդպես են ձեզ ուսուցանել Համբարձյալ Վեհապետները...

Այո՛, Կարմայական Վարչությունը հաստատեց, որ Ռուսաստանի համար աստվածային հնարավորությունը փակված է այլևս, և արգելք է դրված Ռուսաստանի հողում Վեհապետների Ուղերձները փոխանցելու գործին:

Մեր անեղծ աշակերտներն անհաջողությունը դիտում են որպես սխալներից դաս առնելու հնարավորություն: Մեր անեղծ աշակերտները մեզ հակադիր ուժերի գրոհի ճնշմանը հակադրում են իրենց կուռ միասնությունն ու համախմբվածությունը:

Համախմբվելու առիթ կա՞... Կա՛ խնդիր, որը ենթակա է լուծման...

Ձեր ջանքերի օգնությամբ և ձեր սրտերի կրակի շնորհիվ կարող է բացվել նոր հնարավորություն: Յու՛յց տվեք ձեր համախմբվածությունը... Պատրաստակամություն՝ ցուցաբերեք զոհաբերելու ձեր պատրանքային թուլեական հաճույքներն ու խաղերը՝ հանուն Վեհապետների գործի...

Ինչու՞ են մեր դրոշների տակ այդքան սակավ անեղծ ու նվիրյալ մարտիկները: Ու՞ր կորան այն ասպետներն ու հսկաները, որոնք մարմնավորվելուց առաջ պարտավորվել էին պաշտպանել մեր դեսպանորդին...

Էհե՛յ, որտե՞ղ եք...

Արդյոք այդքան ծա՞նր եղավ ձեր բաժին բեռը: Ժամանակը չէ՞, որ հիշեք ձեր պարտավորությունների ու պարտքի մասին...

Խոսքս ուղղված չէ նրանց, ովքեր դավաճանեցին ու հեռացան: Հիմա ես դիմում եմ նրանց, ում ներսում դեռ նվիրվածության կայծ և աստվածային հուր կա:

Ցուցաբերե՛ք Վեհապետներին ծառայելու ձեր վճռականությունը, և Կարմայական Վարչությունը կրկին կքննարկի Ռուսաստանի համար աստվածային հնարավորություն բացելու հարցը:

Իսկ առայժմ մենք ստիպված ենք մեր Ուղերձները տալ բոլորովին ուրիշ երկրներում:

Այս անգամ մենք մեր Ուղերձները տվեցինք Պորտուգալիայում: Ուղերձների նախորդ շրջանը, ինչպես հիշում եք, անցավ Լատվիայում:

Ի՛նչ արած, Աստված ցանկացած իրավիճակում կարողանում է դրական պահեր գտնել: Եթե լուսակիրները չկարողացան ճիշտ ժամանակին բռնել մեր դրոշը և մեր Ուսմունքը տարածել ամբողջ աշխարհում, ապա մենք ինքնե՛րս կանենք դա:

Ձեզ հայտնի է, որ մեր Ուղերձներն ընդունելու ընթացքում հորդում է Լույսի հսկայական քանակություն: Եվ դա է այն գլխավորը, հանուն որի մենք տալիս ենք մեր Ուղերձները: Ուստի հիմա աշխարհի շատ երկրներում հնարավորություն ունենք մեր դեսպանորդի համար ստեղծելու այն պայմանները, որոնք անհրաժեշտ են մեր Ուղերձներն ընդունելու համար: Երկրագնդով մեկ էներգիայի հավասարաչափ բաշխումը ողջունելի գործ է...

Իմ այս Ուղերձի ավարտին կուզենայի ձեր գիտակցության մեջ ամրապնդել վերահաս փոփոխությունների անխուսափելիության գաղափարը:

Եվ որքան արագ կարողանաք յուրացնել մեր կողմից տրվող Ուսմունքը, այնքան արագ էլ փոփոխություններ տեղի կունենան մարդկային համակեցության կյանքի բոլոր ոլորտներում:

Սկզբի համար մեկընդմիշտ հիշեք հետևյալը. Լույսի՝ ֆիզիկական ոլորտին վերաբերող բոլոր գործերում հարկ է, որ ցուցաբերվի լիակատար հոգածություն ու պատասխանատվություն: Պատկերացրեք ուրիշ երկրի մի դեսպանի, որն իր դեսպանության երկրի իշխանական մարմինների ու բնակչության կողմից արժանանում է անըմբռնողության ու բացահայտ թշնամական վերաբերմունքի: Կարծում եմ, որ աշխարհի ոչ մի երկիր չի հանդուրժի իր ներկայացուցչի նկատմամբ նման թշնամական վերաբերմունք: Մենք՝ Համբարձյալ Վեհապետներս, նույնպես չենք կարող հանդուրժել թշնամական վերաբերմունք մեր Դեսպանորդի նկատմամբ: Բազմիցս ուսմունք է տրվել այն կարմայի մասին, որն առաջանում է Երկրի վրա եղած մեր ներկայացուցչի՝ մեր Դեսպանորդի նկատմամբ ցանկացած բացասական գործողություն ձեռնարկելու դեպքում:

Ցանկացած կարմա կարելի է ամենահեշտ ճանապարհով բեռնաթափել՝ սխալներն ընդունելով և ներողություն հայցելով: Իսկ եթե տգիտությունն ու սնապարծությունը մարդկանց թույլ չեն տալիս, որ սխալներն ընդունեն և զոջան, ապա բացասական կարման սկսում է իջնել ֆիզիկական ոլորտ՝ ընդունելով զանազան արհավիրքների, սոցիալական պայթյունների և ֆինանսական աղետների տեսք:

Ուստի ձեռքերը ծալած նստելու ժամանակ չկա: Պետք է սկսել գործել... Մի՛ վախեցեք ձեր սխալ գործողություններով կարմա ստեղծելուց: Եթե ձեր շարժառիթն արդար է, ապա որքան էլ պատմական տվյալ պահին սխալ լինեն ձեր գործողությունները, Աստված միշտ կկարողանա շտկել

իրավիճակը և ուղղել ձեր սխալները: Անհամեմատ վատթար է անգործության կարման, երբ, հարգելի պատճառով պայքարի մեջ չմտնելով, դուք զիջում եք նվաճված դիրքերը և կորցնում սրընթաց գրոհի ընձեռած առավելությունները:

Սովորե՛ք ձեր սխալներից:

Մի՛ երկնչեք գործել հանուն Երկիր մոլորակի կենսահոսքերի բարօրության...

ԵՍ ԵՄ Է՛լ Մորիան

Ուղերձների 18-րդ շրջան (հունիս, 2013 թ.)

Սանատ Կումարա
20 հունիսի, 2013 թ.

Ես ձեզ օգնության ձեռք եմ մեկնում

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան:

Երկրի մարդկության նկատմամբ իմ հայրական զգացմունքները ստիպում են ինձ այցի գալ ձեզ:

Իմ այս Ուղերձը տալուս պահին ոչնչի հետ չհամեմատվող սարսուռ եմ զգում: Ինչպես միշտ, ես կուզենայի իմ գիտակցության, իմ ընկալումների, իմ հավատի և Աստծուն ու Նրա Օրենքին իմ նվիրվածության մի մասնիկը փոխանցել ձեզ:

Ընդամենը մի ակնթարթում դուք ի վիճակի եք ձեր աուրայի մեջ ստանալու իմ նվաճումների ամբողջ պաշարը, երբ կարդում կամ լսում եք իմ Ուղերձը: Միակ խոչընդոտը ձեր մարմնական խելքի, ձեր էգոյի դիմադրությունն է: Ստանալն անհնարին է ձեզ համար, քանի դեռ չեք կարողանում ընդունել: Իսկ չեք կարողանում ընդունել, քանի որ ձեր էգոն մեր միջև պատնեշ է ստեղծում:

Ուստի ամեն անգամ գալով՝ մեր հիմնական խնդիրն ենք դարձնում ձեր էգոյի հաղթահարումը: Մենք կարող ենք հասնել մեր Միասնությանը և Ոգով միավորվել միայն այն դեպքում, եթե ընդառաջ գնանք մեկս մյուսին:

Ես գալիս և ձեզ եմ մեկնում իմ օգնության ձեռքը: Սակայն դուք նույնպես պետք է ջանքեր գործադրեք և ձեր ձեռքը մեկնեք դեպի ինձ:

Ես չեմ հոգնում կրկնելուց, որ դուք պետք է ձեր ջանքերն անընդհատ գործադրեք, որպեսզի կայանա մեր համագործակցությունն ու Աստծո մեջ մեր Միասնությունը: Այնպես չէ, որ այսօր կարող եք ընթանալ Ուղով և հետևել մեր հանձնարարականներին, իսկ վաղը կրկին տրվել ձեր էգոյի քմայքներին: Չեք կարող այսօր մեր աշակերտը լինել, իսկ վաղը մոռանալ այդ մասին:

Ձեր գործողությունների՝ ձեր նախընտրանքների և ջանքերի հետևողականություն և կայունություն. ահա այն, ինչին մենք անխոնջ կերպով ձգտում ենք հասնել և կոչ ենք անում հետևել դրանց:

Ամեն անգամ, երբ, մեր Ուղերձներով ոգեշնչվելով, որոշում եք ընթանալ մեր մատնանշած Ուղով, հենց հաջորդ օրը մի՛ մոռացեք ձեր այդ որոշման մասին:

Ձեր ժամանակներում մատերիայի դիմադրությունը հասել է իր գագաթնակետին: Ուստի ձեր ամբողջ էությանը պետք է ջանքեր գործադրեք պատրանքային ուժերը հաղթահարելու ուղղությամբ: Դուք կարող եք դա անել: Ի վիճակի եք հաղթահարելու ցանկացած արտաքին ու ներքին բացասական ուժ ու էներգիա: Միակ բանը, որ ձեզ անհրաժեշտ է դրա համար, ձեր ցանկությունն է ու նպատակամղվածությունը, նվիրվածությունն ու կայունությունը:

Իսկ որպեսզի այդ որակները կարողանաք դուրս կորզել ձեր էության միջից, անհրաժեշտ է, որ ալմաստի պես ամուր հավատ ունենաք՝ հիմնված համայն Արարչության նկատմամբ անվերապահ սիրո խոր զգացման վրա:

Դուք չեք կարող ակնթարթորեն վերակառուցել ձեր էությունը և համալարվել Հիերարխիայի հետ: Բայց կարող եք դրան հասնել հարկ եղած ուղղությամբ աստիճանական և ամենօրյա քայլեր կատարելով: Մեր տված խորհուրդներն ու հանձնարարականները բավարար են, որպեսզի վստահորեն առաջ ընթանաք Աստծո մոտ վերադառնալու ձեր Ուղով:

Ընդամենը պետք է մշտապես հիշեք մեր մասին և համահնչունություն պահպանեք ձեր սրտերում: Եղբայրությունը հենց դրա համար է այսքան ջանքեր գործադրում: Ամեն անգամ, երբ մենք գալիս ենք Ուղերձներ տալու, Համբարձյալ Դասերի միլիոնավոր ներկայացուցիչներ օգնության են շտապում և նպաստում ամեն մի Ուղերձի փոխանցմանը: Ուստի և մեր Ուղերձներն ամենաթանկարժեք գանձերն են ձեր աշխարհի համար: Դրանք Աստծո նյութականացված էներգիայի նմուշներ են: Ութ ու կես տարի է արդեն, ինչ մեր էներգիաներն ու թրթիռները կաթիլ առ կաթիլ թափանցում են ձեր աշխարհ:

Մենք անկեղծորեն հույս ենք կապում, որ դուք արժանապատվորեն և խնամքով կտնօրինեք մեր էներգիաները և մեզնից ստացած գիտելիքներն ու Աստծո Օրենքի ըմբռնումը:

Ամեն անգամ, երբ կարդում եք մեր Ուղերձները, մի պահ մտորեք այն մասին, թե որքան ջանքեր են գործադրվում դրանք ձեր աշխարհի փոխանցելու համար: Եվ եթե դուք կարողանայիք մեր կանչին արձագանքել մեր ջանքերին համարժեք ձեր ջանքերով, ապա Աստծո Օրենքի պայմանը բավարարված կլինեք և մեր օկտավաների միջև էներգիաների փոխանակությունը

կհասներ իր ավարտին: Իսկ դա իր հերթին կլիներ այն բանի ապացույցը, որ Երկիր մոլորակի կենսահոսքերն ունակ են շարունակելու իրենց հետագա զարգացումն Աստծո մեջ:

Սակայն դա տեղի չի ունենում: Եվ դրանում ինքներդ կարող եք համոզվել ձեր իսկ օրինակով:

Ինչքա՞ն ժամանակ է բավարարում ձեր այն պատրաստակամությունն ու վճռականությունը, որը ստանում եք՝ մեր հերթական Ուղերձը կարդալով. մինչև հեռախոսային առաջին զանգը կամ ընկերների հետ «չաթով» հաղորդակցվելը. մինչև նոր զբաղմունք ու հաճույք ստանալը, որոնցով հրապուրվում եք ձեր աշխարհում. մինչև հեռուստացույցով հերթական ֆիլմը դիտելը...

Դուք չեք կարող մի ակնթարթում մի կողմ նետել ձեզ շրջապատող պատրանքը, բայց կարող եք հաջորդական քայլեր կատարել այն հաղթահարելու ուղղությամբ: Իսկ Ուղին ձեզնից դուրս չէ, որ բացվում է ձեր առջև: Այդ Ուղին ձեր ներսում է բացվում. դա ձեր գիտակցության փոփոխությունն է:

Դուք ինքներդ եք կառավարում ձեր գիտակցության փոփոխության այդ գործընթացը: Ամբողջ արտաքին պատրանքը փոխված է ձեր շուրջը, որպեսզի կատարեք ձեր ընտրությունը և Ուղով առաջ ընթանաք: Սակայն դուք նախընտրում եք ավելի ու ավելի շատ սուզվել այդ պատրանքի մեջ և չբաժանվել դրանից:

Դա ձեր ընտրությունն է և ձեր որոշումը: Համայն տիեզերքում չկա որևէ մեկը, որ ձեր փոխարեն կատարի ձեր ընտրությունը:

Իսկ հիմա փորձեք ձեզ պատկերացնել իմ փոխարեն: Միլիոնավոր տարիներով ես ձեզ ուսուցանում եմ Ուսմունքի հիմունքները: Ես ներկայանում եմ շատ դեսպանորդների և մարգարեների միջոցով: Միլիոնավոր տարիների ընթացքում տալիս եմ միևնույն Ուսմունքը: Տասնյակ ու հարյուր հազար անգամ այդ Ուսմունքը ձեզնից շատերը լսել են Իմ դեսպանորդներից և անձամբ ինձնից Եղբայրության մենաստաններում: Բայց հետո դուք հավել եք պատրանքային աշխարհին, ձեր աչքերի Լույսը խամրել է, վճռականությունը լքել է ձեզ, և դուք ավելի ու ավելի եք խորասուզվել ձեր աշխարհի պատրանքի մեջ: Այնուհետև հասել է այն պահը, երբ վերջին հույսով ձեր հայացքը հառել եք Երկնքին և օգնություն ու փրկություն խնդրել: Եվ նույն բանը կրկնվել է կյանքից կյանք: Ծա՛տ անգամներ...

Ձեզնից ցանկացածը, եթե իմ տեղը լիներ, վաղուց ձեռքը թափ տված կլիներ: Սակայն ես պատասխանատու եմ ձեզնից յուրաքանաչյուրի համար: Եվ, որքան էլ համառեք, միևնույնն է, ես էլի կգամ և կշարունակեմ ձեզ ուսուցանել ու խրատել:

Ես չգիտեմ, թե որքան ժամանակ պետք կգա ձեր հոգուն, որպեսզի հագենա պատրանքային խաղերից և մղվի դեպի աստվածային գիտակցության լեռնագագաթները, բայց գիտեմ, որ կգա այն պահը, երբ կկարողանաք ձեր գիտակցությունն այնքան վեր հանել, որ տեսնեք զարգացման աստվածային Ուղու հեռանկարը և ընդմիշտ երես թեքեք ձեր աշխարհի պսպուռ խաղալիքներից:

Ես մաղթում եմ ձեզ, որ ճշմարտության այդ պահը ձեզ համար վրա հասնի հենց ձեր այս մարմնավորման ընթացքում: Մաղթում եմ, որ քայլ կատարեք դեպի անսահմանություն և հնարավորինս շուտ դուրս պրծնեք ձեզ կաշկանդող պատրանքի սահմաններից:

Ես ձեզ եմ մեկնում իմ ձեռքը և համբերությամբ սպասում եմ, թե երբ կկարողանաք մոտենալ և բռնել այն:

ԵՄ ԵՄ Սանատ Կունարսն: ՕՄ

Հաութամա Բուդդա

21 հունիսի, 2013 թ.

**Փոխեցեք ինքներդ ձեզ, նպատակամղվեք, և դուք ձեռք կբերեք
Բուդդայի ոսկյա հանդերձանքն ու Աստծո Իմաստության գանձերը**

ԵՄ ԵՄ Հաութամա Բուդդան: Ես կրկին եկել եմ:

Ես եկել եմ հեռավոր աշխարհներից և կուզենայի ձեզ փոխանցել իմ ներկայության մի մասնիկը:

Մի պահ պատկերացրեք, թե մենք միասին հենց նոր ենք վերադարձել Մեծ Կենտրոնական Արևից: Հոգևոր աշխարհում հեռավորությունը նշանակություն չունի: Դուք վիթխարի տեղաշարժեր եք կատարում տարածության ու ժամանակի մեջ: Եվ դրա համար ձեր սարքավորումների՝ մեքենաների, ինքնաթիռների կարիքը դուք չունեք...

Հեռավոր աշխարհներում տեղաշարժվելու ամբողջ մեխանիզմը թաքցված է ձեր սեփական էության ներսում: Եվ ձեզնից նրանք, ովքեր ջանասեր են ու նպատակասլաց, կարող են լքել իրենց ֆիզիկական մարմինը և ինձ հետ միասին ճամփորդել համայն Տիեզերքում: Դրա համար ձեզ

անհրաժեշտ է ունենալ հոգևոր նվաճումների որոշակի մակարդակ: Իսկ այդ մակարդակը բոլորիդ համար հասանելի է:

Ես կրացեմ գաղտնիքը, թե ինչպես կարելի է այդ մակարդակին հասնել մեկ մարմնավորման ընթացքում: Եվ դա այն Ուղին կլինի, որը ես ուսուցանել եմ որպես Հաութամա Բուդդա իմ մարմնավորման ժամանակ:

Նախ և առաջ դուք պետք է ընտրեք ձեր շարժման ուղղությունը: Քանի դեռ չեք որոշակիացրել, թե ինչ ուղղությամբ պետք է ընթանաք, ոչնչի չեք կարողանա հասնել: Ձեր էությունը պետք է առաջաստանավի պես համընթաց լինի Տիեզերական Օրենքի քամուն: Դուք պետք է վերջնական և անբեկանելի որոշում կայացնեք և համոզված լինեք ձեր որոշման մեջ, որ ձեզ համար գլխավորն այս Տիեզերքի Բարձրագույն Օրենքն է, որին այլ կերպ կարելի է Աստված անվանել: Եվ եթե ինքներդ ձեզ չկեղծեք, եթե իրոք անկեղծորեն ձեր կյանքում գլխավորը համարեք այս Տիեզերքի Բարձրագույն Օրենքը, ապա ձեր հաջորդ քայլն ու բոլոր հետագա քայլերը դուք կանեք ճիշտ ուղղությամբ:

Դուք պետք է որոշեք, թե ձեր կյանքում ով է գլխավորը՝ ինքներդ, թե՛ Աստված: Քանի դեռ խնդրում եք Աստծուն, որ նա բավարարություն տա ձեր ցանկություններին կամ ձեզ համար անի այս կամ այն բանը, դուք հոգևոր Ուղով առաջ չեք ընթանա:

Դուք ձեր էության ներսում պետք է որոշում կայացնեք և ձեր ամբողջ կյանքն առանց մնացորդի ենթարկեցնեք Աստծուն և Նրա կարիքների ու պահանջմունքների բավարարմանը:

Ինչպես էլ որ ջանաք բավարարել այս պայմանը, դուք չեք կարողանա անմիջապես, միանգամից հասնել դրան: Երկիր մոլորակի միլիոնավոր տարիներ տևած էվոլյուցիայի ընթացքում անթափանց վարագույր է գոյացել ձեր թանձր ֆիզիկական աշխարհի և Աստծո Աշխարհի միջև: Այդ պատճառով որոշակի ժամանակ և ջանքեր են պահանջվում, որպեսզի հաղթահարվի ձեր գիտակցության մեջ արարված պատրանքը: Որոշակի ժամանակ է պահանջվում, որպեսզի հնարավոր լինի դուրս գալ ֆիզիկական աշխարհի սահմաններից և մղվել դեպի Հեռավոր աշխարհները:

Բայց եթե դուք ընդամենը մեկ փոքրիկ քայլ անեք ճիշտ ուղղությամբ և որոշակի ժամանակահատվածի ընթացքում պահպանեք ձեր նպատակամղվածությունն ու Տիեզերական Օրենքին ձեր նվիրվածությունը (որպես կանոն, դրա համար պահանջվում է ոչ թե մեկ, այլ ամենաքիչը յոթ երկրային մարմնավորում), ապա դուք Բարձրագույն աշխարհներին կհասնեք նույնքան անխուսափելիորեն, ինչպես հասնում եք Ջոմոլունգմայի գագաթին, եթե մշտապես շարժվում եք դրա ուղղությամբ և այդ նպատակով գործադրում եք ձեր բոլոր ջանքերը:

Ձեր աշխարհը հենց այն բանի համար է նախատեսված, որ դուք կարողանաք հաղթահարել պատրանքի դիմադրությունը և դրանով իսկ ձեռք բերեք այն վաստակը, որն անհրաժեշտ է Բարձրագույն աշխարհում լինելու համար:

Ուստի և մենք մերթ ընդ մերթ գալիս և ուսուցանում ենք ձեզ հենց այն նպատակով, որ դուք պահպանեք ճիշտ կողմնորոշիչներ և չմոռանաք Աստծո Աշխարհի մասին:

Կարևոր չէ, թե քանի անգամ կշեղվեք Ուղուց. կարևոր չէ, թե քանի անգամ ցած կընկնեք: Գլխավորն այն է, որ դուք միշտ վերադառնաք մեզ մոտ, տեղից վեր կենաք և շարունակեք առաջ ընթանալ:

Երբեմն մեկը ֆիզիկական աշխարհում դեգերում է շատ ու շատ մարմնավորումների ընթացքում: Նա գտնում է մեր Ուսմունքը, բայց հետո պատրանքը տիրում է նրան, և նա ուրիշ ուսմունքներ է գտնում, որոնք նրան թվում են նույնքան ճշմարիտ և անեղծ, որքան մերն է: Եվ երբեմն տասնյակ մարմնավորումներ են պահանջվում, որպեսզի մարդը հասնի զանազանման այն աստիճանին, որը թույլ է տալիս անսխալ որոշելու, թե ինչն է ճշմարիտ, և ինչը՝ կեղծ:

Իսկ ձեզնից նրանց համար, ովքեր դեռ հեռու են իրենց ներսում զանազանման բավարար աստիճան ունենալուց, մենք ուղարկում ենք մեր բանբերներին, որոնք ունակ են պահպանելու շարժման ուղղությունը և ճիշտ Ուղի ցույց տալու մոլորյալ հոգիներին: Եվ ըստ մեր բանբերների նկատմամբ ունեցած ձեր վերաբերմունքի՝ մենք դատում ենք ձեր հոգու պատրաստվածության աստիճանի մասին: Երբեմն տասնյակ մարմնավորումներ են պահանջվում, որպեսզի հանգամանքները դասավորվեն այնպես, որ դուք մոտենաք մեր դեսպանորդին: Ձեր կենսահոսքի համար դա մեծ ողորմածություն է և վիթխարի հնարավորություն: Սակայն երևի կգարմանաք, եթե ասեմ, որ այդ աստվածային հնարավորությունից օգտվում է Ուղով ընթացողների մեկ տոկոսից ոչ ավելին: Մնացածները հեռու են քաշվում այդ աստվածային հնարավորությունից և գերադասում գործել ըստ սեփական հայեցողության ու ռիսկի:

Նման վարվելակերպը ձեզ խելամիտ չի՞ թվում: Բայց, ավա՛ղ, այն շատ տարածված է ձեր աշխարհում: Իսկ գիտե՞ք, թե ինչու է այդպես լինում: Ասե՛մ ձեզ. այն պարզ պատճառով, որ մարդիկ գործում են՝ իրենց մարմնական խելքի դիրքերից ելնելով: Բարձրագույն ԵՍ-ի ձայնն այդ

դեպքում փոխարինվում է մարմնական խելքի ձայնով, և մարդիկ գերադասում են գործել ինքնուրույն և ընթանալ իրենց սեփական ուղով:

Այնուհանդերձ, եթե մեր դեսպանորդի շնորհիվ գոնե մեկ մարդ դուրս է գալիս պատրանքի խավարից, ապա մենք համարում ենք, որ այդ առաքելությունը հաջող է անցել:

Հենց այդ պատճառով է, որ մենք մեկը մյուսի հետևից Լույսի առաքելություն ենք իրականացնում ձեր աշխարհում: Եվ դա է պատճառը, որ ֆիզիկական օկտավայում մենք Լույսի կիզակետը միշտ պահպանում ենք մեր դեսպանորդների ներսում: Կարեկցանքը բոլոր Բուդդաների և Բողիսատվաների գլխավոր առանձնահատկությունն է: Եվ հատկապես կարեկցանքի և Երկրի մարդկության նկատմամբ սիրո շնորհիվ ենք մենք ֆիզիկական օկտավայում մշտապես պահպանում Լույսի կիզակետը:

Այս Ուսմունքը ձեզ տրվել է բազմաթիվ անգամ: Եվ այսօր ես այն նորից եմ կրկնում:

Եթե դուք ձեր բանականությունը մշտապես ուղղված պահեք դեպի մեր աշխարհը, և ձեր շարժառիթներն էլ բացարձակ մաքուր լինեն, ապա ֆիզիկական աշխարհում միշտ կնկատեք մեր դեսպանորդներին և կհետևեք նրանց:

Իսկ եթե նախկինի պես առաջնորդվում եք անձնական բնույթի շարժառիթներով, ապա մեր դեսպանորդին չեք նկատի, եթե նույնիսկ քիթ քթի բախվեք նրա հետ:

Ռոբոթների համապատասխանության օրենքն անխափան է գործում: Ուստի նախքան Աստծուն և Վեհապետներին մեղադրելը, թե իբր նրանք գրկում են ձեզ օգնությունից և բարեհաճ չեն ձեր նկատմամբ, փորձեք ձեր ներսում փնտրել այն բանի պատճառը, թե ինչու եք հայտնվել այս կամ այն իրավիճակում:

Ամեն ինչ աշխարհում ներսից դեպի դուրս է գնում: Օրենքն է այդպիսին: Եվ պատրանքն էլ իր հերթին դեպի ձեզ է շրջվում իր այն կողմով, որը դուք ակնկալում եք տեսնել:

Նույն ճամփով գնացող երկու մարդիկ տեսնում և ուշադրություն են դարձնում իրարից տարբեր բաների: Եվ եթե դուք հասել եք Բուդդայի աստիճանին, ապա ձեր կյանքը կանցնի այնպես, որ ոչ մի կեղտ չկալի ձեր ոսկյա հանդերձին:

Իսկ եթե ծանրաբեռնված եք բազմաթիվ թերություններով, ապա Երկրի վրա որքան էլ իդեալական վայրում հայտնվեք, ձեր շուրջը միայն թերություններ և կեղտ կտեսնեք:

Ես այս օրով ձեզ այցի եկա, որպեսզի ձեր ուշադրությունը հրավիրեմ ֆիզիկական աշխարհում ձեզ հետ տեղի ունեցող ամեն ինչի ներքին պատճառների վրա: Փոխեցե՛ք ինքներդ ձեզ, նպատակամղվեք, և դուք ձեռք կբերեք Բուդդայի ոսկյա հանդերձանքը և Աստծո Իմաստության գանձերը:

ԵՍ ԵՄ Հառությամա Բուդդան

Գուան Ին

22 հունիսի, 2013 թ.

Ես եկել եմ ձեր հոգուն օգնություն ցուցաբերելու

ԵՍ ԵՄ Գուան Ինը:

Ես այսօր ձեզ այցի եմ եկել ոչ որպես Կարմայական Վարչության անդամ և ոչ որպես Բարեգթության Աստվածուհի: Այսօր եկել եմ որպես ձեր ավագ քույրը:

Եկել եմ, քանի որ դուք օգնության կարիք ունեք: Ձեզնից ոմանք այնպիսի տառապանքի մեջ են, որ նույնիսկ չեն հասկանում, որ իրենց հոգիներն օգնության և ապաքինման կարիք ունեն:

Դուք ձեր տառապանքի պատճառները փնտրում եք ձեզնից դուրս: Կարծում եք, թե ամեն ինչի մեղավորն արտաքին հանգամանքներն են՝ աշխատանքը, ընտանիքը, կառավարությունը:

Սակայն ես ձեզ նոր բան ասած չեմ լինի, եթե ինձ թույլ տամ ձեզ հիշեցնել, որ այն ամենի նախադրյալները, ինչ այժմ ձեզ հետ տեղի է ունենում, դուք ստեղծել եք կա՛մ ձեր այս մարմնավորման մի փոքր ավելի վաղ շրջանում, կա՛մ ձեր նախորդ մարմնավորումների ընթացքում: Դուք ինքներդ եք ձեր տառապանքների ծնողները:

Ձեր ցանկությունները դեպի ձեզ են քաշում ոչ միայն իրենց իրականացման հնարավորությունը, այլ նաև կարմա, որն ուղեկցում է ձեր ցանկությունների իրականացմանը:

Պաշտելի Հառությամա Բուդդան ուսուցանում էր ազատագրում ցանկություններից՝ տառապանքների պատճառից: Ձեզնից շատերն են կարդացել Հառությամա Բուդդայի Ուսմունքը: Դրանով դուք բավարարել եք ձեր՝ զիտելիքներ ձեռք բերելու պահանջմունքը, որոնցով ուզում էիք ընդմիշտ ազատվել այդ աշխարհի տառապանքներից, այնպես չէ՞...

Սակայն հիմա ես պատրաստ եմ ձեզ այնպիսի գիտելիք տալ, որն օգտակար կլինի ձեզ համար: Այն վերաբերում է ձեր շրջակա իրականությանը:

Ձեզ թվում է, թե աշխարհը մռայլ է և անբարեհաճ: Ձեզ այնպես է թվում, թե շուրջը շուրջ ամեն ինչ տառապանքի մեջ է և բուժման կարիք ունի: Բայց հենց դուք՝ ձեր հոգին է տառապում առաջին հերթին: Եվ ձեր հոգին է, որ կարիք ունի բուժման և օգնության:

Ահա և ես եկել եմ ձեր հոգուն օգնություն ցուցաբերելու:

Շատ ու շատ մարմնավորումներ առաջ ես ճիշտ այսպես հնարավորություն ունեի ձեզ օգնելու: Պատահական մի՛ համարեք այն, որ դուք գտել եք այս թելադրությունները և հետաքրքրություն ցուցաբերել դրանց նկատմամբ: Նախկինում դուք արդեն լսել եք իմ սփոփանքի խոսքերը և հնարավորություն եք ունեցել լինելու առանձնության և աղոթքի անդորրության մեջ:

Այժմ ձեր խնդիրը բարդացել է, քանի որ հիմա ձեր մեջ ուժ պիտի գտնեք ձեր աշխարհում տեղի ունեցող խելագարություններին հակադրելու ձեր սեփական աշխարհի անդորրն ու խաղաղությունը, որոնք պետք է բացահայտեք ձեր էության ներսում:

Ես եկել եմ ձեզ հիշեցնելու, թե ովքեր եք դուք իրականում: Նաև հիշեցնելու, որ այս մարմնավորումից առաջ դուք պարտավորություն եք ստանձնել, որ արտաքին աշխարհին կհակադրեք ձեր ներաշխարհի հանդարտությունը: Ձեր էության ներսից կբխեն ֆիզիկական աշխարհի բոլոր փոփոխությունները: Եվ հենց դուք եք այն մարդիկ, ովքեր կոչված եմ իրենց ներսի Աստծո Աշխարհը տարածելու արտաքին աշխարհի վրա:

Այո, իհարկե, ցանկություններից հրաժարվելը շատ կարևոր է: Շատ կարևոր է նաև վարվեցողության բարոյական հիմքերը պահպանելը: Շատ կարևոր է սեփական մտքերը, զգացմունքները և մարմինը մաքուր պահելը: Շատ կարևոր է ցանկացած իրավիճակում արտաքին կողմնորոշիչները և հանգստություն պահպանելը: Այդ ամենը կարևոր է և անհրաժեշտ:

Սակայն կա ևս մեկ եզրաշերտ, որը վրիպում է ձեր արտաքին գիտակցությունից: Այն վերաբերում է ձեր ներսի Աստծո հետ ձեր փոխհարաբերությունին: Շատ կարևոր եզրաշերտ է դա: Քանզի տառացիորեն ամեն ինչ կախված այն բանից, թե որքանով կկարողանաք ձեր արտաքին գիտակցությունը միացնել աստվածային գիտակցությանը՝ ձեր Բարձրագույն Ես-ին:

Ձեզ անհրաժեշտ է շատ մանրագին վերաբերմունք դրսևորել ձեր կյանքի ամեն մի արտաքին հանգամանքի նկատմամբ: Այն ամենը, ինչ կարող է խաթարել ձեր ներքին Ուսուցչի՝ ներքին Գուրուի հետ ունեցած ձեր անձնական հարաբերությունները, պետք է հեռացվի ձեր կյանքից:

Մենք բազմաթիվ անգամ եկել և տվել ենք այս Ուսմունքը: Եվ հիմա ես եկել եմ ասելու, որ հասել է ձեր կյանքի այն պահը, երբ մեր տված Ուսմունքին հետևելու ձեր չափաբաժնից է կախված տառացիորեն ձեր կյանքի ամեն ինչը: Այն բանից, թե որքանով կհետևեք մեր խորհուրդներին ու հանձնարարականներին, կախված է բուն ձեր կյանքը՝ ձեր հոգու Էվոյուցիայի՝ շարունակություն ունենալը:

Դուք ձեր կյանքն ու ձեր հոգին կկարողանաք պահպանել միայն այն դեպքում, եթե ձեր ամբողջ էությանը մղվեք դեպի Աստված և Նրա Օրենքի պահպանումը:

Դուք այլևս չեք կարողանա հետաձգել ձեր ընտրություն կատարելու պահը, որպեսզի կրկին վազեք հաճույքների ու զվարճությունների հետևից: Քանզի հասել է տիեզերական ժամը, և հունձքն ընթանում է ամբողջ թափով:

Ձեր ընտրությունը կատարողը դուք եք լինելու: Ոչ ոք ձեր փոխարեն դա չի անի: Եկել է վերջնական քննության ժամանակը: Դուք ձեր էության ներսում ընտրություն եք կատարում, և ձեզ համար այդ ընտրությունը նշանակում է կա՛մ ձեր հոգու Էվոյուցիայի շարունակություն, կա՛մ դրա ավարտ: Տիեզերական բոլորաշրջաններն անբեկանելի են: Օրենքը պահանջում է, որ ընտրություն կատարեք:

Պետք է ասեմ, որ Մեծ Կենտրոնական Արևը ձեզ այլևս նոր հնարավորություն չի ընձեռի: Ժամկետներն ավարտվում են և այլևս հետաձգվել չեն կարող:

Իսկ դա նշանակում է, որ ձեզնից նրանք, ովքեր չեն կարողացել հաղթահարել իրենց գիտակցության պատրանքային դրսևորումը, հաջորդ Էվոյուցիոն աստիճանին չեն կարողանա անցնել: Ձեր ավագ եղբայրներն ու քույրերը՝ Համբարձյալ Տիրակալներն ու Տիրուհիները, որոնք արդեն անցել են Էվոյուցիայի հաջորդ աստիճանին, օգտագործում են ամեն մի հնարավորություն, որպեսզի ձեզ օգնեն և օժանդակեն: Եղբայրության մենաստաններում աշխատանքն ընթանում է շուրջօրյա և առավելագույն ծանրաբեռնվածությամբ: Մենք գալիս ենք տառացիորեն ձեր ամեն մի կանչով և արձագանքում ձեր կոչերին ու աղոթքներին: Իսկ ձեզնից շատ քիչ բան է պահանջվում՝ կանչ հղել և աղոթել, նպատակամղվել և հավատալ:

Եկել է չտեսնված հնարավորությունների ժամանակը, երբ մի մարմնավորմամբ կարելի է ազատվել պատրանքի գերությունից: Սա հրեշավոր հակասությունների և հակադրությունների ժամանակաշրջան է, երբ միևնույն վայրում կարող եք հանդիպել և՛ անդրսահմանային սրբության

նմուշների, և՛ նրանց հակադիր ուժերի վիթխարի դրսևորմանը՝ Աստծո էներգիայի զանազան պղծումների ու աղավաղումների տեսքով:

Օրերի ընթացքում մշտապես դուք հայտնվում եք հակադիր նշանի ուժերի ազդեցության դաշտում: Եվ բոլոր օրերի ընթացքում գտնվում եք ընտրություն կատարողի վիճակում: Ցավոք, շատ քիչ մարդիկ են գիտակցում այն, ինչ տեղի է ունենում:

Մարդկանց մեծ մասը, չհասկանալով, թե ինչ է տեղի ունենում, ընկնում է հենց այն ուժերի ազդեցության տակ, որոնք վերջին հաշվով կործանում են նրանց հոգին:

Մեր խնդիրը, Համբարձյալ Դասերիս խնդիրն այն է, որ նախկինի պես բացատրենք իրավիճակը, տանք Երկրում ընթացող գործընթացների բացատրությունը: Մենք կցանկանայինք հնարավորինս շատ հոգիների դուրս հանել պատրանքի ծովից: Ուստի գալիս ենք և անխոնջ կերպով կրկնում ու կրկնում ենք ձեզ համար այն խոսքերը, որոնք կարող են արթնացնել ձեր Աստվածայնությունը: Քանզի եթե արթնանաք, ապա ձեռք կբերեք ձեզ անհրաժեշտ գիտակցումն ու պայծառացումը: Իսկ երբ գիտակցեք ներկայումս տեղի ունեցող գործընթացների իմաստը, այլևս դեսուդեն չեք ընկնի և կասկածներ չեք ունենա: Դուք ձեռք կբերեք այն ներքին հիմնաձողը, որը թույլ կտա ձեզ ոչ միայն դիմագրավել ձեզ շրջապատած պատրանքին, այլ նաև օգնել թույլերին ու անգործներին, որոնք չեն գիտակցում, թե ինչ է տեղի ունենում և ձեր խնամքի ու հոգածության կարիքն ունեն:

Ես այսօր այցելեցի ձեզ, որպեսզի ազդակ հաղորդեմ ձեր սրտերին: Եկա, որպեսզի դրդեմ ձեր հայացքներն առօրյա ունայնից վեր բարձրացնելու և ուղղելու դեպի աստվածային գիտակցության լեռնագագաթները:

ԵՍ ԵՄ Գուսան Ինը՝ ձեր հոգիների նկատմամբ մեծ հոգածությամբ

Մայր Մարիամ
23 հունիսի, 2013 թ.

Թույլ տվեք Աստծուն մուտք գործել ձեր կյանք

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը:

Ես եկել եմ: Ի՞նչ եք կարծում, ինչի՞ մասին կլինի մեր այսօրվա զրույցը:

Ես կարծում եմ, որ դուք կուզենայիք ինձ հետ զրուցել շատ բաների մասին: Եվ հարցնել շատ բաների մասին: Այնուհանդերձ ես այսօր խաղաղ զրույցի համար չեմ եկել: Ես վճռականորեն եմ տրամադրված և պատրաստ եմ լուրջ զրույցի, որն այժմ կկայանա:

Ես կուզենայի ձեզ հետ զրուցել ձեր սպասավորության և ձեր պարտավորությունների մասին: Ձեզնից շատերը մարմնավորվելուց առաջ շատ պարտավորություններ են ստանձնել, որոնք կապված են աշխարհին մատուցվելիք իրենց սպասավորության հետ: Սակայն այժմ նրանք մոռացել են իրենց այդ պարտավորությունների մասին: Եվ դա շատ ցավալի է: Հատկապես ցավալի է դա այս պահին, երբ մոլորակի իրավիճակը շարունակում է բարդանալ. խավարը փակել է մարդկանց աչքերը և թույլ չի տալիս լիաթոք շնչել, մղվել դեպի վերածննդի լուսավոր ու բերկրալից էներգիաները:

Խոսքս ամենից առաջ վերաբերում է իմ սիրելի Ռուսաստանի բնակիչներին: Բայց նաև պատրաստ եմ զրուցելու աշխարհով մեկ սփռված իմ սիրելի զավակներից շատերի հետ:

Ես բերկրանք եմ զգում այնժամ, երբ մենք համատեղում ենք մեր ջանքերը և համատեղ աղոթում աշխարհի համար: Եվ տրտմությունն է ինձ պատում այնժամ, երբ աղոթողների շարքերը նոսրանում են, և վաղանցիկ գվարճությունները ձեզ կտրում են գլխավորից՝ ձեր աշխարհի ցանկացած բացասական ուժերի և դրսևորումների դեմ աղոթքային հակամարտության մեջ մտնելուց:

Մենք մեր համատեղ աղոթքով ունակ ենք փոխելու ցանկացած երկրի ցանկացած իրադրություն: Մեր համատեղ աղոթքով կարող ենք կանխել ամենաձանր իրավիճակը և այն ուղղորդել դեպի թեթև ու բերկրալից աստվածային հուն:

Ես պատրաստ եմ ձեր աղոթքի պահին լինելու ձեզ հետ: Պատրաստ եմ միանալու այն մարդկանց, ովքեր իրենց աղոթքն անկեղծորեն ուղղում են ինձ և օգնություն խնդրում:

Տերը ձեզ չտեսնված հնարավորություններ է տալիս: Տերը պատրաստ է մոտենալ ամեն մի նկրտում ունեցողի, ով անկեղծ աղոթում է: Եվ ես նույնպես Նրա հետ կլինեմ ձեզնից յուրաքանչյուրի կողքին:

Ես անհամբեր սպասում եմ, թե երբ կգա ձեր անկեղծ աղոթքի պահը, որպեսզի զամ և ուժեղացնեմ այն: Երբեմն մոտենում եմ ձեզնից նրանց, ովքեր պարտավորություն են ստանձնել

ամեն օր կարդալու իմ Վարդարանները: Բայց որքան մեծ է լինում իմ զարմանքն ու հիասթափությունը, երբ աղոթելու փոխարեն դուք խորասուզված եք լինում այնպիսի գործերի մեջ, որոնք ձեզ ավելի կարևոր են թվում: Ես գալիս եմ ձեր աղոթքի ճշգրիտ ժամին, որպեսզի ձեզ հետ աղոթելով ուժեղացնեմ այն: Բայց ես ձեզ տեղում չեմ գտնում: Դա շատ ցավալի է...

Պաշտելիներս, մի՛ վշտացրեք ինձ ձեր անկայունությամբ ու ծուլությամբ: Հասկացե՛ք, այժմ միայն ձեր աղոթքները կարող են փրկել ու շտկել այն իրավիճակը, որը հաստատվել է Ռուսաստանում և աշխարհում: Միայն ձեր աղոթքներով դուք կարող եք կասեցնել ամենաահավորը...

Ես խնդրում և աղաչում եմ ձեզ...

Չէ՛ որ առանձնապես բարդ բան չէ, սիրելիներս, որ նույնիսկ այն դեպքում, երբ ժամանակ չունեք Վարդարան կարդալու, պազապես ձեր սրտի ամբողջ սիրով ձգտեք դեպի ինձ: Մեր հայացքները կհանդիպեն, և ես կհասկանամ, որ դուք հիշում եք ինձ, բայց հանգամանքները թույլ չեն տալիս, որ այդ օրն աղոթքին ժամանակ հատկացնեք: Այդ դեպքում ես կգամ հաջորդ օրը, և մենք միասին աղոթքային ջանքեր կգործադրենք հանուն Ընդհանուր Բարօրության:

Մեր համատեղ աղոթքի ուժն այժմ գորեղացված է, ինչպես երբեք: Եվ ես վստահեցնում եմ ձեզ, որ մենք միասին կարող ենք ի չիք դարձնել անցյալում ու ներկայում մարդկանց գործած ոչ ճիշտ արարքների ամենաահավոր հետևանքները, եթե բացասական էներգիաներին հակադրենք մեր հավատն ու կուռ միասնությունը:

Պատկերացրե՛ք, թե այդ դեպքում ինչպիսի՛ հզոր աղոթքային ալիք է անցնում երկրի մի ծայրից մյուսը: Պատկերացրե՛ք, թե աղոթողների ձայներն ինչպես են միայրվում և վերածվում մեկ միասնական ամպրոպային ձայնի: Եվ այդ ձայնը լսելի է լինում համայն մոլորակում:

Մենք միասին կկարողանաք դիմակայել...

Ահա ասում եմ ձեզ, որ իրավիճակն այնքան ծանր է, որ նույնիսկ դժվար է դրան հավատալը: Եվ միակ բանը, որ հիմա ես ձեզնից խնդրում եմ, ձեր աղոթքների էներգիան ինձ առաքելն է, որպեսզի կարողանամ այն տնօրինել իմ հայեցողությամբ:

Վստահե՛ք ինձ ձեր աղոթքային ջանքերը: Ինձնից օգնություն խնդրեք, և ես իմ հրեշտակներին օգնության կուղարկեմ այն իրավիճակներում, որոնք անլուծելի են թվում:

Պատկերացրե՛ք այնպես, որ ես իմ հրեշտակների հետ մուտք եմ գործում ձեր իշխանությունների պատերից ներս: Մեր ներկայությամբ մենք փոխում ենք իրադրությունը և բարի ուժերի գերակշռությունն ստեղծում որոշումներ ընդունելու ընթացքում:

Կարող եք ինձ պատկերացնել ցանկացած բանակցությունների գործընթացում, որոնք կայանում են պետական մակարդակով. ասես բանակցությունների սեղանի մոտ ես էլ եմ նստած և վերահսկում եմ ձեր աշխարհում ընդունվող բոլոր այն որոշումները, որոնք վերաբերում են քաղաքականությանն ու տնտեսությանը, կրթությանն ու առողջապահությանը, մշակույթին և սոցիալական ապահովությանը:

Ձեր տեսլականներն ու աղոթքներն ինձ և մյուս Համբարձյալ Վեհապետներին հնարավորություն կտան մասնակցելու ցանկացած պետական մակարդակով կայացվող որոշումների ընդունմանը: Այսպիսի պարզ գործառնությունով մենք կկարողանանք բեկում մտցնել ցանկացած իրավիճակում և դրա հանգուցալուծումն ուղղորդել դեպի աստվածային հուն:

Ես գիտեմ, որ հիմա շատ մարդիկ տառապում են ճնշվածությունից, և նրանցից շատերի սրտերին տիրել են վախն ու ատելությունը:

Այդ ամենը, պաշտելիներս, տեղի է ունենում ձեր կյանքում Աստծո անբավարար ներկայության պատճառով: Աստծո էներգիան դուք ինքներդ եք արգելափակում և զանգվածային տեղեկատվության միջոցները, որոնք ձեզ խորասուզում են գիտակցության բացասական վիճակների մեջ:

Միայն ձեր աղոթքներով ոգեկոչված Աստծո էներգիայի հոսքերը կարող են մաքրել ձեր մարմինը, գիտակցությունն ու ենթագիտակցությունը և ձեզ ազատել վախից, ճնշվածությունից ու ատելությունից: Ձեր գիտակցության ցանկացած անորակ վիճակ կարելի է չեզոքացնել Աստծո էներգիայով, որն ամեն օր կյանքի կկոչեք ձեր աղոթքների միջոցով:

Ձեզնից յուրաքանչյուրի աղոթքի ժամին ես ձեզ հետ կլինեմ: Ես կգորեղացնեմ ձեր աղոթքի ուժը և կօգնեմ ձեզ: Բայց ես ձեզ համար ոչինչ չեմ կարող անել, եթե դուք ինձ չեք տալիս ո՛չ ձեր աղոթքի էներգիան, ո՛չ ձեր սիրտ էներգիան, որոնք կառաքելիք ինձ, եթե մտասկեռվելիք իմ պատկերի վրա:

Ուստի ոչ ոքի մի մեղադրեք, եթե գիտակցության բացասական վիճակում եք հայտնվում, և եթե փորձանքներն ու դժբախտությունները թրջում են ձեր աչքերը: Աստված այնքան ողորմած է, որ մի կանչը կամ բոցաշունչ աղոթքը կարող է բավարար լինել, որպեսզի փոխվի ցանկացած իրավիճակ:

Ձեր բոլոր աղոթքներն ու կանչերը պետք է ի կատար ածեք միայն հանուն Աստծո:

Մենք կարող ենք փոխել ցանկացած իրադրություն. և մենք դա կանենք... Աստծո հրաշքը հենց ձեր կողքին է գտնվում: Եվ այն պատրաստ է երևալու, սակայն հրաշքի դրսևորման համար պետք է առկա լինեն ձեր աղոթքների էներգիան և երջանկությանը, Բարիքին ու Բարուն հասնելու ձեր դրական ձգտումները:

Դուք ստանում եք այն, ինչին ձգտում եք: Եվ եթե ամեն օր հայիոյանքներ եք տեղում անխտիր ամեն ինչի վրա, հայիոյում եք ձեր կառավարությանը, ձեր շրջապատում եղած բոլորին և նույնիսկ Աստծուն, ապա հազիվ թե դրական արդյունքի հասնեք և հազիվ թե ձեր կյանքում երբևէ երջանիկ լինեք:

Իսկ եթե, անկախ ամեն ինչից, ունակ եք հավատ ու սեր պահելու ձեր սրտերում, եթե պատրաստ եք ինքներդ ձեզ և ձեր մերձավորներին պաշպանելու աղոթքով ու սիրով, ապա ամենավատ ու անդառնալի բաները կշրջանցեն ձեզ ու ձեր մերձավորներին: Իսկ եթե տարեցտարի ավելի ու ավելի շատանա այն մարդկանց քանակը, որոնց համար առաջին տեղում Աստված է և Նրա Օրենքը, ապա ոչ մի դժվարություն, ոչ մի արհավիրք ու ճգնաժամ չի սպառնա ձեր երկրին ու դրա մարդկանց:

Դուք տեսնում եք, որ Աստված մշտապես հոգում է ձեր մասին:

Թույլ տվեք Աստծուն մուտք գործել ձեր կյանք:

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը

Պաշտելի Ալֆա
24 հունիսի, 2013 թ.

Մեծ Երկնային ողորմածություն

ԵՍ ԵՄ Ալֆան:

ԵՍ ԵՄ ձեր Երկնավոր Հայրը: ԵՍ ԵՄ եկողը: Այսօր, հենց այս օրով, տիեզերական ավետիս է իջել, և այս Դեսպանորդն իրավասու է այդ ավետիսը փոխանցելու ձեզ:

Ես եկել եմ Հեռավոր աշխարհներից: Եկել եմ, որ խաբսիսեմ իմ Բոցն ու իմ Ներկայությունը Դեսպանորդի չակրաներում:

Նախկինում երբեք նման հնարավորություն չի եղել: Մենք նախաձեռնեցինք սույն փորձը, որպեսզի փոխենք իրադարձությունների ընթացքը և Երկրի մարդկությանը հնարավորություն տանք հավելու Բարձրագույն աշխարհների էներգիաներին:

Ես պետք է վստահեցնեմ ձեզ, որ թրթիռների ավելի բարձր մակարդակին անցնելու անվտանգությունը պայմանավորված է բացառապես կատարվող փոփոխությունների ձեր ընկալմամբ:

Այն բանից, թե որքանով դուք ունակ կլինեք ձեր գիտակցության մեջ ընկալելու Բարձրագույն աշխարհները և հետևելու Բարձրագույն աշխարհների Օրենքին, կախված է նոր գիտակցության մակարդակին և Էվոյուցիոն զարգացման նոր գալարին մարդկության անցման անվտանգությունը:

Ուստի Ես եկել եմ ձեզ հիշեցնելու ձեր առաքելության և ձեր ծագման մասին:

Դուք անցել եք ձեր Էվոյուցիան թանձր աշխարհներում և այժմ պարտավոր եք վերադառնալ Իմ աշխարհը, որը ձեր հարազատ Տունն է:

Ներկայումս Ես ձեզ համար տիեզերական հնարավորության պատուհան եմ բացել: Սա Իմ անձնական թողության շնորհն ու հնարավորությունն է, որը նվիրում եմ Երկրի մարդկությանը:

Այս պահից սկսած՝ դուք կարող եք ձեր կանչերով անմիջականորեն դիմել Ինձ: Եվ եթե ձեր կյանքում վրա հասնի այնպիսի պահ, երբ ձեզ համար ծայրահեղ ծանր կլինի ձեզ շրջապատած տառապանքներն ու դժվարությունները կրելը, կարող եք կանչով դիմել Ինձ, և Ես հնարավոր ամեն ինչ կանեմ, որպեսզի ձեր վիճակը թեթևացնեմ:

Փոխարենը Ես ձեզ միայն խնդրում եմ, որ ձեր գիտակցության մեջ մշտապես պահեք մեր այսօրվա հանդիպման հուշը:

Որոշակի ժամանակ ևս անցնելուց հետո պատրանքը կսկսի ճահիճի պես ձեզ իր ներսը քաշել: Ներքին Լույսը կմարի, և ձեր Լույությունը կկորցնի կողմնորոշումը: Ամբողջ շրջակա տարածությունը գորշ կդառնա, և դուք այլևս Լույսը խավարից, սևը սպիտակից չեք ջոկի:

Եվ հենց այդ պատճառով եմ Ես այս օրով եկել, որ ձեզ տամ այս հնարավորությունը, որպեսզի դուք միշտ կարողանաք դրանից օգտվել:

Երևացող տեղում դրեք կանչի խոսքերը, որից կօգտվեք բոլոր այն իրավիճակներում, երբ շրջակա իրադրությունը ձեզ անտանելի կթվա, երբ կթվա, որ այլևս ուժ չունեք ձեզ շրջապատող աշխարհի ծանր բեռը կրելու:

Ինձ ուղղված ձեր կանչը դուք կարող եք հղել ամեն օր, և այդ կանչից հետո ամբողջ 24 ժամ կգտնվեք Իմ պաշտպանության և խնամարկության տակ:

Եվ այսպես, դուք պետք է կանգնեք գոհասեղանի առջև, գտնեք այն պահը, երբ ձեզ ոչինչ չի անհանգստացնում, այնուհետև մուտք գործեք ձեր ներքին տարածքի

հովանու տակ և ձեր սրտի անդորրության մեջ արտաբերեք հետևյալ խոսքերը.

«Հանուն ԵՄ ԵՄ ՈՐ ԵՄ, պաշտելի՛ Ալֆա, ես խնդրում եմ Քո թողության շնորհի ազդեցությունը: Խնդրում եմ Քեզ, որ իմ էության ներսն առաքես Քո հայրական ճառագայթը: Խնդրում եմ, որ մեկնես ինձ Քո օգնության ձեռքը և մոտակա 24 ժամվա ընթացքում ինձ պաշտպանես բացասական էներգիաներից ու թրջո՞ւններից: Ես Քոնն եմ, Տե՛ր, արի և պաշտպանի՛ր ինձ...»:

Ահա այս պահից սկսած՝ Ես ակտիվացնում եմ սույն կանչը և այն դարձնում ձեզ համար մատչելի:

Սա մեծ Երկնային ողորմածություն է, որ դուք հնարավորություն եք ստանում օգտվելու Իմ անձնական պաշտպանությունից՝ գտնվելով ձեր աշխարհի ունայնության մեջ:

Դուք կարող եք օգտվել Իմ այս պաշտպանությունից այնքան հաճախ, որքան կկարողանաք, և որքան ձեզ դա անհրաժեշտ կլինի:

Ինձ ուղղված այս կանչն ամեն անգամ արտաբերելով՝ դուք կգորեղացնեք դրա ազդեցությունը:

Սակայն հարկ է որ իմանաք նաև, որ այդ կանչով ուժեղանում է Իմ ներկայությունը ձեր աշխարհում: Իսկ դա նշանակում է, որ հակադիր ուժերը կմոտենան այն վայրին, որտեղ արտաբերվում է այդ կանչը:

Եթե կանչն արտաբերեք օրվա մեջ մեկ անգամ, կստանաք 24-ժամյա Իմ պաշտպանությունը: Եթե ավելի հաճախ այդ կանչը հղեք, ապա Ես Իմ Ներկայությունը կդրսևորեմ ձեր կողքին, և մենք միասին կդիմակայենք ձեր աշխարհի այն ամենին, ինչն Աստծուց չէ:

Եթե դուք պատրաստ եք Իմ զինվորների շարքն անցնելուն, ապա Ես ձեր կողքին կլինեմ մինչև ձեր ծառայության ավարտը:

Ալֆայի բոլոր մարտիկները Նրա անձնական հոգածության տակ են գտնվում: Սակայն քչերն են համարձակվում զիջորագրվել Ինձ, քանի որ այդ պահից սկսած՝ պարտավորվում են իրենց ամբողջ կյանքը նվիրաբերել Աստծուն ծառայելուն:

Երկրի վրա շատ քիչ են այնպիսիները, որոնք ունակ են դրան: Եզակիներն են կարողանում դիմանալ մշտական լարվածությանը և իրենց մարմիններով անցնող էներգիաների բեկմանը:

Ուզում եմ հանգստացնել բոլոր նրանց, ովքեր այս պահին վախ ու կասկածներ ունեցան: Դուք դեռ պատրաստ չեք, ուստի Ինձ զինվորագրվելու հնարավորությունը ձեզ չի վերաբերում:

Սակայն այս Ուղերձը կարդացողների մեջ կան մի քանիսը, որոնք պատրաստ են Իմ զինվորների շարքն անցնելու:

Նրանք պատրաստ են կանգնելու Լույսի մարտիկների առաջին շարքերում:

Կանցնի ևս որոշակի ժամանակ, և ձեր աշխարհում իմ զինվորների քանակը կավելանա: Եվ, ըստ տիեզերական ժամկետների, շատ շուտով ձեր աշխարհում կլինեն միայն Իմ զինվորները:

Դա չի նշանակում, որ պատերազմ կլինի, այլ միայն նշանակում է, որ Լույսը կհաղթի խավարին: Դա անխուսափելի է, քանի որ այդպիսին է Տիեզերական Օրենքը:

Ես այս օրով եկա, որ ձեզ հիշեցնեմ ձեր աստվածային ծագման և ձեր աստվածային առաքելության մասին:

Մշտապես եղե՛ք նվիրվածության ու պատրաստության վիճակում, և Ես միշտ ձեր կողքին կլինեմ...

ԵՄ ԵՄ Ալֆան՝ ԵՄ ԵՄ ձեր Երկնավոր Հայրը

Մեծն Աստվածային Ուղղորդիչ
25 հունիսի, 2013 թ.

Աստծո հետ լինելը ձեր գիտակցության վիճակն է պարզապես

ԵՍ ԵՄ Մեծն Աստվածային Ուղղորդիչը: Այս օրով ես եկել եմ, որ ձեզ ուղղություն ցույց տամ ձեր Աստվածային Ուղու վրա: Ես մեծ հույսեր ունեմ, որ իմ այս Ուղերձն ընթերցողները գտնվում են դեպի Աստված տանող Ուղու վրա:

Նախ ես կուզենայի, որ շտկեիք ձեր ուսերը, ամբողջ կրծքով մեկ լիաթոք շունչ քաշեիք և ինձ դիմավորեիք այնպիսի լայն ժպիտով, ինչպես դիմավորում եք ամառային արևոտ ու քնքուշ լուսաբացը:

Ահա այդպե՛ս... Հիմա կարող եմք սկսել մեր գրույցը: Ամենայն որոշակիությամբ կարող եմ ասել, որ ձեր լավ տրամադրության ամբողջ պատասխանատվությունն ընկած է ձեր ուսերին: Եվ եթե մշտապես կիտած եք պահում ձեր հոնքերը, սեղմում եք ձեր շրթունքները և ձեր դեմքին տալիս խիստ ու տառապալից արտահայտություն, տարածությունից դեպի ձեր կողմն եք քաշում նմանատիպ մռայլ դեմքեր ու տառապալից հայացքներ:

Հիշեցե՛ք, որ դուք տարածությունից ստանում եք ճիշտ այն, ինչ ուղարկում եք տարածություն: Եվ ամբողջովին ձեզնից է կախված, թե ինչպիսի էներգիաներ եք առաքում աշխարհ, և թե ինչպիսի վիճակում եք ինքներդ գտնվում:

Ամեն օր դուք ինքներդ ձեզ ծրագրավորում եք: Կարող եք նախապես ծրագրավորել ձեր երջանկությունը, հաջողությունը, առողջությունն ու ուրախությունը, բայց կարող եք և ծրագրավորել ձեր տառապանքը, տխրությունը, ճնշվածությունը, չարամտությունը և նույնիսկ ատելությունը:

Ամեն ինչ, պաշտելիներ՝ս, ինքներդ եք որոշում: Աշխարհում չկա որևէ մեկը, որ ձեզ ստիպի գտնվել գիտակցության բացասական վիճակում: Միակ մարդը, ով կարող է դա անել, դուք ինքներդ եք: Եվ ուրիշ ոչ ոք:

Ուստի ես խորհուրդ կտայի ձեր օրը սկսել նրանով, որ մոտենաք հայելուն և ժպտաք ինքներդ ձեզ: Դա ամենահեշտ ձևն է՝ մատչելի նույնիսկ ձեզնից նրանց համար, ովքեր իրենք իրենց աղքատ, դժբախտ ու տնանկ են համարում:

Դուք համապատասխան եք դառնում ինքներդ ձեր մասին ունեցած պատկերացմանը: Դա այն տարծության օրենքն է, որում ապրում եք: Ուրեմն սկզբում պետք է փոխեք ձեր մասին ունեցած ձեր պատկերացումը: Պետք է համոզեք ինքներդ ձեզ, որ ձեզ հետ ամեն ինչ կարգին է: Եվ այդ գործում ամենակարևորն այն է, որ ինքներդ ձեզ համոզեք, որ Աստված ձեզ հետ է: Կյանքում ի՞նչ վատ բան կարող է պատահել ձեզ, եթե Աստված ձեզ հետ է և հոգում է ձեր մասին:

Աստծո հետ լինելը՝ Աստվածայինի գգացողությունը, պարզապես ձեր գիտակցության վիճակն է: Եվ եթե դուք ուզում եք մշտապես Աստծո հետ լինել, ապա նախ Նրան ընդունեք ձեր սրտի մեջ, որից հետո Նա կտիրի ձեր ողջ էությանը: Ծիշտ այնպես, ինչպես արևն է լուսավորում ամբողջ երկիրն ու ձեր շուրջը եղած ամեն ինչ, Աստված էլ ձեր միջից կլուսավորի աշխարհը:

Ձեր ներսում Աստծուն բացահայտելու այդ մեխանիզմը պետք է յուրացնեք բոլորդ: Աստծո հետ լինելը չի նշանակում գերմարդկային կարողությունների բացահայտում, մեր թելադրություններն ընդունելու կամ ուրիշների մտքերը կարդալու կարողություն: Աստծո հետ լինելը նշանակում է մշտապես ունենալ լավ ու կայուն տրամադրություն, ինչը ձեր հոգին բերնեբերան լցնում է ու բերկրանքով ու սիրով:

Ձեր աչքերը մատնում են ձեզ: Եվ եթե դուք Աստծո հետ եք, ապա ձեր աչքերը լույս են ճառագում և փայլում ներքին լույսով: Իսկ եթե նախընտրում եք առանց Աստծու ապրելը, ապա ձեր հայացքը խամրում է ու հանգչում:

Նկատե՛լ եք արդյոք, թե որքա՛ն դժբախտ մարդիկ կան ձեր շուրջը, որոնք ծանրաբեռնված են խնդիրների հսկա կույտով, մշտապես վատ տրամադրություն ունեն և մթագնած հայացք:

Պետք է ձեզ ասեմ, որ այն ամենը, ինչ տեսնում եք ուրիշ մարդկանց մեջ, կա նաև ձեր մեջ:

Եվ այնժամ, երբ հանձն եք առնում փոխել ինքներդ ձեզ, ուրախանալ և լավ տրամադրություն ունենալ, ձեր շրջապատի բոլոր մարդիկ դեպի ձեզ կշրջվեն արդեն ուրիշ կողմով, և դուք ձեր շուրջը կտեսնեք բարի, ժպտացող ու փայլփլուն աչքերով բազմաթիվ հրաշալի մարդկանց:

Ձեր էության ներսում կա ձեր ներկան ու ապագան կառավարելու կենտրոն: Իհարկե, լիովին ճիշտ եք կարծում, որ ձեր ներկան ու ապագան կառավարվում է Կարմայի Օրենքով, և ձեր կողմից ստեղծված ամեն ինչը վերադառնում է ձեզ՝ այդ թվում նաև ձեր գիտակցության անորակ վիճակների տեսքով: Ձեր այդ կարծիքը բացարձակապես ճիշտ է: Սակայն փորձեք մշտապես վատ բաներ մտածել. ամեն սենյակում մի հեռուստացույց դրեք, որ օրվա մեջ 24 ժամ ցույց տան սարսափի ֆիլմեր, մարտաֆիլմեր և անընդհատ նորություններ հաղորդեն տարերային աղետների

ու ահաբեկչական գործողությունների մասին: Ի՞նչ էք կարծում. դրանով ձեր վիճակը կլավանա՞... Սակայն կա մի պարզ հնարք, որով կարող էք լավացնել ձեր վիճակը. անջատե՛ք բոլոր հեռուստացույցները: Տոն մի՛ տվեք ձեր աշխարհի բացասական դրսևորումների վերաբերյալ խոսակցություններին: Ձեր ուշադրությունը կենտրոնացրեք միայն դրական բաների՝ ծաղիկների, բնության, կենդանիների, արևի, Վեհապետների պատկերների վրա: Տանն ու աշխատանքի վայրում ձեր շուրջն ունեցեք հիասքանչ նմուշներ, լուսավոր գույներ:

Հեռացրե՛ք ձեր կյանքից սնանկության բոլոր դրսևորումները և դիտեք ինքներդ ձեզ. ձեր վիճակը չի՞ լավանա արդյոք...

Ունկնդրեք ականջ շոյող մեղմ ու ներդաշնակ երաժշտություն կամ խաղաղ ու մեղեդային մանտրաներ: Ձեր շրջակա տարածությունը լցրեք դրական էներգիաներով:

Հարկ է, որ ձեր կյանքերում մշտապես վերահսկողության տակ պահեք միայն երկու բան՝ ձեր ներքին վիճակն ու ձեր արտաքին շրջապատը: Ձեր գիտակցությունից հեռացրեք բացասական մտքերն ու զգացմունքները, իսկ արտաքին շրջապատից՝ ոչ ճիշտ, անաստված նմուշները:

Միայն այդ երկու բանը կարող են վերադարձնել ձեր կյանքի բերկրանքը և ձեր էությունը լցնել ներդաշնակությամբ ու սիրով:

Հավատացե՛ք ինձ, եթե ձեզ հաջողվի պահպանել բարյացակամ տրամադրվածություն, ապա կկարողանաք ձեր միջով անցկացնել ավելի շատ Աստծո էներգիա: Եվ եթե այդ էներգիան ձեր միջով անցնի հաստատուն, հզոր ու հավասարաչափ հոսքով, ապա ձեր ստորին չորս մարմինները կմաքրվեն շատ բացասական էներգիաներից: Եվ դուք չեք էլ նկատի, թե ձեզ համար որքա՛ն է հեշտացել ձեր կյանքի ցանկացած բացասական կարմայական իրավիճակ հաղթահարելը:

Դուք արդեն բազմաթիվ անգամ լսել էք այս հանձնարարականները, այնպես չէ՞... Հավանաբար նույնիսկ այս թելադրությունների մեջ էք կարդացել դրանք...

Այդ դեպքում պատասխանեք իմ այս հասարակ հարցին. եթե այդքան հեշտ է ձեր կյանքը փոխել դեպի լավը, հապա ինչու՞ այդպես չեք վարվում:

Ինձ ու մյուս Համբարձյալ Վեհապետների համար այս հարցը հանելուկ է մնացել: Սա ձեզ չի՞ հիշեցնում այն առակը, երբ Աստված ջրհեղեղի ժամանակ ձեզ փրկելու համար մե՛րթ նավակ է ուղարկում, մե՛րթ՝ լաստ, բայց ամեն անգամ դուք հրաժարվում էք օգնությունից՝ հուսալով, որ Աստված անձամբ ձեզ կփրկի:

Լավ, մենք ինչպե՞ս փրկենք ձեզ, եթե դուք անընդհատ հրաժարվում էք մեր օգնությունից. չէ՞ որ դա հնարավոր բան չէ... Սակայն ես մեծ հույսեր եմ փայփայում, որ այսօրվա ուղերձը ձեզ կդրդի, որ շատ բաներ վերափոխեք ձեր արտաքին շրջապատում և վերանայեք ձեր վերաբերմունքը ձեզ շրջապատող կյանքի նկատմամբ:

Աստված մշտապես ձեր կողքին է: Մի՛ համառեք փոքր երեխաների պես և թույլ տվեք, որ Աստված մուտք գործի ձեր կյանք:

Հե՛նց հիմա...

ԵՄ ԵՄ Մենն Աստվածային Ուղորդիչը

Վեհապետ Մեն Ժերմեն

26 հունիսի, 2013 թ.

Ես ձեզ կոչ եմ անում առաջնորդվել ձեր իդեալներով՝ անկախ ամեն ինչից

ԵՄ ԵՄ Մեն Ժերմենը...

Տիկնա՛յք և պարոնա՛յք, ես կրկին ձեզ այցի եմ եկել, որպեսզի վկայեմ իմ հարգանքի հավաստիքը ձեզնից նրանց, ովքեր անխոնջ կերպով աշխատում են իրենց վրա և հնարավոր ամեն ինչ անում են, որ Նոր Դարաշրջանի էներգիաները ներթափանցեն ձեր շրջակա աշխարհը:

Ես այսօր եկել եմ, որպեսզի դուք հիշեք այն դարաշրջանը, երբ ձեզնից շատերը գտնվում էին մարմնավորման մեջ: Ես եկել եմ՝ րպես ձեր Ասպետ-Հրամանատարը:

Պետք է ձեզ հիշեցնեմ, որ կար ժամանակ, երբ գոյություն ունեին ասպետական միաբանություններ: Նաև պետք է հիշեցնեմ, որ այդ դարաշրջանում, ինչպես հիմա ձեր օրերում է, կային իսկական Ոգու ասպետներ, որոնք պատրաստ էին իրենց կյանքը զոհել հանուն իդեալների: Կային և այնպիսիները, որոնք նույնպես ասպետական զրահներ էին կրում և մասնակցում ասպետական մրցույթներին: Բայց նրանց սրտերը մուռն էին մնում և աշխարհին չէին փոխանցում Աստծո ճշմարտությունն ու անեղծ իդեալները:

Ձեր օրոք էլ կան իրական Ոգու ասպետներ, որոնք պատրաստ են կյանքի ցանկացած իրավիճակում պաշտպանելու իրենց համոզմունքները: Եվ կան նաև այնպիսիները, որոնք, Ուսմունքով քողարկվելով, գործում են ի շահ իրենց հետաքրքրությունների. փորձում են թեմ ստեղծել և այն առաջնորդել իրենց անձնական հետաքրքրություններին համապատասխան:

Շատ տարածված պատկեր է ձեր հասարակությունում է, այնպես չէ՞...

Շատերն են հիմա խմբեր ստեղծում և փորձում դրանց առաջնորդել: Կույրերը առաջնորդում են կույրերին:

Այսօր ես եկել եմ, որ ձեզ հավատի ազդակ փոխանցեմ և տամ այն ուղղությունը, որով կոչված եք ընթանալու:

Որպես օրինակելի նմուշ՝ վերցրեք ասպետական պատվի կանոնակարգը (կողերքս): Կան ճշմարիտ իդեալներ, հանուն որոնց դուք պետք է մարտնչեք և ոչինչ չզիջեք: Բայց կան նաև ճշմարիտ իդեալների կեղծ կրկնակները:

Եվ այնժամ, երբ դուք ինձ ասում եք, թե չեք կարողանում դրանք իրարից զանազանել և չեք կարողանում պարզել, թե ձեզ առաջնորդողը ճշմարիտ Հովիվ է, թե կեղծ, դուք կեղծավորություն եք անում: Դուք միշտ գիտե՞ք ճշմարտությունը... Ձեր սիրտը ձեր աշխարհի ամենակատարյալ զանազանման գործիքն է: Եվ այնժամ, երբ չեք լսում ձեր սրտի ձայնը, սկսում եք լսել ձեր խելքին, որը միշտ ձեզ կապացուցի, թե ինչու՝ է ավելի հարմար և անվտանգ այսինչին հետևելը:

Այժմ ձեր պատկերացումները պետք է առավել հստակեցվեն, թե որտեղ են ճշմարիտ արժեքները, և որտեղ՝ դրանց կրկնակները:

Լուսինն էլ է լույս տալիս, բայց այդ լույսը արևի լույսի անդրադարձն է ընդամենը: Նմանապես կան այնպիսիները, որոնք ձեր աշխարհ են բերում Աստծո Լույս, և կան նաև այնպիսիները, որոնք միայն անդրադարձնում են այդ Լույսը: Եվ դա ակնհայտ է ճիշտ այնպես, ինչպես արևի և լուսնի դեպքում:

Դուք մուտք եք գործում Նոր Դարաշրջան: Եվ հիմնական հատկանիշը, որը ձեզ վիճակված է ձեռք բերել և կատարելագործել Նոր Դարաշրջանում, զանազանման հատկանիշն է: Այն զարգացնելու համար հարկ չկա, որ հաճախեք սեմինարների և դասախոսությունների լսեք: Այդ հատկանիշը հատուկ է ձեզ ծննդյան օրվանից: Եվ բոլորդ էլ մանուկ հասակում տիրապետել եք այդ զանազանման հատկանիշին: Բայց հետո, երբ հայտնվել եք կեղծ արժեքների շրջապատում, որոնք տիրապետող են ձեր աշխարհում, դուք ենթարկվել եք այդ շրջապատին և սկսել եք հենվել ձեր մարմնական խելքի վրա, և ոչ՝ սրտի:

Ուստի հիմա ձեր խնդիրն է պարզապես ճշմարիտ արժեքները վերադարձնել ձեր կյանք: Այդպիսի արժեքներից են պարտքի զգացումը, արժանապատվությունը, նվիրվածությունը, հավատը և սերը: Ես կարող եմ էլի շատ ճշմարիտ արժեքներ թվարկել: Բայց ինքներդ էլ քաջատեղյակ եք դրանց: Եվ այնժամ, երբ թաքնվում եք կեղծ արժեքների հետևում և փորձում հետևել կեղծ առաջնորդների, ձեր հոգու խորքում միշտ իմանում եք, որ կեղծ ուղու վրա եք: Քանզի նման դեպքերում ձեզ շահախնդրությունն է առաջնորդում: Դուք փորձում եք ձեզ համար ինչ-որ բան ստանալ. կարևոր չէ, թե ինչ՝ լավ հարաբերություններ, հանգիստ ու կուշտ կյանք, իշխանություն կամ փող, կրքերի կամ քմայքների բավարարում: Ցանկացած դեպքում այդ մի բանը հակադրության մեջ է լինում աստվածային արժեքների և ասպետության ճշմարիտ Ոգու հետ:

Ես ինձ հաշիվ եմ տալիս, որ, ձեր աշխարհում լինելով, գործնականում հնարավոր չէ ճշմարիտ աստվածային արժեքներին հետևելը: Քանզի ձեր աշխարհն իննսուն տոկոսով բաղկացած է կեղծ արժեքներից:

Բայց հատկապես հիմա՝ եմ ես եկել գլխավորելու ձեզնից նրանց, ովքեր պատրաստ են կանգնելու Համբարձյալ Դասերի դրոշի տակ: Հատկապես հիմա՝ եմ՝ որպես ձեր Ասպետ-Հրամանատար, ձեզ կոչ անում հավաքվելու մեր դրոշի տակ:

Թշնամուն հեշտ է հաղթելը, եթե նա թույլ է և սակավագոր:

Փա՛րք ու պատիվ նրանց, ովքեր փոքրաթիվ ուժերով հաղթանակ են տանում: Եվ հիմա ես դիմում եմ հատկապես նրանց, ովքեր պատրաստ են զոհաբերելու իրենց բոլորական շահերն ու փայլփլուն գովազդների միջոցով դեպի հետտոնական զարդարանքների կողմը տանող պատրանքային խաղալիքները, դուրս գալու մարտադաշտ և կռվելու հանուն այն ճշմարիտ արժեքների, որոնց թվին են պատկանում ձեր նվիրվածությունը Եղբայրությանն ու Վեհապետների հանդեպ և ձեր անկոտրում հավատն ու սերը...

Ես պատրաստ եմ գլխավորելու ձեզնից նրանց, տիկնա՛յք և պարոնա՛յք, ովքեր չեն երկյուղում իրենց իդեալների համար մարտնչելուց, անգամ եթե թշնամու ուժերը բազմակի գերազանցում են քանակապես:

Դրա համար հիշե՛ք խնդրեմ ձեր պատվի կողքերը, որի առաջին իսկ տողերը բարբառում են այն մասին, որ ձեր պատրանքային աշխարհում չկա ոչինչ, որ ավելի բարձր լինի կամ ավելի բարձր արժեք ունենա, քան Աստված և Նրա Օրենքին հետևելը:

Այս դրույթից ելնելու դեպքում մնացած ամեն ինչը ձեզ պարզ կդառնա և ձեռք կբերի այլ իմաստ:

Եվ անգամ ձեր կյանքն իսկ ավելի ցածր արժեք է, քան Աստված և Նրա Օրենքին հետևելը: Քանզի գոհելով ձեր կյանքը՝ դուք ձեռք եք բերում հավերժական Կյանք: Իսկ եթե տարվում եք թուլեական շահերով և պատրանքային աշխարհի հրապուրանքներով, ապա ընդմիշտ կորցնում եք ձեր հոգին:

Ես մաղթում եմ, որ կանգնեք Աստծո ճշմարտությունը պաշտպանելու ուղու վրա: Հենց հիմա՝ է այն ժամանակը, երբ դուք պետք է ցուցադրեք ձեր վճռականությունը և ձեր համոզմունքների ամրությունը, երբ դեմ առ դեմ կանգնած եք պատրանքային ուժերի առջև, որոնք անամոթաբար քննադատ են տալիս և չեն հավատում, որ դեռևս կան մարդիկ, որոնց կյանքի առաջնահերթ խնդիրը իրենց իդեալներին հավատարիմ մնալն է:

Ես ձեզ կոչ եմ անում հետևելու ձեր իդեալներին՝ անկախ ամեն ինչից: Եվ հենց դա է ասպետության ճշմարիտ ոգին: Եվ հենց դա է անմահությունը...

Ես ձեզ կոչ եմ անում մտնելու հավերժական Կյանք: Ես ձեզ կոչ եմ անում հետևելու ինձ՝ ձեր Ասպետ-Հրամանատարին:

Արժանապատվորեն մուտք գործենք Նոր Դարաշրջան՝ Ջրհոսի դարաշրջանը...

ԵՍ ԵՄ Սեն-Ջեյմենը

Տեր Հիսուս
27 հունիսի, 2013 թ.

Ուսմունքի հիմունքների և Ուսմունքի փոխանցման անընդհատության մասին

ԵՍ ԵՄ Հիսուս:

Ինձ Աստծո Որդի կոչեցին Ուսմունքի այն հետևորդները, որոնք եկան իմ խաչելությունից և համբարձվելուց հետո:

Ուսմունքի շատ դրույթներ, որոնք ես իմ աշակերտներին տվեցի այդ կյանքիս ընթացքում, հետագայում շատ փոփոխություններ կրեցին՝ երբեմն փոքր-ինչ աղավաղվելով, երբեմն էլ այնպիսի արմատական փոփոխություններ կրելով, որ արդեն հնչում էին լրիվ հակառակ իմաստով: Եվ դրանում մեղավոր էին ոչ այնքան իմ աշակերտները, որքան այն տգիտությունը, որն այն ժամանակ տիրապետող էր Երկրում և, ցավոք, շարունակում է տիրապետող լինել նաև ձեր օրոք:

Պահանջվեց ամբողջ 2000 տարի, մինչև որ Երկրի այն մարդիկ, որոնք իրենց քրիստոնյա են համարում, սկսեն իրենց թեկուզ չնչին ինչ-որ մասով ընկալել Վերամարմնավորումների և Կարմայի Օրենքներին վերաբերող իմ Ուսմունքները:

Եթե դուք անաչառ կերպով վերընթերցեք Ավետարանի թեկուզ այն տեքստերը, որոնք հասել են ձեզ, ապա կնկատեք, որ այսուայնտեղ սփռված են այդ հիմնարար Ուսմունքներին վերաբերող որոշակի ակնարկներ: Եվ դրանք հասկանալի կլինեն յուրաքանչյուրին, ով տեքստը կարդում է ոչ թե իր արտաքին գիտակցության պրիզմայի միջով, այլ իր ամբողջ սրտով:

Շատ բաներ, որոնք կորսվում են, կամ որոնց բավարար նշանակություն չի տրվում, կարող են հանգեցնել բուն Ուսմունքի և դրա էության ոչ ճիշտ մեկնաբանությանը:

Եվ անցողիկ ու անանց մարդու մասին խոսքն էլ է անհասկանալի դառնում, եթե դուք տեղյակ չեք Կարմայի և վերամարմնավորումների Օրենքներից: Այդ խոսքերն անհասկանալի են մնում նաև այն դեպքում, երբ մարդուն դիտում եք որպես միս ու արյուն, բայց և ձեր ուշադրության տակ եք առնում նրա հոգին և Աստծո Ոգին, որոնք առկա են ամեն մի մարդու մեջ:

Կարելի է ազդել մարդու խղճի վրա և նրան ահաբեկել Աստծո պատժով: Եվ դա կարող է իր ազդեցությունն ունենալ չգարգացած գիտակցության վրա: Բայց այն դեպքում, երբ մարդն իր պրպտուն մտքով սկսում է ճանաչել աշխարհակառույցի օրենքները, ահաբեկվելն ու կարգի հրավիրելը դադարում են ազդեցություն գործել: Այդ դեպքում վատագույն արդյունքը կլինի այն, որ մարդը երես կթեքի Աստծուց և Նրա սպասավորներից. կմերժի եկեղեցին և բուն հավատը:

Այնուհանդերձ առավել զարգացած անհատներն իրենց թույլ են տալիս ավելի առաջանալ աշխարհն ու դրա կառուցվածքը ճանաչելու գործում: Եվ Ավետարանի այն խոսքը, թե՛ «ինչ որ ցանես, այն էլ կհնձես», նրանց համար ձեռք է բերում իր ճշմարիտ իմաստը:

Հիրավի, առանց հասկանալու մարդու այս և անցած կյանքերի արարքների փոխկապակցվածությունը՝ արտաքին գիտակցությանը հնարավոր չէ բացատրել, թե ինչու պետք է պահապանել բարոյականության օրենքը և հետևել որոշակի բարոյական նորմերի ու կանոնների:

Յուրաքանչյուր անհատ պետք է հասնի իր արարքների և այդ արարքների հետևանքների միջև եղած կապի գիտակցմանը: Առանց այդ կապը հասկանալու՝ հնարավոր չէ բացատրել ձեր աշխարհում առկա շատ անարդարություններ, ինչպիսիք են ունեցվածքային անհավասարությունը, ոմանց կաստայական արտոնություններն ու մյուսների աղքատությունը, ոմանց հյուծող ծանր տկարություններն ու մյուսների անթերի առողջությունը:

Ինչու՞ են ոմանք վաղաժամ մահանում, իսկ մյուսներն ապրում երկար կյանքով... Այդ ամենի պատճառները կարելի է գտնել միայն անցած կյանքերում, և երբեմն դրանք բացարձակապես հնարավոր չի լինում բացատրել ընթացիկ մարմնավորման և մեկ կյանքի հանգամանքների տեսանկյունից:

Ուստի խնդիրներից մեկը, որն ուզում են լուծել Համբարձյալ Վեհապետները՝ Ուսմունքը փոխանցելն է այն տեսքով, որ այն ընկալելի լինի ներկայումս ապրող մարդկության գիտակցության համար: Ուսմունքի փոխանցման անընդհատությունն այն բանի երաշխիքն է, որ մարդկությունը մշտապես իր տրամադրության տակ փրկարար ճոպան կունենա, որի միջոցով Ուղով առաջ մղվողները կկարողանան դուրս ելնել կյանքի փոթորկուն ջրերի տակից:

Առանց Ուսմունքի փրկարար ճոպանի, առանց դրա անընդհատ նորացման և անընդհատ փոխանցման՝ մարդկությունը շատ արագ կգահավիժի դեպի անասնական գոյություն և այլևս ունակ չի լինի տարբերելու Լույսը խավարից, ճշմարտությունը՝ ստից, բարեպաշտական վարքը՝ մեղսականից:

Ցավոք սրտի, չնայած մեր կողմից անխոնջ կերպով գործադրվող ջանքերին՝ մարդկության որոշակի մասն ուշադրություն չի դարձնում մեր խրատներին և շարունակում է ապրել այնպես, կարծես առջևում մահից բացի ոչինչ չկա:

Մարդկային այն սերունդները, որոնք իրենց գիտակցությամբ հեռանում են Աստծուց և չեն ուզում ճանաչել աշխարհակառույցի հավերժական Օրենքը, այնպիսի հետևանքներ են ծնում իրենց հետնորդների համար, որոնք տանում են դեպի լրիվ հետզարգացում և բարոյազրկություն: Բարոյական նորմերի խախտումն արդեն ընկալվում է որպես ընդունված բան:

Եթե մարդկային մի սերնդի գիտակցությունից ջնջվում է Կարմայի Օրենքին վերաբերող գիտելիքը, ապա հաջորդ սերունդներն ավելի ու ավելի են գլորվում դեպի անաստվածություն և բարոյական նորմերի խախտում, քանի որ մարդիկ դադարում են կապ զգալ իրենց գլխին թափվող դժբախտությունների և իրենց սեփական արարքների միջև, որոնք հանգեցրել են այդ դժբախտություններին:

Եկեղեցական կառույցը, որը կոչված է մարդկանց պահելու Աստծո Օրենքի շրջանակներում, իր նշանակությունը կորցնում է այն բանին գուզընթաց, որ մարդիկ կորցնում են հավատը և հեռանում բարոյական իդեալներից:

Այդ պայմաններում մարդկության միակ փրկությունն այն է, որ Աստծուն ու ճշմարիտ հավատին վերադառնալն ընկալեն որպես գիտակցության վիճակ: Աստծուն պատկերացնեն ոչ թե որպես եկեղեցական սրբապատկերի վրա պատկերված ծերուկ, այլ որպես ներքին Լույս, որը թափանցում է համայն Արարչության միջով, ներկա է բոլոր արարածների սրտերի խորաններում և զարգացման այս փուլում ունակ է մարդկությանն օգնություն ցուցաբերելու:

Աստծո այն ըմբռնումը, որ Նա ոչ թե տաճարներում է ապրում, այլ իրենով լցրել է շրջակա ամբողջ տարածությունը, էվոյուցիոն զարգացման այս փուլում կարող է ընկալելի լինել մարդկանց մտքերի համար: Եվ աշխարհին տիրած այս քառսի պայմաններում կայունության միակ կարգավորիչն ու երաշխավորը ներքին ղեկավարը կլինի՝ մարդու խիղճը կամ Աստված, որը ներկա է յուրաքանչյուր մարդու ներսում:

Մենք ձեզ այցի ենք գալիս այն հույսով, որ ձեզնից շատերն ունակ են հասկանալու մարդկության զարգացման այս փուլում մեր մատուցած ճշմարտությունները: Անկեղծ հույսեր ենք փայփայում, որ այդ ճշմարտություններն աճ կտան ձեր սրտերում, և դուք միասնական կդառնաք այն Ուսմունքի հետ, որը մենք տալիս ենք:

Երբ դուք ձեր զարգացմամբ հասնում եք այդ փուլին, միասնական եք դառնում ներքին ճշմարտության կամ ձեր սրտերում ներկա Աստծո հետ, դուք ձեր աշխարհի համար դառնում եք Լույսի և գիտելիքի աղբյուր: Եվ ձեր աշխարհում որքան շատ լինեն այդպիսի լուսատուները, այնքան ավելի շատ երաշխիքներ կլինեն, որ աշխարհը կվերականգնի իր կայունությունը և կդադարի ճոճվելուց այն ամեն տեսակի սուտ ուսմունքների ու դավանաբանությունների պատճառով, որոնք մարդկային տգիտությունն ու աներն օգտագործում են, որպեսզի բավարարություն տան առանձին անհատների շահադիտական նպատակներին:

Ես լիահույս եմ, որ մեր Դեսպանորդի միջոցով տրվող այս Ուղերձները կարդացող յուրաքանչյուր որ կկարողանա ձեռք բերել ներքին հավատի անսպառ աղբյուր և իր կայունությամբ ու անսասան հավատով դիմակայել աշխարհի բոլոր ցածրակարգ արտաքին դրսևորումներին:

ԵՄ ԵՄ Հիմունք

Վեհապետ Կուրթումի
28 հունիսի, 2013 թ.

**Աստծո ճշմարտությանը հասու են դառնում
ոչ թե արտաքին փնտրտուքով, այլ ներքին որոնումներով**

ԵՄ ԵՄ Կուրթումին: Այսօրվա օրով մենք կքննարկենք այն Ուսմունքի ևս մի քանի դրույթները, որը Երկրի մարդկությանն ուսուցանում են Իմաստության Տիրակալները:

Որոշակի ժամանակ պահանջվեց, մինչև որ կարողացա աշխարհների միջով մերձենալ ձեզ: Ինչպես աշխարհների փոխազդեցության, այնպես էլ մեր Ուղերձների փոխանցման գործընթացները դեռևս բավարար չափով ուսումնասիրված չեն աշխարհիկ գիտության կողմից: Եվ դա կապված է նաև այն բանի հետ, որ գիտությունը կանխակալ է մոտենում այն ամենին, ինչը, նրա տեսակետից, կապված է գերբնական երևույթների հետ, որոնք բացատրելի չեն ֆիզիկական աշխարհի և նրա օրենքների տեսանկյունից: Կանցնի ևս որոշ ժամանակ, և գիտության միջոցով շրջակա աշխարհը ճանաչելու շրջանակները կընդլայնվեն, իսկ ներկայումս ժամանակակից գիտության մեջ գոյություն ունեցող՝ նուրբ աշխարհը հետազոտող բնագավառը կընդգրկի ավելի լայն տիրույթ: Սակայն դա տեղի չի ունենա ավելի վաղ, քան մարդկային մտքի առաջատարները կհավատան մեր գոյությանը և մշտական կապ կհաստատեն մեզ հետ:

Իսկ մեզ հետ մշտական կապը հնարավոր է միայն այն դեպքում, եթե դուք անկեղծ եք և անկեղծորեն եք հավատում մեր գոյությանը: Դեռ ավելին, հավատից զատ անհրաժեշտ է նվիրված լինել Եղբայրությանը և պահպանել այն պայմանների անխախտությունը, որոնց հիման վրա երկարատև ժամանակահատվածի ընթացքում մենք աշխատում ենք մարդկության հետ:

Ձեզնից նրանք, ովքեր ծանոթ են առատորեն սփռված էզոթերիկական գրականությանը, լիովին կարող են նկատած լինել, որ գրականության այդ ճյուղը բաժանված է իրարից զգալիորեն տարբերվող երկու տեսակի կամ սեռի:

Էզոթերիկական գրականության առաջին տեսակն առնչվում է մարդկանց զանազան հոգեխուզական որոնումներին, որոնք հիմնականում կապված են լինում աստեղային ոլորտի և մենտալ ոլորտի ստորին շերտերի հետ: Դրա մեջ մտնում են նուրբ աշխարհների վերաբերյալ չգարգացած գիտակցությունների տպավորությունները և առանձին անհատների գիտակցության մեջ ֆիզիկական աշխարհին մոտ գտնվող նուրբ շերտերին պատկանող շատ բաների, ուղղակիորեն ասած, անառողջ արտապատկերումը: Դա գրականության վիթխարի մի շերտ է, որը լիովին հանգիստ կարող եք շրջանցել և դրան որևէ նշանակություն չտալ: Դեռ ավելին, ես խստորեն ձեզ խորհուրդ եմ տալիս չտարվել այդ տեսակի գրականության ընթերցանությամբ, քանի որ այն կարող է վնաս պատճառել ձեր հոգեկառույցին՝ ձեզ մխրճելով օտարների երևակայության անառողջ թրթիռներին մեջ:

Մյուս տեսակի էզոթերիկական գրականությունը հազվադեպ է պատահում ձեր աշխարհում, և ներկայումս իրենից ներկայացնում է ավելի շուտ պատահական, քան թե օրինաչափ երևույթ: Եվ դա հասկանալի է, քանի որ ձեր աշխարհում ներկայումս հաստատված ճշտի ու ստի՝ 10 տոկոսը 90-ի դեմ հարաբերակցությունը կիրառելի է նաև էզոթերիկական գրականության նկատմամբ:

Այստեղ ես մի փոքրիկ ճշգրտում պետք է անեմ: Կապված այն բանի հետ, որ մեզ հակադիր ուժերը ներկայումս ուժեղացրել են իրենց ընդդիմությունը, ճշմարիտ էզոթերիկական գրականությունը ձեր գրադարակների վրա սկսել է առավել հազվադեպ երևալ: Եվ մեկը 99-ի դեմ տոկոսային հարաբերակցությունն արդեն լավատեսական կարելի է համարել:

Նույնիսկ այն դեպքում, երբ ձեր ձեռքն է ընկնում ձեր կարծիքով մաքուր տեղեկատվության աղբյուր, էլի դուք պետք է զգուշանաք և մանրագնին կերպով փորձեք պարզել այդ հրատարակության հանգամանքները՝ օգտվելով ձեր ներըմբռնումից: Հայտնի շատ հեղինակների գործեր, անցնելով որոշ հրատարակիչների անմաքուր ձեռքերով, փոխվում են անճանաչելիության աստիճան. նման տպագիր արտադրանքի ճշմարտության չափը խիստ նվազում է, և դժվարանում է որոշելը, թե որտեղ են թաքնված ձեզ իրենց ճիշտների մեջ առնող թրթիռներն ու էներգիաները:

Ուստի մարդկության մեծամասնության համար լիովին արդարացված է ընդհանրապես էզոթերիկական գրականությունից հրաժարվելը, քանի որ կյանքի ներկայիս ռիթմի պայմաններում

մարդիկ պարզապես ժամանակ չունեն գլուխ հանելու հում պատրաստուկների այն կույտերից, որոնք առատորեն ներկայացված են գրախանութների դարակներում և համացանցում:

Սակայն այստեղ ձեզ մի ուրիշ վտանգ էլ է սպառնում. հրաժարվելով ճանաչելուց այն, ինչը դեռևս չի ամրապնդվել մարդկության ընդհանրական գիտակցության մեջ և մարդկային հասարակության մեծամասնության տեսակետից արժանահավատ չէ՝ դուք վտանգում եք ձեզ ընձեռնված հնարավորությունը և չեք օգտվում այն գիտելիքներից ու հանձնարարականներից, որոնք իսկապես ճշմարիտ են, տրվում են մեր՝ Համբարձյալ Վեհապետներին կողմից և անփոխարինելի են մարդկության էվոլյուցիոն զարգացման ներկա փուլի համար:

Ընթերցողը պետք է որ մեր գրույցի այս մասում տարակուսանք ապրի, որովհետև երևի երկար ժամանակ է, ինչ մի հարց է պատվում նրա գլխում. «Ո՞ր կողմն է ուզում ծնել...»:

Հիրավի, վիճակը ողբալի է դառնում: Մի կողմից՝ մենք փորձում ենք օգնության ձեռք մեկնել մարդկությանը և նպաստել փակուղային թվացող իրավիճակից դուրս գալուն, որի մեջ հայտնվել է Երկրի մարդկությունը, և մյուս կողմից՝ մեզ հակադիր ուժերի ակտիվացման հետևանքով ժամանակի ներկա պահին այնպիսի աղտոտում է տեղի ունեցել մոլորակի տեղեկատվական դաշտում, որ գործնականորեն հնարավոր չէ պարզել, թե որտեղ է ճշմարտությունը, և որտեղ՝ սուտը:

Ցանկացած իրավիճակից ելք գոյություն ունի: Եվ այս իրավիճակից՝ նույնպես: Այս իրավիճակի հանգուցալուծումն ուղղակի մակերեսի վրա է: Ձեր աշխարհում ամեն ինչ իրար է ձգվում՝ ըստ թրթռանքի: Ուստի անկասելի ճշգրտությամբ ձեզ շրջապատող աշխարհում դուք կգտնեք հենց այն, ինչը համապատասխանում է ձեր թրթիռներին: Եվ եթե ձեր թրթիռները ցածր են, ապա, որքան էլ ջանաք մերձենալ ճշմարիտ տեղեկատվության աղբյուրին, հաջողության չեք հասնի:

Բայց ճիշտ է նաև հակառակ պնդումը. եթե ձեր թրթիռները բարձր են, ապա, որքան էլ ջանաք ձեր թրթիռներին չհամապատասխանող գիրք կամ տեղեկատվության աղբյուր գտնել, հաջողության չեք հասնի:

Ի վերջո, ի՞նչ եմ ես կոչ անում մեր այսօրվա գրույցում: Ես մեծ հույսեր եմ փայփայում, որ բոլոր նրանք, ովքեր հիմա կարդում են իմ այս Ուղերձը, կարդում են հենց այն պատճառով, որ իրենց թրթիռների մակարդակը թույլ է տալիս դա անել:

Այժմ ձեզ մնացել է, որ անեք հաջորդ քայլը: Կա՞նգ առեք:

Դադարացրե՛ք ձեր հոգևոր որոնումները:

Ասածս չի նշանակում, որ դուք պետք է ընդհանրապես դադարացնեք ձեր իրական հոգևոր որոնումները, այլ միայն նշանակում է, որ ժամանակն է, որ ընդհատեք արտաքին աշխարհում զանազան տեղեկատվական աղբյուրներ փնտրելու գործը:

Եթե ձեր ներըմբռնումը հուշում է ձեզ, որ դուք արդեն գտել եք ճշմարիտ աղբյուր, ապա մի՛ շարունակեք փորձարկել այլ աղբյուրներ: Կանգ առեք մի աղբյուրի մոտ և ջուր խմեք միայն այդտեղից:

Այս առումով կարելի է նմանատիպ օրինակ բերել ձեր ֆիզիկական աշխարհից: Ենթադրենք՝ դաշտում աղբյուր եք փնտրում ձեր ծարավը հագեցնելու համար: Ահա գտել եք մի աղբյուր, որը ձեզ զարմացնում է իր ջրի բյուրեղյա մաքրությամբ ու կատարյալ համով:

Իմաստուն մարդիկ դադար են առնում նման աղբյուրի մոտ, հագեցնում իրենց ծարավը և դրա ջուրը պահեստավորում իրենց ունեցած տարաներում ու ջրամաններում:

Ոչ այնքան իմաստուն մարդիկ գնում են ուրիշ աղբյուրի ջուր փորձելու: Բայց այնտեղի ջուրը մի փոքր դառնաղի է լինում: Հետո մոտենում են մի ուրիշ աղբյուրի: Այս մեկի ջուրն էլ հոտած է դուրս գալիս: Հաջորդինը՝ ցեխաջուր:

Նման մարդկանց սպառնում է այն վտանգը, որ այլևս երբեք չեն վերադառնա գուլալ ջրով աղբյուրի մոտ և կշարունակեն նոր աղբյուր փնտրել ու ցեխաջուր խմել:

Ուստի այն պահին, երբ ձեր ողջ էությանը հասկանում եք, որ ձեր առջև Աստծո ճշմարտության մաքուր աղբյուր է, երբեք ուրիշ աղբյուր մի՛ փնտրեք: Քանզի Աստծո ճշմարտությունը միակն է, և դրան կարող եք հասնել դառնալ ոչ թե արտաքին փնտրտությունով, այլ ներքին որոնումներով:

Արտաքին գիտելիքից պետք է ի վերջո անցում կատարել ներքին գիտելիքին: Արտաքինը միայն խթան է ձեր գիտակցության համար, որպեսզի սուզվեք Աստծո հետ հաղորդակցության այն տարածությունը, որն առկա է ձեր սեփական էության ներսում:

Հավանաբար ես այսօր ձեզ ձանձրացրի իմ դատողություններով: Բայց ես լիահույս եմ, որ այն քչերը, որոնց համար ես այսօր տվեցի իմ այս Ուղերձը, կլսեն ինձ և կօգտվեն իմ խորհուրդներից:

ԵՄ ԵՄ Կոպոնհագեն

Վեհապետ Էլ Մորիա
29 հունիսի, 2013 թ.

Ես ձեզ շնորհավորում եմ Լույսի ուժերի հաջողության կապակցությամբ...

ԵՍ ԵՄ Էլ Մորիան...

Ուրախ եմ ձեզ ողջունել այս օրով...

Ես տեսնում եմ ձեր անեղծ հետաքրքրությունը մեր կողմից տրվող Ուսմունքի նկատմամբ և բավարարված եմ, որ, չնայած դժվարություններին, մենք կարողացանք ավարտին հասցնել մեր Դեսպանորդի միջոցով տրվող Ուղերձների այս շրջանը:

Այո, սիրելիներս, ամեն անգամ մենք ստիպված ենք լինում հաղթահարելու նշանակալից դժվարություններ, որպեսզի իրականացնենք մեր Ուսմունքի փոխանցումը: Ցավոք, մեզ հակադիր ուժերի դիմադրությունը հասել է շիկացման այնպիսի բարձր կետի, որ Ուղերձների ամեն մի շրջանի համար մենք վիթխարի ջանքեր ենք գործադրում: Եվ ամեն անգամ մենք հույս ենք կապում, որ մեր ջանքերն ու էներգիաները չեն անցնի ավազի տակ, այլ կյուրացվեն ձեր կողմից:

Այս անգամ մեր դեսպանորդի միջոցով տրվող Ուղերձների շրջանը մենք ավարտին ենք հասցնում Գերմանիայում...

Եվ մենք լիահույս ենք, որ այն էներգիան, որն արտագատվում է մեր Ուղերձների ընդունման վայրում, ըստ արժանվույն կգնահատվի այն մարդկանց կողմից, ովքեր ունակ են յուրացնելու Բարձրագույն աշխարհների էներգիաները:

Մեր ջանքերին դուք պետք է արձագանքեք Ուսմունքը տարածելու պատրաստակամությամբ: Միայն այն դեպքում ենք մենք փոխանցում մեր Ուղերձները, երբ գտնում ենք Սպասավորությանը պատրաստ սրտեր և համոզված ենք լինում, որ մեր Խոսքի էներգիան զուր չի կորչի:

Մենք ուզում ենք, որ այն էներգիան, որն արտագատվում է Ուղերձների ընդունման ամեն մի շրջանում, հավասարաչափ բաշխվի երկրագնդի մակերևույթով: Ուստի և մանրակրկիտ կերպով ընտրում և նախապատրաստում ենք Ուղերձների ընդունման հերթական շրջանի վայրը:

Ոչինչ պատահական չի լինում: Ամեն ինչ խնամքով պլանավորվում է մեր կողմից և արտագատված էներգիայի ամեն մի էրգն օգտագործվում է, որպեսզի փոխվի երկրագնդի իրադրությունը, և ֆիզիկական ոլորտում բեկում տեղի ունենա Լույսի ուժերի օգտին:

Այսօր ես պետք ձեզ ասեմ, որ նախկինում երբեք մենք չէինք հանդիպել այնպիսի դիմադրության, ինչպիսին եղավ Ուղերձների փոխանցման այս շրջանում: Իրավիճակը բարդացրեց և այն, որ մենք չգտանք այն մարդկանց, ովքեր կարող էին Ուղերձների ընդունման ամառային այս շրջանում հոգ տանել մեր դեսպանորդի մասին:

Ամեն անգամ կրկնվում է նույն իրավիճակը. մենք գտնում ենք մեր այն հետևորդներին, որոնք մարմնավորվելուց առաջ պարտավորություն էին վերցրել ծառայելու Եղբայրությանը և մեր դեսպանորդին, և ամեն անգամ, երբ գալիս է այդ ծառայության պահը, մեր սաները գտնում են ավելի կարևոր գործեր և մեկը մյուսի հետևից դուրս գալիս Ուղուց:

Մենք սոսկ մի հազարամյակ չէ, որ դիտում ենք նման պատկեր: Քանի դեռ մենք հեռու ենք գտնվում, և մեր էներգիաների ուղղակի փոխանցում տեղի չի ունենում, մեր շատ սաներ իրենց սփոփում են այն պատրանքով, որ իրենք Ուղու վրա են և ծառայում են Եղբայրությանը: Սակայն հենց որ մենք սկսում ենք մերձենալ և հնարավորինս մոտ ենք հայտնվում ձեզ, դուք շուտափույթ ավելի կարևոր գործեր եք գտնում և մեկը մյուսի հետևից հեռանում՝ մեզ մենակ թողնելով մեր դեսպանորդի հետ:

Պաշտելիներս, Աստված միշտ կհոգա մեր Դեսպանորդի մասին. Այս դեսպանորդը գտնվում է իմ անձնական պաշտպանության և հովանավորության տակ: Բայց արդյո՞ք ինքներդ ձեր հետագա մարմնավորումների ժամանակ ուրիշ այսպիսի հնարավորություն կունենաք ծառայելու համար...

Մեկընդմիշտ հիշեցե՛ք. ոչ թե դուք եք շնորհ անում՝ ծառայելով մեր դեսպանորդին, այլ մենք և մեր դեսպանորդն ենք ձեզ պատիվ անում՝ թույլ տալով, որ ծառայեք Եղբայրությանը:

Ինչպես այս, այնպես էլ Աստծո ուրիշ շատ Շճմարտություններ դուք գլխիվայր եք շուռ տվել:

Սակայն կա աստվածային կարգ, և կա Աստծո Օրենք: Եվ, որքան էլ փորձեք ձեզնից հեռացնել Աստծո Օրենքը, այն մշտապես շարունակում է գործել:

Եվ ամենագլխավոր բանը, որին մենք հասնում ենք մեր Ուղերձների ամեն մի փոխանցման ժամանակ, որոնք հատիկից ջոկելու գործն է լինում: Երբ ձեզ են մոտենում Աստծո էներգիան, մենք ամենայն ակներևությամբ կարող ենք դատել ձեր կատարած քայլերից, թե իրականում ում կողմից եք հանդես գալիս: Մի կողմ են դրվում ձեր բոլոր այն խոսքերն ու հավաստիացումները, որ հավատարիմ եք Եղբայրությանն ու մեր դեսպանորդին: Դուք մոռանում եք ձեր հավատարմության, ձեր սպասավորության և ձեր պարտավորությունների մասին և մղվում դեպի արտաքին աշխարհից եկող հենց առաջին հրապուրանքը: Եվ ձեր մարմնական խելքը միշտ ձեզ

բացատրում և ապացուցում է, թե ինչու եք ճիշտ վարվել՝ նախընտրելով ձեր էգոյի քմայքին բավարարություն տալը, փոխանակ շարունակելու Ուղով ձեր առաջընթացը:

Ձեզնից շատերը նույնիսկ չեն էլ կասկածում, որ Ուղի վերադառնալու համար սա իրենց վերջին հնարավորությունն է: Դուք նույնիսկ հաշիվ չեք տալիս ինքներդ ձեզ, որ ձեր այս ընտրությունը ճակատագրական է: Շատ ողբալի բան է դա գիտակցելը: Առավել ևս, որ շատերդ մեր այս Ուղերձները կարդում եք համարյա առաջին օրվանից սկսած:

Աստծուն, սիրելիներս, հնարավոր չէ ծաղրել: Բայց դուք մեկը մյուսի հետևից ինքներդ եք կատարում ձեր ընտրությունները: Եվ Աստված հասնում է իր գլխավոր խնդրի լուծմանը. մարդկային անհատների միջից ընտրում է նրանց, ովքեր պատրաստ են անցնելու էվոլյուցիայի հաջորդ աստիճանին, իսկ մյուսները տեղ են գրադեցնում մարդկային պատմության անհաջողությունների էջերում:

Այնտեղ, որտեղ գտնվում է մեր դեսպանորդը, միշտ շրջակա իրականության մեջ տեղի է ունենում Լույսը խավարից զանազանելու գործընթաց, և առաջին հերթին՝ մարդկանց հոգիներում: Դա Մեծ Սպիտակ Եղբայրության դեսպանորդի պատմության հաշվառման շրջանում է, և այն անբաժանելի է, ինչպես Աստծո և Վեհապետների Խոսքը, որը բերում է մեր դեսպանորդը:

Իսկ հիմա ես պետք է ասեմ ձեզ, որ մեր Ուղերձների այս շրջանն ավարտված է: Եվ մենք բավարարված ենք նրանով, որ այս անգամ մեզ հաջողվեց մեր դեսպանորդի միջոցով ճառագել աննախադեպ քանակությամբ Լույս:

Ես ձեզ շնորհավորում եմ Լույսի ուժերի այս հաջողության կապակցությամբ...

Ես մաղթում եմ, որ հասնեք գիտակցման այն աստիճանին, որ կարողանաք ձեր էության ներսում և արտաքին աշխարհում որսալ խավարի ուժերի ամենամանր դրսևորումները:

Ես մաղթում եմ նաև, որ ձեր հավատն ու հավատարմությունը Եղբայրությանը այնքան ամրանան, որ ձեզ դուրս բերեն երկդիմի աշխարհի թակարդների միջից և ձեր հոգուն թույլ տան վերադառնալու Տուն՝ Աստծո մոտ...

Այս Ուղերձը փոխանցելու ընթացքում ես կնիք եմ դնում մեր Ուղերձների այս շրջանում ճառագված ամբողջ Լույսի վրա, որպեսզի նրանք, ովքեր Լույսից չեն, չկարողանան դրանից օգտվել:

Եղիցի...

Ի կատար է ածված...

Կնքված է...

ԵՍ ԵՄ ԷՂ Մորիան

Ուղերձների 19-րդ շրջան (դեկտեմբեր, 2013 թ.)

Սանատ Կումարա
20 դեկտեմբերի 2013 թ.

Ձեր աշխարհն անխուսափելիորեն պետք է փոխվի, որպեսզի շարունակի զարգանալ ըստ աստվածային նմուշօրինակի

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան:

Ես կրկին այցի եմ եկել ձեզ, Երկրի զավակներ:

Ամեն մի մեր գալստյան հետ ձեզ հնարավորություն է տրվում հպվելու Հինավուրց Գիտելիքին, որն առնչվում է տիեզերքի կառուցվածքին և ձեր՝ որպես ընդհանուր տիեզերակառույցի մի մասի, առաքելությանը:

Այո, սիրելիներս, ձեզնից յուրաքանչյուրը հատուկ առաքելությամբ է օժտված այս տիեզերքի ընդհանուր Էվոյուցիոն գործընթացների շրջանակներում:

Եվ երբեմն շատ դժվար է լինում ձեզ համակած մոլորությունները հանդուրժելն ու դրանց հետ համակերպվելը:

Ազատ կամքի օրենքն անխախտելի է ձեր աշխարհում: Սակայն կան տիեզերական ժամկետներ, և կա աստվածային հնարավորության միջանցք: Ես եկել եմ ձեզ հիշեցնելու, որ աստվածային հնարավորության այդ միջանցքը նեղանում է: Եվ ձեր աշխարհն անխուսափելիորեն պետք է փոխվի, որպեսզի շարունակի զարգանալ՝ ըստ աստվածային նմուշօրինակի: Սա արքսիոմա է, սակայն ես ստիպված եմ հիշեցնել ձեզ այդ մասին:

Ես հաճախ եմ մուտք գործում ձեր աշխարհ, որպեսզի կարծիք կազմեմ ընթացիկ գործընթացների մասին և ժամանակին շտկումներ կատարեմ դրանցում: Սակայն դուք պետք է գիտակցեք, որ կա այս տիեզերքի Արարչի կողմից ձեր հոգիների համար նախանշված Էվոյուցիոն ուղի, և կա այն ուղին, որով ժամանակի այս պահին մղվում է մարդկության մեծամասնությունը: Դա ոչ մի տեղ չտանող ճանապարհ է՝ ստորակարգ, կենդանական բնագոյներին և մարմնական խելքի քմայքներին հագուրդ տալու ուղին:

Մենք չենք կարող ձեզ ստիպել, որ հրաժարվեք ձեր կատարած ընտրությունից: Եվ դուք պետք է հասկանաք, որ ո՛չ ես, ո՛չ մի որևէ ուրիշ Վեհապետ չի գա և անհնազանդ երեխայի պես ձեզ չի քաշի դեպի զարգացման աստվածային Ուղին:

Ձեր ժամանակների առաքելությունը հենց սա է՝ հետագա Էվոյուցիային ունակ հոգիներին զատել այն հոգիներից, որոնք ենթակա են տիեզերական վառարանում մոլախոտի պես այրվելու:

Ես և մյուս Վեհապետներն այս դեսպանորդի միջոցով ձեզ այցի ենք գալիս հենց այն բանի համար, որ տանք ընթացող գործընթացների ըմբռնումը և ձեզ ցույց տանք Ուղին:

Էվոյուցիոն զարգացման ձեր փուլում դուք պետք է ցուցաբերեք ավելի շատ ինքնագոհողություն, Կյանքին ավելի մեծ Սպասավորություն: Եվ ձեր զարգացման այն դանդաղումը, որը մենք հիմա տեսնում ենք, գլուխ է եկել մեզ հակադիր ուժերի ազդեցությամբ: Դուք պետք է իմանաք, որ ձեր աշխարհում գործում են երկու հակադիր ուժեր. դրանցից մեկը նպաստում է ընդհանուր Բարօրությանն ու Բարուն, իսկ մյուսը՝ պառակտմանը, անհատականացմանը, Էգոիզմին, ամենաստորին կրքերը բորբոքելուն:

Ձեր աշխարհում տեղի ունեցող երևույթներում դուք պետք է կարողանաք զանազանել այդ երկու ուժերի գործողությունները: Սկզբի համար դա միանգամայն բավարար կլինի: Ուղղակի դիտում եք ձեր շուրջը կատարվող ամեն ինչ և միայն մի հարց տալիս ինքներդ ձեզ. այս բանը, որ հիմա տեղի է ունենում, ո՞ր ուժերին է ձեռնադրում:

Եթե նկատում եք պահանջմունքների անգուսպ ուռճացում և անսանձ վարքի հակումներ, ապա պետք է գիտակցեք, որ այդ գործընթացին ինչպես դրական, այնպես էլ բացասական վերաբերմունք դրսևորելով՝ դուք այն սնուցում եք ձեզ հատկացված Աստծո Էներգիայով:

Ուստի մենք գալիս և ուսմունք ենք տալիս բռնություն չկիրառելու մասին: Քանզի անիմաստ է չարին հակառակվելը: Այլապես այն կսնուցվի ձեր Էներգիայով և կբազմապատկվի:

Միևնույն ժամանակ դուք պետք է գիտակցեք, որ ձեզնից յուրաքանչյուրը գտնվում է Էվոյուցիոն զարգացման իր աստիճանի վրա, և յուրաքանչյուրն իր չափով է փոխանցում Աստծո Էներգիան:

Եթե դուք զարգացած անհատականություն եք, ապա ձեր չակրաները բաց են, և դուք Աստծո բարձր որակի Էներգիա եք փոխանցում ձեր աշխարհ: Ուստի և այդ Էներգիայի ցանկացած

անորակ կիրառություն մեծ կարմա է ստեղծում, նույնիսկ աշխարհի ցածրակարգ դրսևորումները դատապարտելու մասին միտքը:

Իսկ մեր ուղերձները կարդացողների մեծ մասն առայժմ ունակ չէ մեծ քանակի մաքուր էներգիա փոխանցելու: Չակրաներն աղտոտված են և չեն կարող գործ ունենալ էներգիայի մեծ հոսքերի հետ: Չարգացման ձեր փուլը ենթադրում է գործընթացների մեջ հակադիր ուժերի ակտիվ միջամտություն, որոնք առկա են ձեր աշխարհում: Չարի դեմ ձեր ակտիվ գործողություններով և ինչպես մտքերով, այնպես էլ գործողություններով Բարու կողմը պահելով՝ դուք նպաստում եք ձեր սեփական զարգացմանն ու ձեր չակրաների բացվելուն:

Ուստի բռնություն չգործադրելու մասին այն Ուսմունքը, որը մենք տալիս ենք, այլ կերպ կկիրառվի տարբեր էվոլյուցիոն աստիճանների վրա գտնվող անհատների կողմից:

Ընդհանուր Բարօրության և Բարու սկզբունքների պաշտպանությունը ձեզնից ակտիվ գործողություններ է պահանջում ֆիզիկական ոլորտում: Բայց որոշների համար այդ գործողությունները ֆիզիկական ոլորտում իրական արարքների ու ֆիզիկական գործերի հետ են կապված, իսկ մյուսներից՝ ավելի զարգացած անհատներից, պահանջվում է ներքին, հոգևոր մկանների լարում:

Կարող եմ ձեզ վստահեցնել, որ մարդկության զարգացման այս փուլում շատ քիչ են զարգացման բարձր հոգևոր մակարդակ ունեցող անհատները: Ուստի ձեր հիմնական խնդիրն այն է, որ այդ անհատների օգնեք պահպանելու աստվածային նմուշօրինակները:

Վաղ թե ուշ մեզ կհաջողվի աշխարհում հաստատված ներկա քաոսը վերածել մի հասարակության, որը բավարարում է Ոսկեդարի չափանիշներին:

Սակայն որպեսզի Ոսկեդարը հնարավորինս շուտ վրա հասնի, և հնարավորինս քիչ լինեն մարդկային կորուստները, դուք պետք է հասկանաք և գիտակցված վերաբերմունք դրսևորեք ընթացիկ գործընթացների նկատմամբ:

Ինչպես զրույցների այս շրջանների ընթացքում, այնպես էլ դրանց միջև ընկած ժամանակներում մեր ուղերձների ամենօրյա ընթերցումով ձեր գիտակցությունը հղկվում է ու փոխվում: Եվ այն մարդիկ, ովքեր անցած յոթ և ավելի տարիների ընթացքում ամեն օր կարդում էին մեր ուղերձները, ինքնաբերաբար հայտնվել են մարդկության ոսկե ֆոնդում:

Ըստ այդմ, էվոլյուցիայի Ուղով հետագա հաջող ընթացքի ամբողջ գաղտնիքը դրված է մեր ուղերձներում և փոխանցված է ձեզ:

Ամեն ինչ կախված է ձեր այն նկրտումներից ու միտումներից, որոնցով առաջնորդվում եք կյանքում:

ԵՄ ԵՄ Մանատ Կումարան: ՕՄ

Մովսես

21 դեկտեմբերի, 2013 թ.

Ոգու ուժը կառավարում է աշխարհը

ԵՄ ԵՄ Մովսեսը:

Ես կրկին ձեզ այցի եմ եկել: Եկել եմ, որովհետև մարդկությունն այն առաջնորդության և օգնության կարիքն ունի, որը բխում է Համբարձյալ Դասերից:

Ես ապրել եմ Երկրում և գիտեմ այն պայմանները, որոնցում այժմ գտնվում է մարդկությունը: Ինձ չափազանց հուզում է Երկրում տեղի ունեցող ամեն ինչ, որովհետև դա իմ հարազատ մոլորակն է, իմ բանականության օրրանը:

Իսկ հիմա կամենում եմ ձեզ տալ իմ խրատները, որոնք հրատապ կլինեն մարմնավորման մեջ գտնվող մարդկանց մեծ մասի համար: Նախ ասեմ, որ ուրախ եմ, որ վիթխարի ջանքերի շնորհիվ հաջողվում է պահպանել մոլորակի համակշռությունը: Բայց նաև հասկանում եմ, որ մարդկության էվոլյուցիան կարող է և ավելի հաջող ընթանալ, եթե ավելի մեծ փոխազդեցություն ապահովվի մեր աշխարհների միջև՝ այն աշխարհի, որում գտնվում եք դուք, և այն աշխարհի, որում գտնվում են մարդկության լավագույն ներկայացուցիչները, որոնք հասել են գիտակցության համբարձյալ վիճակին:

Եվ իրոք, ձեր կողքին գոյություն ունի մի ամբողջ բարձր զարգացած քաղաքակրթություն, որը բաղկացած է մարդկության լավագույն ներկայացուցիչներից: Այն տառացիորեն հենց այնտեղ է, որտեղ դուք եք գտնվում՝ նույն տարածության մեջ, բայց այլ հանախությունների վրա: Այդ բարձր զարգացած քաղաքակրթության հետ ձեր փոխազդեցությունն ամբողջովին և լրիվ կերպով կախված է ձեր ցանկությունից: Դուք պետք է ձեր գիտակցության մեջ ընդունեք այդ կապի

հնարավորությունը: Պետք է այնքան փոխեք ձեր գիտակցությունը, որ այդ փոխազդեցությունը հնարավոր դառնա: Եվ հենց դա է գոյություն ունեցող իրականությունը: Շատ քիչ բան է մնացել. պետք է կամենաք կապի մեջ մտնել այն աշխարհի հետ, որում բնակվում են Համբարձյալ Վեհապետները:

Մեր աշխարհների կտրվածությունն ապագայում կդադարի: Բայց ես ուզում եմ ձեր ուշադրությունը հրավիրել այն բանի վրա, որ մարդկության բոլոր ներկայացուցիչները չէ, որ կկարողանան մոտ գալ և շարունակել իրեն գոյությունը նոր իրականության մեջ: Ցավոք, դա այդպես է:

Նույնիսկ իմ այս ուղերձը կարդացող ոչ բոլորը կկարողանան իրենց ներսում հաղթահարել այն ինչ-որ բանը, որը խոչընդոտում է հետագա էվոլյուցիան:

Ձեր հետագա զարգացումն ամբողջովին և լրիվ կախված է այն ջանքերից, որոնք գործադրում եք ձեր սեփական անկատարություններն ու թերությունները հաղթահարելու ուղղությամբ:

Ձեր քաղաքակրթությունը չի կարող գոյատևել որոշակի սահմանից այն կողմ, որը նշել է Աստված: Չի կարող գոյատևել, քանի որ ինքն իրեն կտրել է Աստծուց և Նրա Օրենքից: Բայց մարդկության այն ներկայացուցիչների համար, որոնք կրնդունեն Աստծո Օրենքն ու կառաջնորդվեն դրանով, լայնորեն կբացվեն հետագա էվոլյուցիայի դռները:

Արդեն ամենամոտ ժամանակներում ձեզ կվիճակվի ցուցադրել ձեր հավատն ու վճռականությունը: Դրա համար եմ ես այսօր ձեզ այցի եկել: Ձեզնից շատերը հավատարմորեն ծառայել են ինձ իմ երկրային մարմնավորման ժամանակ: Ես հիշում եմ ձեր հավատարմության մասին և հիմա պատրաստ եմ ձեզ ցուցաբերելու ամբողջ հնարավոր օգնությունը:

Ես տեսնում եմ, որ կարիք կա ձեզ հերթական անգամ հիշեցնելու Աստծո Օրենքով առաջնորդվելու անհրաժեշտության մասին, որը ես գրի էի առել քարե սալիկների վրա:

Հազարավոր տարիներ են անցել, և էի ես ստիպված եմ գալ ու հիշեցնել ձեր կյանքերում Աստծո Օրենքով առաջնորդվելու անհրաժեշտության մասին:

Հենց միայն դա կարող է ձեզ պոկել պատրանքի կապանքներից, հենց միայն դա կարող է բացել ձեզ համար աստվածային հնարավորության պատուհանն ու հետագա էվոլյուցիայի Ուղին:

Դուք մոռացել եք Աստծուն: Այն քաղաքակրթությունները, որոնք մոռանում են Աստծուն, դատապարտված են չգոյության:

Ես խոսում եմ Աստծո մասին՝ որպես Բարձրագույն Օրենքի, որը գործում է այս տիեզերքում: Դուք կարող եք ձևացնել, թե ոչ մի Օրենք էլ գոյություն չունի, և որոշ ժամանակ գոյատևել ձեր հնարած օրենքներով: Բայց դա հնարավոր է մինչև մի որոշակի սահման, որն Աստված է գծել ձեզ համար:

Ուստի ես այսօր դիմում եմ ձեզ, ձեզնից նրանց, ովքեր իրենց գիտակցությամբ պատրաստ են ընդունելու Օրենքը և իրենց կյանքում առաջնորդվելու դրանով:

Կարիք չկա, պաշտելիներս, դուրս գալ փողոց և գոռալ Աստծո Օրենքին հետևելու անհրաժեշտության մասին: Ո՛չ, դա Վեհապետների ուղին չէ: Վեհապետներն ուսուցանում են Օրենքին հետևել սրտերի ներսում: Այդ պատճառով Ուղին կոչվում է Ներքին Ուղի:

Արտաքին աշխարհը հնազանդորեն կրկնում է ձեր ներքին վիճակը: Ուստի և ձեր ամբողջ հոգսը պետք է լինի այն, որ Աստծո Օրենքով առաջնորդվեք ձեր սրտերում ու ձեր ներքին տարածության մեջ:

Դուք կարող եք պահպանել ձեր նվիրվածությունն Աստծուն և հետևել Նրա Օրենքին նույնիսկ այնժամ, երբ բանտում եք գտնվում: Ձեր ներքին ազատությունը կախված չէ այն արտաքին շրջապատից, որում գտնվում եք:

Ըստ այդմ՝ ես կոչ եմ անում, որ դրսևորեք ձեր աստվածային Ազատությունը, որը ձեր գիտակցության որակն է և միշտ ձեզ հետ է, նույնիսկ այնժամ, երբ դուք ամբողջովին թաղված եք արտաքին աշխարհի պատրանքի մեջ:

Հասկանում եք, թե ինչի մասին եմ խոսում...

Ես խոսում եմ այն մասին, որ միայն ձեր ներքին նվաճումների աստիճանն է բացում ձեր հետագա էվոլյուցիայի ուղին:

Արտաքին պատրանքային ուժերի դիմադրությունը դուք պետք է հաղթահարեք ձեր գիտակցության մեջ:

Երբ մարդիկ թերզարգացած են, ելնում են փողոց, հեղափոխություն են անում, իշխանություն են տապալում:

Ես ձեզ ուսուցանում եմ արտաքին աշխարհը փոխել ներքնաշխարհը փոխելու ճանապարհով: Եվ հենց դա է այն Ուղին, որով ձեզ առաջնորդում են Համբարձյալ Վեհապետները:

Ձեր ներքին մրրիկների խաղաղեցումը հանգեցնում է արտաքին փոթորիկների խաղաղեցմանը: Ներքինը կառավարում է արտաքինը: Ոգու ուժը կառավարում է աշխարհը:

Այդ պատճառով մեզ հակադիր ուժերն ամեն ինչ անում են, որ ձեր Ոգին լռի: Եվ ձեր Ոգու դեմ այդ կռիվը ոչ մի բույն չի դադարում: Ժամանակակից հասարակության ամբողջ արդյունաբերությունն ուղղված է ձեր Ոգու դեմ պայքարին:

Եվ, փոխանակ դա գիտակցելու և պատրանքի ուժերին հակադրելու ձեր հավատն ու նվիրվածությունն առ Աստված, դուք ընդառաջում եք պատրանքի ուժերին և կրում մի պարտությունը մյուսի հետևից:

Մտածե՛ք ասածներին մասին այնժամ, երբ ի վիճակի կլինեք այդ անել: Մի՛ շտապեք մի կողմ նետել իմ այս Ուղերձի տեքստը և մղվել դեպի հանկատարորեն ձեզ մատուցվող ժամանցների ու սուռճատների կողմը:

Ես կշռադատել եմ իմ այս Ուղերձի բովանդակությունն ամբողջ կես տարվա ընթացքում:

Եվ հիմա դուք պետք է հաջորդ կես տարվա ընթացքում մտասնեռվեք իմ այս Ուղերձի էության վրա: Միայն այդ դեպքում Օրենքը կբավարարվի: Միայն այդ դեպքում դուք կդադարեք ստեղծել այն կարման, որն առաջանում է Վեհապետների խոսքերին ականջ չդնելուց:

Ես այս օրով եկա, որպեսզի ձեզ օգնեմ և պահպանեմ ձեր Աստվածայնությունն Ուղու վրա:

ԵՍ ԵՄ Մովսեսը

Տեր Սուրիա

22 դեկտեմբերի, 2013 թ.

Փոխելով ինքներդ ձեզ՝ դուք փոխում եք ձեր շրջակա աշխարհը

ԵՍ ԵՄ Սուրիան:

Շատ ուրախ եմ կրկին ձեզ հետ հանդիպելուս համար... Ամեն անգամ, երբ հնարավորություն եմ ստանում իմ Ուղերձը փոխանցելու ձեր աշխարհ, ես մեծ հրճվանք և հուզմունք եմ ապրում:

Սիրելիներես, դուք նույնիսկ չեք պատկերացնում ձեզ տրվող ողորմածության ողջ մեծությունը՝ ստանալ մեր Ուղերձները, որոնք աշխարհների միջով ձեզ են հասնում մեր դեսպանորդի մարմինների միջոցով:

Ձեր գիտակցության վիճակը ձեզ թույլ չի տալիս մինչև վերջ գիտակցելու և հասկանալու տեղի ունեցող Աստծո Հրաշքի չափն աստիճանը: Եվ եթե ես ձեր տեղը լինեի, ապա կմտորեի այն մասին, թե ինչու՞ է Աստծո այս Ողորմածությունը, այս թողության շնորհն ու Աստծո Հրաշքն ի կատար ածվում այսքան նշանակալից ժամանակահատվածի ընթացքում:

Բացատրությունը շատ պարզ է, սիրելիներես. Երկնորարները մտահոգված են Երկրում տիրող իրավիճակով և օգտագործում են ամեն մի հնարավորություն, որպեսզի Աստծո Էներգիա փոխանցեն ձեր աշխարհին:

Մեր Ուղերձների ամեն մի շրջանի ընթացքում ձեր աշխարհ է փոխանցվում հսկայական քանակությամբ Աստծո Էներգիա: Մենք օգտագործում ենք մեր Ուղերձները կարդացող յուրաքանչյուր մարդու հաղորդիչները, ում մարմինները թեկուզ մի փոքր չափով մաքրված են լինում:

Նշանակություն չունի, թե երկրագնդի որ մասում է գտնվում տվյալ մարդը, որը պատրաստ է ընդունելու մեր Էներգիաները: Մենք անմիջականորեն հասնում ենք ձեզ՝ օգտագործելով համացանցի ընձեռած հնարավորությունները: Աստծո Էներգիայի նեկտարը հնարավորություն ունի անցնելու ձեր մարմինների միջով և սնուցելու այն վայրի շրջակա տարածությունը, որտեղ դուք գտնվում եք:

Այդ եղանակով մենք Երկիր մոլորակի տարածությունը հագեցնում ենք մեր Էներգիաներով: Եվ դա է այն պատճառներից մեկը, թե ինչու ենք մենք շարունակում տալ մեր Ուղերձները: Մարմնավորվածների մեջ շատ քչերը կան, որ ունակ են իրենց գիտակցությունը պահելու աստվածային մակարդակի վրա: Ուստի մեր Ուղերձները ձեզ համար այն օգնությունն են, որով թեկուզ կարճ ժամանակով դուք կարող եք բարձրացնել ձեր թրթիռները և դրանք մոտեցնել աստվածային մակարդակին:

Ձեր աշխարհը հայելի է, որն արտացոլում է ձեր գիտակցությունը: Ուստի և, օգնելով ձեզ գիտակցությունը պահել բարձր մակարդակի վրա, մենք փոխում ենք ձեզ շրջապատող աշխարհը:

Եթե համեմատենք այն ազդեցության հետ, որ ձեր գիտակցության վրա թողնում են զանգվածային լրատվության միջոցները, ապա, իհարկե, մեր ազդեցությունն այնքան էլ մեծ չէ: Եվ մենք չենք կարող մրցակցել ձեր զանգվածային լրատվության միջոցների հետ: Սովորաբար այն ամենը, ինչ մարդն իր գիտակցության մեջ է առնում հեռուստահաղորդումներից, համացանցից և ձեր աշխարհի տեղեկատվական այլ միջոցներից, ամուր նստում է նրա ենթագիտակցության մեջ և

մթազնում Աստծո մաքուր էներգիայի անցումը: Այդ պատճառով ներկայումս մարդկանց մեծ մասը չի կարող Աստծո էներգիա փոխանցել ձեր աշխարհ: Ուստիև ձեր աշխարհն այժմ տառապում է Աստծո էներգիայի մշտական անբավարարությունից: Մարդկությունը շարունակաբար հայտնվում է գիտակցության ցածրակարգ վիճակներում, ճնշվածության, ատելության և ագրեսիվության մեջ:

Հայտնվելով գիտակցության ցածրակարգ վիճակներում՝ անխուսափելիորեն մարդն ինքն իրեն ու իր մերձավորներին խորասուզում է պատրանքի մեջ, որն արտացոլում է հենց իր գիտակցության այդ ցածրակարգ վիճակները:

Ձեր աշխարհն արտացոլանքի, պատրանքի աշխարհ է, որում ամեն ինչ իրար է ձգվում՝ ըստ թրթռանքի: Եվ, մշտապես սուզվելով գիտակցության ցածրակարգ վիճակների մեջ, դուք ինքներդ ձեզ կապկպում եք արտաքին ցածրակարգ պատրանքի կապանքներով:

Հասկանում եք, սիրելիներս, այն, ինչ առկա է ձեր գիտակցության մեջ, ինքնաբերաբար դրսևորվում է ձեզնից դուրս՝ որպես ձեր արտաքին միջավայրը: Եվ եթե դուք մշտապես կլանված եք լրատվության աշխարհով, որը լի է բռնությամբ, ագրեսիայով, հեղաշրջումներով, զանգվածային հուզումներով, ապա որոշակի ժամանակից հետո այդ ամենը ձեր կյանքում սկսում է ի հայտ գալ հենց ձեր շուրջը:

Այդ եղանակով մարդկությունն ավելի ու ավելի է խորասուզվում անաստված իրականության մեջ:

Ուստի միակ օգնությունը, որ ներկայումս կարելի հասցնել մարդկությանը, մեր էներգիաներն են, որոնք մենք ձեր աշխարհ ենք փոխանցում մեր Ուղերձների միջոցով:

Ձեզնից շատերը հարցնում են. «Ուղերձներն ինչպե՞ս կարող են փոխել աշխարհը, եթե դրանք կարող են Երկրում բնակվող միլիարդավոր մարդկանցից միայն եզակիները...»:

Պաշտելիներս, Աստծո էներգիան մենք երբեք իզուր չենք ծախսում: Ցանկացած աստվածային Ողորմածություն նախքան մատուցվելը մանրագին կշռադատվում է Տիեզերքի Բարձրագույն Խորհուրդներում:

Մեր նուրբ էներգիաներն ի վիճակի են չեզոքացնելու ձեր աշխարհի հսկայական քանակությամբ բացասական էներգիան: Դա մեր աշխատանքն է, որով պահպանում ենք մոլորակի համակշռությունը: Ձեզնից յուրաքանչյուրը կարող է իր մասնակցությունը բերել Երկրի մարդկության փրկության այդ վիթխարի աշխատանքին:

Համատեղ ջանքերով մենք կփոխենք մոլորակում տիրող իրավիճակը: Բավական է միայն, որ օրական մեկը կարդաք Ուղերձներից, որոնք մենք տալիս ենք մեր դեսպանորդի միջոցով, կարդաք այն ժամանակագրական հաջորդականությամբ, որով դրանք փոխանցվել են:

Մեր Ուղերձներն ի վիճակի են փոխելու ձեր գիտակցությունը, իսկ այդ փոփոխությանն անխուսափելիորեն կհետևի ձեր շրջապատի փոփոխությունը: Մենք չենք կարող նախապես գուշակել իրավիճակը, քանի որ չգիտենք, թե որքան մարդ կարձագանքի մեր կոչին և կկարդա մեր Ուղերձները: Շատ կարևոր է այն վիճակը, որում դուք ձեռնամուխ եք լինում կարդալու մեր Ուղերձները: Որպեսզի ձեր աշխատանքն առավելագույնս արդյունավետ լինի, դուք պետք է նախապես տրամադրվեք մեր Ուղերձները կարդալուն և դրանք կարդաք ձեզ համար հնարավոր ամենավերամբարձ վիճակում: Միայն այդ դեպքում է, որ դուք կկարողանաք Աստծո էներգիա փոխանցել ձեզ շրջապատող աշխարհին:

Որպեսզի մեր Ուղերձները կարդալուց առաջ համալարվեք մեր աշխարհի հետ, հարյուրից ավելի միջոցներ են ձեզ առաջարկված, որոնց նկարագրությունը կարող եք գտնել մեր Ուղերձներում: Դրանց որոշ մասը, ինչպես օրինակ՝ Վարդարանները կամ համացանցային ընդհանրական ներխուկումները, Դեսպանորդը գրի է առել մեր խնդրանքով:

Որպեսզի նախատրամադրվեք մեր Ուղերձները կարդալուն, ձեզ անհրաժեշտ է դրանից առաջ ամենաքիչը մեկ ժամ տրամադրել հոգևոր աշխատանքին:

Պարտադիր չէ կիրառության մեջ դնել բոլոր ձեզ տրված միջոցները: Դրանցից ընտրեք այն, որը հոգեհարազատ է ձեզ, կլինի դա կանչ, Վարդարան, ներխուկում թե տեսահոլովակ:

Ուղերձը սկսեք ընթերցել միայն այնժամ, երբ ամբողջովին ներդաշնակեցրել եք ձեր բոլոր մարմինները, մտքերն ու զգացմունքները:

Փոխելով ինքներդ ձեզ՝ դուք փոխում եք ձեր շրջակա աշխարհը:

Մի՛ կարծեք, թե ձեր գիտակցությունը փոխելը հեշտ գործ կլինի: Հարկ կլինի, որ օգտագործեք ձեր ողջ վճռականությունը, որպեսզի իրագործեք Վեհապետների բոլոր այն հանձնարարականները, որոնք առկա են մեր Ուղերձներում:

Առաջին տեղում վնասակար սովորություններից հրաժարվելը կլինի, որոնց թվում են ցածրակարգ երաժշտություն լսելը, սեռական էներգիայի չարաշահումը, հեռուստացույց դիտելն ու համացանցի ցածրակարգ դրսևորումներին հետևելը:

Ձեզնից կապահանջվի լարել ամբողջ կամքի ուժն ու վճռականությունը, որ կարողանաք ընթանալ ձեր գիտակցությունը փոխելու Ուղով:

Եվ միայն նրանք, ովքեր կկարողանան կատարել մեր հանձնարարականներն ու խնդրանքները, կարժանանան պարգևի՝ Աստծո աշխարհում, Աստծո Արքայությունում լինելուն, որը կդրսևորվի ձեր գիտակցության ներքին վիճակից դուրս:

Ես այս օրով եղա ձեզ հետ:

ԵՍ ԵՄ Մուրիան

Տեր Մայտրեյա

23 դեկտեմբերի, 2013 թ.

Ես ձեզ ցույց եմ տալիս պատրանքի բավիղներից դուրս գալու Ուղին

ԵՍ ԵՄ Մայտրեյան, ձեզ այսօր այցի եմ եկել, որպեսզի Երկրի մարկության հետ կրկին հաղորդակցվելու զգացումն ապրեմ:

Քաղցր է ձեզ այցելելն ու մտածելն այն մասին, որ իմ ամեն մի գալստյամբ մոտենում եմ Նոր Ժամանակները, երբ մարդկությունը վերջապես կկարողանա դուրս գալ իր զարգացման լուսավոր ուղին:

Վաղ թե ուշ խավարի շրջանը հետևում կմնա: Վաղ թե ուշ կգա այն ուրախալի ժամանակը, երբ կկարողանաք հետ նայել ու գիտակցել մոլորությունների այնանդունդը, որում մարդկությունը գտնվել է հազարավոր տարիներով:

Ժամը հասել է: Եկել է արթնացման ժամանակը: Դուք դեռևս ննջում եք և չեք շտապում քաղցր պատրանքի երազից դուրս գալ:

Եկել է նոր իրականության մեջ արթնանալու ժամանակը: Իսկ այդ նոր իրականության և ձեր գիտակցության ներկայիս վիճակի միջև ընդամենը մեկ քայլ է ընկած: Մեկ քայլ:

Եվ այդ քայլը դուք անպայման կանեք...

Իսկ այսօր ես եկել եմ, որպեսզի ձեր Ուղու դժվարին հատվածում օգնեմ ձեզ: Եկել եմ, որ պատմեմ ձեր մասին, աշխարհում ձեր ունեցած դիրքի մասին: Եկել եմ, որպեսզի ձեզ հիշեցնեմ, որ մոտակա ժամանակներում դուք անպայման պետք է կատարեք ձեր վերջնական ընտրությունը: Իսկ այդ ընտրությունը վերաբերում է այն բանին, թե որոշում եք էվոլյուցիայի ուղով ընթանալ առաջ, թե՞ գերադասում եք անցյալի գրկում մնալ՝ ընթանալով անցյալի ձախողված քաղաքակրթությունների ուղով:

Այո, սիրելիներս, անցյալում շատ քաղաքակրթություններ են եղել, որոնք կամեցել են ընթանալ իրենց ուզած ուղով: Եղել են ոչ միայն ձեր մոլորակում, այլ նաև ուրիշ մոլորակային համակարգերում:

Էվոլյուցիայի ամբողջ գործընթացը բաղկացած է ձեր այն նախընտրանքներից, որոնք կատարում եք ինքներդ՝ օժտված լինելով կամքի ազատությամբ: Եթե ձեր ազատ կամքով չառաջնորդվեիք, ապա կգործեիք ըստ Վեհապետների կամքի և զարգանալ չէիք կարողանա: Քանզի ստիպված կլինեիք ենթարկվել ուրիշի կամքին:

Երբ երեխան ծնվում է, սկզբնական շրջանում լրիվ կախված է լինում իր ծնողներից. ինքնուրույն չի կարողանում շարժվել, սնունդ ընդունել: Բայց հետո գալիս է այն փուլը, երբ մեծանալով երեխաները լքում են հայրական տունը և գործում ինքնուրույն՝ իրենց կյանքի պատասխանատվությունն ամբողջովին վերցնելով իրենց ուսերին: Սակայն իմաստուն երեխաները շարունակում են կապ պահպանել իրենց ցեղի ու իրենց ծնողների հետ, որ խորհուրդներ և օգնություն ստանան:

Որոշակի իմաստով դուք մեր՝ Համբարձյալ Վեհապետներիս երեխաներն եք: Ձեզնից յուրաքանչյուրի ներսում կա մեզնից մի մասնիկ՝ ձեր ապագա Աստվածայնության սաղմը:

Ձեր մեջ կան անհնազանդ երեխաներ, որոնք մոռացել են իրենց ծագման ու իրենց երկնային խնամարկուների մասին և այնպես են տարվել պատրանքի իրենց խաղով, որ այդ վիճակում խիստ դժվարանում են հիշել, թե իրականում ովքեր են իրենք, ինչպես են հայտնվել որբերի ողբալի վիճակում և ինչ պետք է անեն, որպեսզի վերադառնան Հայրական Տուն:

Ի տարբերություն շատ որբացած հոգիների, որոնք մոլորվել են ձեր աշխարհում՝ կան որոշակի թվով հոգիներ, որոնք հիշում են իրենց աստվածային առաքելությունն ու աստվածային ծագումը: Հենց այդ հոգիներին եմ ես այսօր դիմում և հանձն առնում նրանց Ձեռնադրումների Ուղու դեկավարությունը:

Դուք սակավաթիվ եք, բայց ես ձեզնից յուրաքանչյուրին շատ լավ գիտեմ և ձեզ հետ աշխատել եմ ձեր ունեցած շատ ու շատ մարմնավորումների ընթացքում:

Աշխարհում ստեղծված ներկայիս իրավիճակը լրացուցիչ դժվարություններ է հարուցում մեր հաղորդակցության և մեր կապի համար:

Ձեզնից շատերը մոռացել են ինձ: Բայց ես ձեզ հիշում եմ: Ամեն մեկիդ: Ուստի մերթ ընդ մերթ գալիս եմ, որպեսզի թարմացնեմ մեր հաղորդակցությունն ու կապը, որը չի ընդհատվել հազարավոր տարիներով: Նույնիսկ այն դեպքերում, երբ դուք այնքան եք թաղվում պատրանքի մեջ, որ մոռանում եք Աստծուն և Վեհապետներին, մեր կապը շարունակում է պահպանվել լինելիության ավելի նուրբ ոլորտներում:

Ձեզնից շատերը նորից են անցնում իրենց Ուղու թեստերը: Շատերը նույնիսկ չեն էլ կարող գիտակցել, որ իրենց կյանքում տեղի ունեցող ամեն ինչը ոչ այլ ինչ է, եթե ոչ թեստ, որն իրենք կրկին ու կրկին անցնում են մարմնավորումից մարմնավորում:

Իսկ հիմնական թեստը նյութական որևէ բանի հետ կապվածություն չունենալն է: Եթե չափազանց կապված եք ձեր երեխաների, ծնողների, սիրելիների, իրեղենի հետ, ապա կյանքի հանգամանքները ձեզ կզրկեն ձեր կապվածության առարկայից:

Գլխավոր ընտրությունը, որը դուք կատարում եք ձեր կյանքում ու կյանքից կյանք, Աստծո Աշխարհի կամ պատրանքային աշխարհի օգտին ընտրություն կատարելն է:

Երբ ընտրում եք պատրանքային աշխարհը, ձեզ կապում եք այդ աշխարհին և շարունակում դրանում մարմնավորվել:

Իսկ եթե Բարձրագույն աշխարհն եք ընտրում, ապա անցնում եք այդ աշխարհ:

Մեր տիեզերքն այնպիսի հատկություն ունի, որ ամեն մարդ Էվոյուցիայի սանդուղքին զբաղեցնում է այն տեղը, որը համապատասխանում է իր գիտակցության զարգացման մակարդակին: Եվ եթե դուք հայտնվում եք ձեր աշխարհում, ուրեմն այդ աշխարհի հետ կապվածություն ունենալու պատճառով դուք մշտապես դա եք ընտրում:

Որպես ձեր Ձեռնադրիչ՝ իմ խնդիրն այն է, որ ձեզ բացատրեմ ձեր կապվածություններն ու ցույց տամ ձեր Ուղու խոչընդոտները: Եվ միայն այնժամ, երբ ձեր ներսում հաղթահարում եք բոլոր կապվածություններն ու ձեր էության անկատարությունները, հնարավորություն եք ստանում անցնում կատարելու մի այլ, ավելի կատարյալ աշխարհ:

Աշխարհների միջև ընկած էներգետիկական սահմանը կարող եք հաղթահարել միայն ձեր թրթիռները բարձրացնելու շնորհիվ:

Սակայն ձեր աշխարհն ամեն ինչ անում է, որ ձեզ կապի իրեն: Դուք հավատում եք ձեր պատրանքին, և այն ձեզ ներկայանում է որպես իրականություն:

Ամեն մի նոր մարմնավորման հետ խաղը բարդանում է, և դուք հայտնվում եք ավելի վատ պայմաններում, որոնցում պետք է ցուցադրեք ձեր նկրտումն ու վճռականությունը, որպեսզի վերջապես դուրս գաք պատրանքի թակարդից:

Ձեր պատրանքն այժմ շատ նրբաձածուկ միջոցներ է կիրառում, որպեսզի ձեր գիտակցությունը մշտապես պահի թրթռանքի ցածր մակարդակի վրա: Այն ամենը, ինչ ձեր կյանքում ձեզ շրջապատում է, դեպի ավելի բարձր աշխարհներ տանող ձեր Ուղու վրա խոչընդոտներ ստեղծելու նպատակ է հետապնդում:

Ժամանակակից ցանկացած արտադրություն ստիպում է ձեզ իջեցնելու ձեր թրթիռները և բառացիորեն բռնի ուժով ձեզ հեռացնում է Բարձրագույն աշխարհներից:

Ուստի ձեր խնդիրն է՝ չենթարկվել պատրանքի խորամանկություններին և հոգևոր գործառնությունների ու մեթոդների միջոցով այնպես մարզել հոգևոր մկանները, որ կյանքի ամենադժվարին իրադրություններում կարողանաք անկախ լինել պատրանքային ուժերից:

Դուք գտվում եք ձեռնադրումների համար նախատեսված բուրգի ներսում: Եվ ահա ես ձեզ ցույց եմ տալիս պատրանքի լաբիրինթոսից դուրս գալու Ուղին:

Արդյոք շատե՞րն են ունակ լսելու ինձ...

Ես գիտեմ, որ իմ նվիրյալ բողոքիսատվաներն ունակ են լսելու և հետևելու ինձ՝ ինչպիսի պատրանքի մեջ էլ որ գտնվելիս լինեն:

Այնտեղ, ուր մեկն անցնում է, կանցնեն միլիոնավոր հոգիներ:

ԵՍ ԵՄ Մայրոթեյան

Մայր Մարիամ
24 դեկտեմբերի, 2013 թ.

**Դուք պետք է առավելագույն ճիգեր գործադրեք,
որպեսզի Աստծուն վերադարձնեք ձեր կյանք**

Ես եմ Մայր Մարիամը:

Այս օրով ես ձեզ այցի եմ եկել որպես լավագույն բախտի ու ճակատագրի նախանշան, որոնք սպասվում են Երկրի վրա ապրող Աստծո ուսուրերին ու դուստրերին:

Այժմ հյուսիսային կիսագնդում շատ քիչ է արև շողում, և միայն հուլյան է ջերմացնում մարդկանց հոգիները: Դուք գիտեք, որ կանցնի որոշ ժամանակ, և արևը հորիզոնից օր օրի ավելի ու ավելի վերև կբարձրանա:

Այդպես է նաև ձեր հոգևոր կյանքում. մարդկային մառախլապատ գիտակցությունն անկասելիորեն պետք է փոխվի պայծառ արևային օրով: Ձեր Աստվածայնության Արևը պետք է լուսավորի ձեր բանականությունը, մտքերն ու զգացմունքները: Եվ դա անպայման տեղի կունենա, սիրելիներս:

Ներկայումս ձեր աշխարհում մոլեգնում են մութ ուժերն ու էներգիաները: Եվ յուրաքանչյուր ոք, ով լուսավոր էներգիա է ներմուծում ձեր աշխարհ, ենթարկվում է մեղադրանքների և նույնիսկ հալածանքի: Շատ տխուր բան է դա...

Մի ժամանակ իմ որդի Հիսուս լրիվ չափով իր վրա կրեց մարդկային ատելությունն ու հակակրանքը: Նա իր կյանքը նվիրեց մարդկանց ծառայելուն: Շատ ու շատ անբուժելի հիվանդների նա բուժեց Աստծո օգնությամբ: Շատ ու շատ մարդիկ էին գալիս, որ տեսնեին իմ որդի Հիսուսի գործած հրաշքները:

Սակայն որքան շատ բան էր նա անում մարդկանց համար, այնքան մեծանում ու ամրապնդվում էր նրա և նրա առաքելության նկատմամբ ընդդիմությունը:

Մարդկային տրամաբանության տեսակետից շատ դժվար է բացատրել, թե այդ ինչպե՞ս եղավ, որ մոլեգնած ամբողջ, որի մեջ կային և Հիսուսի կողմից բուժված մարդիկ, կատաղի կերպով իմ որդու մահապատիժն էր պահանջում:

Սակայն եթե մեզ թույլ տանք բարձրանալ գիտակցության ավելի բարձր մակարդակի, ապա Քրիստոսի խաչելության տխուր իրողությունը միանգամայն հասկանալի կդառնա: Հիսուս աշխարհին բերեց հսկայական քանակությամբ Լույս, ոչ միայն գիտելիքի լույս, այլև հսկայական քանակությամբ Աստծո էներգիա:

Այն ամենը, ինչ Լույսից չէր ծնված, ենթագիտակցական մակարդակով հակակրանք էր տածում Քրիստոսի առաքելության նկատմամբ: Այդ հակակրանքն իր արտահայտությունը գտավ Լույսին հակադիր ուժերի դրսևորումներով: Ձեզ հայտնի է այն օրենքը, որն ասում է՝ ամեն մի ազդեցություն ծնում է հավասար հակազդեցություն: Ֆիզիկական աշխարհի այդ օրենքը լրիվ կիրառելի է նաև աշխարհում տեղի ունեցող հոգևոր գործընթացների նկատմամբ: Եվ եթե մեկն օժտված է պատրանքային աշխարհին Աստծո Լույս բերելու ներուժով, ապա կբախվի այն ուժերի հակազդեցությանը, որոնք պաշտպանում են պատրանքը:

Այդպես է, սիրելիներս: Ձեր աշխարհում մինչև այժմ այդ օրենքն անխափան գործում է:

Հիսուս Քրիստոսի օրինակով քրիստոնյաների մի քանի սերունդ հնարավորություն ունեցավ իր վրա զգալու և ուսումնասիրելու այդ օրենքի ազդեցությունը: Եվ առ այսօր քրիստոնեության շատ ճշմարիտ հետևորդներ, որոնք հետևում են Քրիստոսի Ուսմունքի էությանը, և ոչ թե դրա տառին, իրենց վրա զգում են հակադիր ուժերի ճնշումը:

Ձեր աշխարհում այդ հակադրությունն անխուսափելի է և միանգամից չի դադարի: Ինչպես ձեր աշխարհում ամեն ինչը, տիեզերքում գործող այդ երկու հիմնական ուժերի հակադրությունը չի կարող անմիջապես դադարել: Բայց ժամանակի ընթացքում այն ավելի քիչ ավերիչ բնույթ կստանա: Իսկ հեռավոր ապագայում այդ երկու ուժերն իրենց դրսևորումներն այնքան կհավասարակշռեն, որ նրանց հակադրությունից կծնվի համագործակցություն և փոխօգնություն:

Պաշտելիներս, ձեզնից շատերն էլ են հակադրվում մեկը մյուսին: Եվ դա տեղի է ունենում նույնիսկ այն դեպքերում, երբ կարծես թե ընթանում եք միևնույն հոգևոր ուղով:

Այդ հակադրությունը բացատրվում է ձեր աշխարհի անկատարությամբ: Ուստի և ձեր էությունների միջոցով ինքնադրսևորվում են երկու հակադիր ուժեր: Տվյալ փուլում այդ դրսևորումը թշնամանքով է արտահայտվում, կասկածամտությամբ և նույնիսկ ատելությամբ: Նույն օրվա ընթացքում միևնույն մարդը կարող է ընկնել տարբեր ուժերի ազդեցության տակ:

Այդ ամենը, սիրելիներս, տեղի է ունենում ձեր սրտերում Սիրո պակասության պատճառով: Իսկ ձեր սրտերի Սիրո այդ պակասությունը պայմանավորված է Աստծո Աշխարհից ձեր աշխարհի կտրվածությամբ:

Չկա Աստված՝ չկա և Սեր: Ուստի դուք պետք է առավելագույն ճիգեր գործադրեք, որպեսզի Աստծուն վերադարձնեք ձեր կյանք:

Տեսեք, թե ինչով եք շրջապատված ձեր աշխարհում: Գովազդներ, ուրբանիստական բնապատկերներ, մռայլ դեմքերով անցորդներ, ճղճիմ հեռուստահաղորդումներ: Ձեր աշխարհը բարյացակամ տրամադրված աշխարհ չէ: Եվ, մշտապես գտնվելով վախի, լարվածության ու մռայլության պայմաններում, մարդիկ համակվում են արտաքին աշխարհի այդ վիճակներով: Իսկ երիտասարդությունն իր մատաղ հասակում կորցնում է լավատեսության և ուրախության իր լիցքը, ինչն ի բնե հատուկ պետք է լիներ երիտասարդ մարդուն:

Ճշմարիտ ուրախությունները փոխարինվում են անկատար պատրաստուկներով՝ անկատար ֆիլմերով, երաժշտությամբ, թմրանյութերով:

Ճշմարիտ Սերը փոխարինվում է անկատար սիրով, որը ոչ մի ընդհանուր բան չունի Սիրո մեծ զգացմունքի հետ:

Շրջակա անասոված աշխարհում շատ հեշտ է հոգին կորցնելը:

Հենց այն պատճառով, որ մարմնավորման մեջ գտնվող շատ մարդկանց, հատկապես երիտասարդների հոգիների համար ձեր ժամանակները շատ վտանգավոր են, ես և մյուս Վեհապետները գալիս և ձեզ տալիս ենք ձեր աշխարհում տեղի ունեցող գործընթացների ըմբռնումը և հիշեցնում, որ աշխարհը միշտ այսքան տխուր չի եղել, և որ առջևում մարդկությանը լուսավոր ապագա է սպասվում:

Սկզբում այդ ապագան կծլարձակի սակավաթիվ մարդկանց սրտերում՝ նրանց, ովքեր Ոգով ուժեղ են և կարող են շրջապատի պատրանքին հակադրել իրենց հավատը և Աստծուն ու Վեհապետներին իրենց նվիրվածությունը: Այնուհետև, երբ աստվածային գիտակցության վիճակ ունեցող հոգիների քանակը կմեծանա, մարդկությունն իր մեծ մասով կշրջվի Լուսի կողմը: Իսկ այն մարդիկ, որոնք ներկայիս մարդկության մեծ մասին բնորոշ գիտակցության վիճակը կունենան, կդիտվեն որպես բացառիկ շեղածիններ՝ արժանի անսահման Կարեկցանքի ու Սիրո:

Միայն Կարեկցանքի, Գթասրտության ու Սիրո ազդեցությամբ է, որ ձեզնից շատերի հոգիներն ունակ կդառնան հարթելու իրենց հոգևոր հագուստի ճմռվածքներն ու հառնելու դեպի Կյանք:

Իմ որդի Հիսուսի սխրանքն այն էր, որ չկորցրեց իր Սերն այն մարդկանց նկատմամբ, որոնք կտտանքների ենթարկեցին իրեն և իր մահը կամեցան:

Այդ է պատճառը, որ աշխարհի միլիոնավոր քրիստոնյաներ շարունակում են խոնարհվել իմ որդու սխրանքի առջև:

Ես կանխատեսում եմ, որ իմ այս Ուղերձը կարդացողներից շատերն ապագայում ունակ կլինեն Սիրով հատուցելու պատրանքային ուժերի բոլոր ծուղակների ու խորամանկ հնարքների դիմաց: Եվ նույնիսկ մահվան սպառնալիքի տակ իմ զավակներն ունակ կլինեն Գթասրտություն ու Կարեկցանք տաժելու այն մարդկանց հոգիների նկատմամբ, ովքեր իրենց կչարչարեն: Քանզի շատ ու շատ են նրանք, ովքեր չգիտեն, թե ինչ են անում: Եթե իմանային, ապա երբեք թույլ չէին տա իրենց արարքներից շատերը:

Դուք կարող եք Ուղի ցույց տալ շատ մոլորյալ հոգիների: Աղոթեցե՛ք մարդկության պայծառացման համար և ներեցե՛ք բոլորին:

ԵՄ ԵՄ Մայր Մարիամը

Գուան Ին

25 դեկտեմբերի, 2013 թ.

Ձեզ կվիճակվի վերադառնալ Աստծո մոտ

ԵՄ ԵՄ Գուան Ինը:

Ինչպես իմ քույր Մարիամը, ես նույնպես Ուղերձ եմ բերել ձեզ, որով մտադիր եմ տալ հավատի հիմունքները և ուսուցանել ձեզ հետևողական լինել ձեր հավատի մեջ՝ անկախ բոլոր արտաքին դժվարություններից ու խոչընդոտներից:

Ուստի տրամադրվե՛ք լուրջ խոսակցության:

Սեր առջև խնդիր է դրված գիտակցելու մարդկության գիտակցության մեջ հեղաշրջում անելու օրախնդիր անհրաժեշտությունը: Հասել է բոլորաշրջանների շրջադարձի պահը, և դա այն ժամանակն է, երբ պետք է փոխվի ձեր գիտակցությունը:

Դա տառացիորեն հեղափոխություն կլինի ձեր գիտակցության համար, ինչի մասին ձեզ արդեն ասել է պաշտելի Բաբաջին:

Իսկ ես այսօր եկել եմ, որպեսզի դուք գիտակցեք վերահաս փոփոխությունների բնույթը:

Մարդկությունն իր հիմնական զանգվածով մտել է զարգացման փակուղային ճյուղ: Արտաքին բաների վրա կենտրոնանալու գերակշռությունը, սպառման և կյանքից հաճույքներ ստանալու վրա կենտրոնանալը հանգեցրել են մարդկության գիտակցության հետաճին: Ուստի մոտակա ժամանակներում մենք կձեռնարկենք բոլոր անհրաժեշտ միջոցները, որպեսզի մարդկությանը վերադարձնենք զարգացման էվոլյուցիոն ուղին, որին բնորոշ է ներքին, աստվածային արժեքների գերակշռությունը:

Կան հավերժական հատկանիշներ, որոնք ձեզնից անբաժան են մնում ձեր ամբողջ էվոլյուցիոն ուղու վրա: Դրանք ձեզ հայտնի հատկանիշներ են և իրենց օգտին որևէ ապացույցի կարիք չեն գգում:

Ահա դրանք՝ Բարություն, Գթասրտություն, Կարեկցանք, Մեր, ազնվություն, արիություն, նվիրվածություն, նպատակամղվածություն, կայունություն:

Շատ կան հատկանիշներ, որոնք ներկայումս երկրորդ պլան են մղված և մնացել են մարդկության հետաքրքրության շրջանակներից դուրս: Ուստի ներկայումս մեր և ձեր խնդիրն է այդ աստվածային հատկանիշները վերադարձնել ձեր կյանք:

Ձեզ կվիճակվի վերադառնալ Աստծո մոտ: Իսկ դա նշանակում է, որ մոտակա ժամանակներում ձեզ կվիճակվի հեղաշրջում անել ձեր գիտակցության մեջ:

Միայն այնժամ դուք կարթնանաք հավերժական կյանքի համար, երբ կկարողանաք հաղթահարել պատրանքային ուժերի մոգական ազդեցությունը:

Ես կամենում եմ, որ դուք հավերժ ապրեք:

Ուստի եկել և իմ խրատներն եմ տալիս ձեզ:

Ձեզ թվում է, թե ես հասարակ բաներ եմ ասում, որոնք զուրկ են խորությունից: Դուք կուզենայիք սնունդ ստանալ ձեր ինտելեկտի, ձեր մարմնական խելքի համար:

Ո՛չ, պաշտելիներս, մարմնական մկանները ոչ մի ընդհանուր բան չունեն հոգևոր նվաճումների հետ: Հենց այն պատճառով, որ Ուսմունքը շատ պարզ է, դրան ուշադրություն չեն դարձնում շատ ինտելեկտուալներ, որոնք սովոր են գիտականակերպ ասույթներ ու արտահայտություններ որոնալ:

Ճշմարտությունը, Աստծո Ճշմարտությունը դեպի արտաքին դրսևորումներն ուղղված ձեր մղումներից այն կողմ է գտնվում և կապ չունի ինտելեկտուալ նրբամտության հետ: Չկա և չի կարող Աստված լինել այնտեղ, որտեղ առկա է սեփական նշանակալիությունն ու հեղինակությունը ցուցադրելու միտում:

Աստված հեռու է ֆիզիկական ոլորտում որևէ բացառիկություն ստեղծելուց: Աստծո միասնական մարմնի՝ օրգանիզմի որևէ մասը չի կարող հավակնել բացառիկության և պնդել ղեկավարելու ու գլխավորելու իր իրավունքը:

Աստվածառաջնորդությունը ոչ թե դրսից է գալիս, այլ մարդկային անհատների ներսից:

Ուստի ուշադրության կիզակետը հարկ է արտաքին բաներից տեղափոխել ներքինի վրա:

Պատրանքային ուժերի ամբողջ արածն այն է, որ մշտապես ջանում են ձեր ուշադրությունը պահել արտաքին դրսևորումների վրա: Արագ-արագ փոխվում են ձևերը, ապրանքների արտաքին տեսքերը: Նույնը մատուցվում է նաև հեռուստատեսությամբ: Մշտապես ձեզ է մատուցվում կադրերի, լուսային ու ձայնային էֆեկտների արագահոս փոփոխություն: Եվ այդ հնարքներով ճնշվում է ձեր ներքին, աստվածային Էությունը: Ներքին, աստվածային հատկանիշները փոխարինվում են արտաքին սուռճատների առատությամբ:

Դուք մշտապես գտնվում եք տեղեկատվական հոսքի ազդեցության տակ և ժամանակ չունեք մտածելու հավերժի մասին:

Եթե չմտորեք հավերժի մասին, ապա չեք կարողանա հավերժ ապրել:

Եթե ժամանակ չհատկացնեք ձեր հատկանիշների շուրջ մեկուսի մտորումներին, ապա չեք կարողանա ձեր ներսում զարգացնել Աստվածայնությունը:

Եթե որակյալ տեքստեր ընթերցելուն ժամանակ չհատկացնեք, ապա կդադարեք մտածել:

Եթե դադարեք մտածել, ապա կկորցնեք ձեր անկախությունը և կընկնեք անորակ տեղեկատվական հոսքի ազդեցության տակ, որը ձեզ դուրս կհանի զարգացման էվոլյուցիոն ուղուց:

Ես չեմ հոգնում ձեզ համար կրկնելուց, որ եկել է այն ժամանակը, երբ դուք պետք է կյանքի ամբողջ բազմազանությունից այն կողմ գտնեք այն, ինչը հավերժական արժեք է, և հրաժարվեք այն ամենից, ինչը թուլեական արժեք ունի ու անցողիկ է:

Այն բարձրագույնությունն ու բռնությունը, որը բնորոշ է զանգվածային լրատվության ժամանակակից միջոցներին, միայն մեկ նպատակ է հետապնդում՝ ձեզ դուրս հանել զարգացման էվոլյուցիոն ուղուց: Իսկ մեր խնդիրն է փրկել և պատրանքի թավուտներից դուրս հանել հնարավորինս շատ մարդկային հոգիների:

Ներկայումս մենք վիթխարի ջանքեր ենք գործադրում, որպեսզի որքան հնարավոր է շատ մարդկանց գիտակցության մեջ տպավորենք զարգացման աստվածային ուղու կերպը: Եվ մենք դրա համար օգտագործում ենք հնարավոր բոլոր միջոցները: Բայց պետք է ձեզ ասեմ, որ շատ բաներ հնարավոր է անել միայն մարմնավորված վիճակում՝ միայն մարդկային ձեռքերով ու ոտքերով:

Ուստի մենք անխոնջ կերպով ձեզ կոչ ենք անում գործնական քայլերի դիմել ֆիզիկական ոլորտում: Մեր Ուղերձներն օժտված են երկարաժամկետ ազդեցությամբ: Դրանք կարող են ամենօրյա ընթերցողի գիտակցությունը փոխել ընդամենը մի քանի տարվա ընթացքում: Սակայն մեզ հակադիր ուժերը ներդրել են նոր տեխնոլոգիաներ, գիտելիք ստանալու մարդկանց բնական ցանկությունը փոխարինել են տեղեկատվություն ստանալու ձգտմամբ:

Գիտելիք ստանալն ու տեղեկատվական հետաքրքրասիրությունը բավարարելը տարբեր բաներ են:

Գիտելիքները հավերժ են, իսկ տեղեկատվությունը շատ արագ հնանում է: Մշտապես գտնվելով տեղեկատվական հոսքի մեջ՝ դուք կորցնում եք վերլուծելու և զանազանելու կարողությունը: Չանագանման հատկանիշն արգելափակվում է նոր տեղեկատվական տեխնոլոգիաներով: Եվ եթե դուք դեռևս հակված չեք հավատալու Բարձրագույնին, տիեզերակառույցի բանական լինելուն, վերջին հաշվով, հակված չեք հավատալու Աստծուն, ապա գործնականում որևէ հնարավորություն չունեք պատրանքի բավիղից դուրս գալու դեպի հավերժական կյանք:

Ես եկա ձեզ նախագգուշացնելու, որ մոտակա ժամանակներում ձեզնից յուրաքանչյուրը պետք է գիտակցական ընտրություն կատարի՝ արդյոք շարունակելու՝ է անմտորեն ցած սահել դեպի անհավատության ու տգիտության անդունդը, թե՛ հայացքն ուղղելու է դեպի աստվածային գիտակցության զագայթները:

Պատրանքը հնազանդորեն դեպի ձեզ է շրջվում իր այն կողմով, որը դուք ակնկալում եք տեսնել:

Եթե դուք համակված եք կյանքից անընդհատ հաճույքներ ստանալու մշտական ցանկությամբ, ապա հանկատարորեն ձեզ կմատուցվեն այդ հաճույքների ավելի ու ավելի նրբակերտ ձևեր: Իսկ եթե ներքին որոշում կայացնեք մղվելու դեպի աստվածային Ուղին, ապա ձեր կյանքում կգտնեք անհրաժեշտ ամեն ինչ, որ կօգնի ձեզ դուրս գալու Էվոլյուցիոն զարգացման ամուր ճանապարհի վրա:

Բոլոր բանալիներն ու մեխանիզմները թաքցված են ձեր ներսում, և միայն դուք եք որոշում կայացնողը: Ոմանք լայն ճանապարհով գնում են ոչ մի տեղ չտանող ուղղությամբ, ոմանք էլ գտնում են այն նեղ արահետը, որը տանում է դեպի հավերժական Կյանք:

Ընտրությունը ձերն է:

ԵՍ ԵՄ Գուան Ինը

Վեհապետ Կուրթումի
26 դեկտեմբերի, 2013 թ.

**Եթե չեք մտածում Աստծո մասին,
ուրեմն ինքներդ ձեզ հեռացնում եք Աստծուց**

ԵՍ ԵՄ Կուրթումի:

Ես այսօր եկել եմ, որպեսզի խոսեմ գլխավորի մասին՝ այն մասին, թե որն է ձեր ժամանակների օրախնդիր հարցը:

Ձեր կարծիքով, ի՞նչն է ձեզ համար ամենագլխավորը:

Շատերը կասեն, որ իրենց համար ամենագլխավորը փողն է: Մյուսները կասեն՝ առողջությունը:

Որոշները կխոսեն այն մասին, որ իրենց պակասում է սիրո զգացումը, որը կուզենային տաժել ուրիշ մեկի նկատմամբ:

Շատ բաներ կան, որ կուզենայիք ունենալ ձեր կյանքում, և միշտ ձեզ թվում է, թե այդ ձեր ուզածը հենց ամենագլխավոր բանն է, որ կա...

Ես չեմ վիճի ձեզնից ոչ մեկի հետ: Քանզի ինքներդ եք ընտրում, թե ինչով զբաղվեք ձեր կյանքում: Եվ ես չեմ եկել, որ ձեզ հակաճառեմ, թե ձեր կյանքի զբաղմունքները սխալ են կամ ոչ ճիշտ:

Ես եկել եմ ուղղակի հիշեցնելու, թե որն է իրականում գլխավորը ձեզ համար, որն այլևս առկա չէ մարմնավորված մարդկանց մեծ մասի կյանքում: Անշուշտ, խոսքս վերաբերում է Աստծո հետ ձեր միասնությանը:

Աստծո հետ միասնության զգացումը, այն Աստծո հետ, որն առկա է ձեր, ձեր մերձավորների, ընկերների, Կյանքի յուրաքանչյուր մասնիկի ներսում, մարդկության կողմից կորսված է:

Եվ եթե ձեզ հաջողվեր վերագտնել այդ միասնությունը, ապա ձեզնից ամեն ոք երջանիկ ու խաղաղված կզգար իրեն: Դուք կզգայիք լիակատար պաշտպանվածություն ու հանդարտվածություն:

Ի՞նչ կասեք, ճիշտ գուշակեցի՞, թե ինչն է պակասում ձեր կյանքում...

Դուք կարող եք այդ պակասող բանը տարբեր կերպ անվանել, բայց իրականում ներկայումս ձեր կյանքերում աղետալիորեն պակասում է հատկապես այս տիեզերքի Արարչի և Կյանքի յուրաքանչյուր մասնիկում Նրա դրսևորման հետ ձեր միասնության զգացումը:

Ինչու՞ է այդպես ստացվել:

Ինչու՞ եք կորցրել ձեր միասնությունը:

Ինչու՞ եք ձեզ այդպես միայնակ ու անպաշտպան զգում:

Ինչու՞ է ձեր հասարակությունում գերակշռող զգացում դարձել ահը...

Իմ այս Ուղերձով ես պատրաստ եմ պատասխանելու բոլոր այդ հարցերին:

Հենց դրա համար եմ եկել:

Եվ սկսեմ նրանից, որ հենց ինքներդ եք պատճառ դարձել Աստծո աշխարհից կտրվածության համար: Հավանաբար շատ անգամ եք լսել, որ ձեզ հետ տեղի ունեցող ամեն ինչի համար ինքներդ եք մեղավոր: Անշուշտ, դա այս տիեզերքի հիմնական օրենքի՝ Կարմայի և հատուցման օրենքի հիմնական դրույթն է:

Այն ամենը, ինչ ունենք ներկայում, իրենց պատճառներն ունեն անցյալի մեր նախընտրանքներում ու արարքներում: Հետևաբար ինքներդ եք պատճառ հանդիսացել այն վիճակի համար, որում ժամանակի այս պահին հայտնվել եք դուք և ձեր հասարակությունը:

Վաղուց ինչ-որ ժամանակ դուք կատարել եք առաջին քայլը՝ հեռանալով ի սկզբանե ձեզ տրված միասնությունից: Այդ քայլը դեպի բաժանում էր տանում: Այդ քայլով դուք որոշեցիք ինքներդ լինել ձեր ճակատագրի տերը: Եվ նախընտրեցիք գործել համաձայն ձեր ցանկությունների ու հակումների:

Կամքի ազատության տեսանկյունից դուք բացարձակապես ճիշտ եք վարվել: Ուղղակի որոշել եք ի հայտ բերել ձեր անհատականությանը բնորոշ հակումներն ու տաղանդները:

Ձեր այդ ընտրությունը տեղի է ունեցել միլիոնավոր տարիներ առաջ: Այդ ժամանակից սկսած՝ շրջակա նյութական աշխարհն անընդհատ փոխվել է դեպի թանձրանալու կողմը: Եվ հիմա ձեր շուրջը տեսնում եք հենց այն, ինչը մեծ հաշվով ստեղծված է ձեր գիտակցությամբ ու այն գործողություններով, որոնք ձեռնարկել եք՝ հիմնվելով ձեր ազատ կամքի վրա:

Բայց ինչու՞ հիմա ձեզ երջանիկ չեք զգում...

Ինչու՞ ուրախ չեք...

Ինչու՞ համակված չեք այն սիրով, որն այս տիեզերքի յուրահատկությունն է...

Արդյոք այդ ամենի պատճառն այն չէ՞, որ ինքներդ ձեզ կտրել եք Աստծո աշխարհից:

Ձեր մեջ շատե՞րը կան արդյոք, որ օրվա ընթացքում մտածում են Աստծո մասին: Այն Աստծո մասին, որը ներկա է ամբողջ Արարչությունում, և դուք էլ, ըստ էության, նրա մարմնավորված մասն եք:

Եթե չեք մտածում Աստծո մասին, ուրեմն ինքներդ ձեզ հեռացնում եք Աստծուց: Եվ Աստծուց այդ ինքնահեռացումը նստած է ձեր գիտակցության մեջ:

Մենք ընդհուպ մոռեցանք որոշում կայացնելուն, թե ինչպես վերագտնել Աստծո հետ միասնությունը և դրա հետ կապված անդորրության, ուրախության, երջանկության և խաղաղվածության վիճակը:

Ձեզ հարկավոր է միայն մշտապես մտածել Աստծո մասին, որպեսզի նրան վերադարձնեք ձեր կյանք: Ծատ պարզ ու հասարակ որոշում է, այնպես չէ՞. ուզու՞մ ես երջանիկ լինել. եղի՞ր երջանիկ...

Բայց հենց որ ձեր գիտակցության մեջ կայացնում եք այդ պարզ որոշումը և ձգտում այն իրագործել, ձեր կյանքում տառացիորեն սկսում են անսպասելի հրաշքներ տեղի ունենալ. շրջակա ամեն ինչը սկսում է ձեզ խանգարել, որ չհետևեք ձեր որոշմանը՝ Աստծո հետ միասնական դառնալուն: Նախ և առաջ ձեզ սկսում են տիրել ձեր սեփական մտքերը: Ձեր մարմնական խելքը մեկը մյուսի հետևից ձեզ նորանոր գաղափարներ է հրամցնում: Օրինակ՝ սկսում եք մտածել, որ նախքան կյանքն Աստծուն նվիրաբերելը լավ կլինի գնալ ծով՝ հանգստանալու: Կամ մտածում եք, թե դեռ վաղ է ձեր կյանքն այդպես սահմանափակելը, քանի որ դեռ կարգին չեք սիրել ձեր սիրած

աղջկան (կամ տղային): կամ էլ մտածում եք, թե նախ պետք է բավականաչափ փող կուտակել, որ հետո հանգիստ հնարավորություն ունենաք ամբողջ մնացած կյանքը նվիրաբերելու Աստծուն:

Ձեր ներքին ցանկությունները տարածությունից համապատասխան հնարավորություններ են մոտեցնում, որպեսզի դուք իրականացնեք դրանք: Երկար բաժանումից հետո հանկարծ զանգ եք ստանում ձեր սիրեցյալից: Կամ հանկարծ բարձր վարձատրվող աշխատանք են առաջարկում ձեզ: Կամ էլի նման մի բան: Եվ դուք իսպառ մոռանում եք Աստծուն: Դուք ամբողջովին թաղվում եք ձեր շուրջը եղած կյանքի հոգսերի ու տպավորությունների մեջ:

Մի՛ կարծեք, թե իմ նկարագրածները վատ բաներ են և արժանի համընդհանուր պարսավանքի: Ո՛չ: Այդպիսին է ընդհանուր իրավիճակը, որը ներկայումս հաստատվել է աշխարհում: Բոլոր մարմնավորվածներիդ այդ իրավիճակի պատանդներն են: Դուք գտնվում եք պատրանքային ուժերի լարած թակարդում:

Եվ եթե պատրանքի լարերից դուրս գալու ոչ մի ելք չիկներ, ապա ո՛չ ես, ո՛չ էլ մյուս Վեհապետներն իզուր չէինք վատնի մեր ժամանակը, որպեսզի գանք և տանք մեր Ուղերձները:

Այնուհանդերձ ես պնդում եմ, որ մեր Ուղերձները կարդացողներից յուրաքանչյուրն ունակ է իր հենց այս մարմնավորման ընթացքում այնքան թուլացնել պատրանքային ուժերի ազդեցությունը, որ նրանք այլևս չկարողանան կառավարել և մեքենայություններ անել իր հետ և դրանով իսկ դառնալ իր ճակատագրի տերը:

Հենց դրա համար ենք մենք գալիս և ուսուցանում ձեզ:

Իրականում պատրանքից դուրս գալու ելքը շատ պարզ է: Եվ այդ ելքը ձեր գիտակցության մեջ է:

Դուք որոշում եք կայացնում ազատվելու պատրանքային ուժերի ազդեցությունից:

Եվ ամեն օր առավոտից երեկո հետևողական եք լինում ձեր այդ որոշման մեջ:

Եթե մշտապես նույն ուղղությամբ գնաք, ապա կհասնեք ձեր նպատակին:

Իսկ եթե օրվա ընթացքում փոխեք ձեր շարժման ուղղությունը, առավոտվանից շարժվեք Աստծո կողմը, իսկ կեսօրից սկսեք բավարարություն տալ ձեր քմայքներին, ապա երբեք չեք հասնի ձեր նպատակին՝ Աստծո հետ միասնությանը:

Իսկ ամենից շատ ի՞նչն է ձեզ խանգարում:

Հենց ինքներդ:

Ձեզ հարկավոր է միայն հաղթահարել ձեր մարմնական խելքի դիմադրությունը: Եվ այդ է հիմնականը, որ պետք է անեք: Դրա համար գոյություն ունեն ճշմարիտ հոգևոր գործառնություններ, որոնք օգնում են ձեր գիտակցությունը մշտապես պահելու Աստծո ուղղությամբ:

Դուք ամեն օր պետք է ժամանակ հատկացնեք հոգևոր գործառնություններին: Ոչ մի օր չեք կարող բաց թողնել: Քանզի հենց որ դադարեք վերելքի վրա ոտնակները պտտեցնել, անմիջապես հետ կգլորվեք դեպի ստորին լանջերը, որից հետո հարկ կլինի նորից սկսել վերելքը դեպի գագաթ:

Ահա սրանք են այն հիմնական սկզբունքները, որոնք կօգնեն ձեզ, եթե վճռական եք տրամադրված վերագտնելու Աստծո հետ միասնության ձեր վիճակը:

ԵՄ ԵՄ Կույթումին

Վեհապետ Մորիա

27 դեկտեմբերի, 2013 թ.

Դուք պարտավոր եք Աստծուն վերադարձնել ձեր կյանք

ԵՄ ԵՄ Էլ Մորիան...

Այսօր ես ձեզ այցի եմ եկել...

Ո՛վ, իմ սիրելի սաներ, սիրելիներ՛ս, ամեն անգամվա հետ իմ գալուստն ավելի ու ավելի տխուր է դառնում:

Այո՛, ես ստիպված եմ փաստել, որ իմ աշակերտներից շատ շատերը, որոնց հետ ես հույսեր էի կապել, դուրս եկան Ուղուց:

Պատրանքը, նրա դյուրանքներն Ուղուց հանեցին իմ ամենանվիրյալ աշակերտներից շատերին, որոնք շատ մարմնավորումների ընթացքում մնում էին ինձ հետ:

Եվ ահա այսօր ես այսպիսի տխուր փաստ եմ արձանագրում:

Ի՞նչ անել հիմա... Արդյո՞ք խուճապահար լինել ու հուսալքվել...

Ասեմ ձեզ, որ մեր խնդիրները բնավ չեն փոխվել: Եվ քիչ քանակով նույնպես մենք ունակ կլինենք վիթխարի աշխատանք կատարելու...

Մարմնավորման մեջ գտնվող իմ աշակերտներից յուրաքանչյուրն իր քաշով մեկ ոսկի արժե: Նրանցից ամեն մեկը ստիպված կլինի մարտնչելու հազարապատիկ գերազանցող պատրանքային ուժերի դեմ:

Ի՞նչ արած, սա առաջին անգամը չէ: Հապա հիշե՛ք ձեր մարմնավորումն Արթուր թագավորի օրոք...

Արթնացրե՛ք ձեր ասպետական ոգին և նվիրվածությունն Աստծուն:

Պետք է ձեզ ասեմ, որ Վեհապետների բոլոր պլանները չէ, որ ընթանում են այնպես, ինչպես նախապես ծրագրված էին: Մենք մեկը մյուսի հետևից պարտություններ ենք կրում և կորցնում մեր ամենավորձառու մարտիկներին: Ծառ ցավալի է... Այնուհանդերձ ես ձեզ կոչ եմ անում մշտապես ընթանալ միայն Բարձրագույն ուղով...

Միայն այն դեպքում եք դուք անխոցելի դառնում մեզ հակադիր ուժերի համար, երբ ձեր գիտակցությունը մշտապես կենտրոնացնում եք առ Աստված:

Միայն ու միայն նվիրվածություն Աստծո Կամքին...

Միայն հաղթանակի հասնելու վճռականություն...

Միայն անխորտակ մնալու ցանկություն...

Ես գիտեմ, որ ծանր է վիճակը: Գիտեմ, որ շատերն են շեղվել Ուղուց: Բայց նաև գիտեմ, որ Լույսի ու խավարի միջև ճակատամարտի ելքն արդեն կանխորոշված է: Եվ գիտեմ, որ Եղբայրության ամեն մի հավատարիմ զինակից ունակ է դիմագրավելու մահվան ու դժոխքի ամբողջ հրոսակախմբերի:

Ոգու՛ Ասպետներ, հարկ է միաբանվել վճռական ճակատամարտից առաջ...

Պետք է ասեմ, որ ձեզ հարկ կլինի դրսևորելու ձեր բոլոր ունակություններն ու շնորհները: Պետք է դեն նետեք այն ամենը, ինչը ձեզ կապում է պատրանքին ու նրա դրսևորումներին՝ լինեն դրանք ձեզնից դուրս, թե ձեր ներսում:

Հենց հիմա՛ է ժամը... Հենց հիմա՛ պետք է անսասան մնալ և ուժերի գերակշռություն ստեղծել ճակատամարտի վճռորոշ հատվածում:

Ուստի ես կարծում եմ, որ պետք չէ վիատվել, պետք չէ խուճապի մատնվել:

Հարկավոր է վերադասավորել մարտական շարքերը և մղվել դեպի հաղթանակ:

Այո՛, ամեն ինչը չէ, որ ստացվում է: Այո՛, թվային գերակշռությունը դեռս մեզ հակադիր ուժերի կողմն է:

Սակայն մենք չենք հոգնում ձեզ համար կրկնելուց, որ Հաղթանակը Լույսի ուժերի կողմը կլինի, քանի որ այդպիսին է համայն այս Տիեզերքի Օրենքը...

Ձեր մարմնավորման մեջ լինելու յուրաքանչյուր րոպեին ու վայրկյանին դուք պետք է գիտակցեք Աստծո հետ ունեցած ձեր կապը: Միայն այդ դեպքում եք դուք ստանում Լույսի անխոցելի պաշտպանությունը:

Միայն այդ դեպքում է, որ դուք կկարողանաք ընթանալ դեպի հաղթանակ:

Իսկ երբ սկսում եք տրտնջալ և ձեր անհաջողությունների պատճառները փնտրել ձեզնից դուրս, երբեք չեք հասնի հաղթանակի:

Ձեր բոլոր անհաջողությունների ու պարտությունների պատճառները ձեր ներսում են:

Երբ թուլացնում եք ձեր Հավատը, կորցնում կապը ձեր Ոգու հետ, խոցելի եք դառնում հակադիր ուժերի համար: Կասկածի ու վիատության որդը թափանցում է ձեր գիտակցության մեջ և անխուսափելիորեն ծնում պարտության տրամադրություն:

Ուստի ամեն օր անխոնջ կերպով ձեզ վրա պատասխանատվություն՝ն վերցրեք աշխարհի ճակատագրի համար...

Ամեն օր պահպանե՛ք ձեր մարտական ոգին և նվիրվածությունն Աստծուն...

Ես գիտեմ, որ հակադիր ուժերը կիրառում են ամենանեղ հնարքները: Եվ ասում եմ ձեզ, որ պաշտպանված ու ամխոցելի լինելու համար դուք պետք է միշտ պահպանեք Աստծո հետ ձեր կապը:

Օրվա մեջ քանի՞ ժամ եք մտածում Աստծո մասին...

Շաբաթվա քանի՞ օրն եք նվիրում աղոթքային արթնությանը...

Տարվա մեջ քանի՞ օր եք կատարում Աստծո և Վեհապետների գործերը...

Հարկ է, որ հաշվապահական հաշվարկը կատարեք այն ժամանակի, որը դուք նվիրաբերում եք Աստծուն ու Վեհապետներին:

Այնժամ ձեզ համար պարզ կդառնա ձեր անհաջողությունների ու պարտությունների պատճառը:

Ես պարզ ձևակերպեցի՞ արդյոք ձեր առջև ծառացած խնդիրները:

Ձեր պասսիվության ու ծուլության համար ոչ մի արդարացում չկա և չի կարող լինել:

Վառարանի մոտ պառկելու հնար չկա, երբ թշնամին գերում է ձեր հողը, ձեր զավակներին ու հարազատներին:

Ամեն ոք պատրանքային ուժերի դեմ պետք է մարտնչի տասը հոգու փոխարեն:

Իսկ մի հոգին կարող է դիմակայել հազարին, եթե Աստծո հետ է:

Ես անձամբ կգամ ու կգորեղացնեմ յուրաքանչյուրին, ով այս ժամանակներում վճռականություն կցուցաբերի սեփական կյանքի, սեփական հեղինակության գնով դիմակայելու պատրանքի ուժերին:

Երկրում տիրող այս իրավիճակում ոչինչ նշանակություն չունի, բացի մի բանից. դուք պարտավոր եք Աստծուն վերադարձնել ձեր կյանք...

Դա պետք է անեք ամեն գնով՝ անգամ սեփական կյանքի:

Ես օրհնում եմ ձեզ, որ մարտական սխրանք գործեք հանուն Կյանքի...

ԵՄ ԵՄ Էլ Մորիսն

Ուղերձների 20-րդ շրջան (հունիս, 2014 թ.)

Սանատ Կումարա
20 հունիսի, 2014 թ.

Ձեր խնդիրը ձեր հոգիները պահպանելն է

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան:

Այս օրով ես եկել եմ ճիշտ և ճիշտ մեր որոշած ժամին:

Եվ ինչպես միշտ, մտադիր եմ օգտագործել այս աստվածային հնարավորությունը, որպեսզի ներկայումս Երկրում ապրող մարդկությանը փոխանցեմ մեր գիտելիքն ու Երկրում տեղի ունեցող փոփոխությունների մեր ըմբռնումը:

Մեր նախորդ Ուղերձներում մենք բազմիցս հայտարարել ենք, որ Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտի թրթռանքները բարձրանում են: Մենք ասել ենք, թե ինչ պետք է ձեռնարկել, որպեսզի ձեր սեփական թրթռանքներն ու ձեր գիտակցության մակարդակը համապատասխանեն նոր իրականությանը:

Ձեզնից նրանք, ովքեր անշեղորեն հետևել են մեր հանձնարարականներին, աննախադեպ թռիչք են ունեցել իրենց զարգացման մեջ: Նրանց առջև բացվել են ներքին զարգացման չտեսնված հնարավորություններ ու հեռանկարներ: Նրանք աստվածային հնարավորության ալիքի վրա են, ինչը հոգուն թույլ է տալիս նոր մակարդակով շարունակել սեփական էվոլյուցիան:

Ձեզ տրվել է այդ հնարավորությունը... Դուք կարողացա՞ք բռնել մեր օգնության ձեռքը և օգտվեցի՞ք մեր խորհուրդներից:

Բայց մարդկության մեծամասնության հետ դա տեղի չունեցավ: Մարդիկ ընկան էներգիաների շրջապատյալի մեջ և չեն գիտակցում տեղի ունեցող գործընթացների ամբողջությունը:

Նրանք ընկել են այնպիսի դրության մեջ, երբ նոր էներգիաները նրանց էության միջից դուրս են հանում բոլոր կարմայական աստվածքներն ու հին էներգիաների բոլոր շերտերը: Դա նման է այն հիմնարար մաքրմանը, որը դուք կատարում եք ձեր տներում: Դուք թափ եք տալիս հին իրերի փոշին, ավում եք աղբը, և որոշ ժամանակով ձեր շուրջն առաջանում է քառս ու թափթփված վիճակ:

Մի՞ սպասեք, թե ինչ-որ մեկը կգա և կարգուկանոն կհաստատի ձեր տանը: Ձեր էության ներսում կարգուկանոն կարող եք հաստատել միայն դուք և ուրիշ ոչ ոք:

Ուստի մենք նախապես զգուշացրինք, որ ձեզնից յուրաքանչյուրը, որ անցումային այս ժամանակահատվածում ապրում է մոլորակի վրա, պարտավորված կլինի և կանի իր ընտրությունը:

Իսկ հիմա, անկախ մոլորակի անմխիթար վիճակից, ձեզ աննախադեպ հնարավորություն է տրվում ձեր սեփական զարգացման համար:

Այն, ինչ առաջ՝ նախորդ դարերում, հանգիստ պահված էր ձեր էության խորքում, ներկայումս, շնորհիվ բարեփոխությունների էներգիաների, ելնում է մակերես:

Դուք կարող եք դա զգալ ինչպես ինքներդ ձեզ վրա, այնպես էլ տեսնել տառացիորեն ամենուրեք:

Լա՞վ է դա, թե՞ վատ... Անշուշտ, ֆիզիկական ոլորտում բարեհաջող գոյատևելու համար դա այնքան էլ լավ բան չէ: Բայց ձեր հոգու համար հսկայական հնարավորություն է:

Մենք նախապես՝ այս պահից տասը տարի առաջ, վիթխարի աստվածային Ողորմածություն ստացանք մեր Ուղերձները ձեզ փոխանցելու համար: Այդ Ուղերձների նպատակը էներգետիկական թռիչքին ձեր հոգիները նախապատրաստելն էր:

Եվ իսկապես, շատերը ստացան այդ նախապատրաստությունը: Մենք միայն ափսոսում ենք, որ մեր այդ օգնությունն ու օժանդակությունը ստացած մարդկանց քանակն այնքան էլ մեծ չեղավ:

Անգամ այնպիսի մարդկանց շարքերում, որոնք իրենց կարմայով ու թրթռանքի մակարդակով կարող էին հաղորդակցվել մեր Ուղերձներին, շատ չեղան այն անհատները, որոնք ճշգրտորեն հետևեցին մեր հանձնարարականներին:

Դուք կարողում եք մեր Ուղերձները և շարունակում ապրել նախկին կենսակերպով: Դուք չեք կարողանում հավատալ, որ պարզապես հետևելով մեր հանձնարարականներին՝ հնարավոր է էապես հեշտացնել գոյատևումը և միանգամայն որոշակիորեն փրկել հոգին:

Հավատի պակասը խնազարում է մարդկանց, որ մեր հանձնարարականները լուրջ ընդունեն: Հավատի պակասը լուրջ փորձաքար է դարձել շատ հոգիների համար:

Հիմա ես ձեզ կբացատրեմ, թե ինչու եք դուք վախենում հավատալ և ինչու եք գոլշավորություն ցուցաբերում ամեն մի նոր ուսմունքի և անգամ հին կրոնների նկատմամբ:

Մարդկային կյանքի ոչ մի բնագավառում այնքան աղավաղումներ չկան, որքան հավատի բնագավառում: Եվ դա հասկանալի է և լիովին արդարացված: Ըստ էության, հավատի հարցը ամենազլխավոր հարցն է ցանկացած մարդկային անհատի համար. Չէ՞ որ եթե հավատում եք և անկեղծ եք հավատում, ապա արդեն իսկ փրկված եք:

Այդ պատճառով մեզ հակադիր ուժերն անում են ամեն ինչ, որպեսզի ձեր աշխարհում վարկաբեկեն ճշմարտության ցանկացած աղբյուր և ցանկացած ճշմարիտ Ուսմունք: Ամենատարածված եղանակը բազմաթիվ կեղծ ուսմունքներ և աղանդներ ստեղծելն է: Ստի այդպիսի առատության պայմաններում կորսվում է ոչ միայն հավատը, այլ նաև լավագույն ապագայի հույսը:

Հաջորդ մեթոդը, որն օգտագործում են մեզ հակադիր ուժերը, խաբեությունն ու զրպարտանք սերմանելն է: Ամեն ճշմարիտ բան աղճատվում է և խառնվում կեղտի հետ: Դա վանում է ճշմարտությունը որոնողներից շատերին և նրանց հանում զարգացման աստվածային ուղուց:

Իսկ ի՞նչ են նրանք առաջարկում դրա փոխարեն. բազմաթիվ գայթակղություններ, շատ թակարդներ են լարում ֆիզիկական ոլորտում, որոնց մեջ հայտնված մարդիկ կտրվում են զարգացման էվոլյուցիոն ուղուց:

Ձեր Ուղին Ձեռնադրումների Ուղին է: Այդ Ուղու վրա ձեզ սպասում են ամենադժվարին փորձություններն ու խոչընդոտներ:

Միայն հավատով ուժեղագույնն ունակ կլինի հաղթահարելու ֆիզիկական աշխարհի բոլոր թակարդներն ու գայթակղությունները:

Ուստի ձեր ամբողջ կյանքի ընթացքում ինքներդ ձեզ միշտ հիշեցրե՛ք Աստծո և Բարձրագույն Իրականության մասին:

Ձեր կյանքի և ոչ մի ժամն առանց Աստծո չպետք է անցնի: Միայն այն դեպքում, երբ մշտապես կենտրոնացած եք Բարձրագույն Իրականության վրա, դուք անխոցելի եք դառնում մեզ հակադիր ուժերի համար. դուք զանազանման կարողություն եք ստանում, որն օգտակար է ձեր հոգին պաշտպանելու այն ամենից, ինչն անդառնալի վնաս է հասցնում նրան:

Նորից եմ ձեր ուշադրությունը հրավիրում այն բանի վրա, որ ներկայումս տեղի է ունենում հետագա զարգացմանն ունակ հոգիների գտում այն հոգիներից, որոնք դրան այլևս ունակ չեն:

Ձեր ժամանակը հոգևոր աճի հսկայական հնարավորություն է տալիս ձեզ: Դուք հեշտությամբ կարող եք զանազանել, թե ով որ ուժերի կողմից է: Քանզի ո՛չ քաղաքական գործիչները, ո՛չ ֆինանսական ձեռնածուները, ո՛չ իշխանավորներն այլևս չեն կարողանա դեմքերին պահել իրենց բարեւես դիմակները:

Բոլոր դիմակները պատռված են, և ականհայտ է դարձել, թե ով ո՛ր կողմից է հանդես գալիս:

Իսկ եթե դուք պարզ տեսնում եք ու գիտեք, թե ով է հանդես գալիս ոչ աստվածային ուժերի կողմից, և վախից կամ շահամոլությունից դրդված՝ շարունակում եք նրանց օժանդակել, ապա փաստորեն դուք հանդես եք գալիս հենց այդ ուժերի կողմից:

Ուստի նախքան ձեր կյանքում որևէ որոշում ընդունելը մի լավ կշռադատե՛ք բոլոր այն հետևանքները, որ այդ որոշումը կթողնի առաջին հերթին ձեր հոգու վրա:

Ֆիզիկական մարմինը հողին կմնա, իսկ ձեր խնդիրը ձեր հոգին պահպանելն է:

Դրա համար էլ բոլոր ժամանակների բոլոր իմաստունները գերադասել են կորցնել իրենց մարմինը, բայց պահպանել հոգին:

Մտածե՛ք իմ այս Ուղերձի շուրջ:

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան: ՕՄ

Տեր Ծիվա
21 հունիսի, 2014 թ.

Հասել է ձեր գործելու ժամանակը

ԵՄ ԵՄ Ծիվան...

Այսօր՝ ամառային արևադարձի այս օրով, ես այցի եմ եկել ձեզ...

Եվ, ինչպես միշտ, վճռական եմ և անդրդվելի:

Մեր հետևորդներին ներկայացվող պահանջներն օրեցօր մեծանում են:

Եվ դա լիովին արդարացված է: Եթե մի քանի տարի առաջ մենք ջանում էինք ձեզ ուսուցանել և խրատել, ապա հիմա ուսուցման ժամանակն ավարտված է, և հասել է վճռական գործողությունների ժամանակը:

Թերսոփորածը լրացնելու հնարավորություն այլևս չկա:

Ահա ձեզ ասում եմ՝ իրավիճակն օր օրի, անգամ ժամ առ ժամ շիկանում է:

Հենց հիմա վրա է հասել այն պահը, հանուն որի ձեզնից շատերը մարմնավորվել են:

Մոլորակի համակշռությունը խզվելու եզրին է:

Երկրում խաղաղությունը տառացիորեն մազից է կախված:

Եվ ձեզնից շատերը, փոխանակ Աստծո Աշխարհը պաշտպանելու պատրանքի ուժերից, որոշել են հանգստանալ, կարծես թե աշխարհում ոչինչ տեղի չի ունենում:

Ահա ասում եմ ձեզ՝ մեզ հակադիր ուժերն անում են ամեն ինչ, որ Երկիր մոլորակում հետագա էվոլյուցիոն զարգացումը դառնա անհնարին:

Ահա ասում եմ ձեզ՝ հենց հիմա է այն պահը, երբ պետք է գործադրեք ձեր բոլոր ջանքերը, ունակությունները, տաղանդն ու հմտությունը, որպեսզի նախ և առաջ վերականգնեք ուժերի ներքին համակշռությունը, ապա վճռական հարձակման անցնեք արտաքին աշխարհում:

Դուք պարտավոր եք ձեր աշխարհում վերականգնել աստվածային կարգը...

Եթե առաջվա պես այնպիսի տեսք ընդունեք, թե իբր ոչինչ տեղի չի ունենում, և եթե անտեսեք մոլորակում աստվածային կերպերը պահպանելու ձեր պարտքը, ապա կկորցնեք ձեր մոլորակը՝ այն հարթակը, որի վրա ընթանում է միլիարդավոր հոգիների զարգացումը:

Դուք պատասխանատու՝ եք Երկիր մոլորակի համար...

Դուք չե՛ք կարող ոչինչ չանել...

Խաղաղ ուսուցման համար հատկացված ժամանակն սպառված է...

Հասել է վճռական գործողությունների ժամանակը...

Ցուցադրե՛ք, թե ինչ եք սովորել անցած այս 10 տարիների ընթացքում, երբ ուսում էիք առնում Համբարձյալ Դասերի դեկավարությամբ...

Մոլորակի համակշռությունը կարելի կլինեք պահպանել աղոթքային Արթնության օգնությամբ: Անձամբ ես մեր դեսպանորդի միջոցով այս տարվա մարտի 23-ին ձեզ խնդրեցի աղոթքային Արթնության միջոցով էներգիա հղել Վեհապետներին:

Եվ եթե ընդամենը տասը հազար մարդ արձագանքեին իմ կոչին, ապա մեզ կհաջողվեր դեռևս զարնանային գիշերահավասարի օրերին մոլորակի իրավիճակը շրջել դեպի խաղաղ հուն:

Սակայն աղոթողների քանակը հազիվ հասավ երկու հազար հոգու:

Սկզբնական շրջանում նուրբ ոլորտում կազմավորվող ցանկացած բացասական էներգիա կարելի է մարել աղոթքի օգնությամբ: Սակայն գալիս է այնպիսի պահ, երբ բացասական էներգիաները սկսում են իջնել ֆիզիկական ոլորտ: Իսկ այդպիսի պահերին արդեն ձեզնից պահանջվում է ոչ միայն աղոթքային էներգիա, այլ նաև կոնկրետ աշխատանք ֆիզիկական ոլորտում:

Լինելիության ամեն մի ոլորտում պետք է հակահարված տրվի բացասական էներգիաներին...

Ես ձեզ կհիշացնեմ Օրենքը. երբ մարդկության Մեծագույն Ուսուցիչները գալիս են, որպեսզի Ուսմունք տան մարմնավորված մարդկությանը, նշանակում է՝ մոլորակին սպառնում են համամոլորակային բացասական գործընթացներ:

Մենք մարդկությանը միշտ հնարավորություն ենք տալիս ընթանալու ամենահեշտ ուղով՝ սեփական գիտակցությունը փոխելու ուղով:

Մենք Ուսմունք ենք տալիս, որի շնորհիվ հաշված տարիների ընթացքում կարելի է փոխել մարմնավորման մեջ գտնվող անհրաժեշտ քանակությամբ մարդկանց գիտակցությունը:

Մենք դրա համար վիթխարի քանակությամբ Աստծո էներգիա ենք ծախսում, որպեսզի մեր Ուղերձները փոխանցենք ձեր աշխարհին:

Սակայն վրա է հասնում այնպիսի պահ, երբ մարդկությունը հրաժարվում է ընթանալ հեշտ ուղով:

Ավելի ու ավելի է շատանում այն անհատների թիվը, որոնց հետ մենք հույսեր ենք կապում, իսկ իրենք գայթակղվում են պատրանքի մոգությամբ և դուրս գալիս Ուղուց:

Եվ ահա այդ պահը վրա է հասել:

Այնժամ, երբ մարդկությունը զանգվածաբար հրաժարվում է ընթանալ գիտակցությունը փոխելու հեշտ ուղով, ուժի մեջ է մտնում կարմայի օրենքը:

Ցանկացած կարմա կարելի է մեղմել մտքի և հույզի մակարդակով: Իսկ դրա համար անհրաժեշտ է ընդունել սխալները և ապաշավել:

Երբ հեշտ ուղին մերժվում է, կարման սկսում է իջնել ֆիզիկական ոլորտ: Որոշակի պարբերականությամբ դա տեղի է ունենում սովորականից ավելի եռանդուն կերպով:

Ամեն անգամ՝ հերթական համաշխարհային պատերազմից առաջ, մենք համաձայնության ենք գալիս այս Տիեզերքի Բարձրագույն Խորհրդի հետ և թողության շնորհ ենք ստանում մեր Ուսմունքը փոխանցելու համար: Մենք դա անում ենք այն հույսով, որ մարդկությունը կհամաձայնի ընթանալ գիտակցությունը փոխելու ուղով:

Բայց ամեն անգամ մեր փորձերն անհաջողության են մատնվում, և մենք չենք կարողանում հասնել այն բանին, որ մարմնավորման մեջ գտնվող հարկ եղած քանակի անհատներ ընթանան մատնանշված Ուղով:

Եվ այդ հրաժարվելուն միշտ հաջորդում է կարմայի իջնելը:

Ես պետք է ձեզ հայտնեմ, որ ցանկացած պահի հնարավոր է վերադառնալ հեշտ ուղուն: Նաև պետք է հայտնեմ, որ պատերազմները, արհավիրքները տարերային աղետները Տիրոջ պատիժը չեն:

Բոլոր այդ երևույթները մարմնավորման մեջ գտնվող մարդկանց գիտակցության արգասիքներն են: Հատուցումը՝ որպես հետևանք, անխուսափելիորեն հաջորդում է իրեն ծնող պատճառին:

Մարդկության գիտակցության փոփոխությունը, միևնույնն է, տեղի է ունենալու: Դա անխուսափելի է, ինչպես արևածագը: Այստեղ հարցը միայն այն է, թե տառապանքների ի՞նչ քանակություն է պահանջվում, որպեսզի մարդկությունը վերջապես քաղի իր դասերը:

Իմ այս Ուղերձը ես տալիս եմ այն հույսով, որ թեկուզ քիչ քանակությամբ մեր աշակերտները կկարողանան համախմբվել և գործել:

Անհրաժեշտ է, որ լինելիության բոլոր ոլորտներում և մարդկային գործունեության բոլոր բնագավառներում դուք կարողանաք կանխել մեզ հակադիր ուժերի բոլոր դրսևորումները:

Եվ որքան ավելի կուռ համախմբված գործեք, այնքան ավելի շատ մահերից, բռնություններից ու դժբախտություններից կհաջողվի խուսափել:

Հասել է ձեր գործելու ժամանակը...

Հենց հիմա...

ԵՄ ԵՄ Շիվան

Տեր Սուրիա
22 հունիսի, 2014 թ.

Ուսմունք գիտակցության փոփոխության մասին

ԵՄ ԵՄ Սուրիան:

Ես կրկին եկել եմ մեր դեսպանորդի միջոցով:

Այսօրվա մեր գրույցը նվիրված կլինի ամենակենսական հարցին, այն է՝ ձեր գիտակցության փոփոխությանը:

Առանց չափազանցության կարելի է ասել, որ գիտակցության փոփոխության հարցը ոչ միայն ամենակարևորն է, այլև գիտակցության փոփոխությանը վերաբերող Ուսմունքը հենց այն հիմնական Ուսմունքներից մեկն է, որը Կարմայի և Վերամարմնավորումների Ուսմունքների հետ մեկտեղ մենք փոխանցում ենք ձեզ մեր դեսպանորդի միջոցով:

Եթե ձեր կյանքի նշանակալի ժամանակահատվածի ընթացքում դուք ամեն օր առաջնորդվեք այդ երեք հիմնական Օրենքներով, ապա կկարողանաք ապահովել ձեր հոգու անմահությունը:

Իհարկե, եթե դուք Աստծուն չեք հավատում և չեք հավատում համայն այս Տիեզերքում գործող Բարձրագույն Օրենքին, ապա մեր Ուսմունքը ևս ձեզ վրա հարկ եղած ազդեցությունը չի գործի:

Այնուհանդերձ վերադառնանք գիտակցության փոփոխությանը վերաբերող Ուսմունքին:

Ես մեկ անգամ ևս ձեր ուշադրությունը հրավիրում եմ այն բանի վրա, որ այդ Ուսմունքն ունակ է ապահովելու ձեր հոգու անմահությունը: Ինչու? Որովհետև ձեր աշխարհն արտացոլված պատրանքային աշխարհ է: Եվ փաստորեն դուք հայտնվում եք այն արտաքին պատրանքի մեջ, որը համապատասխանում է ձեր գիտակցության մակարդակին:

Ամեն մարդ իր սեփական պատրանքի մեջ է գտնվում: Եվ, գտնվելով մեծ քաղաքի կենտրոնում և հանդիպելով հազարավոր մարդկանց հետ, ձեզնից յուրաքանչյուրի պատկերացումն արտաքին աշխարհի մասին կլինի հենց այն, ինչը համապատասխանում է ձեր գիտակցության մակարդակին:

Օրինակ՝ միևնույն փողոցով անցնող երկու մարդկանց պատրանքները տարբեր կլինեն, եթե նրանց գիտակցությունների մակարդակները տարբեր են:

Նրանցից մեկն իր շուրջը կտեսնի միայն բացասական բաներ՝ անորակ ապրանքների գովազդ, աղբ, ճշուն հագուստներով կանանց:

Մյուսը, որի գիտակցության մակարդակն ավելի բարձր է, ուշադրություն կդարձնի ժպտացող երեխաների, ամպերի, սիրագորով մայրերի գեղեցկության վրա:

Այդ երկու մարդկանցից ամեն մեկն իր պատրանքի մեջ կգտնվի:

Աստված այնքան մեծահոգի է, որ ամեն մարդու թույլ է տալիս գտնվել իր պատրանքի մեջ, որը նրա զարգացման համար տալիս է լավագույն հնարավորություններ:

Մեր Ուսմունքին բնորոշ է այն, որ սեփական պատրանքի մեջ գտնվող ամեն մարդու թույլ է տալիս ստանալ այն ուղղության ըմբռնումը, որով նա կարող է ընթանալ ու կատարելագործվել՝ մոտենալով աստվածային կերպերին:

Մենք ըմբռնում ենք տալիս առ այն, թե ինչպես պարզ ու մատչելի հնարքներով գիտակցությունը փոխել այնքան, որ շրջապատի պատրանքը ձեզ երևա իր աստվածային կողմով:

Մեր հանձնարարականներն այնքան պարզ են, որ հասկանալի են անգամ երեխայի համար:

Եթե դուք մշտապես հեռուստատեսությամբ անորակ հաղորդումներ եք դիտում, լսում ձեր էությունն ավերող երաժշտություն, ինքներդ ձեզ մթազնում թմրանյութերով, ալկոհոլով ու ծխախոտով, ուտում անորակ սնունդ, ապա տարօրինակ չի՞ լինի արդյոք, որ հայտնվեք աստվածային կերպերին մոտ իրականության մեջ...

Նման բան ձեզ հետ տեղի չի ունենա, քանի որ դուք ամեն ինչ անում եք, որ ինքներդ ձեզ կտրեք աստվածային հնարավորությունից ու դրսևորումից:

Սակայն Աստված ձեզ համար միշտ հնարավորություն է թողնում. դուք կարող եք ջանքեր գործադրել և մեկը մյուսի հետևից հրաժարվել վատ սովորություններից: Դուք կարող եք աստիճանաբար ձեր էությունը մաքրել ամեն մի վնասակար ու անբարո բանից և որոշ ժամանակ անց կկարողանաք նկատել, թե ինչպես է փոխվում արտաքին շրջապատը: Դուք աստիճանաբար կանցնեք մի այլ պատրանքի մեջ, որը կհամապատասխանի ձեր փոխված գիտակցությանը:

Ըստ էության, ես ձեզ տվեցի Ուսմունքի բուն էությունը՝ նրա միջուկը:

Եվ եթե դուք լուրջ ու խոհուն կերպով մոտենաք մեր Ուսմունքների ուսումնասիրությանը, ապա կբացահայտեք, որ ամբողջ տասը տարվա ընթացքում մենք ձեզ ուսուցանում ենք մի պարզ ճշմարտություն՝ փոխել սեփական գիտակցությունը:

Տասնյակ Ուղերձներով մենք անխոնջ կերպով նույն բաներն ենք կրկնում. ինքներդ ձեզ շրջապատեք ճշմարիտ աստվածային կերպերով, հրաժարվե՛ք անկատար բաներ դիտելուց, հրաժարվե՛ք վնասակար սովորություններից, և ձեր առաջ կբացվի Աստծո Աշխարհը:

Իհարկե, մենք լիովին հաշվի ենք առնում, որ մեր լսարանը չափազանց փոքր է, որպեսզի առանձին անհատների գիտակցության փոփոխության միջոցով բավականաչափ արագ փոխվի մոլորակի իրադրությունը:

Սակայն ես կրկնում եմ նորից ու նորից. կա և միշտ գոյություն ունի այնպիսի հավանականություն, որ մոլորակի իրադրությունը փոխվի մեր Ուսմունքին անկեղծորեն հետևող ընդամենը մի քանի հազար մարդու օգնությամբ:

Մեր Ուսմունքն օժտված է մարդկանց սրտերի մեջ ներթափանցելու և նրանց ներքին ջահերը վառելու կարողությամբ:

Եվ նույնիսկ եթե դուք չկարողանաք փոխել մոլորակի իրադրությունը, բայց անկեղծորեն մղվեք դեպի ամենայն Աստվածայինն ու բարեպաշտ կյանք վարեք, ապա ձեր հոգու համար անմահություն կվաստակեք:

Իսկ եթե անկեղծ սրտով տարածեք մեր Ուսմունքը և պատրաստ լինեք զոհաբերելու սեփական կյանքը՝ հանուն Երկրում ճշմարտության տարածման ու մարդկանց հոգիների փրկության, ապա մեր աշխարհում կարժանանաք ամենաբարձր պատիվների:

Ես նաև ասում և կրկնում եմ ձեզ համար, որ Աստծո ճշմարտությանը Ծառայելու ուղին, գիտակցության փոփոխման ուղին հեշտ չի լինի ձեզ համար: Քանզի հենց որ սկսեք փոխել ձեր թրթռումները՝ հետևելով վարքի աստվածային ձևաչափերին ու բարձր բարոյական նորմերին, անմիջապես արտաքին աշխարհը կսկսի հակադրվել ձեզ: Դուք այդ աշխարհում եք գտնվում, բայց նրան արդեն չեք պատկանում: Եվ քանի որ արտաքին աշխարհի թրթռանքն ավելի ցածր է, ապա այն ինքնաբերաբար կսկսի հակադրվել ձեզ:

Դուք կբախվեք և՛ գայթակղությունների, և՛ ուղղակի ընդդիմության: Բայց չեք կարողանա կռվիլ՝ կռվով և բռնությամբ՝ բռնությամբ պատասխանել, քանզի դա ձեզ համար քայլ կլինի դեպի ետ:

Միայն ձեր Ոգու ուժով կարող եք չեզոքացնել արտաքին ընդդիմությունն ու ձեզ դեռևս բնորոշ բացասական էներգիաների ներքին դիմադրությունը:

Մեր հետևորդներից շատերը համարում են, որ իրենք գտնվում են շատ բարձր ոգեղեն մակարդակի վրա: Նրանք համարում են, որ իրենց Ոգու ուժով կարող են ընդդիմանալ արտաքին ազդեցություններին: Սակայն նրանցից շատերն իրականում գտնվում են Ուղով առաջընթացի

ընդամենն առաջին աստիճանների վրա: Դուք ինքներդ ձեր էության ներսում պետք է զգաք այն նուրբ եզրագիծը, որը ձեզ հեռացնում է այն պահից, երբ արդեն ձեր Ոգու ուժով կարող եք դիմագրավել արտաքին ազդեցություններին: Իսկ մեր մյուս հետևորդները պետք է ակտիվորեն ընդդիմանան արտաքին անկատարությանը:

Դուք պետք է գործեք, պետք է ակտիվ մասնակցություն ունենաք արտաքին գործունեության բնագավառում և ձեռք բերեք սեփական փորձ: Եվ միայն բարոյականության և ԱստծոՕրենքի կողմնակցի կարգավիճակով մի քանի մարմնավորում ունենալուց հետո է, որ դուք այնքան կամրացնեք ձեր Ոգին, որ միայն ձեր այդ Ոգու ուժով կարողանաք հակադրվել արտաքին բացասական ուժերին:

Գաղտնիքի կարգով ասեմ, որ մարմնավորվածների մեջ հենց հիմա կան մարդիկ, որոնք մեզ ընդդիմադիր ուժերին հակադրվում են իրենց Ոգու ուժով: Սակայն դուք նրանց անունները երբեք չեք իմանա: Այդ եզակի քաջարի մարդիկ ամեն ինչ անում են, որ մարդկային անկատար գիտակցության պատճառով չոչնչանա Երկրի ֆիզիկական հարթակը:

Իսկ դուք, որ կարդում եք այս Ուղերձները, պետք է ձեր բոլոր ուժերն ու կարողություններն ակտիվորեն կիրառեք ֆիզիկական ոլորտի ձեր գործողություններում: Միայն համատեղ դրական ակտիվ գործողությունների միջոցով է հնարավոր բեկում առաջացնել աշխարհում հաստատում գտած բացասական միտվածության մեջ:

ԵՍ ԵՄ Սուրիան, այսօր եղա ձեզ հետ

Աթենաս Պալլաս
23 հունիսի, 2014 թ.

Ես սովորեցնում եմ ձեր գիտակցության մեջ հաղթահարել բռնությունը

ԵՍ ԵՄ Աթենաս Պալլասը՝ ձեզ այցի եկածը:

Հասել է Ճշմարտության այն անկեղծ որոնողներին խրատներ տալու և ուղերթի խոսքեր ասելու ժամանակը, ովքեր հետաքրքրություն են ցուցաբերում մեր կողմից տրվող Ուսմունքի նկատմամբ:

Ես պետք է ձեզ ասեմ, որ մենք ոչ միշտ ենք գոհ լինում մեր ուսուցման արդյունքով: Լինում են երջանիկ պահեր, երբ մեր Խոսքից բոցավառվում են մարդկանց սրտերը, և մենք գոհունակությամբ նկատում ենք, թե մարդն ինչպես է բառացիորեն ծաղկում աչքի առաջ: Նրա ամբողջ էությունը պայծառակերպվում է Ճշմարտության Լույսով, և Մերը, աստվածային Մերը բառացիորեն դուրս է հորդում նրա աչքերից:

Բայց և լինում է դրա հակառակը, երբ մարդը մեծ դժվարությամբ է գտնում մեր Ուսմունքը՝ մեր Ուղերձները: Որոշ ժամանակ նա տարվում է դրանցով՝ փորձելով հասկանալ մեր տված Գիտելիքի հիմունքները: Բայց այդ ժամանակն անցնելուց հետո նա թողնում է մեր Ուղերձներն ընթերցելը և հեռանում, որպեսզի Ճշմարտություն գտնի բոլորովին ուրիշ տեղում:

Մենք շատ ենք ցավում նման դեպքերի համար, բայց ոչինչ չենք կարող անել, քանի որ Ազատ Կամքի Օրենքը մեզ թույլ չի տալիս միջամտել մարդկանց որոշումներին:

Սակայն մենք չենք դադարում հուսալ, որ վաղ թե ուշ մարդկությունը կկարողանա հաղթահարել իր անիրական մասի դիմադրությունը և վերջապես կհայտնվի աստվածային մտքի լայնարձակության մեջ:

ԵՍ ԵՄ Աթենաս Պալլասը՝ Ճշմարտության Աստվածուհին. ես նաև վերահսկում եմ մարդկային կյանքի ուրիշ շատ բնագավառներ: Եվ այսօր ես առանձնահատուկ ուրախություն եմ ապրում մեր այս հանդիպման առիթով, քանի որ այս Ուղերձը տալիս եմ իմ սիրելի Հելլադայի տարածքում:

Օ՛, դուք չեք կարող պատկերացնել, թե որքա՛ն ուրախ եմ ես, ինչպե՛ս է ցնծում իմ էությունը...

Հինավուրց Հելլադան... Որքա՛ն դարեր են անցել այն ժամանակներից, երբ այս վայրերում բնակվող մարդիկ երկրպագում էին ինձ, իմ պատվին կառուցում տաճարներ ու սրբարաններ:

Եկան ուրիշ ժամանակներ, և հիմա մարդիկ ուրիշ Աստվածների են երկրպագում: Սակայն ես չեմ կորցնում իմ հույսը, որ կգա այնպիսի ժամանակ, երբ բոլոր մարդիկ կհամակվեն ու կլցվեն Աստծո այն Ճշմարտությամբ, որ ամբողջ աշխարհը հենց ինքն է Աստծո Ճշմարտության արտահայտություն: Ամբողջ աշխարհն Աստծո նվերն է ձեզ՝ ձեր հոգիներին, որ օգնի ձեզ զարգանալու և ճանաչելու ինքներդ ձեզ ու շրջակա աշխարհը:

Որքա՛ն հրաշալի ու գեղասքան է բաներ կան այդ աշխարհում: Որքա՛ն շատ բան է Աստված անվարձահատույց տվել մարդկությանը՝ որպես պարգև: Դա և՛ արևածագն է ու մայրամուտը, և՛ արևի ջերմությունը, և՛ թռչունների դայլայլը, և՛ ծաղիկների փթթումը, և՛ գեփյուռի երգն ու առուների խոխոջումը:

Որքա՛ն նվերներ է տվել Աստված մարդկությանը...

Սակայն մարդկությունը երես է թեքել Աստծո նվերներից: Անգամ անմահությունը, որ ձեր հոգիներին պարգև է տրվել արարման օրից, դուք այլևս որպես այդպիսին չեք ընկալում:

Դուք զարմանալի համառությամբ ստեղծում եք ձեր սեփական անաստված նմուշները և դրանց երկրպագում, ինչպես ոսկե հորթին՝ դրանց սնուցելով ձեր ստացած Աստծո էներգիայով:

Կար հեռավոր մի ժամանակ, երբ ես ներկա էի մարդկանց միջավայրում: Ես մարդկանց ասում էի, որ կգան այնպիսի ժամանակներ, որ իրենք կմոռանան Աստծուն և իմ գոյությունը: Բայց ոչ ոք ինձ չէր հավատում:

Եվ ահա հիմա, երբ ես խոսում եմ Աստծո, Համբարձյալ Դասերի մասին, քերը կան, որ հավատում են մեր իրական գոյությանը:

Քանզի ձեր գիտակցության մեջ կա տեղեկատվության հսկայական զանգված, սակայն ճշմարտությունը, Աստվածային ճշմարտությունը լքել է ձեզ:

Ուստի ձեր հիմնական խնդիրը պետք է լինի Աստծո ճշմարտությունը ձեր աշխարհ վերադարձնելը, որին կհետևի աստվածային ներդաշնակության ու անդորրի վերադարձը, և ձեր գոյությունը կլցվի իմաստով:

Ներկայումս դուք խորասուզված եք ձեր իսկ հորինած խնդիրների մեջ: Ձեզ լրջորեն հուզում են բաներ, որոնք արժանի չեն ձեր ուշադրությանը: Դուք խորասուզվել եք այնպիսի խնդիրների ու վիճակների մեջ, որոնք չպետք է լինեն ձեր աշխարհում: Եվ որքան շատ եք ուշադրություն դարձնում այդ վիճակներին, այնքան ավելի շատ եք դրանց սնուցում ձեզ հատկացված Աստծո էներգիայով:

Բոլոր այն հորինովի բաները, որոնք բազմացվում են զանգվածային լրատվության միջոցներով, ձեր էներգիայի շնորհիվ լիովին ձեռք են բերում ֆիզիկական կերպարանքներ:

Դուք հնազանդորեն ձեր էությունը ենթարկում եք զանգվածային լրատվության միջոցների բազմացրած ստի ամբողջ հոսքի ազդեցությանը, և ստի այդ հոսքը ձեզ ստիպում է կատարել այնպիսի գործողություններ, որոնց մասին ամոթով կհիշեք ձեր ֆիզիկական մարմնի մահից հետո, երբ հայտնվեք մեր մենաստաններում: Դուք սարսափով կհիշեք այն իրավիճակները, որոնք ինքներդ էիք ստեղծել ստահող ներշնչանքների և բացահայտ ստերի ազդեցության տակ:

Ես և մյուս Վեհապետները մշտապես հանդիպում ենք այնպիսի հոգիների հետ, որոնք չեն կարողանում դուրս գալ շոկային ցնցումից, երբ նրանց հայացքի առջև հառնում է իրենց վերջին մարմնավորման ընթացքում գործված չարի ամբողջ ահավոր պատկերը:

Այդպիսի հոգիներից շատերը նորից են ուզում մարմնավորվել, որպեսզի քավեն իրենց գործած մեղքերն ու կեղտոտ արարքների հետևանքները: Սակայն մենք տեսնում ենք, որ հոգին այնքան խոր վերքեր է ստացել, որ հարյուրավոր տարիներ են պետք, որպեսզի կրկին ձեռք բերի աստվածային անդորր ու ներդաշնակություն, ապա մարմնավորվի իր կարման գիտակցված ձևով բեռնաթափելու ցանկությամբ:

Ես գիտեմ և տեսնում եմ, թե երբեմն որքա՛ն դժվար է լինում այն մարդկանց հոգիների համար, որոնք մարմնավորվում են անցյալում իրենց գործած մեղքերը քավելու նպատակով: Այդ մարդիկ տառապում են և ենթարկվում ահավոր փորձությունների:

Պահանջվում է ի մի բերել ամբողջ արիությունը, դրսևորել վիթխարի անձնագոհություն, որպեսզի նրանք արժանավայել կերպով անցնեն բոլոր փորձությունները՝ իրենց ձեռքերը կրկին չթաթախելով արյան մեջ: Քանզի եթե մարդը զենք է վերցնում ձեռքը, որպեսզի վրեժ լուծի, և դրանով իսկ ձեռքերը թաթախում է արյան մեջ, ապա բազմաթիվ մարմնավորումների ընթացքում իր հոգուն զրկում է հոգևոր ուղով առաջ ընթանալու հնարավորությունից:

Եվ հակառակը, նա, ով հաղթահարում է վրեժ լուծելու ցանկությունը և հնազանդորեն կրում իրեն բաժին հասած փորձությունները, հաջորդ մարմնավորման ընթացքում իր առջև բացում է աստվածային Ուղին:

Ես այն Աստվածուհին եմ, որ նաև ռազմական արվեստի բնագավառից եմ խրատներ տալիս: Եվ իմ Մենաստանում այդ բնագավառից խրատներ տալուս ընթացքում հոգուն ուսուցանում եմ զենքի կիրառումը տարբերակելու ուղիները: Եթե դուք զենք եք վերցնում ոչ թե վրիժառության կամ շահադիտական նպատակով, ինչպես վարվում են վարձու մարդասպանները, այլ սեփական հայրենիքը, սեփական տունն ու ընտանիքը պաշտպանելու ազնիվ նպատակով, ապա նույնիսկ ձեր գործած սպանության կարման անհամեմատ ավելի թեթև կլինի, քան այն մարդկանց կարման, որոնք սպանություն են գործում զավթման ու շահադիտական նպատակներով:

Չենք ձեռքն առնելու մարդկանց շարժառիթները տարբեր են լինում: Ցավոք, ինչպես հազար տարի առաջ, մարդկության կարման չի կարող հանգուցալուծվել առանց բռնության ու արյունահեղության:

Սակայն ցանկացած արյունահեղություն պետք է որպես դաս ընկալել ձեր հոգու համար: Տեղի ունեցածի նկատմամբ ճիշտ արձագանքն ու ճիշտ գնահատականը ունակ են ձեր գիտակցության մեջ բեռնաթափելու բռնության կարման՝ առանց հետագայում ֆիզիկական ոլորտում նոր բռնություն գործելու:

Այսպիսով, ես ուսուցանում եմ հաղթահարել բռնությունը գիտակցության մեջ:

Դուք կգարմանաք լսելուց, բայց անհամեմատ մեծ կարմա են ստեղծում ոչ այն մարդիկ, որոնք բռնություն են գործում, այլ նրանք, ովքեր իրենց գիտակցությամբ օժանդակում են բռնությանը:

Քանզի այն բռնությունը, որ հիմա է տեղի ունենում, այն ագրեսիայի հետևանքն է, որը նախկինում տեղ է գտել ձեր գիտակցության մեջ: Բայց եթե հիմա ձեր գիտակցության մեջ ագրեսիվություն կա, ապա այն պատճառ կդառնա հետագա արյունահեղության:

Նախ դուք ձեր գիտակցության մեջ պայմաններ եք ստեղծում ատելության, հակակրանքի ու ագրեսիայի համար, որից հետո այդ ամենը իջանում է ֆիզիկական ոլորտ պատերազմների, արյունահեղությունների ու ահաբեկչական գործողությունների տեսքով:

Մտածե՛ք այսօրվա իմ ասածների շուրջ: Եվ պատճառներ մի՛ ստեղծեք ապագա դժբախտությունների համար:

ԵՄ ԵՄ Աթենաս Պալասար

Հաութամա Բուդդա
24 հունիսի, 2014 թ.

Ուսմունքի ամենակարևոր ու կենսական դրույթները՝ ժամանակի այս պահի համար

ԵՄ ԵՄ Հաութամա Բուդդան:

Ես կրկին ձեզ այցի եմ եկել, քանի որ մարդկության համար այս դժվարին պահին չէի կարող չգալ:

Իմ պարտքը օգնություն ցուցաբերելն է: Եվ օգնության ձևերից մեկը, որ մենք՝ Համբարձյալ Դասերս, կարող ենք ցուցաբերել մարդկությանը, մեր խրատներն ու մեր ուսուցումն են:

Ինչպես միշտ, ես կաշխատեմ կարճ Ուղերձի շրջանակներում արտահայտել մեր Ուսմունքի՝ տվյալ պահի համար ամենակարևոր ու կենսական դրույթները:

Եվ այսպես, դուք բոլորդ գիտեք և ձեր կյանքերում կարող եք զգալ, որ ապրում եք շատ կրիտիկական ժամանակներում:

Փաստորեն մարդկության հավաքական գիտակցությունն ընտրություն է կատարում, թե ո՞ր ճանապարհով է ընթանալու մարդկության հետագա զարգացումը:

Դուք կա՛մ սեփական փորձերի ու սխալների ճանապարհով այնուամենայնիվ կընտրեք զարգացման Աստվածային Ուղին (անվանենք այն էվոլյուցիոն ուղի), կա՛մ էլ կիրառարվեք Երկրի մարդկության համար համայն այս Տիեզերքի Արարչի նախանշած Ուղուց՝ աստիճանաբար ապրելով հետընթաց ու անկում:

Մարդկային կյանքի բոլոր բնագավառներում կան երկու հիմնական մոտեցումներ՝ աստվածային և ոչ աստվածային:

Օրվա ընթացքում ձեր կատարած բոլոր որոշումները բաժանվում են աստվածայինի և ոչ աստվածայինի:

Հեշտ է պատկերացնել, թե որքան արագ կարելի կլինեք որակապես փոխել ձեզ շրջապատող ֆիզիկական աշխարհը, եթե մարմնավորման մեջ գտնվող անհատականություններից յուրաքանչյուրն ամեն օր նախընտրեր միայն աստվածայինը:

Բայց քանի որ մարդկանց մեծ մասն այնքան էլ հաճախ չի խորհում Աստծո Օրենքի մասին, ապա շատ դժվար և անգամ անհնարին է դառնում Այդ Օրենքին համապատասխան գործելը:

Ավելի վաղ ժամանակներում մշտապես գոյություն ունեին հատուկ հաստատություններ, որոնք մարդկանց հիշեցնում էին Բարձրագույն Իրականության գոյության մասին: Առավել հաճախ դրանք եկեղեցու ինստիտուտը, քրմական դասն ու հոգևորականներն էին լինում:

Սակայն աստիճանաբար այդ հաստատությունները կորցրին իրենց այդ առաքելությունը և հենց իրենց ներսում բաժանվեցին երկու խմբի՝ Աստծո հետևորդների և նրանց ընդդիմադիր ուժերի:

Այն մարդկանց համար, ովքեր հեռու են կրոնական ճշմարտություններից, ավելի ու ավելի դժվար է դառնում պարզելը, թե եկեղեցու այդ ներկայացուցիչներից ով որ դիրքն է զբաղեցնում:

Նույն վիճակն է տիրում նաև մարդկային կյանքի մնացած բոլոր բնագավառներում:

Կան մարդիկ, ովքեր իրենց ներսում Լույս են կրում, և նրանց բոլոր որոշումները լուսավորված են ճշմարտության Լույսով. բայց և կան մարդիկ, ովքեր խավարի ուժերի ներկայացուցիչներ են: Եվ այդ երկու տեսակի մարդկանց գործողությունները լրիվ հակառակ են միմյանց:

Քանի որ կյանքի ցանկացած բնագավառում կան այս կամ այն տեսակետը քարոզողներ, ապա հանրության ներսում մշտապես պայքար է ընթանում Լույսի և խավարի, աստվածայինի և ոչ աստվածայինի միջև:

Եվ քանի որ մարդկությունն, իր ամբողջությամբ վերցրած, այնքան էլ հաճախ չի խորհրդածում Բարու և Չարի, Լույսի և խավարի մասին, ապա սովորական ապրողի համար ավելի ու ավելի անհասկանալի է դառնում, թե իրականում ինչ է կատարվում աշխարհում:

Աշխարհում պայքար է ընթանում Լույսի ու խավարի ուժերի միջև: Եվ այդ պայքարի արդյունքից է կախված, թե հետագա տասնամյակներում ինչ ուղով կընթանա մարդկությունը:

Կախված մարդկության համատեղ կատարած ընտրությունից՝ կա՛մ կտրուկ շրջադարձ կկատարվի դեպի առատությունը, բարգավաճումը, բարոյական նորմերի վերածնունդն ու հավատն առ Աստված, կա՛մ, ընդհակառակը, տեղի կունենա լիակատար անկում և հետընթաց, որը կընդգրկի մարկային կյանքի բոլոր ոլորտները:

Նման իրավիճակում հնարավոր չէ չեզոք դիրք գրավել: Դուք չեք կարողանա ջայլամի պես ձեր գլուխները թաքցնել ավազի մեջ և սպասել ավելի լավ ժամանակների:

Եթե հանրության յուրաքանչյուր անդամը չսկսի ակտիվորեն գործել, ապա ավելի լավ ժամանակները երբեք չեն գա:

Մարդկության պատմության և՛ բարեհաջող, և՛ անբարեհաջող զարգացման ընթացքները հավասարապես հավանական են:

Ես ձեզ պետք է ասեմ, որ երկրագնդում առանձնապես շատ չեն այն մարդիկ, որոնք բացահայտորեն հակաաստվածային հայացքներ են քարոզում և անշեղորեն առաջնորդվում դրանցով:

Միաժամանակ փոքր է նաև այն մարդկանց քանակը, որոնք բացահայտ աստվածային դիրքորոշում ունեն և անշեղորեն Լույսի դիրքերն են պաշտպանում:

Մնացած մարդիկ՝ մարդկության 99 տոկոսը, փոխանցված ընկնում են կա՛մ Լույսի, կա՛մ խավարի ուժերի ազդեցության տակ:

Դա տեղի է ունենում ձեր գիտակցությունից անկախ:

Ահա դուք հեռուստատեսությամբ լուրեր եք դիտել և տեսել բացասական մի իրավիճակ. այնուհետև դուք զգացական արձագանք եք տալիս դրան, և ձեր միտքը սկսում է աշխատել այդ բացասական իրավիճակի քննարկման վրա: Հնարավոր է, որ հետո դուք ուզենաք այդ իրավիճակի մասին խոսել ձեր ընկերների, հարևանների և ծանոթների հետ: Այդպիսով դուք օժանդակում եք բացասական դաշտին և դրանով հանդերձ անցնում եք խավարի ուժերի կողմը:

Դա տեղի է ունենում անգիտակցաբար: Եվ քանի որ ձեր զանգվածային լրատվության միջոցները հիմնականում դեկավարում են այնպիսի մարդիկ, որոնք անաստված հայացքների կրողներ են, ապա, հրապուրվելով նրանց հեռարձակված լուրերով ու հաղորդումներով, ինքներդ վերածվում եք չարի ուժերի հեռարձակիչների:

Իսկ քանի որ մարդկության զգալիորեն մեծ մի հատված իր ժամանակի մեծ մասն անց է կացնում հեռուստահաղորդումներ դիտելով, ապա մարդկության մեծ մասը դառնում է խավարի ուժերի գաղափարների գերին:

Հիմա ի՞նչ եք կարծում. նման դեպքում ո՞ր ուղով կզարգանա մարդկությունը...

Պատասխանն ակնհայտ է:

Իսկ ի՞նչ անել այդ դեպքում:

Այդ հարցի պատասխանը մենք ձեզ հուշում ենք մեր Ուղերձներով:

Մի՛ հրապուրվեք գիտակցության բացասական վիճակներով, մշտապես ձեր գիտակցությունը կենտրոնացված պահեք դրականի վրա, ձեր կյանքից հեռացրեք բոլոր ոչ աստվածային դրսևորումները և ինքներդ ձեզ շրջապատեք լուսավոր աստվածային կերպերով:

Ինչ կլանում եք, դրան էլ վերածվում եք:

Եթե դուք առանց խտրականության ինքներդ ձեզ դնում եք տեղեկատվական հոսքերի ազդեցության տակ, ապա դառնում եք այն բացասականի հեռարձակիչները, որը բազմացնում են զանգվածային լրատվության միջոցները:

Հենց որ բացասականը բույն է դնում ձեր գիտակցության մեջ, քիչ ժամանակ անց այն իջնում է ֆիզիկական ոլորտ՝ զանազան բացասական դրսևորումների տեսքով:

Այդ եղանակով բացասականն ինքնարտադրվում է:

Բայց չէ՞ որ նույն եղանակով կարող է ինքնարտադրվել նաև դրականը...

Երկրագնդի վրա տեղի ունեցող բոլոր գործընթացների կառավարման մեխանիզմը գտնվում է ձեր էության ներսում: Ձեզնից յուրաքանչյուրի ներսում կա յուրատեսակ անջատիչ կամ փական, որը ձեզ ստիպում է կա՛մ աստվածային որոշումներ ընդունել, կա՛մ ընթանալ ոչ աստվածային ուղով:

Եվ ամեն օր մի քանի անգամ դուք առիթ եք ունենում այդ անջատիչը դնելու կա՛մ աստվածային, կա՛մ ոչ աստվածային ուղղության վրա:

Մենք ձեզ ուսուցանում ենք, թե ինչպես զանազանում մտցնեք ձեր կյանքում և պահպանեք Աստծո աշխարհի հետ ձեր համալարվածությունը:

Ձեր առաջին ու ամենակարևոր քայլը կլինի այն, որ հավատաք Աստծո Աշխարհի գոյությանը և կամենաք ծառայել Լուսին:

Եթե դուք վերջնականապես և անդառնալորեն կատարեք այդ ընտրությունը, և մարդկության առավել ակտիվ մասի կրիտիկական մի հատված կատարի նույնը, ապա դուք այլևս վախենալու բան չեք ունենա: Մարդկության հետագա զարգացումը կընթանա Էվոյուցիոն ուղով:

Ուստի մենք խնամքով ձեզ ենք մատուցում մեր Ուսմունքը: Դայքար է ընթանում ամեն մի հոգու համար, նրա փրկության համար:

ԵՄ ԵՄ Հատկաձայն Բողոքանք

Կ-17 – ի Վեհապետ

25 հունիսի, 2014 թ.

Շրջակա ցանկացած իրադրությունում պետք է հավատարիմ մնաք Բարձրագույն իդեալներին

ԵՄ ԵՄ Կ-17-ի Վեհապետը: Ես առաջին անգամն եմ ձեզ այցի գալիս այս դեսպանորդի միջոցով:

Հնարավոր է, որ դուք իմ անունը լսած լինեք նախորդ դեսպանորդներից: Երկիր մոլորակում ես ներկայացնում եմ Տիեզերական Անվտանգության Ծառայությունը:

Այն հանգամանքը, որ այսօր այցելել եմ ձեզ, պետք է հուշի ընթացիկ պահի կարևորության մասին: Քանզի ես հազվադեպ եմ հնարավորություն ստեղծում ինձ հետ հաղորդակցվելու համար:

Եվ այսպես, այսօր ես եկել եմ ոչ այն բանի համար, որ ուսուցանեմ և խրատներ տամ ձեզ: Այսօր ես եկել եմ, որ ձեզ տամ խիստ որոշակի հանձնարարականներ և նախագրուշացումներ:

Իմ տեսանկյունից՝ մոլորակի իրադրությունը հասել է չափազանց վտանգավոր շրջադարձի: Մենք դժվարությամբ ենք զսպում մեզ հակադիր ուժերին: Հիերարխիայի Լուսի ամբողջ հզորությունը հազիվ է բավարարում իրադրության զսպմանը:

Դուք կարող եք դա նկատել այն իրադարձություններից, որոնք տեղի են ունենում Երկրի վրա: Այս ու այնտեղ ակտիվանում են ռազմական հակամարտություններն ու պատերազմական գործողությունները: Այս ու այնտեղ գլուխ են բարձրացնում մարդկային գիտակցության ամենավատթար դրսևորումները:

Շատ ուժեր կան, որոնք չէին ուզենա, որ մարդկությունն ընտրեր զարգացման աստվածային Ուղին: Այդ ուժերը փորձում են անել և կանեն իրենցից կախված ամեն ինչ, որպեսզի հնարավորին չափ մեծ քանակի հոգիների դուրս հանեն աստվածային Ուղուց: Դրա համար կիրառվում են բոլոր եղանակները և օգտագործվում են ամենանենգ հնարքները:

Ձեզ հայտնի է, որ մարդկային կյանքի ամենասուրբ ոլորտներում մեզ հակադիր ուժերը մտցնում են իրենց աղնատումները: Նախորդ Ուղերձներում ձեզ ասվել է պաշտամունքի շատ սպասավորների մասին, որոնք, փաստորեն, չեն ծառայում Աստծուն: Ես հիմա ձեզ կհիշեցնեմ մարդկային կյանքի մի այլ կողմի՝ պատերազմների ու արյունահեղությունների մասին:

Մարդկության զանգվածային գիտակցության մեջ ատելություն և ագրեսիա սերմանելու միջոցով մոլորակի շատ վայրերում տեղի է ունենում զանազան տաք կետերի հրահրում և բորբոքում:

Մարդկանց գիտակցության մեջ ագրեսիան խթանելու գործընթացի էությունը պարզ է: Դա նախ և առաջ տեղեկատվության զանգվածային միջոցներն են, որոնց մեծ մասը գտնվում է մեզ հակադիր ուժերի հովանավորության տակ, և համակարգչային խաղերի արտադրությունը, որ սիրում են խաղալ և՛ երեխաները, և՛ մեծահասակները: Դրանցից շատերն այնպիսի խաղեր են, որոնց մասնակիցները կրակում են զանազան զենքերով և խոցում իրենց հակառակորդներին:

Առաջին հայացքից անվնաս թվացող այս ժամավաճառությունը ձեր ժամանակներում վերածվում է հույժ վտանգավոր աղբյուրի:

Երեխաները միշտ էլ սիրել են կռիվ-կռիվ խաղալ: Դրանով նրանք հմտություն են ձեռք բերում իրենց հայրենիքը պաշտպանող զինվորներ դառնալու համար: Եվ դա քաջակերվում ու ողջունվում էր մեր կողմից: Սակայն հիմա, փոխանակ խթանելու ազնիվ շարժառիթները, խթանվում է սպանության, արյան, ավարառության ծարավը: Եթե համակարգչային խաղերին գումարենք նաև այն ֆիլմերը, որոնք ագրեսիա են քարոզում և գունդ կերպով ցուցադրում մարդկանց սպանություններ, ապա կարելի է ասել, որ երիտասարդ սերնդի գիտակցության մեջ աստիճանաբար լողզվում են բարոյականի ու անբարոյականի, լավի ու վատի եզրագծերը:

Այն երիտասարդները, որոնք դաստիարակվում են համակարգչային մարտախաղերի ու ագրեսիվ մարտաֆիլմերի նման անորակ դրսևորումներով, կորցնում են իրականության զգացողությունը: Գոյություն ունեն շատ կազմակերպություններ, որոնք այդ ֆիլմերով ու խաղերով հիմարացած ջահելներին գրավում են իրենց շարքերը: Եվ բռնության ու ագրեսիայի գաղափարաբանությամբ ուղեղների լվացումից ընդամենը մի քանի տարի հետո այդ ջահելներից կազմավորվում են մասնագիտացած վարձկաններ ու մարդասպաններ:

Առաջին քայլը միանգամայն անվնաս է թվում. 6-7 տարեկան երեխան նստում է համակարգչի առաջ և կրակում խաղալիքային նշանակետերի վրա: 12-13 տարեկանից երեխան արդեն սկսում է բռնությունը խթանող ֆիլմեր դիտել:

Իսկ 16-17 տարեկանից անհատն արդեն պատրաստ է, որ իրեն ներքաշեն վարձկաններ ու մարդասպաններ պատրաստող կազմակերպության մեջ:

Այս եղանակով համակարգը բռնություն է տարածում: Սկզբում բռնությունն ամրապնդվում է գիտակցության մեջ, իսկ տասը տարի հետո այդ բռնությունը դրսևորվում է ֆիզիկական ոլորտում այն երիտասարդների միջոցով, որոնք երբեք չեն լսել Աստծո մասին, բայց բազմաթիվ ժամեր են անցկացրել սպանություններ ու բռնություններ դիտելով:

Այն հանրությունում, որտեղ չի վերահսկվում երեխաների զարգացման բարոյական կողմը, շատ դժվար է արմատախիլ անել բռնությունը:

Ուստի մենք՝ Համբարձյալ Վեհապետներս, գալիս և ձեզ հիշեցնում ենք ֆիզիկական ոլորտում կոնկրետ գործողությունների անհրաժեշտության մասին: Այդ գործողությունները պետք է իրականացնել և՛ օրենսդրական, և՛ հասարակական մակարդակներով, ինչպես նաև աշխարհի բոլոր երկրների պետական կառույցների մակարդակներով:

Կան որոշակի ուժեր, որոնք կրնդդիմանան այդ գործողություններին:

Սակայն ես ձեզ պետք է հիշեցնեմ, որ ձեր խնդիրն է գործել աստվածային վարվելակերպի նմուշներին համապատասխան: Կարևոր չէ՝ արդյունքում ձեր գործերը հաջող կլինեն, թե ոչ: Կարևոր են ճիշտ շարժառիթներն ու ճիշտ գործողությունները:

Հատկապես դա՝ կմնա ձեզ՝ ձեր հոգուն, որպես կենսափորձ, և հենց այդ կենսափորձն է, որ դուք կունենաք ձեր հաջորդ մարմնավորման ժամանակ:

Ինչ վերաբերում է այն կենսափորձին, որը ձեռք են բերում այն անհատականությունները, որոնք ձգտում են ծառայել Լույսին հակադիր ուժերին, ապա դա նույնպես կմնա իրենց հետ: Սակայն կենսափորձ էլ կա, կենսափորձ էլ:

Երբ դուք ընտրում եք աստվածայինը և վարվում բարոյական ու առաքինության ամենաբարձր նմուշներին համապատասխան, դրանով դուք բարձրացնում եք ձեր թրթիռները և վեր բարձրանում էվոլյուցիոն զարգացման պարույրով:

Իսկ երբ ձեր ընտրությունն աստվածայինի կողմը չէ, դուք հայտվում եք գահավիժող պարույրի մեջ, իսկ ձեր հոգին ցած է սահում ինվոլյուցիոն զարգացման աստիճաններով:

Այդպիսով ձեր ժամանակներում տեղի է ունենում հետագա էվոլյուցիայի համար պիտանի հոգիների արագացված գտում այն հոգիներից, որոնք տեղ են գրավում լինելիության ցածրագույն ոլորտներում և աստիճանաբար հեռանում դեպի անէություն:

Ձեր խնդիրն է հասկանալ, որ կարևոր չէ, թե ով ինչպես է վարվում: Աստծո և Նրա դատաստանի առաջ ձեր հոգու համար չի կարող արդարացում լինել այն, որ դուք վարվել եք բոլորի պես:

Ո՛չ, դուք պետք է սովորեք նախընտրել աստվածայինը, նույնիսկ եթե ձեր չորս կողմում բոլորը զբաղված լինեն բացառապես ոչ աստվածային գործերով:

Ներկայումս հենց այդ ձեռնադրումն են անցնում այն հոգիները, որոնք գտնվում են մարմնավորման մեջ:

Ցանկացած շրջակա իրադրության մեջ դուք պետք է պահպանեք ձեր անկախությունը և Բարձրագույն իդեալներին ձեր լիակատար նվիրվածությունը:

Իսկ հիմա, երբ ձեզ նախագգուշացրի ընթացիկ պահի և դրա առանձնահատկությունների մասին, կուզենայի ձեզ փոխանցել ևս մի քանի ուղերձի խոսքեր:
Դուք մարտիկներ եք ձեր աշխարհում...
Դուք Լույսի մարտիկներ եք...
Դուք Ոգու ասպետներ եք...
Երբեք, ձեր կյանքի ոչ մի տեսակի հանգամանքներում մի՛ մոռացեք այդ մասին...
Ձեր պարտքն է ծառայել Աստծուն և համայն Կյանքին...

ԵՍ ԵՄ Կ-17 - ի Վեհապետը

Տիրուհի Նադա
26 հունիսի, 2014 թ.

Ամենից առաջ ընտանիքում պետք է ծլարձակեն ամենաբարձր բարոյական իդեալները

ԵՍ ԵՄ Նադան:

Ես այսօր եկել եմ, որ ձեզ հետ խաղաղ գրույց վարեմ այնպիսի հարցերի շուրջ, որոնք փաստորեն վերաբերում են Երկիր մոլորակում ապրող բոլորին:

Ես կխոսեմ ընտանիքի, օջախի և այն մասին, ինչը մարդկային կյանքի անքակտելի մասն է կազմում, և առանց որի մարդկային կյանքը լիահունչ և ներդաշնակ չէր լինի:

Մարդկանցից շատերը հիապթափված են իրենց ընտանիքից: Նրանք իրենց դժգոհությունն են արտահայտում, իսկ նրանց օջախները վերածվել են կոտանքների խցի:

Ինչու՞ է այդպես լինում: Ինչպե՞ս կարող էր նման բան պատահել, որ շատերի համար ամենասուրբ բանը՝ ձեր երեխաները, չարժանանան սիրո և հոգածության և ստիպված լինեն մեծանալու վիճաբանությունների ու բացահայտ թշնամանքի մթնոլորտում:

Սիրելիներս, չե՞ որ միշտ չէ, որ այդպես է եղել: Եվ ձեր ուժերից վեր չէ, որ ձեր ընտանիքներում վերականգնեք ներդաշնակությունը, սերը և խաղաղությունը:

Կուզենայի խոսել ժամանակակից հանրության մեջ կնոջ դերի մասին: Կուզենայի ձեզ հիշեցնել, որ կինն առաջին հերթին ընտանեկան օջախի, խաղաղության ու հանդարտության պահապանն է:

Հենց որ ամեն մի ընտանիքում և յուրաքանչյուր տան մեջ խաղաղություն, սեր և ներդաշնակություն թագավորի, մեզ հակադիր ուժերի համար շատ դժվար կլինի հանրությանը ապագայի նկատմամբ մշտական վախի մեջ պահելը:

Հատկապես ընտանիքը, նրա բարօրությունն է դրված ամեն մի առողջ հանրության հիմքում:

Իսկ կինն ընտանիքում հատուկ դեր է խաղում: Քանզի հենց նրանից է կախված տան մեջ հոգածության ու սիրո մթնոլորտ ստեղծելը:

Ուստի այսօր ես իմ խոսքն առաջին հերթին ուղղում եմ կանանց: Հանրության մեջ ձեր դերն այժմ ելել է առաջին պլան: Հատկապես ձեզնից է կախված, թե ինչ իդեալներ կդավանի մարդկանց հաջորդ սերունդը: Հատկապես ձեզնից է կախված այն բարոյական սկիզբը, որը դուք ունակ կլինեք ներարկելու ձեր զավակներին, և այն բարոյական սկիզբը, որը դուք ունակ կլինեք պահպանելու ձեր ընտանիքներում:

Ամուսնու և կնոջ հարաբերությունների մաքրությունն ինքնաբերաբար նպաստում է ընտանիքի և երեխաների առողջությանը:

Եթե ձեր հարաբերությունները հիմնված են իսկական սիրո վրա, ապա դուք հավատարիմ եք բարձր բարոյական իդեալներին, և այդ իրադրության մեջ երեխաներն ունակ են դառնում սնուցվելու իսկական, անեղծ սիրով: Եվ մայրական կաթի հետ ստացած սիրո հատկանիշը ձեր երեխաներին կուղեկցի մինչև իրենց կյանքի ավարտը:

Երբևէ խորհե՞լ եք արդյոք այն մասին, որ այս կամ այն պետության ընտանիքների մեծամասնության մեջ աստվածային իրադրության ստեղծումը ընդամենը մի սերնդի կյանքի ընթացքում կարող է այդ պետության հասարակական հարաբերությունները համապատասխանեցնել բարոյականության ու առաքինության ամենաբարձր չափանիշներին:

Ուստի հատկապես ընտանիքի, հատկապես ընտանիքի ներսում երեխաների նկատմամբ վերաբերմունքի բարելավման համար պետք է ջանքեր գործադրի հանրության առաջադեմ հատվածը:

Ընտանիքում երկրորդական հարցեր չեն լինում: Կարևոր է ամեն ինչը: Կարևոր է և՛ երեխայի ծնունդը պլանավորելը, և՛ նրա դաստիարակության ու կրթության մասին հոգալը: Կարևոր է, որ ընտանեկան հարաբերությունները խարսխվեն հոգածության ու խնամքի վրա: Այդպիսի

մթնոլորտում ապագա սերունդն իր մեջ կներառի անհրաժեշտ ամեն ինչ, որպեսզի այն կրի կյանքում և կիրառի ամեն մի բնագավառում:

Խորհե՛լ եք արդյոք այն մասին, թե ինչու՞ եք ընտանիք կազմում. ինչի՞ համար և ի՞նչ նպատակով...

Ինչպես մարդկային գործունեության ցանկացած բնագավառում, ընտանիք կազմելու հարցում նույնպես շատ կարևոր է շարժառիթը:

Եվ եթե դուք ամուսնանում եք միայն այն բանի համար, որ սեքսով զբաղվեք և օրինական հիմքով հագուրդ տաք ձեր սեռական բնագոյներին, ապա, ամենայն հավանականությամբ, որոշ ժամանակ անց ձեր ընտանիքը ձեզ համար կվերածվի բեռի և իսկական տանջանքի:

Որովհետև այն ամենը, ինչ դուք անում եք անձնական հաճույքներ ու վայելքներ ստանալու համար, ձեզ չի կարող իսկական երջանկություն պարգևել:

Իսկ եթե դուք ընտանիք եք կազմում, որպեսզի կյանքում մեկդ մյուսին օգնեք, և ձեր նպատակը երեխաներ ծնելն ու նրանց լավագույն ավանդույթներով դաստիարակելն է, ապա այդ դեպքում ձեր ընտանիքն առավելագույն չափով կմոտենա ձեր իդեալին:

Սակայն որպեսզի ձեր ընտանիքում մշտապես երջանկություն տիրի, անհրաժեշտ է, որ ձեր ընտանիքում առաջին տեղում մնա բարձրագույն բարոյական օրենքի նկատմամբ պաշտամունքը. համընդհանուր լեզվով այդպես է ընդունված ձեր կյանքում անվանել Աստծո Օրենքը:

Այսպիսով, եթե ձեր ամբողջ կյանքի ընթացքում դուք առաջնորդվում եք Բարձրագույն Օրենքով, ապա ձեր ընտանեկան հարաբերությունները կկառուցվեն բարոյականության և առաքինության բարձր չափանիշներով:

Հանդուրժողականությունն ու համբերությունը ամուսինների այն գծերն են, որոնք ուղղակի անհրաժեշտություն են երկարատև ու երջանիկ համատեղ կյանքի համար: Հանդուրժողականությունն ու համբերությունը այն հատկանիշներն են, որոնք բխում են սիրո հատկանիշից, իսկական սիրո հատկանիշից, որը համապատասխանում է աստվածային չափորոշիչներին:

Ինչպես երևի նկատեցիք, ձեր կյանքում ամեն ինչ կախված է այն բանից, թե որքանով եք ունակ Աստծո Օրենքը մտցնելու ձեր կյանք:

Մարդկային կյանքի ցանկացած բնագավառում միշտ կան երկու մոտեցումներ՝ աստվածային և ոչ աստվածային:

Ընտանիքը և ընտանեկան կյանքը որևէ կերպ բացառություն չեն կազմում այդ կանոնից:

Դեռ ավելին, ես ձեզ կասեմ, որ նախ և առաջ ընտանիքում պետք է ծլարձակեն ամենաբարձր բարոյական իդեալները:

Երբ ընտանիք կազմելու ամենասկզբում դուք ճիշտ նկրտումներ ունեք և դրանից հետո ձեր մտադրությունը համբերատար ու պլանաչափորեն պահպանում եք ամբողջ կյանքի ընթացքում, ապա անպայման ամուր ընտանիք կունենաք, որում մշտապես ներկա կլինի երջանկությունը:

Եվ քանի որ ընտանիք կազմելու գլխավոր նպատակներից մեկը մանկածնությունն է, ապա երեխաների ծնվելու մասին հարկավոր է մտածել դեռևս նրանց սաղմնավորվելուց շատ առաջ: Քանզի նախքան այդ որքան կուսական ու մաքուր լինեն ամուսինների միջև հարաբերությունները, այնքան ավելի մեծ կլինի հավանականությունն այն բանի, որ ձեր ապագա երեխայի մեջ կգրավվեք մեծ հոգևոր նվաճումների տեր հոգու:

Ինչու՞ է այնպես ստացվել, որ այդքան շատ երեխաներ են ծնվում, որոնք ժամանակի ընթացքում առաջ են բերում իրենց ծնողների դժգոհությունը:

Պատճառն այն է, որ մանկածնության հարցը ինքնահոսի է թողնված: Ձեզ չի մտահոգում այն, որ բուն բեղմնավորումը պետք է տեղի ունենա որպես Աստծո Արարչության բարձրագույն գործողություն: Չէ՞ որ հենց մանկածնության հարցում է, որ մարդիկ նմանվում են Աստծուն:

Սակայն այդ բարձրագույն արաչական գործողությունը դեպքերի մեծ մասում վերածվում է սեքսուալ քմայքների բավարարման կողմնակի արդյունքի:

Արժե՞ արդյոք այդքանից հետո տրտնջալ երեխաներից... Ո՛չ, համաձայն կարմայի օրենքի՝ դուք բեղմնավորման ու հղիության ընթացքում ձեր երեխայի մեջ այնպիսի հոգու եք գրավում, ինչպիսին ձեր գիտակցության մակարդակն է և այն շարժառիթը, որով ամուսնացել եք: Եվ քանի որ ձեր մանչուկի կյանքի առաջին տարիներին շատ կարևոր է մոր դերը, ապա այդ ժամանակի ընթացքում նա տառաջիկորեն իր մեջ է ներառում ոչ միայն ձեր արարքները, այլև ձեր մտքերը:

Եթե դուք ճիշտ տրամադրվածություն ունեք և ճիշտ շարժառիթներ, ապա ձեր ամեն մի երեխայի ծննդից հետո ձեռք կբերեք երջանկություն և ձեր վաստակը կունենաք հետագա մարմնավորման համար: Եվ անգամ ձեր ընթացիկ կյանքի ուշ շրջանում կարժանանաք ընտանեկան երջանկության վաստակած պարգևների:

Իսկ եթե ձեր երեխաները ձեզ համար պատահական հանգամանքների արյունք են, ապա հազիվ թե դուք երջանիկ լինեք, և հազիվ թե ձեր տանը երջանկություն լինի:

Այս կարճ գրույցում ես չկարողացա շոշափել այն բոլոր հարցերը, որոնք առնչվում են ընտանիքին ու երեխաներին:

Սակայն կարևորն այն է, որ ձեզնից շատերին ես ստիպեցի խորհել այն մասին, թե որքան կարևոր է ձեր կյանքում ամեն ինչ: Ձեր ամեն մի քայլը հետևանքներ է ծնում, որոնք կարող են կա՛մ երջանկություն բերել, կա՛մ դժբախտություն:

Փաստորեն դուք ինքներդ եք ձեր երջանկության կերտողը:

Հարկավոր է միայն մշտապես գիտակից մնալ և մշտապես զգալ Աստծո հետ ձեր միասնությունը:

ԵՄ ԵՄ Նադան

Տիրուհի Պորցիա
27 հունիսի, 2014 թ.

Արտակարգ անսովոր Ուղերձ

ԵՄ ԵՄ Պորցիան...

Ես կրկին եկել եմ և հանձն եմ առնում ձեզ վստահեցնել, որ այսօրվա մեր գրույցն այնքան էլ ուրախ չի լինի:

Ես հենց նոր եմ դուրս եկել Կարմայական Վարչության նիստից, որպեսզի ձեզ փոխանցեմ իմ Ուղերձը: Կարմայական Վարչության նիստը շատ լարված է ընթանում: Մենք փորձում ենք անցած կիսամյակում տեղի ունեցած գոնե մի քանի դրական փաստեր գտնել, որոնք վկայում են մարդկության գիտակցության մեջ տեղի ունեցած դրական փոփոխությունների մասին:

Սակայն մենք չենք կարող վստահ լինել, որ ոչ մեծ քանակությամբ անհատների թեկուզ լիովին համոզիչ քայլերը կարող են բավարար լինել:

Մարմնավորման մեջ գտնվող մեր սաներից մենք ակնկալում ենք ավելի մեծ ճկունություն, առաջադրված խնդիրների ավելի լայն ըմբռնում և մեր աշակերտներին ներկայացված բոլոր պահանջների անվերապահ կատարում:

Եվ առաջին հերթին մեզ անհամոզիչ է թվում ձեր կարգապահության մակարդակը:

Շատերը փորձում են այնպիսի գործեր բռնել, որոնք, իրենց տեսակետից, նպաստում են մարդկության բարօրությանը:

Բայց, ասացե՛ք խնդրեմ, ինչու՞ եք դուք կարծում, որ ձեր արածը համահունչ է այսօրվա մեր պահանջներին...

Մենք հատուկ պահում ու պահպանում ենք մեր Դեսպանորդի առաքելությունը, որպեսզի կարողանանք կենտրոնացնել ջանքերը և մարդկանց փոքր քանակությամբ հասնենք ավելի մեծ արդյունքների:

Սակայն մեր աշակերտներից շատերն իրենց սնապարծության կամ ծուլության պատճառով հորինում են իրենց սեփական պլանները և լուծում այնպիսի խնդիրներ, որոնք կարևոր են, բայց՝ ոչ ժամանակի այս պահի համար:

Մի պահ պատկերացրեք, որ ձեր տանը հրդեհ է բռնկվել: Կրակը տարածվում է և հերթով այրում տան բոլոր իրերը: Իսկ դուք փորձում եք այդ պահին նստել և դաշնամուր նվագել: Արդյո՞ք խելամիտ քայլ կլինի դա, թե՞ համարժեք չի լինի տվյալ իրավիճակին...

Այնուհանդերձ մեր սաներից շատ շատերը շարունակում են զբաղվել այնպիսի գործերով, որոնք ինքնին վատը չեն և նույնիսկ կարող են հանգեցնել իրենց հոգիների զարգացմանը: Սակայն մեր Ուսմունքի անկյունաքարերից մեկը բոլոր կենդանի էակներին օգնություն ցուցաբերելու Ուսմունքն է:

Ձեր ֆիզիկական հարթակը, որը միլիոնավոր տարիների ընթացքում ապահովել է ձեր զարգացման հնարավորությունը, ներկայումս հրատապ օգնության կարիք է զգում:

Մարդկության մտավոր գործունեության արդյունքում ստեղծված ամբողջ բացասական տարածությունը մի անխոցելի գրահի է վերածվել, որի միջով չեն կարողանում անցնել մեր Հիերարխիայի արձակած նույնիսկ չափազանց հզոր փրկարար ճառագայթները:

Դուք պարտավոր եք ձեր բոլոր ջանքերը կենտրոնացնել այն բանի վրա, որ չեզոքացնեք մոլորակում կուտակված բացասականը:

Սակայն վերջին կես տարվա ընթացքում մենք դրա փոխարեն միայն այդ բացասականի մեծացումն ենք տեսնում:

Մենք մեր նպատակներն ու խնդիրները հստակ ենք դնում:

Մենք խոսում ենք աղոթքային արթնության և օրվա մեջ 24 ժամ աղոթքային աշխատանք կատարելու անհրաժեշտության մասին:

Մենք ասում ենք նաև, որ ձեր ժամանակներում միայն աղոթքային աշխատանք կատարելը դեռևս բավարար չէ: Անհրաժեշտ է նաև կոնկրետ ջանքեր գործադրել ֆիզիկական ոլորտում, որպեսզի չեզոքացվի մարդկանց գիտակցությանը տիրած բացասականը:

Մեզ հակադիր ուժերն ավելի գործունյա և կազմակերպված դուրս եկան: Փաստորեն մոլորակի ամբողջ տեղեկատվական դաշտը զավթել են այնպիսի մարդիկ, որոնք ներկայացնում են մեզ հակադիր ուժերի շահերը:

Իսկ ինչու՞, այսպես կոչված, լուսակիրները որպես օրինակ չվերցնեն այն, ինչ արդեն արված է տեղեկատվական դաշտում՝ ներառյալ համացանցը, և ուղղակի «մինուս» նշանը փոխեն «պլուս»...

Գոյություն ունեն մարդկանց զանգվածային գիտակցությունը փոխելու տասնամյակներով մշակված տեխնոլոգիաներ: Սակայն այդ տեխնոլոգիաներն այս պահին աշխատում են Լույսի և զարգացման էվոլյուցիոն ուղու դեմ:

Եվ եթե դուք հապաղեք նաև հաջորդ կիսամյակի ընթացքում, ապա ո՛չ ես, ո՛չ էլ ուրիշ որևէ Վեհապետ չեն խոստանա բարեհաջող ելք առաջարկել այն անհավատության ճգնաժամից, որը համակել է ամբողջ Երկիրը:

Այո՛, հատկապես այն պատճառով, որ աստվածային գիտակցությունն այժմ առկա չէ մարդկանց կյանքերում, մարդկային կյանքի բոլոր բնագավառներում մենք ճգնաժամ ենք արձանագրում:

Ես կնկարագրեմ այն տեխնոլոգիան, որով գործում են խավարի ուժերը:

Սկզբում տարածություն է նետվում ոչ ճիշտ ռիթմ: Դա իր արտացոլանքն է գտնում ժամանակակից երաժշտության մեջ, որն այդքան՝ դուր է գալիս երիտասարդությանը: Զուգահեռաբար աստվածային զգացողությունների փոխարեն տարածվում են թմրանյութեր, որոնք թեև նմանատիպ զգացողություններ են առաջացնում, բայց ամբողջովին քայքայում են մարդու նուրբ մարմինները: Դրանց քայքայումից հետո հիվանդանում և մեռնում է նաև ֆիզիկական մարմինը:

Գործողությունների մյուս փուլը գայթակղություններն են: Ձեզ նախ գովազդ են ցուցադրում, որը գրգռում է ձեր ցանկություններն ու պահանջմունքները:

Այնուհետև ձեզ հանկատարորեն տոկոսով փող են առաջարկում, որպեսզի դրանով գնեք ձեր գայթակղությունը շարժած առարկաներն ու իրեղենը: Արդյունքում՝ մինչև ձեր մարմնավորման ավարտը դուք բռնված եք մնում ֆինանսական կախվածության թակարդում:

Երիտասարդները, փոխանակ լուրջ աշխատանքով զբաղվելու և հաճույք ստանալու իրենց աշխատանքից, ստիպված են լինում ուղղակի փող հայթայթել՝ թղթի կտորներ, որոնք փոխարինում են ընդհանուր բարօրության համար կատարվող իսկական աշխատանքի պարգևած ուրախությանը: Իսկ դրան հետևում է կյանքից դժգոհելն ու ընդվզումը:

Հաջորդ փուլում քարոզվում է բռնություն և ստեղծվում է զենքի և բիրտ ուժի պաշտամունք: Այնուհետև ստեղծվում է թշնամու կերպար, որը ձեր ներսից դուրս է գտնվում՝ որևէ ազգության, երկրի, կամ բառային հասկացության տաքով, որը, կախված կիրառվող գաղափարաբանությունից, իբր երջանիկ ապագայից ձեզ հեռացնող մի արտաքին խոչընդոտ է:

Այդ ամենի արդյունքում երիտասարդների մի սերունդ մյուսի հետևից գոհ է գնում հանուն կեղծ իդեալների և արժեքների: Կարման ավելի ու ավելի է խճճվում ու ծանրանում:

Մենք գալիս և պատրաստի դեղատոմսեր ու բացատրություններն ենք տալիս այն ամենի համար, ինչ տեղի է ունենում Երկրի վրա:

Բացի այդ՝ մենք ձեզ հստակ ցույց ենք տալիս Ուղին և շարժման ուղղությունը:

Սակայն մոլորակի վրա բնակվող միլիոն մարդու մեջ հազիվ թե գտնվի մեկը, որն այնքան օժտված լինի անհրաժեշտ հավատով ու գիտակցությամբ, որպեսզի ականջալուր լինի մեր խորհուրդներին: Մնացածները համառորեն շարունակում են իրենց երթը դեպի անդունդ:

Ես այսօր եկա արտակարգ անսովոր գրույց վարելու համար:

Ես փորձեցի բոլոր շեշտադրումներն իրենց տեղերում դնել:

Բայց ես պետք է խոսեմ ևս մեկ կարևոր բանի մասին: Այն վերաբերում է ձեր ապագային: Ո՛չ ես, ո՛չ Կարմայական Վարչության մյուս անդամները ներկա պահին չենք կարող խոստանալ, որ հաջորդ կիսամյակում կկարողանանք պահպանել մոլորակի համակշռությունը:

Մենք կարող էինք հույսեր կապել Մեծ Կենտրոնական Արևից էներգետիկական օժանդակություն ստանալու հետ, սակայն, որպեսզի այդ օգնությունը ցուցաբերվի, պահանջվում են փաստեր առ այն, որ մարդկությունը լսում է մեզ և ընթանում մեր մատնանշած Ուղով:

Բավարար քանակությամբ այդպիսի փաստեր մենք չենք կարողանում գտնել:

Ուստի ես ամենայն խստությամբ կոչ եմ անում ձեզ մի կողմ դնել ձեր անձնական նախաձեռնությունները և ձեր ջանքերն ամբողջովին կենտրոնացնել աղոթքային գործառնությունների և կոնկրետ գործողությունների միջոցով մոլորակի համակշռությունը պահպանելու վրա:

Եվ եթե իմ այս Ուղերձից հետո մեր սաներից մեկնումեկը հանկարծ էլի հարցնի, թե ի՞նչ պետք է անի ինքը, ապա ես կհրաժարվեմ ապագայում կրկին գալ և տալ իմ Ուղերձներն ու խրատները:

ԵՄ ԵՄ Պորոգիան

Գուան Ին

28 հունիսի, 2014 թ.

**Ես ձեզ առաջարկում եմ դառնալ այն ընտրյալները,
որոնք մարդկությանը կօգնեն կրիտիկական պահին**

ԵՄ ԵՄ Գուան Ինը՝ Գթասրտության և Կարեկցանքի Աստվածուհին:

Ձեզ զարմանք կպատճառի այն, ինչ այսօր ես մտադիր եմ ձեզ ասել:

Ոչ այն պատճառով, որ իմ շարադրածը նորություն կլինի ձեզ համար, այլ որ Գթասրտության ու Կարեկցանքի Օրենքը շարունակում է գործել ձեր աշխարհում՝ անկախ չարանենգ ուժերի ցանկացած դրսևորումից:

Մենք այսօր կխոսենք ձեր՝ մարմնավորման մեջ գտնվողներիդ մասին:

Մենք միասին կփորձենք հասկանալ, թե ձեզ ինչն է խանգարում երջանիկ լինելու համար: Ինչն է խանգարում, որ ձեր կյանքերում դրսևորվեք միայն աստվածային հատկանիշներ, և թե ինչու են մոլորակի վրա տեղի ունենում պատերազմներ ու զանազան անարդարություններ:

Մեր այս Ուսմունքը դուք շատ անգամ եք լսել: Սակայն ամեն անգամ գտնվում են մարդիկ, ովքեր մեր հերթական Ուղերձից հետո կարծես պայծառանում են: Մշուշը, որը երբեմն ամբողջ կյանքի ընթացքում փակած է լինում նրանց աչքերը, հանկարծ հետ է քաշվում, և նրանք հստակ տեսնում են իրենց տառապանքների ու դժբախտությունների պատճառները:

Եվ, ինչ խոսք, այդ պատճառները հենց ձեր ներսում են թաքնված: Երբեմն որքա՛ն ծանր է լինում տեսնելն այնպիսի մարդու, որն իր այդ պայծառացումն ստանում է իր կյանքի ամենակրիտիկական պահին:

Այնպես է լինում, որ միայն անտանելի վիշտը, տառապանքն ու պատահած դժբախտությունն են մարդու հոգուն պայծառացում տալիս: Եվ Երկրում շատ քիչ են այն հոգիները, որ դա հասկանում են և մոտենում անտանելի տառապանքներ կրող մարդուն, որպեսզի նրա վիճակը թերթևացնեն և Ծառայեն տառապող հոգուն:

Սովորաբար ձեր աշխարհում ընդունված չէ խոսել մարդկային տառապանքների մասին: Մահամերձ վիճակում, վատ պայմաններում հայտնված մարդիկ չեն շարժում ձեր զանգվածային լրատվության միջոցների հետաքրքրությունը. կարծես մարդկային հանրության կյանքի ամենածանր կողմերը բացակայում են ձեր կյանքերում: Ո՛չ, նորություններից դուք իմանում եք միայն մարզական փայլուն նվաճումների, քաղաքական գործիչների հաղթանակների մասին: Անգամ թշվառությունը, դժբախտությունն ու տառապանքը որպես սենսացիա են ներկայացվում: Ամբողջ նյութն ու տեղեկատվությունը զանգվածային միջոցները ներկայացնում են այնպես, որ այն չհասկացվի և բուն պատճառները չբացահայտվեն, թե ինչու՞ են տեղի ունենում այդ դժբախտություններն ու աղետները. ինչու՞ են մարդիկ տառապում ու մեռնում՝ այդպես էլ չիմանալով իրենց դժբախտության պատճառը:

Ծառ քիչ անհատականություններ կան, որոնք ի վիճակի են անեղծ կարեկցանքի ու գթասրտության: Կարելի է համարձակորեն ասել, որ անեղծ կարեկցանքի ու գթասրտության ձեր աշխարհում նույնքան հազվադեպ կարելի է հանդիպել, որքան Աստծո և Բարձրագույն Օրենքի նկատմամբ իսկական հավատի:

Այս օրով ես եկել եմ, որպեսզի ձեզ հիշեցնեմ մեր Ուսմունքի կողմերից մեկի մասին: Այն է՝ շատ դարաշրջաններ առաջ Երկիր իջան Մեծ Ոգիներ, որպեսզի Երկրի մարդկանց մեծ ծառայություն մատուցեն: Իհարկե, դեռ այն ժամանակ մեզ ամեն ինչ հայտնի էր: Մենք գիտեինք, որ կլինի այնպիսի ժամանակ, երբ մարդկությունը կկանգնի մեծագույն տառապանքների առաջ, որպես հետևանք՝ անցյալում կատարած իրենց ոչ ճիշտ գործողությունների: Գիտեինք, որ այդ պահը վրա կհասնի, նաև գիտեինք, որ քանի որ մեր ազատ կամքով կարմայական կապի մեջ ենք

մտնում Երկրի մարդկության հետ, ապա Մենք նույնպես նրա հետ հանատեղ պետք է ըմպենք տառապանքով լի թասը:

Ես այսպես մանրամասն ձեզ պատմում եմ իմ և Իմաստության մյուս Տիրակալների պատմությունը, որպեսզի դուք հասկանաք, որ ձեր, իմ և Իմաստության մյուս Տիրակալների ճակատագրերն անխզելիորեն կապված են իրար հետ:

Եվ մենք շարունակում ենք Ծառայել մարդկությանը նույնիսկ այն դեպքում, երբ մարդկությունն իսպառ մոռացած է լինում մեր գոյության մասին:

Մենք ամեն օր մեր ոգեղեն նվաճումները զոհաբերում ենք հանուն այն բանի, որ մարդկությունը կարողանա շարունակել իր էվոլյուցիան: Մարդկությանը մեր Ծառայելը նման է խաչելության, միայն այն տարբերությամբ, որ այդ խաչելությունը տևում է բազմամիլիոն տարիներ:

Ձեզ համար դժվար է հասկանալ մեր Ծառայության էությունը: Սակայն երբ մարդը դեմ առ դեմ կանգնում է ահավոր դժբախտության առաջ, երբ նրա հոգին տառապում է, և նրա շուրթերից երախտագիտության խոսքեր են դուրս թռչում այն պայծառացման համար, որին նա հասու է դարձել իր կյանքի ամենաժանր պահին, ապա նա ունակ է դառնում հասկանալու Մեր Ծառայությունն ու Մեր Մխրանքը հանուն Երկիր մոլորակի էվոլյուցիոն կենսահոսքերի:

Այսօր ես ձեզ այցի եմ եկել, որպեսզի տեղեկացնեմ այն մասին, որ Կարմայական Վարչության այսօրվա նիստում նաև որոշում է ընդունվել առ այն, որ մի քանի Լույսի Էակներ գոհողություն կատարեն, որպեսզի մարդկությունը շարունակի իր էվոլյուցիան:

Հիմա դուք պարտական եք այդ Լույսի Էակներին, որոնք կամեցան անհայտ մնալ:

Հաջորդ կիսամյակի ընթացքում դուք կարող եք անգնահատելի օգնություն ցուցաբերել այդ Վեհապետներին: Այդ նպատակով անհրաժեշտ է նամակ հղել Կարմայական Վարչությանը և ավելի եռանդուն Ծառայության պարտավորվածություն ստանձնել: Խնդրում եմ լրացուցիչ պարտավորություն վերցնել աղոթքային արթնության, անապաստաններին ու կարիքավորներին ծառայելու տեսքով: Ձեզնից նրանք, ովքեր որոշակի նվաճումների են հասել, կարող են նաև նվիրաբերել իրենց կաուզալ մարմինների մի մասը:

Ձեր բոլոր նամակները կքննարկենք մենք՝ Կարմայական Վարչության անդամներս: Այն բանից, թե որքան շոշափելի կլինի ձեր ներդրումը, կախված է այն, թե որքանով կթեթևանան մարդկության տառապանքները հետագայում:

Այժմ տեղի է ունենում հազարամյակների ընթացքում մարդկության չկշռադատված գործողությունների, մտքերի ու զգացմունքների պատճառով կուտակված կարմայի ինտենսիվ վերադարձ:

Ձեզնից՝ մարդկային հանրության առավել գիտակից անդամներից, որ կարդում եք մեր Ուղերձները, կախված է այն, թե որքանով կթեթևանա մարդկության կարմայական բեռը:

Ձեր Ծառայությունը շատ նման է Իմաստության Տիրակալների Ծառայությանը: Եվ եթե յուրաքանչյուրը ձեր մակարդակով մոլորակի կենսահոսքերի բարօրության համար տարվող ձեր Ծառայությունը կարողանաք կատարել ամենայն մանրամասնությամբ, գիտակցվածությամբ ու անշահախնդրությամբ, ապա մեր համատեղ գործողությունները վիթխարի արդյունք կտան:

Խնդրում եմ, որ իմ այս կոչն անարձագանք չթողնեք:

Մարդկության անհաշիվ տառապանքները հնարավոր կլինի հեշտությամբ դադարեցնել, եթե մարդիկ հասկանան այդ տառապանքների պատճառը և զոջան իրենց կատարած անբարո արարքների համար: Իսկ եթե մարդկությունն այնքան է ապականվել մեղքերով, որ ունակ չէ ինքնուրույնաբար գիտակցելու դժբախտությունների պատճառը, ապա պետք է գտնվի մեկը, որն իր նվիրական Ծառայությամբ կմարի համաշխարհային կարմայի մի մասը և այդքանով իսկ կթեթևացնի մարդկանց տառապանքները:

Ես ձեզ առաջարկում եմ այն ընտրյալները դառնալ, որոնք կրիտիկական պահին կկարողանան օգնություն ցուցաբերել մարդկությանը:

Խնդրում եմ, լրացուցիչ Ծառայություն հանձն առեք ի բարօրություն մարդկության...

Ես հույսով ու սրտի թրթիռով սպասում եմ ձեր նամակներին: Ձեր ամեն մի նամակը ես անձամբ կկարդամ և համապատասխան որոշում կկայացնեմ:

ԵՄ ԵՄ Գուան Ինը

Վեհապետ Էլ Մորիա
29 հունիսի, 2014 թ.

Յույց տվեք ձեր նվաճումները, և մենք պատրաստ կլինենք ձեզ ավելի լայն ըմբռնում և ավելի շատ գիտելիքներ տալ

ԵՍ ԵՄ Էլ Մորիան:

Այսօր ես եկել եմ այս ամառային շրջանի ավարտական Ուղերձը տալու նպատակով:

Ես ուրախ եմ, որ հաջողվեց մեր էներգիաները փոխանցել Հինավուրց Հելլադայի տարածքում: Մենք հույսեր ենք կապում, որ հենց այստեղ մեր էներգիաները կունենան ավելի բարձր ազդեցություն: Մեր էներգիաների կիրառման վայրն այս անգամ ստուգվել էր մանրագնին կերպով: Եվ մենք գոհունակությամբ հայտնում ենք, որ գործն արված է և արված է փայլուն կերպով...

Ձեզ հայտնի է, որ մեր Ուղերձների ընդունման վայրում հսկայական քանակությամբ Լույս է ճառագավում: Եվ մենք հույս ունենք, որ մեր դեսպանորդի օգնությամբ այս անգամ մեզ հաջողվեց լավագույն ձևով տնօրինել Լույսը՝ Բարձրագույն եթերային օկտավաներից առաքվող մեր էներգիաները...

Իսկ հիմա ես մտադիր եմ ևս մի քանի խոսք ասել:

Դե ինչ, Ուղերձների փոխանցման մեր աշխատանքն ընթանում է հարկ եղած ձևով ու մակարդակով: Սակայն մեր մնացած աշխատանքի մասին ես չեմ կարող ասել, որ ընթանում է նույնքան արժանավայել և հաջող կերպով:

Ամեն օր հազարավոր մարդիկ կարդում են մեր Ուղերձները: Երկրագնդով մեկ սփռված հազարավոր մարդիկ հնարավորություն են ստանում հաղորդակցվելու մեր էներգիաներին և մեր Ուսմունքին:

Բայց ու՞ր են ասպետները... Ու՞ր են այն գործերը, որ դուք կոչված եք կատարելու...

Մարմնավորվելուց առաջ դուք որոշակի պարտավորություններ եք ստանձնել: Ամեն անգամ ես գալիս եմ, որպեսզի ձեզ հիշեցնեմ վերցրած պարտավորությունների մասին:

Եվ ի՞նչ...

Ես տեսնում եմ, որ ձեր գործադրած ջանքերը չափազանց նվազ են, ուստի և մենք չենք կարող քիչ թե շատ հաջող հաղթահարել մեզ հակադիր ուժերի դիմադրությունը:

Մեզ համար կարևոր է, որ ուժերի գերակշռություն ստեղծենք ռազմաճակատի յուրաքանչյուր հատվածում, որն անցնում է մարդկային գործունեության ցանկացած բնագավառով:

Մեզ համար կարևոր է, որ այն մարդկանց քանակությունը, որոնք ձգտում են առաջնորդվել Համբարձյալ Դասերի Ուսմունքով և այդ Ուսմունքը կիրառել իրենց կյանքում, սկսի աճել և տարեցտարի ավելանա:

Մարդկության զարգացման այս փուլի համար հատկապես մեր անկեղծ հետևորդների շնորհիվ է, որ մենք կարող ենք իրագործել Եղբայրության պլանները...

Ուստի ես գալիս և անխոնջ կերպով կրկնում եմ, որ մեր խնդիրները չեն փոխվել, և մեր պլաններն իրագործվելու պահանջ ունեն...

Ես կրկին ու կրկին հիշեցնում եմ ձեզ, որ անհրաժեշտ է գործել...

Մեր Ուղերձները կարդացողներից քանի՞սն են, որ անցած կիսամյակի ընթացքում կոնկրետ ջանքեր են գործադրել մեր խնդրանքները կատարելու համար...

Այդ ժամանակահատվածում մենք մի քանի շատ կարևոր նախաձեռնություններ ենք սկսել մեր դեսպանորդի միջոցով:

Ձեզնից շատե՞րն են արդյոք օժանդակություն ցուցաբերել այդ նախաձեռնություններին...

Պետք է ձեզ ասեմ, որ ես հիասթափված եմ: Մենք ավելին էինք ակնկալում, և մեր հույսերը կրկին չարդարացան:

Ձեր իներտությունն ու ծուլությունը ձեզ պատիվ չեն բերում:

Ես շատ լավ եմ հասկանում, որ շատ բարդ է գործելը և Աստծո հետ դաշնություն պահպանելն այն պայմաններում, որոնք այժմ գոյություն ունեն Երկիր մոլորակում:

Սակայն ես շարունակում եմ պնդել, որ դուք պետք է ուժ գտնեք ձեր մեջ և շարունակեք առաջխաղացումը: Ես պահանջում եմ, որ մեր սաները վերջապես արթնանան պատրանքի մեջ ունեցած լեթարգիական քնից և սկսեն իրագործել մեր պլանները...

Ձեզ հարկավոր է միայն հաղթահարել սեփական ծուլությունն ու իներտությունը: Հենց որ անեք դա, դուք արդեն կկարողանաք ընկալել մեր թրթռանքներն ու մեր էներգիաները...

Հենց որ ունակ դառնաք ընկալելու մեր էներգիաները, ձեր ներսում ուժ ու ցանկություն կարթնանա գործելու համար, և այլևս ոչինչ չի կարողանա ձեզ կանգնեցնել դեպի Աստված տանող ձեր Ուղու վրա...

Ես ասում եմ ձեզ, որ հարկավոր է դուրս պրծնել ձեզ շրջապատող աշխարհի փտածությունից ու անցողիկությունից...

Ես ասում եմ ձեզ, որ դրա համար պետք է թափ տաք ինքներդ ձեզ և սկսեք գործել...

Ձեր արգելապատնեշները ձեր կարմայական պրոբլեմների հարթության վրա են: Եվ ձեր կարմայական արգելապատնեշների կծիկը դուք կարող եք քանդել միայն սեփական ջանքերով:

Նախ և առաջ դուք պետք է կամենաք ընթանալ մեր մատնանշած Ուղով:

Դրա համար ձեզնից կպահանջվի ադամանդակուռ հավատ և նվիրվածություն:

Այդ հատկանիշները ձեռք են բերվում սեփական անձի վրա տարվող մանրակրկիտ աշխատանքով՝ ամենօրյա բազմաժամ հոգևոր գործառնությունների օգնությամբ:

Շատ եղանակներ գոյություն ունեն, որոնց միջոցով կարող եք մշտապես պահպանել Աստծո հետ ձեր դաշնությունը: Սակայն բոլոր այդ եղանակները պահանջում են ամենօրյա ջանքերի գործադրում:

Ոչ մի օր դուք չեք կարող բաց թողնել: Եթե ծուլության ու թուլականության պատճառով ընդամենը մի օր չբաղվեք հոգևոր գործառնություններով, ապա հետ կսահեք Ուղու սկզբնամասը և ստիպված կլինեք նորից սկզբից սկսել ձեր վերելքը:

Ո՛չ մի բացառություն...

Սեփական էգոյի ո՛չ մի արդարացում...

Եթե կանգնել եք Եղբայրությանը Շառայելու ուղու վրա, ապա ո՛չ հանգստյան օր կունենաք, ո՛չ արձակուրդ...

Շատերին վախեցնում է կարգուկանոնի խստությունը: Շատերին թվում է, թե Վեհապետները չափազանց շատ բան են պահանջում:

Ես հստակ ցույց եմ տալիս ձեր հոգու փրկության Ուղին: Բայց ես չեմ կարող ձեր փոխարեն հաղթահարել այն:

Դուք կարող եք ընտրություն կատարել: Այն շատ մեծ չէ. կա՛մ շարունակում եք Էվոյուցիան, կա՛մ հրաժարվում եք Էվոյուցիայի ուղուց և ընտրում անէացումն ու քայքայումը:

Ձեր աշխարհում սկսել են ի հայտ գալ շատ անցանկալի միտումներ:

Մենք մեր բոլոր ջանքերը գործադրում ենք, որպեսզի օգնենք ձեզ և տանք վերջին հնարավորությունը:

Այսօրվա բոլոր խրատները տրված են...

Ավելին տալ Օրենքը թույլ չի տալիս...

Ցույց տվեք ձեր նվաճումները, և մենք պատրաստ կլինենք ձեզ ավելի լայն ըմբռնում և ավելի շատ գիտելիքներ տալ...

Իսկ հիմա ես ձեզ հրաժեշտ եմ տալիս:

Եվ հուսով եմ՝ մինչ նոր հանդիպումներ...

ԵՍ ԵՄ ԷՂ Մորիան

Ուղերձների 21-րդ շրջան (դեկտեմբեր, 2014 թ.)

Սանատ Կումարա
20 դեկտեմբերի, 2014 թ.

Մենք ձեզ խնդրում ենք ձեր բոլոր ուժերը կենտրոնացնել ներքին համակշռության պահպանման համար

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան:

Ես այսօր եկել եմ նոր Ուղերձով: Կարևոր Ուղերձով:

Ձեզ հայտնի է, որ Երկիրն ապրում է իր Էվոյուցիայի շատ դժվարին ժամանակաշրջանը: Համեմատության համար, որպես օրինակ, կարելի է բերել ձեր կյանքում տեղի ունեցող կտրուկ փոփոխությունը:

Դուք դպրոց էիք հաճախում, և եկավ այն ավարտելու ու հասուն կյանքին անցնելու ժամանակը:

Դուք հասունացաք, և եկավ ամուսնության ժամանակը:

Ամեն անգամ, երբ ձեր կյանքում փոփոխություններ են տեղի ունենում, ստիպված եք լինում հարմարվելու կյանքի նոր դրվածքին և ձեր կյանքը վերադասավորելու դրան համապատասխան:

Ահա այժմ նման մի բան է տեղի ունենում Երկիր մոլորակում: Մենք շատ անգամ ենք խոսել վերահաս փոփոխությունների մասին, զգուշացրել ենք, որ պետք է վերափոխեք ինքներդ ձեզ, ձեր գիտակցությունը և համալարվեք Աստծո Աշխարհի հետ:

Այդ ամենը մենք բազմիցս կրկնել ենք մեր Ուղերձներում: Դուք նաև տեղեկացված եք, որ Երկիր մոլորակում իրենց Էվոյուցիան կկարողանան շարունակել միայն այն հոգիները, որոնք համահունչ են Աստծո հետ և մտադիր են կյանքում քայլել Բարձրագույն Ուղով:

Եվ ահա մոլորակն ամբողջովին մուտք է գործում փոփոխությունների գործընթացի ավարտական փուլ:

Ոմանց այդ փուլը վիթխարի աստվածային հնարավորություն կտա արագացնելու սեփական Էվոյուցիան:

Ոմանց համար էլ, ընդհակառակը, սկսվում են շատ ծանր ժամանակներ: Մինչ այդ յուրաքանչյուրն արդեն կատարել է իր ընտրությունը՝ անցողիկը կամ անանցը:

Դուք կա՛մ ձեր կյանքը կապել եք մոլորակի ֆիզիկական ոլորտի հետ, կա՛մ ընտրել եք հավերժական կյանքը:

Ներկա պահին այդ ընտրությունը կատարել են Երկիր մոլորակում մարմնավորված բոլոր հոգիները:

Ձեր այդ ընտրությունը կարող է և հասած չլինել ձեր արտաքին գիտակցությանը, բայց կողմնակիորեն դրա մասին կարող եք դատել այն պտուղներով, որոնք դրսևորվում են ֆիզիկական ոլորտում:

Ձեր կյանքին նայեք կարծես կողքից և վերլուծեք այն: Եթե մինչև հիմա չեք կարողացել ձեր կյանքը ենթարկել համայն այս Տիեզերքում գործող Բարձրագույն Օրենքին, ապա ձեր կյանքում դա անխուսափելիորեն կարտահայտվի ամեն գնով ձեր քաղաքակրթության բարիքները ձեռք բերելու ձգտման տեսքով: Դուք ձուլում եք, երբեմն մերձավորի հաշվին ու հակառակ առողջ բանականության, ստանալ ևս մեկ կտոր կարևոր չէ, թե ինչ՝ երշիկ, ծովափնյա հողակտոր, հեղինակավոր պաշտոն, զանազան հաճույքներ:

Աղքատ լինեք, թե հարուստ, առողջ լինեք, թե հիվանդ՝ ամբողջ հարցն այն է, թե պատրաստ եք նահանջելու՝ բարձր առաքինությունից ու բարոյականությունից, որպեսզի ձեր աշխարհում ձեզ համար ինչ-որ բան ստանաք, թե՛ կարող եք շատ բան գոհել, որ լավ լինի աշխարհի համար, որ Երկիրը կարողանա շարունակել իր Էվոյուցիան, որ երջանիկ լինեն մոլորակում ապրող բոլոր կենդանի էակները:

Որքա՛ն քիչ բան է պետք մարդուն երջանիկ լինելու համար: Հարկավոր է միայն համահունչ լինել Բարձրագույնին, ապրել հանուն մերձավորի բարեկեցության:

Շատերը կարծում են, թե միայն աղքատ մարդիկ ու չքավորներն են մոտ Աստծուն, իսկ այնտեղ, որտեղ հարստություն է, միայն արատներ են ու չարաշահումներ:

Ո՛չ, պաշտելիներս: Ձեր ժամանակներին բնորոշ է այն, որ ամեն ինչ իրար է խառնված: Ե՛վ աղքատների, և՛ հարուստների միջավայրում կան մարդիկ, որոնք ընտրել են Աստծուն, և կան մարդիկ, որոնք ծառայում են իրենց անհազ ցանկություններին:

Շատերը կարծում են, թե հիվանդները տառապում են հենց այն պատճառով, որ հեռացել են Աստծուց:

Ո՛հ, պաշտելիներս, և՛ հիվանդների, և՛ առողջների մեջ կան մարդիկ, որոնք կատարել են ամբողջովին իրար հակառակ նախընտրանքներ:

Հենց դրա համար ենք մենք ասում, որ ձեր ժամանակներում շատ դժվար է ապրելը: Եվ հենց այդ պատճառով է, որ ձեր ժամանակները ոմանց վիթխարի հնարավորություններ են ընձեռում իրենց հոգու զարգացման համար, ոմանց էլ տալիս են վերջին հնարավորությունը:

Այս ժամանակաշրջանին բնորոշ է այն, որ ձեզնից շատերը կարող են խելքի գալ՝ անցնելով մեծ տառապանքների միջով:

Մենք բազմիցս ձեզ առաջարկել ենք գնալ դյուրին ուղով, սեփական գիտակցությունը փոխելու ուղով: Դուք՝ ձեզնից շատերը, ընտրեցիք դժվարին ուղին. մի ուղի, որը լի է զրկանքներով ու դառնություններով, տառապանքներով ու կորուստներով:

Ի՛նչ արած, Աստված ու Համբարձյալ Վեհապետները հարգում են ձեզնից յուրաքանչյուրի կատարած ընտրությունը:

Եվ մենք ձեր կողքին կմնանք, ինչպիսի զրկանքներ ու տառապանքներ էլ ձեզ բաժին հասնեն մոտակա ժամանակներում:

Ձեզ հարկավոր է միայն օգնություն խնդրել մեզնից, և այն կցուցաբերվի բոլոր խնդրողներին ու աղոթողներին: Սակայն խնդրում եմ նկատի ունենալ, որ օգնությունը կցուցաբերվի ձեր հոգիներին: Իսկ ֆիզիկական ոլորտի վրա կիջնի մարդկության կուտակած վիթխարի կարման:

Ցավոք, շատ քիչ բան է մնացել, որ դեռ հնարավոր է փոխել...

Պահանջվում է ձեզնից նրանց ամբողջ նվիրումն ու ինքնագոհությունը, ովքեր լիովին գիտակցում են տեղի ունեցողը, որ մոտակա ժամանակներում հոգան ոչ միայն իրենց ու իրենց մերձավորների, այլ նաև հնարավորինս շատ հոգիների համար: Երբեմն՝ լրիվ անձանոթ մարդկանց համար:

Իրավիճակը բարդացնում է և այն, որ նույնիսկ շատ լուսավոր հոգիները հնարավորություն չունեն բավարար քանակությամբ Աստծո էներգիա ստանալու, որը նրանց թույլ կտար պահպանել դրական տրամադրվածությունն ու Բարձրագույն աշխարհների հետ հաղորդակցվելու բերկրանքը:

Ուստի ձեր բոլոր ուժերը նպատակամղեք այն բանին, որ ձեր ներսում պահպանեք էներգիաների համակշռությունը: Հիշե՛ք, որ արտաքինը ներքինի շարունակությունն է:

Կան շատ գործառնություններ ու մեթոդներ, որոնք թույլ են տալիս պահպանել ներքին հանգստությունն ու ներդաշնակությունը: Եվ ձեզնից նրանք, ովքեր այս 10 տարիների ընթացքում, երբ մենք տալիս էինք մեր Ուղերձները, հասել են նվաճումների հատուկ մոմենտումի, այժմ կարող են անփոխարինելի ջանքեր գործադրել:

Ձեզնից ամեն մեկը քաշով մեկ ոսկի արժե: Դուք բառացիորեն ունակ եք կանգնեցնելու ցանկացած փոթորիկ ու արհավիրք, ցանկացած պատերազմ կամ ագրեսիա:

Ամեն ինչ կախված է ներքին համակշռությունը պահպանելուց:

Մնացած մարդիկ, զանգվածային լրատվության միջոցներն ու շրջապատող իրադրությունը կփորձեն ձեզ հունից հանել, ստեղծել լարվածություն ու ագրեսիա:

Ձեր խնդիրն է ձեր սրտերի կրակներով ամեն բացասական բան վերածել Սիրո և Բարեգթության:

Մենք ձեզ խնդրում ենք մոտակա ժամանակներում ձեր բոլոր ուժերն ու ջանքերը կենտրոնացնել ներքին համակշռությունը պահպանելու վրա:

Աստված ձեզ օգնական...

ԵՄ ԵՄ Մանատ Կումարան: ՕՄ

Տեր Ծիվա

21 դեկտեմբերի, 2014 թ.

Ամեն օր Աստծուն խնդրեք լինել ձեզ հետ և ղեկավարել ձեր ողջ կյանքը

ԵՄ ԵՄ Ծիվան...

Ես եկա...

Եկա այսօր... Այս օրով...

Ես ուրախ եմ, որ Աստծո ողորմածության շնորհիվ կարողացա կրկին գալ իմ խրատները տալու համար, որոնք, վստահ եմ, կարող են ձեզ օգնել Երկրի մարդկության համար ոչ դյուրին այս ժամանակներում:

Այսպիսով, ես եկել եմ:

Իսկ հիմա, երբ մի փոքր վարժվեցիք իմ էներգիաներին, ձեզ պետք է հայտնեմ այն գլխավորը, որի համար այսօրվա իմ գալուստն իրականություն է դարձել:

Դուք բոլորդ, որ կարդում եք այս Ուղերձները, այս տարիների ընթացքում արդեն ծանոթացել եք այն հիմնական Ուսմունքին, որը մենք տալիս ենք: Այն առնչվում է ընտրության Ուսմունքին և Ուղուն:

Անչափ շատ հոգիներ են հիմա մարմնավորված Երկիր մոլորակում:

Ամեն հոգու համար գալիս է մի ժամանակաշրջան, երբ նա պետք է ընտրություն կատարի: Եվ այդ ընտրությամբ որոշվում է նրա հետագա ճակատագիրը, այն էներգետիկական մակարդակը, որով այդ հոգին շարունակում է իր Էվոյուցիան կամ ընդհատում այն:

Աստծո ողորմածությունն անսահման է: Եվ հիմա մարմնավորված վիճակում են հսկայական քանակությամբ հոգիներ, որոնցից շատերին վերջին հնարավորությունն է տրված Էվոյուցիոն զարգացումը շարունակելու համար:

Իհարկե, բոլոր հոգիներն արդեն կատարել են իրենց ընտրությունը: Եվ, իհարկե, շրջակա ունայնության մեջ երբեմն շատ դժվար է հասկանալ կատարված ընտրության ամբողջ իրողությունն ու լրջությունը:

Կարող եք հասկանալ, թե երբեմն որքան անտանելի է լինում տեսնելը, թե շատ մարդիկ ինչպես են տառաջիկորեն կործանում իրենք իրենց, կործանում իրենց հոգին: Այն էներգիաները, որոնք կան նրանց ատրաներում և որոնք որոշակիացվել են անցյալ մարմնավորումների ընթացքում կատարած ընտրությունների շարանով, բառացիորեն ստիպում են անհատականություններին կատարել սխալ ընտրություն:

Հատկապես այն բանի համար, որ թեկուզ ոչ շատ անհատականությունների օգնեք, այնուամենայնիվ, փոխելու իրենց ճակատագիրը, մենք շարունակում ենք գալ և տալ մեր Ուսմունքը:

Շատ դժվար է մեր տված պարզ ճշմարտություններից շատերը հասկանալը: Քանզի շատ ճշմարտություններ մատչելի են ըմբռնման համար միայն որոշակի էներգետիկական մակարդակում: Իսկ այդ մակարդակին հասնելու համար անհրաժեշտ է որոշակի աստիճանի մեկուսացվածություն և զանգվածային գիտակցության ազդեցության բացակայություն:

Չափազանց քիչ մարդկանց է վիճակվում այնպիսի ճոխություն, ինչպիսին մեկուսի լինելն է և այն բացասականի ազդեցության բացակայությունը, որը գերակայում է ձեր աշխարհում:

Ես ձեզ ավելին կասեմ. հենց որ մարդիկ դուրս են պրծնում իրենց առօրյա կյանքի ունայնությունից և հնարավորություն են ստանում թեկուզ մի քանի օր անցկացնելու միայնության մեջ և աղոթելու, ապա Աստծուն մոտենալու բուն վիճակը նրանց մեջ առաջացնում է վախ և անհարմարավետության զգացում:

Կարծես թե դուք մերձենում եք Աստծուն, ձեր թրթիռները բարձրանում են, գիտակցությունն աճում է, սակայն անհարմարավետության զգացումը, ճնշվածությունն ու վախը հոծ օղակով պարուրում են ձեր ողջ էությունը:

Ինչու՞ է այդպես, սիրելիներս:

Բանն այն է, որ դուք հենց այն պատճառով եք գտնվում նեզատիվ միջավայրում, որ ձեր կարմայական էներգիաները ձեզ քաշում են դեպի այդ միջավայրը: Եվ երբ Աստծո ողորմածության շնորհիվ դուք հայտնվում եք ավելի ներդաշնակ իրադրության մեջ, ձեր կարմայական էներգիաները գլուխ են բարձրացնում և ձեզ զրկում այն Աստծո հետ հաղորդակցվելու երանությունից, որը հենց ձեր ներսում է գտնվում:

Շատ ու շատ հոգևոր որոնողներ են Աստծո Աշխարհին մերձենալու պահին բախվել իրենց գիտակցության անհասկանալի վիճակների հետ, վախեցած դադարեցրել իրենց հոգևոր գործառնությունները և կրկին վերադարձել այն սովորական իրավիճակին, որը հատուկ է զանգվածային գիտակցությանը:

Միտելիներս, ես եկել եմ ձեզ ասելու, որ ներկայումս Աստծո Աշխարհից ձեզ բաժանում է բանականության անդունդը:

Ձեզ համար դժվար է ինձ հասկանալը, որովհետև գտնվում եք գլխավայր շրջված, անկատար աշխարհում, ուղղակի աղբահորում:

Բայց ես խնդրում եմ պարզապես հավատալ ինձ: Պարզապես շարունակեք առաջ շարժվել Միտով ու Հավատով: Միշտ էլ դժվար է առաջ շարժվել ճութագույն խավարում և անբարենպաստ եղանակային պայմաններում: Սակայն եթե սկսեք, ինքներդ ձեզ հաղթահարելով, առաջ շարժվել ընտրված ուղղությամբ, ապա մի ինչ-որ ժամանակ կտեսնեք արևի ծագումը, և ձեր շուրջն ամեն ինչ կսկսի փոխվել ու կենդանություն ստանալ:

Հավատացե՛ք ինձ, դժվարն ամենասկզբում շրջապատող պատրանքի մշուշի քողից դուրս գալն է: Այնժամ, երբ աստվածային գիտակցության լուսաբացի ցուլերն սկսում են բանականության

լույսով լուսավորել ձեր էության մթնշաղը, դուք ձեռք եք բերում Լույսը խավարից, իրականությունը պատրանքից զանազանելու կարողություն:

Ձեզ բոլորիդ պակասում է հավատն ու նպատակամղվածությունը: Հատկապես այդ երկու հիմնական, ուղու համար անհրաժեշտ հատկանիշներին են իրենց հիմնական հարվածը հասցնում մեզ հակադիր ուժերը՝ օգտվելով զանգվածային լրատվության միջոցներից, հեռուստատեսությունից և համացանցից:

Ձեզ հրամցնում են սուռոգատներ, և դուք չեք կարողանում Աստծո Լույսը զանազանել գովազդային լույսերից, իսկական արժեքները՝ զանգվածային տոնի զարդարանքներից:

Եվ միայն ձեզնից քչերն են, որ ունակ են պատրանքային ուժերին հակադրելու իրենց նվիրվածությունն ու նպատակամղվածությունը:

Մի մարմնավորման ընթացքում հնարավոր չէ ձեռք բերել այն հատկանիշները, որոնք ձեր հոգին կազատեն պատրանքի կապանքներից: Սակայն եթե չսկսեք ձեր ներսում անեցնել այդ հատկանիշները, ապա վտանգ կա, որ երբեք դուրս չեք պրծնի պատրանքի թակարդից:

Պատկերացրեք, թե գտնվում եք գաղտնածեսերի դպրոցում. Երկիր մոլորակի բոլոր բնակիչները գտնվում են ձեռնադրյալների համար նախատեսված մի հսկայական դպրոցում:

Ձեզնից յուրաքանչյուրը կարող է հույսը դնել միայն իր սեփական ուժերի վրա: Դուք ամեն օր կանգնում եք վտանգների առջև: Եվ ամեն օր կատարում եք ձեր ընտրությունը, միակ ընտրությունը՝ Աստծո Աշխարհի և պատրանքային աշխարհի միջև: Միլիոնավոր տարբեր այլընտրանքներ կան, որոնց էությունը հանգում է միայն մեկ ընտրության. դուք կա՞մ հավերժ եք ընտրում, կա՞մ անցողիկը:

Եվ այսպես, իմ այսօրվա գալուստը նպատակ ունենալով ձեր էությունն ուղղել դեպի իրական աշխարհը:

Ձեր կյանքի ամեն մի օրը դուք պետք է նվիրեք միայն մի բանի՝ Աստծուն: Այն Աստծուն, որ ձեր ներսում, ամեն մի կենդանի էակի ներսում է գտնվում:

Միայն մի միտք պետք է ունենաք ձեր արթնանալու պահին. «Ես Աստծո հետ եմ...»:

Հենց միայն այդ միտքն ունակ է օրվա ընթացքում ձեզնից հեռու պահելու պատրանքի ուժերին:

Միայն առ Աստված մշտական կենտրոնացումը կկարողանա ձեզ դուրս հանել պատրանքի ուռնականներից:

Անխոնջ կերպով ամեն օր խնդրեք Աստծուն, որ ձեզ հետ լինի և դեկավարի ձեր ամբողջ կյանքն ու բոլոր ընտրությունները:

Այս բարդ ժամանակաշրջանում, մարդկային գիտակցության այս աղջամուղջում միայն Աստված կարող է օգնել ձեզ ու ձեր հոգուն:

ԵՄ ԵՄ Շիվան

Տեր Սուրիա

22 դեկտեմբերի, 2014 թ.

Փոխվեք ինքներդ՝ կփոխվի ամբողջ աշխարհը

ԵՄ ԵՄ Սուրիան:

Ես շատ հեռվից եմ եկել ձեր մոլորակը:

Եկել եմ, որ Ուղերձ տամ արևային բոլորաշրջանի փոխվելու պահին:

Եվ այսպես, այսօր մենք կանդրադառնանք շատ կարևոր հարցի. մեր այս գրույցը կկայանա Կարմայական Վարչության կողմից կարևոր որոշում ընդունելու նախաշեմին:

Ձեզ հայտնի է, որ այժմ ընթանում է Կարմայական Վարչության նիստը: Այն շատ կարևոր նիստ է:

Փաստորեն հենց հիմա որոշվում է բոլոր այն կենսահոսքերի ճակատագրի հարցը, որոնք էվոլյուցիա են անցնում Երկիր մոլորակում: Չէի ուզենա ձեզ անհաբեկել, բայց դուք պետք է հասկանաք, որ ձեր զարգացումն էականորեն շեղվել է աստվածային հունից:

Մենք խոսում ենք մարդասիրությունից:

Մենք խոսում ենք ինքնանվիրումից:

Մենք խոսում ենք Սպասավորության մասին:

Մենք խոսում ենք Եղբայրության մասին:

Սակայն դուք ձեր կյանքում կարող եք տեսնել դրանց միանգամայն հակադիր դրսևորումները՝ եսասիրություն, ագրեսիա, ատելություն և ինքնառնչացում:

Սա ակնհայտ է և ապացուցման կարիք չունի:

Ինչպե՞ս փոխել մոլորակի պատմական ընթացքը: Ինչպե՞ս անել, որ աստվածային կերպերով ու գործերով լցվեն մոլորակի տեղեկատվական տարածությունն ու երկրացիների մտքերը:

Հատկապես այս հարցերին է նվիրված Կարմայական Վարչության ներկա նիստը:

Մենք մանրակրկիտ կերպով վերլուծում ենք անցնող տարվա և հատկապես դրա երկրորդ կեսի արդյունքները:

Մոլորակի կյանքը չափազանց շատ է շեղված աստվածային ուղղությունից...

Անհապաղ հարկավոր է անհրաժեշտ ու բավարար միջոցներ ձեռնարկել:

Եվ այսպես, մենք սպասում ենք: Սակայն ձեզնից յուրաքանչյուրը նույնպես պետք է վերլուծի, թե արդյո՞ք ամեն ինչ է արել, որպեսզի մարդկային կյանք վերադառնան աստվածային կերպերը և տեղ գտնեն մարդկային գործունեության ամեն մի բնագավառում, երկրային կյանքի ամեն մի ոլորտում:

Երբ Աստված հեռացած է լինում մարդկանց կյանքից, ամբողջ կյանքն անճանաչելիորեն փոխվում է: Սկզբում՝ չնչին չափով, հետո՝ ավելի ու ավելի շատ: Եվ այդ եղանակով մարդկային գործունեության ամեն մի ոլորտում ի հայտ են գալիս և աճում Աստծո էներգիայի աղավաղումները:

Դա նման է քաղցկեղային ուռուցքի, որը մեկը մյուսի հետևից քայքայում է մարմնի օրգանները, մինչև որ ամբողջ մարմինը կործանվի:

Մեր խնդիրն է թույլ չտալ, որ Երկիր մոլորակի Կյանքը կործանվի:

Ուստի մենք մտադիր ենք կիրառել արտակարգ վիրաբուժական միջամտություն:

Երբեմն, որպեսզի օրգանիզմն ապրի, հարկ է լինում զոհել ամբողջ մի օրգան: Եվ դա լիովին հիմնավորված քայլ է համարվում:

Իսկ մենք մտադիր ենք ձեռնարկել բոլոր միջոցները, որ փորձենք պահպանել բոլոր օրգաններն ու համակարգերը, բայց և անհակադարձելի դարձնել Երկիր մոլորակի ընդհանուր իրավիճակի առողջացման գործընթացը:

Այստեղ է, որ անփոխարինելի կլինեն ձեզնից յուրաքանչյուրի գործադրած ջանքերը:

Քանզի ձեզնից յուրաքանչյուրը Երկիր մոլորակի էներգետիկական համակարգի մի մասն է: Ուստի մոլորակի ընդհանուր էներգետիկական խորապատկերը կախված է այն բանից, թե ինչ հաճախականությամբ եք դուք թրթռում օրվա ընթացքում:

Երբ ձեզ պարուրում են բացասական մտքերն ու հույզերը, դուք վերածվում եք բացասական էներգիայի գեներատորի. դուք նպաստում եք ձեր աշխարհի անկատարության պահպանմանը և դրանով իսկ ձեր ձայնը տալիս եք մոլորակի կործանման համար:

Եվ հակառակը՝ երբ, անկախ արտաքին բացասական ազդեցություններից, դուք կարողանում եք ձեր սրտում պահպանել Մեր ու Բերկրանք, ապա պարուրվում եք նորացման դրական էներգիաներով, ստեղծում դրական տրամադրվածություն, ինչն էլ աշխատում է ամբողջ մոլորակի օգտին:

Ձեզնից շատերը մշտապես սուզված են գիտակցության ցածրորակ վիճակների մեջ: Եվ դա լիովին բացատրելի է, քանի որ շրջակա ամբողջ իրադրությունն աստվածային չէ և խոչընդոտում է Աստծո աշխարհի հետ համահնչունություն ձեռք բերելը:

Հենց դրա համար էլ մեր Ուղերձներում մենք բազմակիորեն բերում ենք ասպետի, մարտիկի, ոգու զինվորի օրինակներ:

Հենց դրա համար էլ մենք իրավիճակը նմանեցնում ենք ճակատամարտի:

Փաստորեն այդպես էլ կա. մոլորակում հսկայական ճակատամարտ է ընթանում Լուսի և խավարի, անցյալի բացասական էներգիաների և նորացման նոր էներգիաների միջև, որոնք Բարձրագույն աշխարհներից մղվում են դեպի ձեր մոլորակը:

Մենք ձեզ ասում ենք. «Պետք է գործել...»:

Մենք ձեզ կոչ ենք անում գործադրելու ձեր բոլոր ջանքերը ներքին համակշռությունն ու ներդաշնակությունը պահպանելու համար:

Այնժամ, երբ հոգևոր մակարդակը թույլ է տալիս, դուք կարող եք ձեր աղոթքի և նկրտման ուժով մարել ցանկացած բացասական բան, որ տեղ է գտնում ձեզ շրջապատող տարածության մեջ:

Սակայն շատ քիչ են նրանք, ովքեր բարձր ոգեղեն մակարդակի կրողներ են:

Մնացածները, որպեսզի կարողանան հասնել դրական տրամադրվածության ու պահպանել այն, ֆիզիկական ոլորտում պետք է դիմեն կոնկրետ գործողությունների:

Ֆիզիկական ոլորտի ոչ բոլոր գործողությունները կարող են ձեր կարմայի մարման համար պտուղներ տալ:

Մենք շատ անգամ ենք տվել այս Ուսմունքը, և ես նորից կկրկնեմ այն: Միայն այնժամ, երբ առաջնորդվում եք ճիշտ շարժառիթներով, ձեր գործողությունները հանգեցնում են կարմայի մարման և դրական նախադրյալներ ստեղծում Երկրի Կյանքի զարգացման համար:

Իսկ երբ առաջնորդվում եք ոչ ճիշտ շարժառիթներով, ապա ներգրավվում եք կարմայաստեղծ գործողությունների մեջ և շարունակում կարմա ավելացնել:

Ճիշտ շարժառիթը հետևյալն է՝ աշխատանք հանուն Ընդհանուր Բարօրության և Սպասավորություն Կյանքին:

Ճիշտ շարժառիթներ չեն այն ամենը, որոնք ստիպում են ֆիզիկական ոլորտին պատկանող նպատակներ հետապնդել՝ փառք, փող, պատիվ, հաճույքների ստացում, քմայքների բավարարում:

Շատ հաճախ են մարդիկ կարծում, թե իրենց շարժառիթն ուղղված է Ընդհանուր Բարօրությանն ու Բարուն: Սակայն իրականում առաջնորդվում են այլ շարժառիթով, որը խնամքով թաքցնում են անգամ հենց իրենցից:

Իսկ ինչպե՞ս հասկանալ, թե ինչպիսին է շարժառիթը:

Տեր Հիսուս տվել է այդ հարցի պատասխանը. «Պտուղներով դատեցեք»:

Ոչ թե գործողություններով, որոնք կարող են և ճիշտ լինել, ոչ թե խոսքերով, որոնք կարող են և իրավացի լինել, այլ հենց պտուղներով՝ գործողությունների արդյունքներով:

Եվ եթե տարեցտարի դուք շարունակում եք հարաբերություններ պարզել ձեզ հետ նույն Ուղով ընթացող մարդկանց հետ, նրանց նկատմամբ պահանջատիրություն և անգամ ատելություն եք զգում (թեև կարծես թե համատեղ ծառայում եք միևնույն ընդհանուր բարօրությանը), և դա շարունակվում է մեկ, երկու, անգամ տասը տարի, ապա մեծագույն հավանականությամբ կարող եք փաստել, որ ձեր շարժառիթը ճիշտ չէ:

Երբ դուք լրիվ անկեղծ եք, և ձեր շարժառիթն էլ ճիշտ է, ապա ֆիզիկական ոլորտի ձեր ցանկացած գործողություն կհանգեցնի կարմայի բեռնաթափման, իսկ ուրիշ մարդկանց նկատմամբ ձեր պահանջները կհալվեն զարման ձյունի պես:

Քանզի ձեզնից ամեն ոք ուրիշի մեջ տեսնում է իր սեփական թերությունները: Եվ երբ ձեր Սպասավորության բոցում այրվում են անցյալի կարմայի հետևանք հանդիսացող ձեր թերությունները, ապա դուք այլևս դրանք չեք տեսնում ուրիշ մարդկանց մեջ:

Շատ մեծ ճիզեր պետք է գործադրեք ինքներդ ձեզ հետ կատարվող աշխատանքում, ձեր թերությունների վերացման գործում:

Եվ աշխարհում միակ մարդը, որին կարող եք վերադաստիարակել, դուք ինքներդ եք:

Փոխվեք ինքներդ՝ կփոխվի ամբողջ աշխարհը:

ԵՍ ԵՄ Մարիամ

Մայր Մարիամ

23 դեկտեմբերի, 2014 թ.

Մշտապես եղեք Սիրո մեջ, և ձեր շուրջն ամեն ինչ կսկսի փոխվել

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը՝ ձեզ այցի եկածս:

Այսօր ես կուզենայի ձեզ հետ զրուցել ներկա ժամի ձեր կարիքների ու պահանջմունքների մասին: Ձեզնից շատերը դիմում են ինձ օգնության խնդրանքով: Ձեզնից շատերին ես օգնություն ցուցաբերում եմ:

Սակայն կան որոշակի քանակությամբ հոգիներ, որոնք այնքան են ծանրաբեռնված անցյալի իրենց մեղքերի ավելորդ բեռով, որ նույնիսկ ամենայն ցանկությանս դեպքում չեմ կարող նրանց օգնել: Ես և իմ հրեշտակները մշտապես գտնվում ենք սպասավորության վիճակում և առանձնահատուկ ուշադրությամբ ենք վերաբերվում ձեր խնդրանքներին ու աղերսներին:

Եվ ես ձեզ պետք է ասեմ, որ նույնիսկ այն դեպքում, երբ օգնությունը չի կարող ցուցաբերվել ամբողջական կերպով, մենք անում ենք ամեն ինչ, որ թեթևացնենք ձեր տառապանքները:

Մեղայական արցունքները, որոնք ձեր աչքերում հաճախ եմ տեսնում մեր հաղորդակցության ժամանակ, ձեր մասին ինձ անհամեմատ ավելին են ասում, քան ձեր խոսքերը և անգամ աղոթքները:

Դուք չեք կարող պատկերացնել, թե Համբարձյալ Դասերին որքա՛ն աշխատանք է վիճակվում կատարել, որ ձեր հոգիները գիտակցեն իրենց մեղքերից շատերը և մեղա գան դրանց համար:

Երբ ապաշավանքը մուտք է գործում ձեր սիրտը, ձեր կարմայական բեռը կիսով չափ թեթևանում է: Իսկ մնացած կեսը դուք կարող եք բեռնաթափել ձեր ամենօրյա աղոթքներով և այն ջանքերով, որոնք ուղղված են լինում ուրիշ տառապող հոգիների մասնաբաժնի թեթևացմանը:

Հավատացե՛ք ինձ, տառապող հոգիներին ցուցաբերած ձեր օգնությունն անգնահատելի է ներկա ժամանակում:

Շատ մարդիկ նույնիսկ չեն էլ գիտակցում, որ իրենք տառապում են: Նրանք դա չեն կարող հասկանալ, քանի որ իրենց վիճակի հետ համեմատելու բան չունեն: Նրանք այնպես են ծանրաբեռնված իրենց խնդիրներով ու հոգսերով, որ իրենց շրջապատող կյանքի անթափանց խավարում որևէ լույսի շողք չեն տեսնում:

Ուստի այդ հոգիներին լույսի ճառագայթ ուղարկեք: Բացե՛ք ձեր սրտերը Սիրո առաջ և ձեր աշխարհում տառապող յուրաքանչյուրի սրտին ձեր Սիրո մի մասնիկն առաքեք:

Չէ՞ որ դրա համար առանձնապես մեծ աշխատանք չի պահանջվում: Չէ՞ որ ձեզ համար դժվար չի լինի ձեր Սիրով ջերմացնել քաղաքագետների, տնտեսագետների, իշխանական և առևտրական կառույցների ներկայացուցիչների կարծրացած սրտերը: Չէ՞ որ ձեր ներսում կարող եք հաղթահարել կարծրատիպերը և ձեր մեջ տեսնել ձեր կարծիքով չարանենգ ու անուղղելի այդ ներկայացուցիչների սրտերը, որոնք պարզապես գուրկ են Սիրուց:

Շատ մարդիկ գտնվում են պատրանքի ուժերի կախարդանքի ազդեցության տակ:

Նրանք քնած են, տեսնում են սարսափելի երազներ և փորձում են այդ երազները կյանքի կոչել:

Իսկ այդ ամենի պատճառն այն է, որ այդ մարդկանց սրտերում բացակայում է Աստված և նրա դրսևորումը՝ Սերը: Հատկապես Աստծո պակասությունն է, որ շատ ու շատ քաղաքական գործիչների ստիպում է ահավոր արարքներ գործել: Եվ եթե ինչ-որ մեկի Սերը Բարու և Լույսի թեկուզ և կարճատև ազդակներով ջերմացնել նրանց սրտերը, ապա պետք է կարծել, որ նրանց արարքների ահավոր հետևանքներից շատերը կչեղոքացվեին, քանի որ փոփոխության կենթարկվեին: Աստծո էներգիայի ազդակն ունակ է ամենամոլորեղի հանցագործների և աստվածատյացների սրտերում հալեցնելու վախն ու ագրեսիվությունը:

Լինում է և այնպես, որ մեկը մի պահ կարծես թե քնից արթնանում է, և ապաշավանքի արցունքներն ինքնաբուխ կերպով հոսում են նրա այտերի վրայով: Եվ զղջացող մարդն այլևս ունակ չի լինում վնաս հասցնելու ուրիշ մարդկանց, երեխաներին ու ծերերին:

Ուստի այս խավար ժամանակներում դժվար գործ մի՛ համարեք ձեր սրտերում Սեր անեցնելը և այդ Սերը նրանց ուղարկելը, որոնք, ձեր կարծիքով, Սիրո կարիքն ունեն: Թող այդ մարդկանց սրտերը փոխվեն: Եվ այդ դեպքում մենք կկարողանանք համատեղ ջանքերով փոխել ամբողջ մոլորակի ապագան, որքան էլ այն դառն ու տխուր թվա:

Սեր համատեղ ջանքերով մենք կարող ենք փոխել Երկիր մոլորակի ցանկացած իրադրություն:

Եվ ես կոչ եմ անում չճուլանալ և աշխատել սեփական անձի վրա, վերացնել բոլոր այն թերությունները, որոնք երբեմն դեռևս ձեր սրտերում արգելափակում են Աստծո Սիրո դրսևորումը:

Խորհե՛ք այն մասին, թե ինչն է ձեր սրտերին խանգարում, որ Սեր դրսևորեն:

Խորհե՛ք այն մասին, թե ինչպես հալեցնել վախի, ագրեսիայի, անհավատության սառույցը, որը տառացիորեն քարացրել է ձեր սիրտը:

Խորհե՛ք այն մասին, թե ինչ կարող եք անել ուրիշ մարդկանց համար, ոչ միայն ձեր մերձավորների, այլ նաև բոլոր այն մարդկանց համար, որոնցից կախված է հասարակական կարծիքը:

Երբեմն մեկը, որը բավարար ազդեցություն ունի հասարակությունում, կարող է փոխել հասարակական կարծիքը և կոտրել բացասականի նկատմամբ աշխարհում տիրող հակվածությունը:

Դուք պետք է ամրապնդեք ձեր հավատը և այդ հավատով ունակ կլինեք այնքան Սեր բերել ձեր աշխարհին, որ շատ ու շատ մարդկանց սրտերը փոխվեն:

Ամեն ինչ, սիրելիներս, հնարավոր է փոխել:

Աստծո օգնությամբ ամեն ինչ հնարավոր է: Բացարձակապես ամեն ինչ: Ձեզ հարկավոր է միայն բոլոր ջանքերը կենտրոնացնել այն բանի վրա, որ Աստված մուտք գործի ձեր կյանք և առաջնորդի ձեր բոլոր գործերն ու արարքները: Ամեն օր և օր օրի:

Մի՛ մտածեք նրանց մասին, ովքեր մոռացել են Աստծուն և դրսևորում են ոչ լավագույն մարդկային որակներ: Մտածեք Աստծո Սիրո մասին, որն ամեն օր անընդհատ աճ է ապրում ձեր սրտերում:

Մշտապես եղեք Սիրո մեջ, և ձեր շուրջն ամեն ինչ կսկսի փոխվել:

Իսկ եթե ձեզ պակասում են հավատն ու նվիրվածությունը, ապա հիշե՛ք ինձ: Հիշեք այն պահերը, երբ ձեզ հաջողվել է որսալ Իմ հայացքն Իմ պատկերից և ստանալ ձեր հարցի պատասխանը:

Հիշեք մեր հաղորդակցության խաղաղ բերկրանքի պահերը, որոնք, թեկուզ հազվադեպ, ապրել եք ձեր կյանքում:

Միրելին՝ րս, ես միշտ ձեզ հետ եմ...

Մենք միասին ենք...

Եվ ես միշտ ձեզ հետ կիսում եմ ձեր բոլոր դառնություններն ու տառապանքները և անում հնարավոր ամեն ինչ, որ առավելագույնս թեթևացնեմ դրանք:

Թող որ խաղաղությունը, անդորրն ու բարին մշտապես ձեզ հետ լինեն:

ԵՍ ԵՄ Մայր Մարիամը՝ ձեզ սիրող և ձեր մասին հոգացող

Հաութամա Բուդդա

24 դեկտեմբերի, 2014 թ.

**Ես եկել եմ ձեզ համար պարզաբանելու
մոլորակում հաստատված իրադրությունը**

ԵՍ ԵՄ Հաութամա Բուդդան:

Այսօր ես եկել եմ, որ ձեզ ասեմ այն գլխավորը, որն այժմ կարող է հուզել ու մտահոգել մեր նվիրյալ աշակերտներից շատերին:

Ես եկել եմ ձեզ համար պարզաբանելու մոլորակում հաստատված իրավիճակը:

Չնայած Կարմայական Վարչության նիստն իր բուռն ընթացքի մեջ է, բայց արդեն քիչ բան կարող է ազդել նրա ելքի վրա: Վերջին ժամանակների դեպքերն ու իրադարձությունները միանգամայն ակներև են, որպեսզի կայացվի այն որոշումը, որն արդեն հասունացել է, և որը ես ձեզ չեմ հաղորդի:

Սակայն ես պետք է որոշ մանրամասներ հաղորդեմ իրադրության և այդ մանրամասներից բխող հրատապ անհրաժեշտության մասին, որոնցով դուք որոշումներ կկայացնեք և գործողությունների կդիմեք:

Ինքներդ էլ կարող եք առանց մեր օգնության վերլուծել մոլորակի իրադրությունը: Եվ ես կարծում եմ, որ հազիվ թե ձեզնից որևէ մեկը հանձն առնի ենթադրել, թե իրադրությունը դեպի լավն է գնում: Ավելի շուտ՝ հակառակն է...

Մենք դրան սպասում էինք և ձեզ զգուշացնում էինք, որ իրադրությունը մոլորակում շատ ծանր է, և պահանջվում է ձեր ամբողջ նվիրյալ ծառայությունն ու ձեր բոլոր տիտանական ջանքերը, որպեսզի ոչ միայն իրադրությունը փոխվի, այլև նրա ընթացքը շրջվի դեպի բարենպաստ հուն:

Մենք առավելագույն ջանքեր գործադրեցինք մոլորակի իրադրության կայունացման համար, բայց չեմ կարող ասել, որ դուք ևս նույն կերպ վարվեցիք:

Չափազանց ծանր է խոստովանել այն փաստը, որ մեր բոլոր այն ջանքերը, որոնք ուղղված էին նրան, որ մեր Ուսմունքն իր ծիլերն արձակի հնարավորինս շատ մարդկային անհատների սրտերում, բախվեցին անհասկացության ու դիմադրության երկաթբետոնե պատին, որն ի ցույց դրեց անգիտակից համայնական մարդկությունը:

Տիեզերքի և մարդկային համակցության զարգացման բոլորաշրջանային բնույթը ենթադրում է, որ պետք է իրար հաջորդեն զարգացման և հետընթացի բոլորաշրջաններ: Կախված այն բանից, թե որքանով է մարդկությունը հետևում Աստծո Օրենքներին և իր մեծամասնությամբ որքանով է պատրաստ իր կյանքերի ընթացքում ճանաչելու Բարձրագույն օրենքի գերակայությունը, մարդկության զարգացման կրիտիկական պահերին կարող է տեղի ունենալ համամոլորակային բեկվածք կամ զարգացման ընթացքի կայունության մասնակի դադարեցում:

Եթե ավելի ճշգրիտ ասելու լինենք, ապա մենք մուտք ենք գործել Երկիր մոլորակի համար անբարենպաստ արտաքին հանգամանքների գոտի:

Ձեզ հայտնի է, և մենք շատ անգամ ենք տվել այս Ուսմունքը, որ արտաքին դրսևորումը ճշտորեն համապատասխանում է Երկրի մարդկության մեծամասնության կամ գոնե նրա որոշ կրիտիկական զանգվածի ներքին մղումներին: Ուստի մենք փորձեցինք մեր Ուղերձների միջոցով ազդել մարդկային համակցության առավել առաջադեմ մասի գիտակցության վրա, որպեսզի գիտակցության այդ փոփոխության միջոցով էլ ազդենք մոլորակի իրադրության վրա:

Մեր ջանքերը մշտական բնույթ էին կրում, և դուք չեք կարող տրտնջալ, թե թեկուզ մի տարի մենք ձեզ թողել ենք առանց մեր ցուցումների ու ղեկավարության:

Մենք տալիս էինք մանրակրկիտ մանրամասներ, որոնցով առաջնորդվելով՝ կարճագույն ժամկետներում կարող էիք փոխել ձեր գիտակցությունը:

Մեր Ուսմունքը ձեզ փոխանցելու բոլոր հնարավորությունները սպառված են:

Ամեն ինչ այս աշխարհում ունի իր սկիզբն ու ավարտը:

Դա չի նշանակում, թե մենք կլքենք մարդկությանը՝ նրան մատնելով ինքնահոսի: Ո՛չ, իհարկե, ո՛չ:

Բայց մենք մեզ իրավունք ենք վերապահում փոխելու Երկիր մոլորակի Էվոյուցիայի կարգավորման գործընթացներում մեր մասնակցության ձևաչափը:

Մեր մասնակցությունը մարդկությանն օգնություն ցուցաբերելու մեջ է: Բայց այդ օգնությունը կլինի բոլորովին այլ տեսակի:

Որպեսզի մարդկության գիտակցությունը փոխվի և փոխվի աստվածային Էվոյուցիոն օրենքին համապատասխան, դրա համար գոյություն ունի երկու հիմնական ուղի. մեկը Խոսքի փոխանցման միջոցով աստվածային գիտության հիմունքների ուսուցանումն է, իսկ մյուսը՝ նույն աստվածային գիտության հիմունքների ուսուցանումը բաց թողած հնարավորություններով և սխալներով պայմանավորված կարմայի վերադարձի միջոցով:

Առաջին ուղին ներկա պահին սպառել է իրեն: Մենք այլևս չենք կարող անտեղի վատնել Աստծո էներգիան, քանի որ մեր ջանքերի պտուղներն ի հայտ չեկան:

Ուստի մոտակա ժամանակներում ձեզ կվիճակվի մոտենալ Աստծո Ճշմարտություններին մի այլ կողմից՝ տառապելով ու զրկանքներ կրելով:

Ավելի դյուրին ուղով ընթանալու հնարավորությունը միշտ կա: Բայց այդ հնարավորությունը բաց է միայն ոչ շատ մարդկանց համար, որոնք անկեղծորեն հետևում են Հինավուրց Ուսմունքին և ընդմիշտ կապվել են Աստծո հետ:

Մարդկության մնացած մասը, ցավոք, պետք է բախվի այն կարմայի վերադարձին, որն ինքն է ստեղծել՝ ոչ ճիշտ ձևով օգտագործելով Աստծո էներգիան:

Հարկ կա՞ արդյոք ասելու, թե ինչ ճանապարհներով այդ կարման կվերադարձվի մարդկությանը...

Ես կարծում եմ, որ ձեզնից ամեն ոք կարող է ինքը կռահել այդ ճանապարհները կամ դրանց մասին կարդալ մեր նախորդ Ուղերձներում, որոնք անխոնջ կերպով մենք ձեզ տալիս ենք վերջին տասը տարիների ընթացքում:

Ամբողջ Ուսմունքը մենք մանրագին կերպով վերաշարադրեցինք, և դուք չեք կարող ասել, թե այն չեք ստացել այն ձևաչափով, որ Էվոյուցիոն զարգացման ներկա փուլում մատչելի լինի ձեր հասկացողության համար:

Մենք չենք կարող շարունակել տալ մի բան, որը պահանջարկ չունի ձեր մեջ:

Ուստի մոտակա ժամանակներում դուք ձեզ համար շատ բացահայտումներ կանեք, եթե մեր Ուղերձները վերընթերցեք այն իրադարձությունների պրիզմայի միջով, որոնք տեղի կունենան:

Ամեն ոք ինքն է կատարում իր ընտրությունը: Եվ ամեն ոք էլ ստանում է իր կատարած ընտրության պտուղները: Եվ ձեզնից նրանք, ովքեր ընտրել են պատրանքային աշխարհը՝ հրապուրվելով դրա սատանայական գրավչությամբ, կմնան հենց իրենց ընտրած աշխարհում:

Իսկ նրանք, ովքեր չենթարկվեցին պատրանքային աշխարհի կախարդանքին և ընտրեցին Աստծո Աշխարհը, իրենց Էվոյուցիան կշարունակեն նոր էներգետիկական մակարդակում:

Ընտրության ժամանակի, հատիկը որոմից ջոկելու ժամանակի և Լույսի ու խավարի միջև տեղի ունեցող վերջնական ճակատամարտի ժամանակի վերաբերյալ ամբողջ Ուսմունքը բազմիցս տրվել է մեր կողմից:

Եվ հիմա վրա է հասնում մի ժամանակաշրջան, երբ ձեր կատարած ընտրությունների հետևանքները պետք է դրսևորվեն ֆիզիկական ոլորտում:

Միշտ էլ սկզբում ընտրություն է կատարվում մտքի և հույզի ոլորտում, որից հետո այդ ընտրության արդյունքն իջանում է ֆիզիկական ոլորտ:

Ես այսօր ձեզ ասացի շատ ավելին, քան թույլատրելի է ձեր գիտակցության համար:

Եվ այսօրվա իմ զրույցն օգնություն է այն քչերին, որոնց այդ օգնությունը կարելի է ցուցաբերել:

ԵՄ ԵՄ Հաղթանա Բուդդան

Տեր Լանտո

25 դեկտեմբերի, 2014 թ.

**Առանց ճշմարիտ հոգևոր ավանդույթները պահպանելու
հնարավոր չէ հասարակության բարեհաջող զարգացումը**

ԵՄ ԵՄ Լանտոն:

Ես կրկին ձեզ այցի եմ եկել: Հուսով եմ, որ մեր այսօրվա զրույցն օգտակար կլինի ձեզ համար, ձեր հոգիների համար:

Ձեզ հայտնի է, որ ձեր ժամանակներում շատ կարևոր է հատկապես ձեր ջանքերի կենտրոնացումը ներքին համակշռության պահպանման վրա: Ձեր էներգիաների համակշռության: Քանզի ես ոչ մի գաղտնիք բացած չեմ լինի, եթե ասեմ, որ փաստորեն մարդու բոլոր հոգևոր նվաճումները որոշվում են միայն մի բանով՝ ներքին անդորրը պահպանելու նրա ունակությամբ և Արարչի հետ միասնությամբ՝ անկախ ցանկացած արտաքին հանգամանքից:

Մարդկության Ուսուցիչներն իրենց աշակերտների հատկապես այդ հատկանիշն են զարգացրել:

Միշտ, երբ որևէ Մեծ Ուսուցիչ մարմին էր առնում, իր շուրջը ստեղծում էր նվիրյալ սաների շրջան: Եվ հենց այդ սաներն էին ապահովում Լույսի այն առաքելության պաշտպանությունն ու հաջողությունը, որով մշտապես Երկիր են իջնում մարդկության Ուսուցիչները:

Դուք ավանդույթներ չունեք, չունեք Ուսուցչի պաշտամունք: Բարբարոսություն է տիրում մարդկային կյանքի բոլոր ոլորտներում:

Երբ մարդկության մեծամասնության գիտակցությունը մշտապես գտնվում է զուտ կենդանական բնագոյների ու պահանջմունքների բավարարման մակարդակի վրա, հնարավոր չէ բարձր հոգևոր նվաճումներ ակնկալել: Բոլոր հոգևոր նվաճումները միշտ էլ ձեռք են բերվել որորշակի հոգևոր դպրոցների ավանդույթներով:

Ավելի հինավուրց ժամանակներում մարդիկ գիտեին, որ առանց ճշմարիտ հոգևոր ավանդույթներ պահպանելու հնարավոր չէ հասարակության բարեհաջող զարգացումը:

Ամեն մի հասարակություն, որի հիմքերից անդառնալիորեն հեռացված են հոգևոր ավանդույթները, դատապարտված է այլասերման ու մահվան:

Երկրում ներկայումս գոյություն ունեցող և ոսկե հորթ պաշտող քաղաքակրթությունը, իր ողջ թվացյալ գրավչությամբ հանդերձ, շարունակություն չի ունենա: Ցավոք, այն դատապարտված է, քանի որ կտրված է Աստծուց և, հետևաբար, կտրված է Աստծո էներգիայի աղբյուրից: Իսկ դուք գիտեք, որ աշխարհում ամեն ինչ պահպանվում ու գոյատևում է միայն Աստծո էներգիայի շնորհիվ:

Միայն կամավոր կերպով էներգիայի աղբյուրից հրաժարվելու դեպքում է, որ քաղաքակրթությունն ինքն իրեն դատապարտում է չգոյության:

Անցյալ դարերում միշտ այդպես է եղել:

Ցավոք, ներկայումս գոյություն ունեցող տարեգրություններում մարդկության պատմությունն ընդգրկում է ընդամենը մի քանի հազարամյակ: Եվ եթե դուք հնարավորություն ունենայիք ավելի խորանալու դարերի խորքում, ապա ձեր առջև կենդանի օրինակներ կհառնեին, թե ինչպես են Աստծուց կտրվելն ու Աստծո էներգիայի սխալ օգտագործումը հանգեցնում տեխնիկապես շատ զարգացած քաղաքակրթությունների ոչնչացմանը:

Որպես ամենամոտ պատմական օրինակ կարող է ծառայել Ատլանտիդայի կործանումը: Դեռևս չկորսված առասպելներում խոսվում է այն մասին, որ հսկա մի մայրցամաք կործանվել է հաշվված օրերի ընթացքում. սուզվել է օվկիանոսի հատակը:

Փրկվել են միայն մարդկության Ուսուցիչների ընտրյալ հետևորդները, որոնք իրենց սրտերում պահպանել են նվիրվածությունն Աստծուն:

Այն ժամանակներում՝ մոտավորապես մեկ միլիոն տարի առաջ, Ատլանտիդա մայրցամաքն անընդհատ գտնվում էր պատերազմական իրավիճակում: Մայրցամաքում բնակվող մարդիկ իրարից բաժանվել էին գլխավոր սկզբունքով՝ Աստծո և Նրա Օրենքի նկատմամբ վերաբերմունքով:

Մարդկանց մի մասն Աստծո էներգիան օգտագործում էր բացառապես սեփական հարաճուն ցանկություններն ու քմայքները բավարարելու համար:

Ավելի փոքրաթիվ մասը պահպանում էր հավատարմությունն Աստծուն: Մարդկանց այդ երկու խմբերի միջև հաստատվել էր մշտական թշնամանք ու հակամարտություն:

Դրանք իսկապես իրենց ներքին էությանը կատարելապես իրար հակադիր զարգացման ուղիություններ են մարդկության համար. առաջինն ուղղված է սեփական էգոյին ծառայելուն և դրա ցանկությունները բավարարելուն, իսկ մյուսը՝ Աստծուն և մերձավորին ծառայելուն:

Ուշադիր զննեք այն իրավիճակը, որը ներկայումս հաստատվել է աշխարհում: Ձեզ չի՞ թվում արդյոք, որ պատմությունը կրկնվում է...

Այն կրկնվում է նախանձելի կայունությամբ: Բայց ձեր ժամանակներում նրանք, որոնք իրենց կյանքում պահպանում են ճշմարիտ աստվածային սկզբունքներ, տոկոսային առումով զգալիորեն քիչ են:

Դա բացատրվում է նրանով, որ հիմա երկրում գտնվում են ծուլիկները, որոնք իրենց հոգևոր զարգացմամբ հետ են մնացել մարդկության առաջադեմ հատվածից, այն հատվածից, որն զբաղեցնում է ավելի բարձր էներգետիկական մակարդակներ:

Ձեր ժամանակները Կալի Յուզա են կոչվում: Դա այն անկման դարաշրջանի անվանումն է, երբ Աստված մարդկանց կյանքում գերակայություն չունի:

Ամբողջ թվացյալ արտաքին ճոխությամբ ու զուտ տեխնիկական բոլոր նվաճումներով հանդերձ՝ ներկայիս քաղաքակրթությունը դատապարտված է կործանման հատկապես այն պատճառով, որ ինքն իրեն կտրել է Աստծուց և Նրա Օրենքից:

Իսկ երկրագնդի բնակչության մեծ ու անընդհատ աճող թվաքանակը մոտենում է որոշակի կրիտիկական կետի: Արարիչն իր անսահման ողորմածությամբ բոլոր հոգիներին հնարավորություն է տալիս, որ դրսևորեն իրենց աստվածային բնույթը: Բայց քանի որ նախորդ մարմնավորումների հազարամյա շարանում ներկայիս մարմնավորված անհատականությունները ոչ աստվածային վարք են ցուցադրել, ապա և այն պայմանները, որոնցում հիմա պետք է ցուցադրեն աստվածային վարքի կերպեր, այնքան էլ լավը չեն:

Կարմայի Օրենքն այդպես է գործում:

Եթե մարդիկ կամենում են հագուրդ տալ իրենց ցանկություններին ու կրքերին, ապա ամեն մի հաջորդ մարմնավորման հետ նրանք ավելի ու ավելի վատ պայմաններում են հայտնվում, որոնք խոչընդոտում են իրենց աստվածային բնույթի դրսևորումը:

Իմ նկարագրած պատկերն իր մեջ ոչ մի աշխարհակործան և անելանելի բան չի պարունակում: Ամեն մարդ ցանկացած պահի հնարավորություն ունի իր նկրտումների վեկտորն ուղղելու դեպի Աստված:

Մեր խնդիրն է գալ և տալ մեր Ուսմունքը, որը հիրավի ճշմարիտ ուղղության, ձեր հոգիների անմահության ուղղության հուսալի ցուցիչ է:

Նրանք, ովքեր իրենց մեջ ուժ և արիություն, հավատ և նպատակամղվածություն կգտնեն և կընթանան մեր ցույց տված ուղղությամբ, կստեղծեն Ոսկեդարյան հաջորդ քաղաքակրթության սերմնահատիկները:

Իսկ նրանք, ովքեր կգերադասեն հետևել իրենց կենդանական բնույթին, ի վերջո կմարմնավորվեն այնպիսի պայմաններում, որոնք ամենաշատն են համապատասխանում իրենց ներքին էությանը:

Ես հուսով եմ, որ այսօր մեր միջև կարևոր գրույց կայացավ, որը շատ բաներ պարզաբանեց ձեր հոգիների համար:

ԵՄ ԵՄ Լանտոն

Էլոհիմ Կիկլոպետոս

26 դեկտեմբերի, 2014 թ.

Ես կոչ եմ անում ձեր ամեն մի օրը նվիրաբերել Աստծուն

ԵՄ ԵՄ Էլոհիմ Կիկլոպետոս:

Ի կատար ածվեց... Ես եկա՛...

Ձեզ համար ոչինչ չի փոխվել: Ձեր աշխարհում ամեն ինչ առաջվա պես է:

Բացվում է նոր օրը: Առջևում ամանորյա տոներն են:

Եվ ես որևէ կերպ չեմ կարող ազդել ձեր պլանների ու երազանքների վրա:

Բայց ձեր պլաններից զատ կան նաև համայն Տիեզերքի Արարչի պլանները:

Իսկ ձեր կյանքերում դուք որքա՞ն հաճախ եք հիշում Արարչի և Նրա պլանների մասին...

Լինու՞մ է այդպիսի բան...

Ես կարծում եմ, որ հաճախ չի լինում:

Սակայն անցյալում՝ շատ հազարամյակներ առաջ, եղել են քաղաքակրթություններ, երբ մարդկանց ողջ կյանքը ենթակա էր Աստծուն և Նրա Կամքի իրազորմանը:

Դրանք Ոսկեդարյան քաղաքակրթություններն էին:

Ձեզնից՝ Երկրում այժմ մարմնավորվածներից, շատ քչերին է բախտ վիճակվել մարմնավորված լինել այն հինավուրց ժամանակներում:

Այն ժամանակ մարմնավորված էին մարդկության լավագույն ներկայացուցիչները: Եվ հիմա նրանք արդեն շատ հեռու են գնացել Էվոյուցիոն զարգացման աստիճաններով: Իսկ դուք, որ ներկա ժամանակում եք մարդկության լավագույն ներկայացուցիչները, ահագին հետ եք մնացել նրանցից:

Այնուհանդերձ Էվոյուցիան շարունակվում է, և աստվածային հնարավորությունը կրկին բաց է այն անհատականությունների համար, որոնք իրենց կյանքում գերկայությունը տվել են Աստծուն:

Իսկ նրանց համար, ովքեր հակառակ ընտրությունն են կատարել՝ որոշելով ծառայել իրենց Էգոյին և կատարել նրա անհագ ցանկությունները, աստվածային հնարավորության դռներն ուր որ է կփակվեն վերջնականապես:

Ուստի ես ձեզ կոչ եմ անում, որ, այսօրվանից սկսած, ձեր ամեն մի օրը նվիրաբերեք Աստծուն: Դրա համար բավարար կլինի, որ պարզապես միշտ մտածեք Աստծո մասին և օրվա ձեր բոլոր գործերը նվիրաբերեք Նրան:

Դուք կարող եք տվյալ օրվա համար նախատեսած ամեն մի գործը սկսելուց առաջ առանձին կանչ հղել և խնդրել Աստծուն, որ Իր հսկողության տակ վերցնի ձեր բոլոր գործողությունները, որպեսզի դրանք համապատասխանեն Իր պլաններին: Դուք կարող եք խնդրել, որ Աստված ձեր կենսահոսքն օգտագործի Իր պլանների իրականացման համար:

Այդպիսով, կատարելով ձեր օրախնդիր գործերը, դուք փաստորեն Աստծուն կմտցնեք ձեր կյանք և մշտապես կծառայեք Նրան:

Դա շատ պարզ գործառնություն է: Այն ձեզնից ոչ մի լրացուցիչ դրամական միջոցների ներդրում չի պահանջի և նույնիսկ ժամանակ չեք ծախսի դրա համար:

Դուք պարզապես այն ամենը, ինչ անում եք օրվա ընթացքում, նվիրաբերում եք Աստծուն:

Փորձեք այդ գործառնությունն ի կատար ածել գոնե մեկ տարվա ընթացքում:

Շատ շուտով դուք կհասկանաք, որ օրվա ընթացքում ձեր կատարած ամեն ինչը չէ, որ համապատասխանում է Աստծո Մտահղացմանը: Եվ շատ շուտով կհասկանաք նաև, որ ձեզ շրջապատող կյանքում շատ քիչ բան կա, որ համապատասխանում է Արարչի Մտահղացմանը. շատ բաներ պարզապես անհամատեղելի են Նրա Մտահղացման հետ:

Երբ այդ պարզ ճշմարտության ըմբռնումով պայծառանա ձեր գիտակցությունը, դա կլինի ձեր առաջին գիտակցված քայլն առ Աստված:

Փորձեք ձեր կյանքում ամեն ինչն անել Աստվածառաջնորդությանը համապատասխան:

Իհարկե, այդ պարզ գործառնությունը կյանքի կոչելու համար հարկ կլինի, որ ամեն օր անեք ամենաքիչը երկու բան. մշտապես հիշեք ձեր այդ գործառնության մասին և ձեր գիտակցությունը մշտապես պահեք այնպիսի մակարդակի վրա, որն ամենաշատն է մոտ Աստծուն:

Նրանց համար, ովքեր, ի հեճուկս բոլոր խոչընդոտների, կկարողանան իրենց կյանքում իրականացնել այդ գործառնությունը, աստվածային հնարավորության դռները մշտապես բաց կլինեն: Եվ նրանք զարմանքով իրենց կյանքում փոփոխություններ կնկատեն, որոնք տեղի կունենան այդ պարզ գործառնության ամենօրյա կատարման արդյունքում:

Դուք զարմանքով կնկատեք, որ ձեր կերած կերակուրը ո՛չ իր քիմիական բաղադրությամբ, ո՛չ էներգետիկայով չի բավարարում աստվածային չափանիշներին:

Դուք զարմանքով կհայտնաբերեք, որ երեխաներ սաղմնավորելու, նրանց ծննդի ու դաստիարակման նկատմամբ ձեր վերաբերմունքն աստվածային չէ:

Դուք կնկատեք, որ ձեր ամբողջ կյանքը բերնեբերան լցված է կատարելապես անպետք բաներով, որոնց խառնապտույտում դուք պարզապես ժամանակ չեք ունենում մտածելու Աստծո մասին:

Դուք կտեսնեք, որ ձեր կյանքի մեծ մասը ծախսում եք, որ փող վաստակեք կամ այն խնայեք, այսինքն՝ ձեր ամբողջ կյանքի ընթացքում դուք ծառայում ու խոնարհվում եք կատարելապես վերացական մի սիմվոլի:

Դուք կնկատեք, որ ձեր կյանքից անհետ չքացել են այնպիսի հասկացությունները, ինչպիսիք են պատիվը, խիղճը, մաքրությունը, բարեշնորհությունը, բարեպաշտությունը:

Կանցնի մարդկանց ևս մեկ-երկու սերունդ, և նոր մարմնավորվողներն արդեն կդադարեն հասկանալ այդ բառերի իմաստը:

Բայց նրանց բառամթերքում կլինեն բառեր, որոնք այժմ խրախուսվում ու տարածվում են զանգվածային լրատվության միջոցներով, և որոնց թրթիռներն ուղղակի ավերում են մարդկանց հոգիները:

Շա՛տ բաների մասին կկարողանաք խորհրդածել, եթե որոշեք ձեր կյանքը նվիրաբերել Աստծուն:

Ուստի իմ այս Ուղերձը հասկանալի չի լինի այն մարդկանց համար, որոնք որոշել են իրենց կյանքում Աստծուն գերակայություն չտալ:

Նրանց կթվա, թե ես խոսում եմ անիմաստ բաների մասին, որոնք չեն կարող իրականացվել ժամանակակից մարդկանց կյանքում:

Ես խոսում եմ այն մասին, թե ինչն ինչպես պիտի լինի, որ համապատասխանի աստվածային չափանիշներին:

Աստծուց շնորհ ստացած ազատ կամքը թույլ կտա, որ ընտրություն կատարեք՝ առաջնորդվել իմ հանձնարարականներով, թե՞ ոչ:

Ես ընդամենը եկա, որ ձեզ հիշեցնեմ Աստծո և Նրա Օրենքի մասին: Ինչպես նաև այն հավերժական կյանքի մասին, որը կունենան Աստծո հետ եղողները:

Վեհապետ Մորիա
27 դեկտեմբերի, 2014 թ.

Մենք հստակ ցույց ենք տալիս Ուղին

ԵՄ ԵՄ Էլ Մորիան:

Դե ինչ, ահա և եկավ այս բոլորաշրջանի վերջին Ուղերձը տալու ժամանակը:

Ափսոս, որ բաժանվում ենք, բայց աստվածային հնարավորության ժամանակն ավարտվեց:

Մենք ափսոսանքով հանգում ենք անսփոփ այն եզրակացությանը, որ մեր էներգիաների ու ջանքերի մեծ մասը, որոնք այս տասը տարիների ընթացքում ծախսեցինք մեր Ուղերձները տալու համար, չի յուրացվել մարմնավորման մեջ գտնվող մեր սաների կողմից:

Չափազանց թույլ է մեր ձայնը, հազիվ է լսվում այն ժխտրի մեջ, որով անընդհատ ողողվում է ձեր աշխարհը հեռուստացույցների էկրաններից ու բարձրախոսներից:

Եվ դա դեռ դժբախտության կեսն է: Գլխավոր դժվարությունն այն է, որ դուք ինքներդ ձեր գիտակցությունը հուսալիորեն արգելափակում եք մեր թրթիռներից:

Մենք գալիս և անխոնջ կերպով մեր ճառագայթներն ենք առաքում ձեր քնած գիտակցությունն արթնացնելու համար:

Եվ ահա, երբ մենք վերջապես անասելի ջանքերի և ահռելի աստվածային ողորմածության շնորհիվ կարողացանք ձեր աշխարհին փոխանցել մեր անգին Ուսմունքը, տասը տարի անցնելուց հետո ի՞նչ ենք տեսնում:

Մենք տեսնում ենք միայն աստվածային գիտակցության թույլ ցուցանքներ, որոնք այս ու այնտեղ ցրված են երկրագնդով մեկ:

Չափազանց անհամոզիչ է Կարմայական Վարչության և այս Տիեզերքի Բարձրագույն Խորհրդի համար այդ թույլ արձագանքը մեր ջանքերին, որպեսզի լրացուցիչ հնարավորություն և էներգիայի լրացուցիչ պահուստ հատկացվի:

Պաշտելիներս, Աստծո համար ոչ մի սահմանափակում չկա:

Աստծո համար բացարձակապես ամեն ինչ հնարավոր է:

Սակայն մենք ստիպված ենք հաշվի նստել ձեր ազատ կամքի հետ: Մենք չենք կարող բռնությամբ ձեզ ստիպել, որ ընթանաք զարգացման էվոլյուցիոն ուղով:

Մենք կարող ենք ջանքեր գործադրել և ձեզ համոզել, բայց չենք կարող պարտադրել: Հենց դրանով ենք մենք տարբերվում այլ ուսուցիչներից ու նրանց ներկայացուցիչներից, որոնք այս ու այնտեղ հայտնվում են մոլորակում:

Ձեզ հայտնի է, որ մենք՝ որպես մարդկության Ուսուցիչներ, մշտապես օգնություն ենք ցուցաբերում և մշտապես ձեզ ենք փոխանցում մեր Ուսմունքը բազմաթիվ հազարամյակների ընթացքում:

Բայց դուք նաև տեղեկացված եք առ այն, որ ձեր աշխարհը երկակի բնույթ ունի: Նրանում կա և՛ Բարին, և՛ չարը, կա ինչպես Լույս, այնպես էլ խավար: Եվ ձեզնից ամեն ոք դրանում կարող է համոզվել, եթե ուշադրությամբ իր շուրջը նայի:

Հիրավի, ձեր աշխարհը տարբեր հակադիր դրսևորումների մի խառնուրդ է: Եվ միայն մեր տված զանազանման Ուսմունքի, Բարու ու չարի Ուսմունքի և Ձեռնադրումների Ուղու Ուսմունքի շնորհիվ է, որ այն հոգիները, որոնք ընտրում են էվոլյուցիոն զարգացման ուղին, ունակ են լինում տառացիորեն մեկ մարմնավորման ընթացքում դուրս պրծնելու պատրանքի կապանքներից:

Մենք հստակ ցույց ենք տալիս Ուղին: Մենք մեր օգնությունն ենք ցուցաբերում բոլոր նրանց, ովքեր մեզնից օգնություն և օժանդակություն են խնդրում:

Բայց մենք չենք կարող ձեզ օգնություն ցուցաբերել ձեր կամքին հակառակ և այն դեպքում, երբ դուք քննադատում եք մեզ, քննադատում եք մեր դեսպանորդին:

Պաշտելիներս, ամբողջ Ուսմունքը տրվում է Երկրի մարդկության նկատմամբ խոր Սիրո և Կարեկցանքի զգացումով: Եվ այդ Ուսմունքը դուք կարող եք յուրացնել միայն Աստծո և Վեհապետների նկատմամբ անվերապահ Սիրո զգացումով:

Ուստի այն դեպքերում, երբ ձեր սրտերը լիքն են ատելությամբ, և դուք ձեզնից դուրս մեղավորներ եք փնտրում ձեր աղետալի վիճակի համար, մենք ոչնչով չենք կարող ձեզ օգնել:

Համաձայնեք, որ անհամեմատ ավելի հեշտ է ձեզնից դուրս ինչ-որ տեղ մեղավորներ փնտրելը՝ ինչ-որ երկրում, դասակարգում կամ խմբակցությունում, ռասայում կամ ցեղում, դավանաբանության մեջ կամ կրոնում, քան փորձել և գտնել իսկական պատճառն այն ամենի, ինչ կյանքում տեղի է ունենում ձեզ հետ:

Համաձայն Օրենքի՝ այն ամենի պատճառը, ինչ կյանքում ձեզ հետ կատարվում է, դու ինքներդ եք՝ անցյալի ձեր նախընտրանքներն ու արարքները:

«Ինչ ցանես, այն էլ կինձես»:

Ուստի և բոլոր ժամանակների բոլոր իմաստունները զբաղվել են միայն իրենց սեփական թերությունների ու անկատարությունների դեմ պայքար մղելով: Նրանք շատ լավ հասկանում էին, որ ավելի կատարյալ գիտակցությանը համապատասխանում է ավելի կատարյալ շրջակա աշխարհ:

Ուստի այն աշխարհը, որում հիմա դուք գտնվում եք, ձեր անկատար գիտակցության արտացոլանքն է:

Եվ իմաստ չունի ձեզնից դուրս մեղավորներ փնտրել, թե ինչու՞ եք շրջապատված անարդարություններով:

Եթե ձեր կյանքը դիտարկվի մեկ մարմնավորման տեսանկյունից, ապա հազվադեպ է հնարավոր լինում հետևել, թե ինչպես է փոխվում ձեզ շրջապատող ամեն ինչը, երբ փոխվում է ձեր գիտակցությունը: Պետք է ամենայն ունայնից շատ հեռու կանգնած իմաստուն լինել, որպեսզի հասկացվեն այն երբեմն անորսալի փոփոխությունները, որոնք տեղի են ունենում ձեր շուրջը:

Սակայն եթե դուք հավատում եք Աստծուն և Նրա Օրենքի Իմաստությանը, ապա հասկանում եք, որ որոշակի պայմաններում ձեր ծնվելն արդեն իսկ համապատասխանում է ձեր նախորդ մարմնավորումների ամբողջ շարանի ձեռքբերումներին:

Եթե դուք, անկախ ցանկացած արտաքին պայմանից ու հակառակ ձեր աշխարհում գոյություն ունեցող ամեն ինչի, հաստատ որոշել եք ընթանալ աստվածային Ուղով, ապա ձեր ամենօրյա ջանքերը դեպքերի 100 տոկոսով անգնահատելի օգնություն կլինեն ձեր հոգու համար:

Պարտադիր չէ, որ այդ օգնությունը դրսևորվի հարստության, առողջության և երկարակյացության տեսքով: Ներքին երջանկության, հանգստության, ներդաշնակության ու Սիրո վիճակը երբեմն անհամեմատ ավելի մեծ արժեք է ունենում ձեր աշխարհում, քան ցանկացած հարստություն. բայց ձեր ժամանակներում Երկրի վրա դա հազվադեպ է պատահում:

Մեր բոլոր ջանքերը մենք ուղղում ենք այն բանին, որ դուք երջանիկ լինեք և մշտապես լինեք Աստծո հետ:

Իսկ այսօր ես ձեզ հրաժեշտ եմ տալիս՝ լիահույս մնալով, որ այս կամ այն չափով մենք կկարողանանք շարունակել մեր աշխատանքը մեր նվիրյալ սաների հետ:

ԵՄ ԵՄ Վեհապետ Մոդիսն

Ուղերձների 22-րդ շրջան (դեկտեմբեր, 2015 թ.)

Սանատ Կումարա
20 դեկտեմբերի, 2015 թ.

Ուղու ցանկացած կետից կարելի է հետ շրջվել և վերադառնալ զարգացման աստվածային Ուղին

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան:
Ես կրկին եկա...
Տխուր է դիտել այն, ինչ այս բարդ ժամանակներում տեղի է ունենում Երկրի վրա:
Կարելի՛ էր խուսափել վատթար զարգացումներից:
Եվ Մենք պատրաստ ենք հնարավոր ու անհնարին ամեն ինչ անելու, որպեսզի փրկենք
հնարավորինս շատ մարդկային հոգիներին:
Սակայն, սիրելիներս, մնացածը ձեր գործն է...
Ինքներդ ուզու՞մ եք փրկվել արդյոք...
Ի գորու՞ եք արդյոք շարունակելու Կյանքը...
Երբեմն որքան դժվար է լինում հասկանալ, թե ինչն ձեզ խանգարում վերադառնալ
աստվածային Ուղի:
Ի՞նչն է խանգարում, որ ներքին վստահություն ձեռք բերեք Աստծո և Հավերժական Կյանքի
գոյության նկատմամբ:
Չէ՞ որ հենց միայն Աստծո նկատմամբ հավատը բառացիորեն հաշված տարիների ընթացքում
կարող է ձեր կյանք վերադարձնել Աստվածային կերպերը, Բարոյականության Օրենքը:
Սակայն ճշմարիտ հավատ ձեռք բերելու համար հարկավոր է շատ ու շատ աշխատել:
Առնվազն հարկ է, որ կատարվեն այն հանձնարարականները, որոնք վերջին տասը տարիների
ընթացքում ձեզ տրվել են Մեր դեսպանորդի միջոցով:
Դժվար էր հետևել մեր խորհուրդներին ու հանձնարարականներին:
Ինչու՞ եք գերադասում լողալ այն սուռճատների պղտոր հոսանքով, որոնք հանկատարորեն
ձեզ են մատուցում զանգվածային լրատվության միջոցները:
Ինչու՞ որևէ ջանք չեք գործադրում, որպեսզի ձեզ ու ձեր երեխաներին գերծ պահեք այն
ամենից, ինչը խեղում է ձեր հոգիները և այլևս ուժ ու կարողություն չի թողնում, որ ընթանաք
լուսավոր ուղով:
Այնուհանդերձ, երբեք չափազանց ուշ չի լինում:
Ուղու ցանկացած կետից կարելի է հետ շրջվել և վերադառնալ դեպի զարգացման
աստվածային Ուղին:
Մի՞թե այս մասին Մենք ձեզ չենք ասել...
Այո, մեծ կարմա է կուտակված: Այո, դժվար է կտրվել անորակ էներգիաներից և ձեր
գիտակցության բացասական վիճակներից:
Սակայն Մենք ուսուցանում ենք, որ մեղքերի խոստովանանքն ու թույլ տրված սխալների
համար գոչումը կիսով չափ թեթևացնում են կարմայական բեռը: Իսկ մյուս կեսը կարող է
չեզոքացվել աղոթքների մաքուր էներգիայով:
Բայց եթե մարդկության առավել գիտակից հատվածը չի ընդունում Մեր
հանձնարարականները և չի հետևում Մեր խորհուրդներին, ապա բացվում է մի այլ՝ ավելի
դժվարին ուղի, տառապանքների ուղին:
Պետք է ձեզ ասեմ, որ մարդկությունն արդեն հատել է շեմը և իր առաջին քայլերն է անում այդ
տառապանքների ուղով:
Ձեզնից շատերը դժգոհում են կյանքից, դրանում սիրո բերկրանքի բացակայությունից:
Բայց դա սոսկ ձեր ընտրած տառապանքների ուղու առաջին ծաղիկներն են, և դեռ ինչն էր են
սպասվում առջևում...
Մենք մշտապես մարդկությանը մատնացույց էինք անում ավելի հեշտ ուղին: Եվ հիմա ևս
շարունակում ենք ցուցաբերել ամբողջ անհրաժեշտ օգնությունը, որպեսզի գոնե ոչ շատ մեծ
քանակությամբ հոգիներ կարողանան ընտրել փրկության ուղին և ընթանան դրանով:
Մենք մեր ջանքերը գործադրում ենք նույնիսկ այնժամ, երբ արդեն ավարտվել է մեր
Ուղերձները փոխանցելու թողության շնորհի ժամկետը:
Մեզնից ամեն Ոք գոհաբերել է սեփական նվաճումների էներգիաները, որպեսզի գա և իր
Ուղերձը տա մարդկությանը:
Մեզնից ամեն Ոք անում է հնարավորը և անգամ անհնարինը:

Մենք գործի ենք դնում այն ամբողջ հզորությունը, որը թույլատրում է օգտագործել Կարմայական Վարչությունը:

Սակայն Մեր առավել նուրբ էներգիաները վրիպում են ձեր գիտակցությունից, քանի որ այն մշտապես սուզված է շրջապատող իրականության բացասական թրթռանքների մեջ:

Ուստի մենք ձեզ համար անխոնջ կերպով էլի ու էլի ենք կրկնում. որպեսզի կարողանաք օգտվել մեր օգնությունից ու օժանդակությունից, պետք է հնարավոր ամեն ինչ անեք, որ ձեր թրթիռները պահեք հնարավոր ավելի բարձր մակարդակի վրա:

Ցավոք, մեծ քաղաքներում դրան հասնել այլևս հնարավոր չէ:

Քաղաքները նեցուկ են դարձել այն ուժերի համար, որոնք բարուրել են մարդկությանը և նրան էվոլյուցիոն ուղով ընթանալու հնարավորություն չեն տալիս:

Քաղաքների հաշվով մենք ճակատամարտը տանուլ տվեցինք:

Սակայն այն մարդիկ, որոնք ապրում են ոչ մեծ բնակավայրերում, դեռևս կարող են ընկալել մեր թրթիռները և իրենց գիտակցությունը պահել բավարար բարձր մակարդակի վրա:

Մենք արեցինք հնարավոր ամեն ինչ, որպեսզի դուք կարողանաք քաղաքներից ձեր ելքն ի կատար ածել:

Ժամանակակից տեխնոլոգիաները թույլ են տալիս, որ ձեզ համար բավարար հարմարավետություն ապահովեք նույնիսկ քաղաքներից շատ հեռու:

Սակայն ֆիզիկական ոլորտում ձեր փոխարեն գործել հնարավոր չէ:

Մենք վաղօրոք ձեռնարկեցինք բոլոր անհրաժեշտ քայլերը, որ դյուրին դարձնենք ձեր անցումն ու տառապանքները: Բայց մենք չենք կարող անել գործի այն մասը, որ ձեզ է թողնված:

Գիտցե՛ք, որ վրա է հասել այն ժամանակահատվածը, որից հետո այլևս չեք կարողանա վերադառնալ դեպի անվտանգ էվոլյուցիոն ուղին:

Եվ դա ձեր ընտրությունն է:

Որքան էլ ցավալի լինի դեպի անդունդ տանող ձեր քայլերը դիտելը, մենք չենք կարող ձեզ կանգնեցնել, եթե հաստատ որոշել եք նետվել անդունդը:

Ես այսօր եկա այն հույսով, որ ձեր գիտակցությանը հասցնեմ այն ճշմարտությունը, որ վրա է հասել տառապանքների ուղուց խուսափելու վերջին հնարավորության ժամը:

Եվ այդ հնարավորությունը դեռևս բաց է ընտրյալների համար:

ԵՄ ԵՄ Մանատ Կումարան: ՕՄ

Տեր Շիվա

21 դեկտեմբերի, 2015 թ.

Միայն հավատն առ Աստված և համայն Արարչության նկատմամբ սերը կարող են մոտակա ժամանակներում փրկել մարդկությանը

ԵՄ ԵՄ Շիվան...

Այսօր... Ես եկա...

Խորապես ցավում եմ, որ եկել եմ ձեզ հաղորդակից դարձնելու անուրախ լուրերի:

Ի՛նչ արած, այս աշխարհում ամեն ինչ սոսկ պատրանք է:

Եվ ինքներդ եք ընտրում, թե ո՞ր պատրանքի մեջ լինեք:

Ձեր պատրանքը ձևավորվում է ձեր գիտակցությամբ: Եվ եթե կամենում եք մշտապես գտնվել վախի, ատելության, չարակամության մեջ, ապա ձեզ շրջապատող պատրանքը համալարվում է ձեր գիտակցության հետ, և արտաքին աշխարհում ձեր անկատարության արտացոլանքն ստանում է պատերազմի, ահաբեկչության, սոցիալական լարվածության և ֆինանսական անկայունության տեսք:

Այդ ամենն ինքներդ եք ընտրում, պաշտելիներ՝

Դա՛ է ձեր ընտրությունը:

Մեր խնդիրը սոսկ այն է, որ ձեզ հրավիրենք մեր սեղանի մոտ և ձեզ առաջարկենք մեր ուտեստները:

Բայց դուք կարող եք հրաժարվել և մոտ չգալ:

Այդպիսին է ազատ կամքի Օրենքը:

Վերջին տասը տարիների ընթացքում գործում էր մի թողության շնորհ, որը մեզ թույլ էր տալիս ոչ միայն գալ և Ուղերձների միջոցով ձեզ ուսուցանել, այլ նաև մեր էներգիաները փոխանցել ձեր աշխարհին:

Ձեզնից պահանջվում էր ուսանելու համաձայնություն տալ և հետևել մեր հանձնարարականներին:

Հենց միայն անձամբ Իմ կողմից շնորհված վիթխարի թողությունը կարող էր բեկում մտցնել ամբողջ աշխարհի իրադրության մեջ:

Համաձայնեք, որ 10-ամյա ուսուցում տալուց հետո մենք իրավասու էինք ձեզ խնդրելու, որ ինչ-որ բան անեք հանուն մարդկության Բարօրության:

Ուստի ես տվեցի մի թողության շնորհ, որն ինքնին կարող էր ամեն ինչ փոխել դեպի լավը. ես մեր դեսպանորդին խնդրեցի, որ «ՀԱՆՈՒՆ ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹՅԱՆ» շարժում նախաձեռնի:

Եվ ի՞նչ ստացվեց. ամբողջ աշխարհից հազարավոր մարդիկ առաջ նետվեցին, որ կատարե՞ն իմ խնդրանքը. աշխարհին տան բարոյականության գաղափարը...

Ո՛չ: Հենց այն կիսամյակի ընթացքում, երբ ես պահում էի էներգիայի հոսքը և այն ուղղորդում այդ թողության շնորհի լայն սփռման համար, մեր հետևորդները քննարկումներ սկսեցին և կասկածանքների գիրկն ընկան:

Դուք ձեռքից բաց թողեցիք վիթխարի հնարավորություն: Մարդկության լավագույն ներկայացուցիչները չհանձնեցին մեր Դպրոցի ավարտական քննությունը:

Դուք ձեր թեստը ձախողեցիք:

Արդյունքը երկար չսպասեցրեց:

Հենց որ դուք հրաժարվում եք աստվածային կերպերից, անմիջապես աշխարհում ուժեղանում են հակադիր միտումները:

Դուք հրաժարվում եք բարոյականությունից և ստանում ձեր աշխարհի լիակատար անբարոյականության դրսևորումներ՝ խաբեբա քաղաքական գործիչներ և տնտեսագետներ, ահաբեկչության ուժեղացում և պատերազմների սանձազերծում:

Թույլ տվեք ձեզ հիշեցնել, որ դուք գտնվում եք հետևանքների աշխարհում. ձեր ամեն մի նախընտրանքին համապատասխանում է հենց այն արդյունքը, դեպի ուր միտված է ձեր այդ նախընտրանքը:

Բաց թողնված հնարավորությունները ձեզ կանգնեցնում են հենց այն հումանիտար արհավիրքի առաջ, որի վրա հասնելուն դուք ամեն կերպ աջակցել եք:

Այսպիսով, մարդկության առաջադեմ հատվածը, որն այս ամբողջ ընթացքում կարդում էր մեր Ուղերձները, կատարեց իր ընտրությունը:

Մենք պարտություն կրեցինք:

Եվ, իհարկե, ձեզ կվիճակվի բախվել ձեր կատարած ընտրության հետևանքների հետ:

Երբ Վեհապետների պլանը չի իրագործվում, երբ դուք ականջալուր չեք լինում ձեր խղճի ձայնին, այլ տրվում եք կասկածանքներին ու ծուլությանը, ապա արժանանում եք համապատասխան հետևանքների, և այդ հետևանքները, եկող տարվանից սկսած, ավելի ու ավելի կուժգնանան:

Կուզենայի ձեզ համար լուսաբանել մեր Ուսմունքի ևս մի դրույթը, որը վերաբերում է մեր դեսպանորդի հետ ունեցած կարմայական կապին:

Երբ մեր դեսպանորդը ենթարկվում է հալածանքի, զրպարտության, հարձակումների, դա հսկայական կարմա է առաջացնում, որն իր մակարդակով հավասարագոր է Աստծո դեմ գործելու կարմային:

Ինչպես հայտնի է, Աստված ում ուզում է պատժել, նրան զրկում է բանականությունից:

Խելացնորությունը միայն առանձին մարդու չէ, որ կարող է համակել: Խելացնորությունը կարող է համակել ամբողջ երկրների ու ժողովուրդների:

Մարդկության պատմության ընթացքում բազմաթիվ անգամ դուք դա տեսել եք: Փաշիզմն ու կոմունիզմը ազգերի ու ժողովուրդների խելացնորության հիվանդության նմանատիպ դրսևորումներ են:

Ինչպես անաստվածության կարման, այնպես էլ մեր դեսպանորդի հասցեին մեղադրանքներ հնչեցնելը կարմայի ամենաձանր տեսակներից են:

Ես այսօր եկա, որ ձեր արտաքին գիտակցությանը հասանելի դարձնեմ այն վերահաս իրադարձությունների պատճառները, որոնց առաջացման համար մեր Ուղերձները կարդացող յուրաքանչյուր ոք իր ջանքերն է գործադրել:

Երկրների խելացնորությունը ծնում է պատերազմներ և դրանց հետևանքները՝ սով, հումանիտար աղետներ...

Հնարավո՞ր է դրանցից խուսափել...

Հնարավոր է: Դրա համար անհրաժեշտ է, որ ձեր կյանքերում ճանաչեք Աստծո Օրենքի գերակայությունը:

Կա միայն մեկ ճշմարտություն: Եվ բոլոր ճշմարիտ մարգարեները, դեսպանորդները և մեսիանները մարդկության զարգացման ողջ պատմության ընթացքում տվել են միայն մեկ աստվածային ճշմարտություն՝ ամենայն ինչ Աստված է:

Աստված ձեր մեջ է և ձեզնից դուրս:

Միայն հավատն առ Աստված և համայն Արարչության նկատմամբ Մերը կարող են մոտակա ժամանակներում փրկել մարդկությանը:

Իսկ հիմա ես պետք է լքեմ ձեզ:

Կարմայի բեռը պետք է խավար ծածկույթի տակ առնի մարդկությանը:

Տառապանքներն ունակ են մաքրելու գիտակցությունը ճիշտ այնպես, ինչպես աղոթքն ու ապաշավանքը:

ԵՄ ԵՄ Շիվան...

Աթենաս Պալլաս

22 դեկտեմբերի, 2015 թ.

Ուսմունք արդարացի և անարդարացի պատերազմների մասին

ԵՄ ԵՄ Աթենաս Պալլասը:

Այսօր Ես կրկին ձեզ այցի եմ եկել:

Հավանաբար դուք չեք մոռացել ինձ և հիշում եք, որ ես Կարմայական Վարչության անդամ եմ:

Ինձ նաև գիտեն որպես ճշմարտության Աստվածուհի:

Վաղ անցյալում հատուկ իմ պատվին կառուցված տաճարներում մարդիկ պաշտում էին ինձ:

Դա հինավուրց ժամանակներում էր, իմ սիրելի Հելլադայում:

Իսկ հիմա ես կամենում եմ ձեզ հիշեցնել, որ ես նաև արդարացի պատերազմների հովանավորն եմ:

Ձեր աշխարհում ամեն ինչ երկդիմի բնույթ ունի: Ուստի, որքան էլ ձեզ համար տարօրինակ թվա ինձնից սա լսելը, անարդարացի պատերազմներից զատ կան նաև պատերազմներ, որոնք արդարացի բնույթ ունեն:

Հետևաբար նախքան այս կամ այն պատերազմին մասնակցելը հարկավոր է շատ լավ կշռադատել այն շարժառիթները, որոնցով առաջնորդվում եք դուք և այն մարդիկ, ովքեր իշխանության կրող են և որոշում են ընդունում պատերազմ սկսելու մասին:

Նախ և առաջ դուք պետք է հասկանաք՝ այդ պատերազմով շահադիտական նպատակներ եք հետապնդում, թե՞ պաշտպանում եք ձեր հողը, ձեր տունն ու ընտանիքն արտաքին թշնամուց, որը ձեզ սպառնում է և հարվածներ հասցնում ձեր հայրենիքին:

Շարժառիթը կարևոր է պատերազմի մասնակցող ամեն մի առանձին ռազմիկի համար: Եթե կռվին մասնակցելու գնացող մարդու շարժառիթը շահադիտական է, ապա պատերազմին մասնակցելը նրա համար հավասարագոր է ոչ ճիշտ գործողության կարմայի կուտակման:

Շահադիտական շարժառիթ կարող են ծառայել փողը, իշխանությունը, կոչումը կամ պաշտոնը, ինչպես նաև ռազմավարը:

Կարմայի օրենքը համայն Տիեզերքի բարդագույն օրենքներից մեկն է: Այդ պատճառով եկեք պարզենք, թե անարդարացի պատերազմին մասնակցելն ինչպես է անդրադառնում մասնակից երկրի և դրա մարդկանց վրա:

Իհարկե, ցանկացած պատերազմի ընթացքում բռնություն է կիրառվում, և մարդիկ են զոհվում: Ուստի կարևոր է հասկանալ, թե ինչ կարմա է ձեռք բերում անարդարացի պատերազմ վարող երկիրը:

Անարդարացի պատերազմի ամեն մի մասնակից կարմայի իր բաժինն է ունենում: Բայց ամեն մի այդպիսի պատերազմի մասնակից նաև մայր ու հարազատներ ունի: Նրա ամբողջ ընտանիքը և նույնիսկ հեռավոր հարազատներն իրենց վրա են վերցնում անարդարացի պատերազմին մասնակցողի կատարած սպանությունների ու ավերածությունների կարման: Արդյունքում թուլանում է նրա ընտանիքն ու ամբողջ տոհմը, ինչը կարող է տոհմի ֆիզիկական ու մտավոր այլասերման պատճառ դառնալ:

Այդպիսով, անարդարացի պատերազմի կարման ազդում է նույնիսկ այն մարդկանց վրա, ովքեր հեռու են գինված հակամարտությանն անմիջականորեն մասնակցելուց:

Բացի այդ, կա նաև անարդարացի պատերազմին մասնակցող ամբողջ երկրի կարման: Այն ընկնում է տվյալ երկրի ամբողջ բնակչության ուսերին և բախշվում հասարակության բոլոր

անդամների միջև: Ոպես կանոն, դա հանգեցնում է տվյալ երկրին հատկացվող Աստծո էներգիայի հոսքի դադարեցմանը:

Աստծո էներգիայի անբավարար լինելը դրսևորվում է որպես առատության պակաս, սով, տվյալ երկրի բնակչության մի զգալի մասի հոգեկան խանգարումներ՝ շիզոֆրենիա, դիվահարություն, ընկճվածություն, ինքնասպանության հակում, ագրեսիա:

Եվ իհարկե, անարդարացի պատերազմի կարմայի մեծ մասն ընկնում է այն մարդկանց ուսերին, որոնք նման պատերազմ սկսելու որոշում են կայացնում:

Սակայն, ինչպես վերն ասացի, կարմայական բեռից բաժին է հասնում նաև այդ երկրում ապրող ամեն մի բնակչի: Քանզի ոչ մի պատերազմ չի կարող կայանալ, եթե չլինեն այն մարդիկ, որոնք համաձայնվում են մասնակցել նման պատերազմի՝ հանուն անձնական շահի, թալանի կամ էլ հանուն կենդանի թիրախների վրա իրենց սպանելու հմտությունները կատարելագործելու:

Առողջ հասարակությունը երբեք թույլ չի տա, որ իրեն ներգրավեն անարդարացի պատերազմի մեջ, քանի որ շատ լավ գիտակցում է, որ այդպիսի պատերազմին մասնակցելը պատասխանատվություն է դնում իր հետագա սերունդների ուսերին:

Իսկ հիմա խոսենք արդարացի պատերազմի մասին: Եթե ռազմիկը մարտի է գնում իր երկիրը, հողը և ընտանիքը պաշտպանելու նպատակով և չունի շահադիտական մղումներ, եթե անշահախնդրորեն պատրաստ է իր կյանքը գոհել հանուն իր երկրի բարեկեցության, ապա այդ գործողությունն արդար է համարվում, և անգամ նրա գոհվելը ոչ թե թուլացնում է նրա ընտանիքն ու տոհմը, այլ, ընդհակառակը, հարստացնում է նոր էներգիայով:

Հանուն մերձավորների ինքնագոհաբերման գնալը կարող է բռնություն չդիտվել այն դեպքում, եթե մեկը պատրաստ է կենդանի վահանի դեր կատարել հարձակվողի ու իր մերձավորների միջև:

Ինքնագոհաբերության այդ բարձրագույն գործողությունը բարի կարմա է ստեղծում ամբողջ տոհմի և երկրի համար:

Իմ այսօրվա Ուղերձի նպատակն էր բացատրություններ տալ արդարացի և անարդարացի պատերազմների մասին:

Ես կարծում եմ, որ աշխարհում ներկայումս հաստատված պայմաններում իմ այս Ուսմունքն օգտակար կլինի ձեզ համար, և դուք կկարողանաք այն կիրառել ձեր կյանքում:

ԵՍ ԵՄ Աթենաս Պալլասը

Վեհապետ Էլ Մորիա
23 դեկտեմբերի, 2015 թ.

Հատկապես հիմա է սկսվում Երկիր մոլորակի կենսահոսքերի բարօրության համար գործելու ձեր ժամանակը

ԵՍ ԵՄ Վեհապետ Մորիան...

Այս պահին, այս օրով Ես ահա ձեզ այցի եմ եկել, ո՛վ, իմ սիրելի սաներ:

Ես շատ լավ եմ հասկանում, թե որքան են խտացել ամպերը, և որքան է դժվարացել մեզ հակադիր ուժերի ճնշմանը դիմակայելը:

Թվում է, թե ոչ մի ուրախալի և դրական բան չկա:

Սակայն ես եկել եմ ձեզ հավաստիացնելու, որ, ընդհակառակը, կա՝ ուրախանալու տոնական առիթ...

Մենք ձեզ հետ երկար գրույց ունեցանք և տվեցինք մեր Ուսմունքը:

Եվ ահա վերջապես այն քչերիդ համար, որ ամբողջապես յուրացրիք մեր Ուսմունքը, վրա հասավ այն ժամանակահատվածը, որին ձեզ նախապատրաստում էինք ոչ միայն այս երկար ու ձիգ 10 տարիների ընթացքում, երբ ձեզ ուսուցանում էինք մեր դեսպանորդի միջոցով: Իհարկե, ոչ: Դուք ձեր այս աշխատանքին նախապատրաստվում էիք շատ ու շատ մարմնավորումների ընթացքում:

Մեկ անգամ չէ, որ մենք ասել ենք, որ ներկայումս մարմնավորման մեջ են մեր լավագույն աշակերտները: Դա պայմանավորված է ներկա ժամանակների խստությամբ և Լույսի ու խավարի միջև ընթացող ճակատամարտի շիկացումով:

Ահա և ձեզ համար վրա հասավ վճռական փուլը...

Այն ամենը, ինչ մինչև հիմա անում էինք, սոսկ դրա նախապատրաստությունն էր:

Երկու ուժերը համամոլորակային գոտեմարտի են բռնվել մարդկության ապագայի համար. ուժեր, որոնք փորձում են պահպանել պատրանքը և ուժեր, որոնք ցանկանում են մարդկությանը վերադարձնել Տուն՝ Աստծո մոտ:

Երբ ուժերը լարված են, և յուրաքանչյուր կողմը գործի է դնում իր ողջ ներուժը, վրա է հասնում քառսի ժամանակաշրջանը. ամեն ինչ խառնվում է իրար և համարյա հնարավոր չի լինում զանազանել, թե ով ում կողմից է հանդես գալիս:

Եվ հենց այդ քառսի ժամանակ է, որ գալիս է ձեր գործելու հերթը:

Հակադիր ուժերն օգտագործում են ազդեցության կոպիտ լծակներ՝ կոպիտ ֆիզիկական ուժ, կաշուն կերպեր ու կարծրատիպեր:

Սակայն նրանցից առավել խորամանկներն ու ճարպիկները հասկանում են, որ որքան շատ գործի դրվեն կոպիտ ուժեր, այնքան կմեծանա հավանականությունը, որ հենց իրենք փլուզվեն այդ ուժերի ազդեցությամբ: Ուստի և նրանք օգտագործում են զանգվածային գիտակցության ու ենթագիտակցության վրա ազդելու ավելի նուրբ հնարքներ՝ տարածելով վախի, ագրեսիայի, ատելության ու հակակրանքի վիճակներ:

Սակայն, սիրելիներս, բոլոր այդ վիճակները Նոր աշխարհում չեն կարող շարունակություն ունենալ:

Աշխարհը Նոր ժամանակների շեմին է: Եվ այդ Նորի գալուստը նույնքան անխուսափելի է, որքան արևածագը գիշերվանից հետո՝ անկախ խավարի թանձրությունից:

Ահա հենց այդ ժամանակ է, որ մեր նվիրյալ սաներից յուրաքանչյուրն անփոխարինելի է դառնում: Քանզի քառսի ժամանակահատվածում ամենամեծ ազդեցությունն ունենում են թույլ ազդակները:

Ես կրեթեմ բժշկի օրինակը, որի բուժման մեթոդն ասեղնաբուժությունն է:

Պատկերացրեք, որ նրա այցելուն լուրջ հիվանդությամբ է տառապում: Եթե բժիշկը բարձրակարգ է, ապա բարակ ասեղի մի թույլ ազդակը բավարար է լինում, որ հիվանդի վիճակն արդեն լավանա: Իսկ մի քանի այդպիսի ազդակներն ունակ են լրիվ բուժելու հիվանդին:

Մեր նվիրյալ աշակերտները տիրապետում են հմտությունների, որոնց միջոցով իրենց ներսում պահպանում են էներգիաների համակշռություն, ինչպիսի արտաքին քառսում էլ որ գտնվելիս լինեն:

Այդպիսով նրանք վերածվում են մեր այն նրբագույն էներգիաները ձեր աշխարհի փոխանցող հաղորդիչների, որոնք ունակ են փոխելու աշխարհի իրադրությունը:

Մեր աշակերտներից կան բոլոր երկրներում: Հենց նրանց միջոցով էլ մենք կարող ենք ազդել աշխարհի իրադրության վրա:

Մենք ուրախ ենք, որ հասավ այն ժամանակը, երբ մենք կարող ենք օգտագործել մեր պահուստային ուժը: Հենց հիմա է այն ժամանակը, երբ սոսկ քչերի ներքին գործության օգտագործումով կարելի է համամոլորակային մակարդակով փոխել աշխարհում հաստատված իրավիճակը:

Դե ինչ, ձեզ հաջողություն եմ մաղթում:

Միշտ հիշեք, որ արտաքինը որոշվում է ներքինով: Ուստի եթե բավականաչափ քանակությամբ անհատականություններ ցանկացած արտաքին քառսի պայմաններում կարողանան պահպանել ներքին հանդարտությունն ու ներդաշնակությունը, բերկրանքն ու սերը, ապա աշխարհին տիրած իրավիճակը կարող է դեպի լավը փոխվել հաշված տարիների ընթացքում:

Նաև երբեք չպետք է մոռանալ, որ այդ քառսից իրավիճակը նույնպիսի արագությամբ կարող է և դեպի վատը գնալ:

Ուստի չի կարելի թուլանալ...

Պահանջվում է լիակատար մարտական պատրաստվածություն...

Լիակատար կենտրոնացում դեպի Բարձրագույնը...

Արտաքինը որոշվում է ներքինով...

Հատկապես հիմա է սկսվում Երկիր մոլորակի կենսահոսքերի բարօրության համար գործելու ձեր ժամանակը...

Պահպանել ներքին հավասարակշռությունը նույնիսկ այնժամ, երբ ամբողջ աշխարհն աչքի առաջ կփվի...

Աստվածային Ուղին ընտրած ոչ մի հոգի չի կարող կորչել...

Հենց որ ձեր ընտրությունն Աստծո կողմն է լինում, բոլոր Երկնային Չորախմբերը ցանկացած արտաքին հանգամանքների պայմաններում պաշտպան են կանգնում ձեր հոգուն:

Ուստի ձեր կյանքի ամեն մի ակնթարթին հիշե՛ք Աստծո մասին և ձեր ամբողջ կյանքն անմնացորդ նվիրե՛ք Աստծուն ու Նրա Օրենքի հաստատմանը:

ԵՄ ԵՄ Մորիան

Ուղերձների 23-րդ շրջան (դեկտեմբեր, 2016 թ.)

Սանատ Կումարա
20 դեկտեմբերի, 2016 թ.

Արմազեդոն

ԵՍ ԵՄ Սանատ Կումարան: ՕՄ:

Այսօր այն օրն է, որը ես նշել էի, որ ձեր գիտակցությանը հասցնեմ ոչ հաճելի շատ բաներ:

Երկար մտորելուց հետո ես հանգեցի այն եզրակացությանը, որ ձեզ անհրաժեշտ է այդ բաներն իմանալը, որպեսզի գիտակցված ձևով կատարեք ձեր ընտրությունները:

Ձեր ժամանակը բնութագրվում է «Հոգևոր ճակատամարտ» եզրույթով: Այդ ճակատամարտն ընթանում է Լույսի և խավարի միջև:

Ձեզ թվում է, թե ձեր շուրջը խաղաղ երկինք է և ավերածություններ չկան:

Պաշտելիներս, ձեզնից շատերը սխալ պատկերացում ունեն ընթացող ճակատամարտի վերաբերյալ:

Ֆիզիկական ոլորտում այդ ճակատամարտը կարող է արտահայտվել պատերազմի՝ պայքարումների, ժուլերի ու հրետակոծությունների տեսքով:

Սակայն անհամեմատ ավելի ահավոր է այն ճակատամարտը, որն ընթանում է ձեր հոգիների համար: Իսկ այդ ճակատամարտը հիմա հասել է իր թեժության գագաթնակետին:

Հնարավոր է, որ ձեզնից ոմանք գլխի չեն ընկնում, որ այդ ճակատամարտն ընթացքի մեջ է: Նրանք փորձում են ազատվել իրենց կարծիքով վատագույնից՝ պատերազմից, որի նմանը տեղի ունեցավ անցյալ դարի կեսերին:

Ո՛չ, պաշտելիներս, ներկայումս ընթացող պատերազմը կամ ճակատամարտը շատ ավելի վտանգավոր է հենց այն պատճառով, որ դուք նույնիսկ չեք էլ կասկածում, որ գտնվում եք այդ ճակատամարտի կիզակետում, և կռիվը գնում է հենց ձեր հոգու համար:

Այժմ ես ուզում եմ մի փոքր հետ գնալ: Դա թույլ կտա ձեզ, որ ավելի լավ հասկանաք, թե ինչպես են աշխատում Լույսի ուժերը, և ինչպես են աշխատում մեզ հակադիր ուժերը:

Ձեզ հայտնի է, որ այս դարի սկզբում Մենք փորձեցինք Ուղերձների տեսքով Ուսմունք տալ Ռուսաստանին:

Մենք բազմիցս ասել ենք, որ դա կատարյալ աննախադեպ հնարավորություն է՝ Երկնքի վիթխարի ողորմածությունը:

Մենք նաև անընդհատ կրկնում էինք, որ յուրաքանչյուր Ուղերձ տրվում է Աստծո էներգիայի հսկայական ծախսով: Իրոք այդպես էր, սիրելիներս:

Իս ինչու՞ էր Երկնքն այդքան ջանքեր գործադրում...

Արդարացված էին արդյոք այդ ջանքերը...

Միայն հիմա՝ ես կարող եմ բացել ճշմարտության մի մասը և ասել, թե ինչ նպատակով էր տրվում Ուսմունքը:

Մեր Դեսպանորդին Մենք նախապատրաստեցինք արագացված տեմպերով և ուրախացանք, որ ամեն ինչ լավ ստացվեց: Անոթը պատրաստ էր Լույսի էներգիան ընդունելու և փոխանցելու համար:

Մենք ձեռնամուխ եղանք Ուսմունքի և նրան ուղեկցող Լույսի արտազատման գործին:

Ուսմունքի փոխանցումը տևեց ավելի քան 10 տարի:

Եվ միայն հիմա ես կարող եմ ձեզ համար բացել ճշմարտության մի մասը, թե ինչի համար էր պետք այդ փոխանցումը:

Ամեն անգամ, երբ ավարտին են մոտենում տիեզերական բոլորաշրջանները, գալիս է մի ժամանակ, երբ հոգիները պետք է ընտրություն կատարեն: Եվ այդ ընտրությունից կախված՝ նրանք կա՛մ իրենց էվոլյուցիան շարունակում են նոր մակարդակում, կա՛մ գրկվում են իրենց բոլոր ձեռքբերումներից և իրենց էվոլյուցիան շարունակում ավելի ցածր մակարդակում, կա՛մ հոգու էվոլյուցիան ընդմիջտ դադարեցվում է, և այդ հոգին մահվան հրեշտակների բաժին է դառնում:

Այդ պատճառով ամեն մի բոլորաշրջանի վերջնամասում մարդկանց նորացված Ուսմունք ստանալու հնարավորություն է տրվում, որի շնորհիվ հոգիները ճշմարիտ կողմնորոշիչներ են ստանում և պահպանում իրենց հետագա էվոլյուցիայի հնարավորությունը:

Մենք մեր առաքելությունը սկսեցինք իրականացնել Ռուսաստանում: Այդ երկիրը պատահաբար չէր ընտրված: Հենց այդ ժամանակ այդտեղ էին մարմնավորվել լավագույն հոգիները, որոնք հատուկ ընտրված էին այդ առաքելության իրականացման համար:

Մի քանի հարյուր հոգիներ էին կանչվել գործի, որ միլիոնավոր հոգիների փրկեն ոչ միայն Ռուսաստանում, այլ նաև ամբողջ երկրագնդում:

Մենք սկսեցինք առաքելությունը Ռուսաստանում: Լույսի հսկայական քանակություն ճառագվեց:

Սակայն հետո տեղի ունեցավ այն, ինչը մեր պլանների մեջ չէր մտնում. Ռուսաստանի մարմինը մեր Դեսպանորդին օտարեց իրենից:

Մեր Դեսպանորդը ստիպված եղավ լքել Ռուսաստանի տարածքը:

Մենք ևս 4 տարի սպասեցինք այն հույսով, որ լուսակիրները խելքի կգան և համատեղ ուժերով կկարողանան փոխել իրավիճակը:

Սակայն դա տեղի չունեցավ:

Դուք գիտեք, որ բնությունը դատարկություն չի սիրում:

Հենց որ Ռուսաստանի տարածքն ազատվեց մեր էներգիաներից, կատաղի պղտոր հեղեղով այնտեղ ներխուժեցին մեզ հակադիր ուժերը:

Խավարի ուժերն ուղղակի զավթեցին այդ երկիրը:

Դա հասարակության առավել գիտակից մասի կատարած ընտրության արդյունքն էր՝ այն լուսակիրների, որոնք որոշեցին չկատարել իրենց առաքելությունը:

Լուսակիրների հետ կանգնելու պատրվակները տարբեր էին՝ ուղղակի դավաճանությունից մինչև լուռ անգործություն:

Ռուսաստանի մարմինը հայտնվեց Մեզ հակադիր ուժերի զավթման տիրույթում:

Այնինչ դուք պատերազմ էիք սպասում, ավերածություններ...

Պաշտելիներս, պատերազմը լրիվ ընթացքի մեջ է: Դա հոգևոր պատերազմ է՝ ձեզ համար ամենացավալի ելքով:

Մահանում են մարդկանց հոգիները: Ամենանենգ եղանակներով:

Հատուկ նշանառության տակ է երիտասարդությունը:

Հատկապես նրա դեմ են ուղղված այն տեխնոլոգիաները, որոնք խոցում են հոգին և նրան գրկում էվոլյուցիան շարունակելու հնարավորությունից:

Համակարգչային խաղերը, ավերիչ երաժշտությունը, թմրանյութերը, կեղծ բարոյական իդեալները, ցանկությունների բորբոքումը և ամեն գնով դրանց իրականացմանը մղելը՝ կանգ չառնելով ոչնչի, նույնիսկ սպանության առջև:

Տարածության թրթռանքն իջեցվում է այնքան, որ Մեր էներգիաներն այլևս չեն կարողանում ներթափանցել ոչ մի խոշոր քաղաքի տարածք:

Չստանալով Մեր օգնությունը՝ մարդիկ կատարյալ անօգնական վիճակում հայտնվում են հակադիր ուժերի նենգության առջև:

Իսկ հիմա ես ձեզ կհիշեցնեմ հիմնականը՝ այն, թե ինչու էինք տալիս մեր Ուղերձները: Մենք ձգտում էինք ձեր հոգիները հետ բերել դեպի զարգացման էվոլյուցիոն Ուղին: Իսկ այդ Ուղով առանց Աստծո հնարավոր չէ ընթանալ:

Աստված տաճարներում կամ եկեղեցիներում չի բնակվում: Աստված մարդկանց սրտերի մեջ է:

Եվ երբ մարդկանց կրիտիկական մեծամասնությունը հրաժարվում է Աստծուց, այնժամ հասարակությունը հայտնվում է հակադիր ուժերի իշխանության տակ:

Եվ Ուղին փակվում է:

Օր օրի հանգչում է նորանոր եկեղեցիների, տաճարների, մզկիթների զոհասեղանների կրակը:

Օր օրի մարում է բոցը հազարավոր մարդկանց սրտերում:

Օր օրի հազարավոր մարդիկ գրկվում են իրենց էվոլյուցիան շարունակելու հնարավորությունից:

Եվ այդ ամենը ձեր կատարած ընդհանրական ընտրության արդյունքն է:

Դա Աստծուց և Աստվածառաջնորդությունից հրաժարվելու արդյունքն է:

Տխուր է այս մասին լսելը: Բայց էլ ավելի տխուր է այս ցավալի ճշմարտությունը ձեր գիտակցությանը հասցնելը:

Չի ողջ աշխարհը դեպի կործանում է գնում:

«Դեպի ուր ընթանա Ռուսաստանը, այնտեղ էլ կգնա ողջ աշխարհը», - այսպիսին է եղել այս հազարամյակի սկզբում հայտնված մարգարեությունը:

Եվ ահա այն իրականանում է ձեր աչքերի առաջ:

Այն, ինչ ցածր է Աստվածային կատարելությունից, չի կարող անցնել էվոլյուցիոն զարգացման հաջորդ փուլ:

Ավարտվում է մեծ տիեզերական բոլորաշրջանը: Այն ամենը, ինչն Աստծուց չէ, ենթակա է կործանման:

Դրա համար էլ Աստված թույլ է տալիս, որ մոլեգնեն հակադիր ուժերը:

Մեկը պետք է ավարտին հասցնի տիեզերական աղբից մոլորակը մաքրելու գործը:

ԵՍ ԵՄ Սանատ Կունարան: ՕՄ

Պաշտելի Ալֆա

21 դեկտեմբերի, 2016 թ.

Ձեզնից յուրաքանչյուրին, ով կհաղթահարի պատրանքը, Ես կդիմավորեմ անձամբ...

ԵՍ ԵՄ Ալֆան՝ ձեր Երկնավոր հայրը:

Այսօր, սիրելիներս, Ես կուզենայի ձեզ հետ գրույց վարել ձեր հոգևոր փրկության վերաբերյալ:

Աշխարհում ամեն ինչ շատ արագ է փոխվում, և այդ փոփոխություններն անխուսափելիորեն ազդում են ձեր հոգու վրա:

Աշխարհում կա ճշմարտություն: Եվ այդ ճշմարտությունն Աստծո մեջ է:

Երբ Աստված հեռանում է ձեր կյանքից, դա իր անխուսափելի ազդեցությունն է ունենում ձեր հոգու վրա:

Հոգին կարոտում է, բայց չգիտե, թե ինչպես դուրս պրծնի պատրանքի գերությունից:

Ուստի Ես այցի եմ գալիս ձեզ, սիրելիներս:

Մարմնավորման մեջ գտնվող յուրաքանչյուր հոգու նկատմամբ հոգածությունն անմիջական պահանջ է Ինձ համար: Ձեզնից յուրաքանչյուրին Ես սիրում եմ հայրական Սիրով: Եվ Երկնքում սպասում եմ ձեզնից յուրաքանչյուրին:

Մեծ ու փոքր սխալները, մոլորություններն անխուսափելի են Տունդարձի Ուղու վրա: Սակայն Ես եկել եմ, որ ձեզ զգուշացնեմ այն վտանգից, որը հենց հիմա՝ ժամանակի այս պահին է կանգնած ձեր Ուղու վրա:

Համբարձյալ Դասերի գլխավոր հոգալը ձեր հոգիների փրկությունն է:

Եվ այնժամ, երբ հոգին ենթարկվում է մահացու վտանգի, դա անհանգստություն է առաջացնում Լույսի ամբողջ Հիերարխիայում:

Ձեր աշխարհը խավարի ուժերի ազդեցության տակ է ընկել: Բոլորաշրջանների հերթագայության ընթացքում այդ փուլն անխուսափելի է:

Դեռևս մի քանի տարի առաջ Ես չէի անհանգստանում մարդկության էվոլյուցիայի հարցով, քանզի այդ փուլի անվտանգ հաղթահարման համար ձեռնարկված էին բոլոր միջոցները:

Սակայն այն բանի պատճառով, որ Լույսի շատ զավակներ սխալ ընտրություններ կատարեցին, իրավիճակն ավելի ու ավելի վատթարացավ: Եվ հիմա Ես անհանգստացած եմ մարմնավորված այն յուսավոր հոգիների համար, որոնք կարող են և չվերադառնալ Իմ Աշխարհ:

Միանգամայն հնարավոր է...

Աշխարհը, որն իրեն կտրում է Աստծուց, դրանով իսկ դատապարտվում է մահացման՝ աստիճանական հետընթացի ու մահվան: Մահանում է հին աշխարհը, և դրան զուգընթաց տեղ է բացվում Նոր, Աստվածային Աշխարհի համար:

Սակայն հնից Նորին անցնելու հենց այդ ժամանակն է, որ ամենավտանգավորն է լինում շատ հոգիների համար: Քանզի նրանք կորցնում են աստվածային կողմնորոշիչները և կարող են մոլորվել ու մահանալ՝ այդպես էլ պատրանքից դուրս գալու ելք չգտնելով:

Ներկայումս ձեր շրջակա աշխարհը հակասության մեջ է մտել Աստծո մտահղացման հետ:

Նորացման էներգիաներն առատ հոսքով ներթափանցում են ձեր աշխարհ, սակայն հին աշխարհի դոգմաները, որոնք հիմնված են նյութական էներգիաների գերիշխանության և հոգևորի նկատմամբ նյութական արժեքների գերակայության վրա, ընդդիմանում են նորացման էներգիաների հոսքին:

Սակայն երկար ժամանակով հնարավոր չէ դիմակայել Աստծո էներգիաներին:

Որքան ուժեղ լինի դիմադրությունը, այնքան կործանարար կլինեն դրա հետևանքները:

Հակընդդեմ ուժերը ներկայումս որքան ավելի շատ ջանքեր են գործադրում Աստծո Աշխարհին ու մարդկության զարգացման աստվածային Ուղուն դիմակայելու համար, այնքան ավելի ավերիչ կլինեն այդ դիմակայության հետևանքները:

Արդ, Մենք նախապես տվեցինք Մեր խրատներն այս դժվար ժամանակների վերաբերյալ:

Որ գոհեր չինեն:

Որ քիչ լինեն տառապանքները:
 Սակայն Մենք չենք կարող խախտել ազատ կամքի Օրենքը. մարդկության մեծամասնությունն ընտրել է Աստծուց հրաժարվելու ուղին:
 Աստծո դեմ կռիվ տալու ուղին ավերիչ ուղի է:
 Ճակատամարտի ելքը կանխորոշված է:
 Հին աշխարհի կործանումն անբեկանելի է:
 Մեր խնդիրն է հնարավորինս ավելի շատ հոգիների փրկել այս բարդ ժամանակներում:
 Ուստի ձեզ Ուսմունք է տրվում:
 Սիրելիներս, Ես շատ լավ եմ հասկանում, թե ձեզ համար որքան դժվար է խավարում կողմնորոշվելը, երբ հակընդդեմ ուժերը գործադրում են բոլոր ջանքերը, որպեսզի ձեզնից թաքցնեն Աստծո ճշմարտությունը:
 Կյանքի բոլոր ոլորտներն աղճատված են:
 Ոչ մի տեղ ճշմարտություն չկա:
 Ոչ մի կրոնում:
 Ոչ մի դավանանքում:
 Ոչ մի գիտական ուսմունքում:
 Ահավոր ժամանակներ են:
 Խավար ժամանակներ:
 Սակայն հատկապես հիմա է, որ դուք առավելագույն ջանքեր պետք է գործադրեք ձեր հոգիները փրկելու համար:
 Փրկվելու հնարավորություն ունեն բոլոր այն հոգիները, որոնք, անկախ արտաքին հանգամանքներից, ներքին համալարվածություն են պահպանում Աստծո Աշխարհի հետ:
 Գնալով ավելի ու ավելի է դժվարանում այդ համահնչունությունը պահպանելը:
 Սիրո և Հավատի վիթխարի ուժ է պահանջվում դիմանալու համար:
 Պահանջվում է վերահսկել ամեն մի ցանկությունը:
 Պահանջվում է Բարձրագույն Ես-ին հանձնել ամեն մի ընտրության վերահսկումը:
 Պահանջվում է անդունդն անցնել ոստայնի թելի վրայով:
 Ուստի, խնդրում եմ, աչքաթող մի՛ արեք Մեր խորհուրդները:
 Վերընթերցե՛ք մեր Դեսպանորդի միջոցով տրված բոլոր Ուղերձները:
 Անխտիր բոլորը:
 Հենց դրանցում կգտնեք այն թելը, որը պատրանքի բավիղից ձեզ դուրս կհանի դեպի Աստծո Աշխարհ:
 Եվ ձեզնից յուրաքանչյուրին, ով կհաղթահարի պատրանքը, Ես կդիմավորեմ անձամբ...
 Հարկավոր է, որ պահպանեք ձեր Հավատն ու նվիրվածությունը:
 Ես սպասում եմ ձեզ...

ԵՍ ԵՄ Ալֆան՝ ձեր Երկնավոր հայրը

Վեհապետ Մորիա
 22 դեկտեմբերի, 2016 թ.

Փրկությունը ձեր ձեռքերում է

ԵՍ ԵՄ Վեհապետ Մորիան...
 Դուք սպասում էիք ինձ:
 Դե ինչ, ես ահա եկել եմ...
 Որքան շատ էին ձեզնից նրանք, որոնք Վեհապետների պլանների իրականացմանն էին ապավինում:
 Հույսեր էիք կապում դրա հետ, այդպես չէ՞...
 Եվ հիմա մենք գալիս ենք և իրար հետևից ասում ենք ձեզ, որ Մեր հույսերը չարդարացան, որ մեզ հակադիր ուժերը չտեսնված առավելություն ունեցան:
 Վիրավորական ու ցավալի է Լույսի բազմամյա առաքելության այսպիսի տխուր արդյունքի մասին լսելը, որը մենք իրականացրինք, ավելի ճիշտ, փորձեցինք իրականացնել Ռուսաստանում:
 Ձեզնից նրանց, ովքեր չեն հավատում այս տեղեկատվությանը և փորձում են ինչ-որ հույսեր ակնկալել՝ ապագայի հետ կապված, ես կասեմ. «Դայեցե՛ք ձեր շուրջը...»:

Վերջին տարիների ձեր բոլոր «ձեռքբերումները» տեսանելի են անգն ասքով:

Ո՛չ կրթության, ո՛չ առողջապահության, ո՛չ սոցիալական պաշտպանության, ո՛չ էլ հոգևոր ասպարեզներում որևէ դրական փոփոխություն չկա:

Մենք պարտություն կրեցինք այս հարյուրամյակի ամենավճռորոշ ճակատամարտերից մեկում:

Ի՞նչ անել, ուրեմն...

Աստված, սիրելիներս, ցանկացած իրավիճակից միշտ կարող է գտնել այն ելքը, որը կհամապատասխանի զարգացման էվոլյուցիոն ուղուն:

Հակադիր ուժերը հաղթեցի՞ն...

Հիասքա՛նչ է:

Դա թվացյալ հաղթանակ է:

Աստծուն հաղթել հնարավոր չէ:

Աստծո դեմ ուղղված ցանկացած գործողություն ուժեղացված հակազդեցության է հանգեցնում նրա դեմ, ով կատարել է այդ գործողությունը:

Իշխող ընտրանին հրաժարվե՛ց հասարակության կառավարման աստվածային սկզբունքներից:

Մահկանացու մարմնում անմահության հասնելու մասի՞ն են բարբառում:

Նյութական արժեքներն ավելի բա՛րձր են հռչակում հոգևոր արժեքներից:

Հիասքա՛նչ է:

Օրենքը կգործի անողորք և անբեկանելի:

Ամենայն ինչ, որ կտրված է Աստծուց, չի կարող հարատևել քիչ թե շատ երկարատև պատմական ժամանակում:

Խավարի ուժերը որքան շատ են դրսևորում իրենց, այնքան մոտեցնում են իրենց վախճանը:

Ինչպե՛ս դա վրա կհասնի... Թույլ տվեք չպատասխանել այդ հարցին:

Նրանք, ովքեր իրենց թույլ տվեցին իջնել գիտակցության անասնական մակարդակին, իրենց գոյությունը կավարտեն անձավներում ու անտառներում: Եվ մի քանի հազար տարի հետո նոր մարդկությունն այդ նոր նեանդերթալցիների կմախքների մնացորդները կգտնի երկրագնդի դժվարամատչելի վայրերում:

Իսկ ի՞նչ անեն նրանք, ովքեր իրենց լուսակիրներ են համարում և հիմա խելակորույս կանգնած են նոր իրականության առջև...

Ձեր խնդիրը նույնն է մնացել:

Դուք պետք է գործեք, գործեք և էլի՛ գործեք...

Ձեր ժամանակներում միայն աղոթքներով ու ներխուկումներով անձնական փրկության հասնել հնարավոր չէ:

Պահանջվում է սպասավորություն, պահանջվում է օգնել դրա կարիքն ունեցողներին:

Դուք պետք է մտահոգվեք ապագայի համար:

Այս պայմաններում չեն կարող մարմին առնել զարգացած հոգիները:

Այս պահին Երկրի վրա, հատկապես խոշոր քաղաքներում ստեղծված պայմանները կարող են դեպի իրենց քաշել միայն հետամնաց էվոլյուցիաների հոգիներին:

Արդ, որպեսզի կարողանան մարմին առնել արժանավոր, առաջադեմ և հոգեպես բարձր զարգացած հոգիները, դուք պետք է հենց այժմվանից մոլորակի վրա պայմաններ ստեղծեք նրանց գալստյան համար:

Ապագա ծնողների նախապատրաստման յուրաքանչյուր քայլը՝ սկսած սաղմնավորումից և վերջացրած դաստիարակությամբ ու կրթությամբ, պետք է մանրակրկիտ ձևով կշռադատվի:

Ինքներդ որոշեք, թե այդ գործով որտեղ կզբաղվեք՝ առանձնացված նոր բնակավայրերում, թե՛ արդեն գոյություն ունեցողներում:

Միայն ասեմ, որ խոշոր քաղաքների պայմանները բոլորովին չեն համապատասխանում մարդկության ապագա փրկիչների գալստյանը:

Ձեր խնդիրն է ստեղծել հիմնահարթակ, յուրատեսակ նոյան տապան, որ կարողանաք պահպանել բանական մարդու գենոֆոնդը:

Նշանակություն ունի ամեն ինչը՝ սնունդը, ջուրը, կենսապայմանները, ուսուցումը:

Եթե անհրաժեշտ պայմաններ ապահովելու համար հարկ լինի գնալ անտառ, ապա պետք է գնաք անտառ:

Եթե պայմաններ ստեղծելու համար հարկ լինի նոր օրենքներ գրել, ապա պետք է մտնեք քաղաքականության մեջ և հասնեք այդ օրենքների ընդունմանը:

Ներկա ժամանակում դուք չեք կարող ապահովել ձեր անձնական փրկությունը՝ չօգնելով համայն մարդկությանը:

Այդ դեպքում ձեր անցողիկ միավորներն ուղղակի չեն հերիքի Երկնային Արքայություն մուտք գործելու համար:

Ուստի պատրաստվե՛ք գործելու:

Միաբանվե՛ք:

Թևքներդ քշտե՛ք:

Հատկապես հիմա՝ է պետք ինքնագոհողության զնալ հանուն մարդկության ապագայի:

Փրկությունը հենց ձեր ձեռքերում է:

ՄԻ՛ սպասեք կետ առ կետ ցուցումների:

Անհապաղ գործի՛ անցեք:

ԵՄ ԵՄ Վեհապետ Մորիան...

Հրատապ և միջանկյալ ուղերձներ

Հառութամա Բուդդա
3 մարտի, 2007 թ.

Երկրի ընթացիկ իրադրության մասին

ԵՍ ԵՄ Հառութամա Բուդդան՝ այս օրով հապճեպորեն ձեզ մոտ եկածը, որպեսզի կարևոր ուղերձ տամ Երկիր մոլորակի ընթացիկ իրադրության վերաբերյալ: Ինչպես միշտ, ձեզնից նրանք, ովքեր կարդում են մեր ուղերձները, հենց այն մարդիկ են, ովքեր ամենաշատն են պատրաստ որոշակի գործողությունների: Ուստի ես այս օրով ձեզ մոտ եմ գալիս, որպեսզի պարզաբանեմ իրադրությունը և օգնության համար դիմեմ ձեզ: Ձեր հարազատ մոլորակն այժմ ձեր օգնության կարիքն է զգում: Ոչ այն օգնության, որը դուք ցուցաբերում եք ձեր ամենօրյա աղոթքներով, այլ այն օգնության, որին պետք է մասնակից դառնաք բոլորդ: Քանզի իրադրությունը շատ է լարված, և երկրաշարժերի մի ողջ շարք կարող է մեծ ավերածությունների պատճառ դառնալ՝ հանգեցնելով բազմաթիվ մարդկային զոհերի: Ըստ այդմ՝ ես գալիս եմ՝ որպես այն Տիրակալը, ով պատասխանատու է Երկրի իրավիճակի և մոլորակի էներգիաների հավասարակշռության համար:

Այս իրավիճակում ոչ մի ուրիշ Տիրակալ չի կարող դիմել ձեզ:

Ես խնդրում եմ օգնություն, որը կարող եք ցուցաբերել դուք բոլորդ, որ կարդում եք իմ այս ուղերձը:

Հենց այն ժամին, երբ կարդում եք իմ այս օգնության կանչը, առանց հապաղելու ձեր սրտի մեջ կամ բարձրաձայն արտասանեք հետևյալ կոչը.

«Օ՛, Երկիր, ես գիտեմ, որ ծանր է քեզ համար, գիտեմ, որ այս օրով իմ օգնության կարիքն ունես: Հանուն ԵՍ ԵՄ ՈՐ ԵՄ-ի՝ ես խնդրում եմ իմ Բարձրագույն Ես-ին, որ առաքի քեզ Աստծո այն էներգիան, որն այսօր մուտք է գործում իմ տանարդ: Թո՛ղ որ այն նպաստի Երկրի իրադրության կայունացմանը»:

Հազարավորները ձեզնից, ովքեր պատրաստ են նման զոհաբերության, կարող են ակնթարթորեն փոխել Երկիր մոլորակի իրադրությունը:

Ես առաջարկում եմ այդ կոչը հղել այն բոլոր արհավիրքների ու տարերային աղետների պահերին, որոնք կապված են Երկիր մոլորակի հետ:

Իսկ այժմ ես կուզենայի, առիթից օգտվելով, տալ ոչ մեծ մի տեղեկատվություն՝ կապված 2007 թ.-ի մարտի 19-ի արևի խավարման հետ: Արևը նշանավորում է աստվածային բանականությունը, և արևի յուրաքանչյուր խավարում, երբ այն տեղի է ունենում, լրացուցիչ ծանրաբեռնվածություն է առաջացնում ձեր նուրբ մարմինների համար: Այն դեպքերում, երբ տեղի է ունենում արևի խավարում, սկսած դրանից մի քանի օր առաջ և վերջացրած դրանից մի քանի օր հետո, խորհուրդ եմ տալիս մանրագնհին հետևել ինքներդ ձեզ՝ ձեր օրվա ռեժիմին: Ավելի շա՛տ հանգստացեք, ավելի շա՛տ քնեք: Եվ, իհարկե, հետևե՛ք ձեր ներդաշնակ վիճակին:

Ձեր անկատար էներգիաները, որոնք առկա են ձեր ստորին մարմիններում, կսկսեն ակտիվանալ, և դուք կարող եք ձեզ զգալ ոչ այնքան հարմարավետ վիճակում: Ձեզնից որոշների մոտ դա կարտահայտվի անառիթ գրգռվածության, աններդաշնակության տեսքով, իսկ որոշներն էլ կարող են ընկնել ընկճախտի վիճակի մեջ և թույլ տալ անվերահսկելի գործողություններ: Արևի խավարումները հատկապես վտանգավոր են հոգեկան անհավասարակշռություն ունեցող անձանց համար և այն մարդկանց համար, ովքեր տառապում են հոգեկան հիվանդություններով: Ուստի հոգացե՛ք ձեր մերձավոր հարազատների հոգեկան հարմարավետության վիճակի մասին: Աշխատեցե՛ք զերծ պահել նրանց ցանկացած բացասական ու նեգատիվ վիճակներից:

Շատ օգտակար կլինի այն ներխուկումային ու աղոթքային գործառնությունների կիրառումը, որոնք նպատակաուղղված են ներդաշնակությանը, անդորրությանը, Սիրուն:

Ես եկել եմ, որպեսզի նախագուշացնեմ Երկրի մակերևույթի վրայի էներգիաների անբարենպաստ հոսքի մասին: Եկել եմ ձեզ վստահեցնելու, որ ամեն ինչ ձեր ուժերի սահմաններում է, և որ դուք ունակ եք ձեր սեփական ուժերով ներդաշնակացնելու մոլորակի իրադրությունը՝ նույնիսկ չդիմելով Համբարձյալ Դասերի օգնությանը:

Դուք միայն պետք է պատկերացնեք, որ Աստծո կողմից ձեզ շնորհված էներգիան ձեր ցանկությամբ կարող է նպատակամղվել մոլորակի իրադրության ներդաշնակացմանը և ցանկացած տարերային աղետի կանխմանը:

Տարերքը կույր չէ: Այն դուրս է գալիս հավասարակշիռ վիճակից ձեր մտքերի, ձեր հույզերի ազդեցությամբ, եթե դրանք աններդաշնակ են: Ճիշտ նույն կերպ տարերքը կարող է վերադառնալ հավասարակշիռ վիճակի, եթե դուք ջանքեր գործադրեք, որպեսզի նարդաշնակացնեք ինքներդ ձեզ և ձեր շրջապատի մարդկանց:

Հետևե՛ք այն բանին, որ ձեր մտքերն ու հույզերը մնան հանդարտ, հավասարակշիռ վիճակում ոչ միայն այսօրվա ընթացքում, այլ նաև, առնվազն, մինչև ընթացիկ ամսվա վերջը:

Մենք ակնդետ հետևում ենք մոլորակի իրադրությանը և ցուցաբերում ենք ամբողջ անհրաժեշտ օգնությունը: Սակայն այսօր ես եկել եմ օգնության հարցով ձեզ դիմելու, որպեսզի դուք ուս ուսի գգաք մեր ներկայությունը, և որպեսզի մենք էլ մեր հերթին կարողանանք հենվել ձեզ վրա այն իրավիճակների ընթացքում, երբ մոլորակին սպառնում է որևէ արհավիրք:

Ես ուրախ եմ, որ մեր այսօրվա հանդիպումը կայացավ, և ինձ հաջողվեց ձեր արտաքին գիտակցությանը հասցնել այսքան կարևոր ու անհրաժեշտ տեղեկատվությունը:

ԵՄ ԵՄ Հառության Բուդդան՝ ձեր նկատմամբ Միշուր ու հույսերով լի

Տեր Ծիվա
24 մայիսի, 2009 թ.

Տեր Ծիվայի հայտարարությունը

ԵՄ ԵՄ Ծիվան...

Ես եկա... Ես պետք է հայտարարություն անեմ և կուզենայի, որ դուք ամենայն ուշադրությամբ ու ակնածանքով ընկալեք այն, ինչն ուզում եմ հասցնել ձեզ:

Ամենից առաջ հարկ է, որ ինքներդ ձեզ վրա որոշակի ջանքեր գործադրեք, որպեսզի ազատվեք ձեզ շրջապատող պատրանքից: Դուք Աստծո հետ եք խոսում, ուստի ձեր մտքերում ու սրտերում ներկա պետք է լինի միայն Մեր և Երախտագիտություն ամ Աստված և Բարձրագույն Օրենքը:

Դու՛ք եք և Աստվա՛ծ: Որքա՞ն հաճախ է ձեզ հաջողվում դեմ առ դեմ կանգնել Աստծո առաջ և խոսել Նրա հետ:

Կարծում եմ, որ այսօրվա մեր հաղորդակցության փորձը ձեզ կմղի այն բանին, որ ավելի հաճախակի կտրվեք ձեր պատրանքից և գրուցեք Աստծո հետ:

Մի՛ կարծեք, թե Աստված ձեզ կմոտենա այն ժամանակ, երբ թաղված եք ունայնության մեջ: Մի՛ կարծեք, թե Աստծո ձայնը կլսեք այն ժամանակ, երբ խրված եք մարդկային գործերում:

Էական տարբերություն կա այն պլանների միջև, որում դուք եք գտնվում, և որում գտնվում եմ ես: Եվ, որպեսզի մոտենաք ինձ, հարկ է, որ խորասուզվեք իմ աշխարհի մեջ: Ինձ կարելի է հասկանալ միայն այնժամ, երբ կկարողանաք ձեր թրթիռները բարձրացնել մինչև այն մակարդակը, որի վրա ես կարող եմ գտնվել: Ուստի ես այսօր եկել եմ այն բանի համար, որպեսզի ձեզ հիշեցնեմ, որ ձեր տրամադրության տակ շատ քիչ ժամանակ է մնացել: Դուք ամենայն պատասխանատվությամբ պետք է մոտենաք այն հանգամանքին, որ մոլորակի վրա Էական փոփոխություններ են կատարվում: Եվ այդ փոփոխություններն այլևս ձեզ թույլ չեն տա ապրել այնպես, ինչպես մարդկությունն ապրել է մինչև հիմա:

Ձեր շրջապատից ոչինչ ոգեղեն աշխարհում նվազագույն նշանակություն անգամ չունի: Եվ ես եկել եմ ձեզ կանչելու դեպի ոգեղեն աշխարհ, որտեղ բոլորովին այլ արժեհամակարգ գոյություն ունի: Իմացե՛ք, որ քանի դեռ կապված եք պատրանքային աշխարհին, չեք կարող վեր ընթանալ: Իսկ ձեզնից նրանք, ովքեր իրենց գիտակցությամբ պատրաստ են շփվելու Բարձրագույն աշխարհների հետ, վշտանալու կամ երկյուղելու ոչինչ չունեն, որովհետև նրանց հոգիները պատրաստ են փոփոխություններին և ուրախությամբ կընկալեն սպասվող բարեփոխումները: Նրանց համար ես չեմ անհանգստանում:

Բայց կան և հոգիներ, որոնք անցմանը պատրաստ չեն, որոնք ծուլանում են փոխել իրենց գիտակցությունը և դանդաղում են իրենք իրենց փոխելու գործում: Նրանք չեն շտապում հրաժեշտ տալ նույնիսկ այնպիսի սովորություններին, ինչպիսիք են ծխելը, մսեղեն ու ալկոհոլ օգտագործելը: Որքա՞ն շատ են ձեր մեջ այդպիսի բաներից կախում ունեցողները...

Ձեզ չի հաջողվի անցնել Նոր աշխարհ՝ պահպանելով ձեր կապվածությունները: Ես այսօր հենց ձեզ դիմելու համար եմ եկել: Ձեզ հարկավոր է հասկանալ, որ այլևս ժամանակ չի մնացել: Դեպի ապագայի աշխարհ թռիչքը կարող է տեղի ունենալ ամեն պահի: Կշեռքի նժարներին մի՛ դրեք

Աստծուն և Մամոնային և մի՛ փորձեք հաշվարկել, թե ինչն ինչպես կլինի: Ձեզ տրված չէ մարդկային գիտակցությամբ հասկանալ Աստծո Մտահղացումը: Ձեզ մնում է միայն ենթարկվել Նրա Օրենքին և անվախ հետևել Նրան:

Չի դա է միայն այն փակուղուց դուրս գալու ձեր ելքը, որին դուք ինքներդ եք հասել: Ձե՛զ է, որ դիմում եմ, և ձե՛զ է, որ տալիս եմ ևս մեկ հնարավորություն:

Հրաժարվե՛ք ունայնից, դադարե՛ք վազվզել դեռ ու դեն: Ձեր գիտակցության վիճակով կորոշվի ձեր ապագան: Ձեր գիտակցության այն վիճակով, որը կմնա խաղաղ՝ անկախ այն բանից, թե ինչեր կկատարվեն ձեր շուրջը:

Իմ նվիրյալներին ես կհնդրեի «ՕՄ ՆԱՄԱՀ ՇԻՎԱՅԱ» մանտրան կարդալ, բայց քանի որ իմ ճշմարիտ նվիրյալներն աշխարհում շատ քիչ են, ապա ձեզ համար լավագույն ելքն այն կլինի, որ պահպանեք գիտակցության այն ամենավերամբարձ վիճակը, որը հասանելի է ձեզ համար: Դուք կարող եք անմահություն ձեռք բերել և անցում կատարել Նոր աշխարհ՝ միայն հավատարմություն պահպանելով Աստծո և Բարձրագույն Օրենքի նկատմամբ:

Իսկ ձեզնից նրանք, ովքեր իմ ուղերձը կարդալու ժամանակ ապրում են հեզմանք, կասկածանք և ձեր մարմնական խելքին հատուկ քննադատություն, ինձ հետ կարող են հույսեր չկապել: Եվ ձեր փրկության գործը ես ձեր ձեռքն եմ հանձնում:

Աշխարհում շատ չեն մնացել այնպիսի մարդիկ, ովքեր կարող են և պետք է փրկվեն: Մնացած մարդիկ իրենք են կատարում իրենց ընտրությունը և արդեն կատարել են:

Տիեզերական ժամկետները, որքան էլ դրանք մարդկային մակարդակով հարատև թվան, այնուամենայնիվ ունեն իրենց սկիզբը և ավարտը:

Ուստի և այսօր, ինչպես մեկ ամիս առաջ, ես եկել եմ միակ նպատակով. այն է՝ ձեզ հնարավորություն տալ դուրս պրծնելու պատրանքային աշխարհի սարդոստայնից և դուռ բացելու դեպի Աստծո Աշխարհ:

Հիմա ժամը հասել է: Վաղը կարող է չափազանց ուշ լինել:

ԵՍ ԵՄ ՇԻՎԱՆ, ես ամեն ինչ ասացի...

Տեր Շիվա

22 ապրիլի, 2009 թ.

Դուք վկա եք դառնում նոր հարաբերությունների առաջացմանը մոլորակի վրա եղած գործունեության ամեն մի ոլորտում

ԵՍ ԵՄ ՇԻՎԱՆ... ԵՍ ԵՄ եկել այս օրով...

Եկել եմ այն բանի համար, որ ուղերձ տամ. եկել եմ, որ վստահեցնեմ ձեզ այն բանում, որ Երկրին վերաբերող մեր պլաններն ի կատար կածվեն՝ չնայած մեզ հակադիր ուժերի կողմից ցուցաբերվող հսկայական դիմադրությանը:

Ես եկել եմ, որպեսզի ուժ ներարկեմ մեր դեպանորդին: Ես միշտ այնտեղ եմ, որտեղ անհրաժեշտ է ուժերի գերակշռություն ապահովել: ԵՍ ԵՄ ՇԻՎԱՆ՝ պատրանքներ խորտակողը...

Եթե դուք կամենում եք, որ պատրանքի ուժերը որքան հնարավոր է արագ լքեն Երկիրը, ապա հարկ է, որ ոչ մեծ Ուսմունք յուրացնեք այն մասին, թե ինչպես պետք է ձեզ դրսևորեք հիմա՝ այս բարդ ժամանակներում:

Մենք անում ենք մեզնից կախված ամեն ինչ և ձեզանից էլ սպասում ենք նույնը:

Դուք նկատում եք, և անհնարին է չնկատելը, որ աշխարհը փոխվում է: Եվ դուք հասկանում եք, որ փոփոխությունների գործընթացը կշարունակվի՝ չնայած մեզ հակադիր ուժերի դիմադրությանը, որոնք իրենց վերջին պահուստներն են օգտագործում: Կրքերի եռքն ու ճակատամարտի թեժությունը մեր ողջ ուժերի լարումն են պահանջում:

Իսկ դուք, որպեսզի պահպանեք ձեր՝ Աստծո էներգիա կրողի կարգավիճակը, պետք է միանաք վերափոխումների գործընթացին:

Միայլ կարծիք է տիրում, թե վերափոխումների ամբողջ գործընթացը կանխորոշված է, և ձեզնից ոչինչ կախված չէ: Կարծիք կա այն մասին, թե ֆիզիկական աշխարհում ոչինչ պետք չէ անել, քանի որ այն կկործանվի, և ողջ կյանքը կփոխադրվի ավելի նուրբ ոլորտ:

Այո՛, այդպես էլ կլինի, բայց եթե դա հենց հիմա արվի, ապա մարդկության 90 տոկոսը պատրաստ չի լինի Էվոյուցիան շարունակելու նուրբ պլանում՝ Երկիր մոլորակի ֆիզիկական ոլորտի հետ ունեցած խիստ կապվածության պատճառով:

Ուստի, որքան էլ կամենանք արագացնել վերափոխումների գործընթացը, դա մենք չենք կարողանա անել՝ Կյանքի նկատմամբ ունեցած կարեկցանքի պատճառով:

Ես եկել եմ ձեր գիտակցության հերթական պատրանքն ավերելու: Իսկ այդ պատրանքն այն է, որ հիմա դուք ոչինչ չպետք է անեք:

Հասկացե՛ք, որ պետք է վերականգնել բոլոր մարմինների միջև ներդաշնակությունը: Եվ վերափոխումների գործընթացին ձեր բոլոր մարմինները պետք է մասնակցեն: Որպեսզի ինքդ քո մեջ անհրաժեշտ հատկանիշներ զարգացնես նույր պլան անցնելու համար, պետք է ինքդ քո մեջ յուրաքանչյուր գործ որակյալ անելու ունակություն զարգացնես և էներգիադ ուղղորդես այն բանին, որ վերափոխումների գործընթացն ընթանա որքան հնարավոր է հարթ ձևով:

Դուք ինքներդ կարող եք կարգավորել մոլորակի վրայի փոփոխությունների գործընթացը: Դրա համար հարկ է, որ կենտրոնանաք դրական բաների վրա, Աստծո, կեցության Բարձրագույն պլանի վրա: Այնժամ, երբ մտածում եք Բարձրագույնի մասին, հետևում եք Համբարձյալ Վեհապետների ցուցումներին և աշխատում Ընդհանուր Բարիքի օգտին, համատեղ աշխատանքի այդ գործընթացում հարաբերությունների նոր տեսակ է ծնունդ առնում, որը պետք է փոխարինելու գա Երկրի վրա գոյություն ունեցող հարաբերությունների հին տեսակին, ինչը կործանման է դատապարտված:

Դուք վկա եք դառնում նոր հարաբերությունների առաջացմանը մոլորակի վրա եղած գործունեության ամեն մի ոլորտում:

Հարկ է, որ հասկանաք, որ Երկիր մոլորակի ֆիզիկական պլանն Աստված կարող է վերափոխել միայն ձեր օգնությամբ: Քանի որ ձեզնից յուրաքանչյուրն աստվածային շղթայի անհրաժեշտ տարրն է: Իսկ առանց ֆիզիկական ոլորտում հարկ եղած կարգ ու կանոնը հաստատելու դուք չեք կարողանա առաջ ընթանալ Էվոյուցիոն զարգացման ուղով:

Մոլորակի իրադրության հանգուցալուծման մյուս տարբերակը համընդհանուր աղետն է, որից հետո ողջ կմնա Երկիր մոլորակի բնակչության ընդամենը 10 տոկոսը, որն ունակ կլինի շարունակելու Էվոյուցիան ավելի նույր ոլորտներում. մնացյալները տվյալ իրավիճակում կլրացնեն տիեզերքի աղբարկղը:

Եվ տվյալ պահին ձեզնից յուրաքանչյուրն ինքն է որոշում, թե որ ուղով ընթանա:

Ուշադիր վերլուծեք, թե ինչով եք զբաղվում օրվա ընթացքում և ինչի մասին եք մտածում: Վերլուծվող ժամանակի և դրվագների 90 տոկոսի դեպքում կտեսնեք, որ ձեր գործողություններով ու մտքերով բազմապատկում եք պատրանքը. քանզի Աստծո էներգիան առաքում եք ո՛չ Աստծո՝ Երկիր մոլորակի համար նախատեսված պլանին համապատասխան:

Ուստի հարկ է, որ ավելի ուշադիր վերաբերվեք այն ամենին, ինչ ձեզ շրջապատում է, և այն ամենին, ինչի հետ բախվում եք ձեր կյանքերում:

Պատրանքն այժմ ամուր է, ինչպես երբեք: Եվ այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե այն երբեք չի կարող խորտակվել:

Սակայն բավական է՝ բարձրացնեմ եռաժանիս, և վերջ կտրվի մոլորակի վրա պատրանքի դրսևորմանը: Ես զսպում եմ ինձ և փրկության հնարավորություն տալիս ամեն մի անհատի:

Արգելքները, որոնք խոչընդոտում են մոլորակի վերափոխման գործընթացը, ձեր գիտակցության մեջ են գտնվում:

Մի՛ շտապեք մեղադրել որևէ մարդու: Սկզբում ձեր ներսը նայեք, և ժամանակի ընթացքում կկարողանաք շատ բաներ իրարից զանազանել: Կհասկանաք, որ այն ամենն, ինչով շրջապատի մարդիկ ձեզ գրգռում են, նաև ձեր մեջ է: Քանզի այն պատրանքը, որը շրջապատում է ձեզ, հենց այն պատրանքն է, որ բնորոշ է ձեր գիտակցությանը: Եվ այնժամ, երբ փոխում եք ձեր գիտակցությունը, սկսում են փոխվել նաև արտաքին հանգամանքները:

Այժմ ես ձեզ համար գաղտնիք կբացեմ: Դուք չեք մեռնի: Դուք կապրեք հավերժ: Եվ ծնունդների ու մահերի հերթագայման գործընթացն, այս պահից սկսած, այլ կերպ տեղի կունենա: Դուք կրկին կծնվեք և կհիշեք, թե ինչի համար եք մարմնավորվել:

Այժմ մենք աշխատում ենք նույր ոլորտում և թույլ ենք տալիս մարմնավորվել միայն այն հոգիներին, որոնք համաձայնում են գործել Աստծո Մտահղացմանը համապատասխան: Մենք ընդհատում ենք այն հոգիների մարմնավորվելը, ովքեր համառում են և չեն ուզում զարգանալ: Դրանով մենք ֆիզիկական ոլորտում ավելի բարենպաստ հնարավորություններ ենք ստեղծում այն հոգիների համար, ովքեր ընթանում են Էվոյուցիոն ուղով:

Ճիշտ նման որոշում ընդունվեց նաև Ատլանտիդայի ժամանակներում: Եվ շատ հոգիների թույլ չտրվեց մարմնավորվել: Այժմ հերթագայել են բոլորաշրջանները, և կրկին Երկրի վրա պետք է բարենպաստ պայմաններ ստեղծվեն հոգիների զարգացման համար:

Մենք շատ խնամքով ենք գործում, և մենք ձեզ համագործակցության ենք կանչում:

Որքան էլ երկար դիմադրի ձեր էգոն, միևնույնն է, այն պետք է հնազանդեցվի. և եթե դուք ձեր զագանից գլուխ չեք հանում, մենք ստիպված կլինենք նրան զսպաշապիկ հագցնել որոշ ժամանակով, երկար ժամանակով կամ դրա կեսով:

Սանատ Կումարա
16 նոյեմբերի, 2010 թ.

Գերհրատապ ուղերձ

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան: Այս օրով ես կրկին եկա, որպեսզի անհրաժեշտ գրույց վարեմ, և կարծում եմ, որ այս տողերն ընթերցող ձեզնից շատերը հավանաբար կտարակուսեն: Սակայն ժամանակն այլևս հապաղում չի հանդուրժում: Ուստի ես կսկսեմ:

Վերջին ժամանակներում մենք թելադրություններ չէինք տալիս մեր դեսպանորդի միջոցով: Եվ դա լիովին արդարացված էր, քանի որ իմաստ չունի Գիտելիք տալ նրանց, ովքեր այդ Գիտելիքն ընկալելու և յուրացնելու ունակ չեն:

Իսկ այսօրվա իմ գալստյան իմաստն ու նպատակն այն է, որ դիմեմ այն քչերին, որոնք մարմնավորման մեջ են և կարող են լսել ինձ: Ահա ձեզ է, որ դիմում եմ:

Դուք քիչ եք, իսկ կյանքի հանգամանքներն ավելի ու ավելի են բարդանում: Մարդկության կարման թանձրանում է և իր հետևից քաշում նրանց, ովքեր ստիպված են հետևել մարդկանց ընդհանուր զանգվածին:

Հարկ է, որ կանգ առնեք: Թող մարդկային ամբոխն աղմկի, բայց ամենայն ունայն բան թող լռի ձեր էության ներսում:

Հասել է ձեր հերթը: Դուք մարմնավորվել եք մի առաքելության համար, որի ժամանակն արդեն եկել է:

Հարկ է, որ դուրս գաք ամբոխի միջից, հարկ է, որ առանձնանաք ու դառնաք այն, ինչ իրականում կաք՝ Լույսի փոխանցիչ, Լույսի էլեկտրոդ: Ձեր միջոցով, ձեր փոխանցումների միջոցով է, որ պետք է համակշռություն հաստատվի Երկիր մոլորակի վրա:

Խստագույն ժամանակներ են մոտենում: Եվ ընդամենը մի քանի մարդիկ կան մարմնավորման մեջ, որոնք ունակ են այդ աշխատանքը կատարելու մեզ համար:

Կյանքի ունայնությունը պետք է նահանջի: Ամեն ինչ պետք է լռի ձեր ներսում: Ձեր ժամանակն է հասել: Եվ հիմա, երբ ձեզ ընկալունակ դարձրի, պետք է ասեմ ևս մեկ կարևոր բան: Դուք բոլորդ դառնում եք Եղբայրության գործուն աշխատակիցները Երկրի վրա: Եվ հենց ձե՛զ համար եմ հիմա ես խոսում: Դուք պետք է կենտրոնանաք ներքին աշխատանքի վրա, որպեսզի համակշռեք մոլորակում տիրող իրավիճակը:

Այլ ելք չկա: Մոլորակի դրությունը երբեք այսքան ծանր չէր եղել:

Համակշռությունը պետք է վերականգնվի: Աղոթքների՝ գնով, ներքին անդորրության ու խաղաղության հաստատմա՛ն գնով:

Դուք քիչ եք, և միայն ներքին աշխատանքի վրա անհավատալի կենտրոնացման գնով, ողջ օրվա ընթացքում Բարձրագույնի վրա կենտրոնանալու գնով է հնարավոր պահպանել համակշռությունը:

Ուշադրություն մի՛ դարձրեք այն ամենին, ինչ տեղի է ունենում ձեր շուրջը: Կենտրոնացեք միայն ձեր սրտերի, այն Աստծու վրա, որ ներկա է ձեր ներսում:

Քամին էլ փչի, հողմն էլ ոռնա, հրդեհներ էլ տարածվեն, աշխարհն էլ քանդվի, միևնույնն է. եթե թեկուզ մի քանի հոգու ներսում հուրը վառվում է հավասարաչափ, և խաղաղությունն ու ներդաշնակությունն են թագավորում, ապա հնարավոր է ամեն ինչ փոխել:

Ես լռության կոչ եմ անում: Ես կոչ եմ անում, որ աղոթեք: Կոչ եմ անում ներխոկման: Կոչ եմ անում, որ դառնաք այն, ինչ իրականում կաք՝ Աստծո ուսուրերն ու դուստրերը: Երբ ամեն ինչ խաղաղվի ձեր ներսում, աստիճանաբար խախտված հավասարակշռությունը կսկսի վերականգնվել:

Իսկ հիմա ես պատրաստ եմ ասելու ևս մեկ բան. մի՛ վախեցեք ոչնչից: Այն ամենավատը, որ կարող էր տեղի ունենալ, արդեն տեղի է ունեցել: Մնացյալ ամեն ինչը տեղի ունեցածի հետևանքը կլինի միայն:

Այսօր ես եկա, որպեսզի նրանք, ովքեր պատրաստ են ինձ լսելու, կարողանան կատարել իրենց պարտքը:

ԵՄ ԵՄ Սանատ Կումարան: ՕՍ

Վեհապետ Էլ Մորիա
21 հունիսի, 2015 թ.

**Ես հուսով եմ, որ իմ այս Ուղերձը կրոցավառի նրանց սրտերը,
որոնց ներսում դեռ միում է Աստվածայնության կայծը**

ԵՍ ԵՄ Էլ Մորիան...

Հապճեպությունն Ուղերձին խիստ տոն է հաղորդում:

Մենք ասել էինք, որ մեր Դեսպանորդի միջոցով մեր Ուղերձները տալու հնարավորություն այլևս չկա:

Ոչ այն պատճառով, որ չենք ուզում, կամ որ Դեսպանորդը գործից զուլի չի հանում: Մենք ասել էինք, որ մեր Ուղերձները տալու հնարավորություն այլևս չկա զուտ այն պատճառով, որ մեր Ուղերձներում առկա վիրխարի էներգիան պահանջարկ չունի ձեր՝ մարմնավորման մեջ գտնվող մեր սաների շրջանում:

Մեծագույն վշտով մենք ստիպված ենք արձանագրել այդ փաստը...

Ձեր աշխարհում բազմաթիվ զանազան տեղեկատվություններ գոյություն ունեն:

Բազմաթիվ տարբեր գրքեր կան գրված, և էլ ավելի մեծ տեղեկատվություն սփռված է համացանցի զանազան էջերում:

Բայց մենք գալիս ենք ոչ այն բանի համար, որ սոսկ տեղեկատվություն փոխանցենք ձեզ: Մենք գալիս ենք, որպեսզի մեր ցուցաբերած օգնության և մեր տված գիտելիքների շնորհիվ դուք վերադառնաք Տուն:

Այն տեսքով, որ այժմ գոյություն ունի, ձեր աշխարհը չի կարող բավարարել այն հոգիներին, որոնք հիշում են մի այլ աշխարհի՝ Աստծո Աշխարհի մասին. այն հոգիներին, որոնք հիշում են եղբայրական Միրո և Համագործակցության վրա հիմնված մարդկային անեղծ փոխհարաբերությունների մասին:

Դուք՝ ձեզնից շատերը, կորցրել եք այն անեղծ ու նվիրականը, որը բուն Լինելիության միջուկն է կազմում:

Եվ ձեր աշխարհի ոչ մի խաղալիք ու հանույք չի կարող փոխարինել այն ճշմարտությանը, որը մշտապես ձեզ հետ է, բայց որի մասին դուք մոռացել եք ձեր առօրյա կյանքում:

Ես եկել եմ, որ այն նվիրյալ սրտերին, որոնց հետ կապված եմ եղել շատ ու շատ մարմնավորումների ընթացքում, մեկ անգամ ևս հիշեցնեմ այն ճշմարտության մասին, որը դրված է ձեր սրտերում, ձեր էության խորքում:

Համբարձյալ Դասերի համար ավելի ու ավելի է դժվարանում ձեր սրտերը բախելը, որոնք ծածկված են անթափանց գրահով:

Եզակի հավատարիմ ու անեղծ հոգիներ են մնացել մարմնավորման մեջ, որոնք հիշում են Աստծուն և իրենց նվիրվածության ու մարդկության նկատմամբ վիրխարի կարեկցանքի ուժով պատրաստ են զոհել անգամ իրենց բուն կյանքը՝ հանուն այն մարդկանց հոգիների փրկության, որոնք մոլորվել են պատրանքային աշխարհում և ոչ մի լույս չեն տեսնում առջևում:

Հենց այդ սակավաթիվ լուսավոր հոգիներին օգնելու և օժանդակելու համար եմ ես գալիս, թեև Կարմայական Վարչությունն արդեն որոշում է կայացրել այլևս Ուղերձներ չփոխանցել մեր Դեսպանորդի միջոցով:

Իմ կարեկցանքն ու մարդկությանն օգնելու ցանկությունը հաղթահարում են ցանկացած խոչընդոտ ու դժվարություն:

Եվ ահա ես ձեզ այցի եմ եկել այս նշանակալից օրը՝ 2015 թ-ի ամառային արևադարձին:

Այս օրը դուք կարող եք գործադրել ձեր բոլոր ջանքերը և մոլորակի իրավիճակը մտովի փոխել դեպի լավը: Բավական է, որ ոչ մեծ քանակությամբ լուսակիրներ իրենց գիտակցության մեջ ունենան լուսավոր ապագայի պատկերը, և կցրվի այն խավարը, որն այնքան է թանձրացել, որ մարդիկ ուղղակի չեն գտնում հետագա շարժման ուղղությունը:

Համայն այս Տիեզերքի ամբողջ էներգիան պատկանում է Աստծուն:

Աստված և միայն Աստված կարող է հաշված ակնթարթների ընթացքում փոխել աշխարհի ցանկացած իրադրություն:

Եվ միայն Աստծո կողմից ձեզ շնորհված ազատ կամքի Օրենքն է, որ խանգարում է դրական փոփոխություններ մտցնել ձեր աշխարհում: Ո՛չ Համբարձյալ Դասերը, ո՛չ Աստված Ինքը չեն

կարող ձեզ օգնել, եթե դուք երես եք թերքում օգնությունից և անգամ Աստծո բուն անունն եք մոռացել:

Կրկին ու կրկին ձեզ հիշեցնում եմ. ձեր ու ձեր հասարակության բոլոր պրոբլեմները կապված են միայն մի բանի հետ. ձեր քաղաքակրթությունն ինքն իրեն կտրել է Աստծուց:

Լրիվ ձեր հայեցողությանն է թողնված այնքան երջանկություն, Մեր և Աստծո էներգիա ստանալը, որքան կարող է կրել ձեր էությունը:

Միակ խոչընդոտը ձեր կարման է՝ այն բացասական էներգիան, որն ընկած է ձեր ու Աստծո միջև և կազմված է այն սխալներից, որոնք անցյալում գործել եք՝ համայն Տիեզերքի Օրենքը խախտելու հետևանքով:

Վերջին տասը տարիների ընթացքում մենք տվեցինք Ուսմունք, որը մանրամասն հանձնարարականներ է պարունակում առ այն, թե ինչպես հաղթահարեք անցյալի սխալները և ձեռք բերեք ներքին երջանկության ու խաղաղվածության վիճակ:

Սակայն հիմա վրա է հասել այն փուլը, երբ դուք պետք է ցուցադրեք ուսուցանվածից ձեր յուրացրածը:

Ձեր հոգևոր գործառնություններով զբաղվելու ընթացքում պետք է դրսևորեք նպատակամղվածություն և համառություն:

Պետք է ցուցադրեք, թե ինչպես եք յուրացրել մեր Ուղերձները, մեր տված թողության շնորհներն ու կարողությունները:

Այն ամենը, ինչ ներկա փուլում անհրաժեշտ է ձեր փրկության համար, տրված է և տրված է լրիվ չափով...

Եթե մեր Ուսմունքը յուրացնելը վեր է ձեր ուժերից, ապա անմիջականորեն դիմեք Աստծուն և Վեհապետներին: Օգնություն ու թողություն խնդրեք և կստանաք...

Իսկ եթե ձեռքներդ ծալած նստեք և հրաշքի սպասեք, ապա ինքներդ ձեզ մեծ վտանգի կենթարկեք: Զանգի ժամանակը կարճ է, և ժամանակը վերջինն է:

Ես հուսով եմ, որ իմ այս Ուղերձը կբոցավառի նրանց սրտերը, որոնց ներսում դեռ միտում է Աստվածայնության կայծը...

ԵՍ ԵՄ Վեհապետ Մորիան

Տեր Ծիվա

20 հունիսի, 2016 թ.

Ուսմունք Լույսի կիզակետի մասին

ԵՍ ԵՄ Ծիվան...

Ես եկել եմ ամառային արևադարձի այս օրով...

Ես պատրաստ եմ, հանուն ձեզ, հաղթահարել բոլոր դժվարություններն ու խոչընդոտները, որպեսզի դուք կարողանաք վայելել մեր հաղորդակցության երանությունը:

Այժմ ես կամենում եմ, որ դուք կենտրոնացնեք ձեր բոլոր ուժերը և ձեր հոգու ունակությունները:

Հեռացե՛ք առօրեական ունայն մտքերից:

Մարե՛ք քմայքների կրակը:

Հեռու՛ վանեք հակասական զգացմունքները:

Վայելե՛ք ներքին անդորրը, հավերժությունը՝ հավերժության շնչառությունը:

Ներշնչում...

Արտաշնչում...

Միացե՛ք համայն Տիեզերքի շնչառությանը:

Ա՛յ, հիմա կարող եմ ձեզ հետ կիսվել Վեհապետների Ուսմունքով:

Այսօրվա մեր գրույցի առարկան կլինի մի բան, որը շոշափել հնարավոր չէ, և ձեզնից շատերն էլ նույնիսկ ունակ չեն այն զգալու:

Ստիպված կլինեք ուղղակի հավատալ իմ խոսքին: Իսկ եթե հավատալ չեք ուզում, ապա իմաստ չունի, որ կարդաք կամ լսեք իմ Ուղերձը:

Այսպիսով, պետք է ասեմ, որ մեր Ուղերձներում, հատկապես մեր Դեսպանորդի գործունեության սկզբնական շրջանում, մենք հիշատակել ենք այնպիսի մի հասկացություն, ինչպիսին Լույսի կիզակետն է:

Դուք, երևի, հիշում եք, որ 2005 թվականին Լույսի կիզակետն Ամերիկայից տեղափոխվեց Ռուսաստան:

Իսկ ի՞նչ բան է Լույսի կիզակետը:

Ես այսօր ձեզ Ուսմունք կտամ հենց այդ թեմայի վերաբերյալ:

Լույսի կիզակետը Աստծո էներգիա փոխանցելու հնարավորությունն է: Այն տարածության ու ժամանակի իրական մի կետ է, որով վիթխարի քանակությամբ Աստծո էներգիա է փոխանցվում ֆիզիկական աշխարհին: Աստծո էներգիայի այդ քանակությունը միանգամայն բավարար է, որ աշխարհի ցանկացած երկրում իրականացվեն ցանկացած փոփոխություններ:

Սակայն, որպեսզի այդ փոփոխություններն իրականացվեն, պետք է բավարարվեն որոշակի պայմաններ:

Նախ ասենք, որ Լույսի կիզակետն անշարժ ամրացված չէ ֆիզիկական աշխարհում ինչ-որ տեղ: Այն ո՛չ քար է, ո՛չ էլ շինություն:

Լույսի կիզակետն ամրակցված է մեր դեպանորդի նուրբ մարմիններին: Դա ֆիզիկական աշխարհին Լույս փոխանցելու նրա ունակությունն է, որը նա ձեռք է բերել ինչպես նախկին մարմնավորումների, այնպես էլ ներկա կյանքի ընթացքում:

Նրա՝ Լույս փոխանցելու ունակությունը դեռ չի նշանակում, թե այդ Լույսը՝ Աստծո էներգիան, կհասնի թանձրաշխարհին: Ո՛չ, որպեսզի Աստծո էներգիան տեղ հասնի, անհրաժեշտ է, որ դրա համար առկա լինեն համայն տիեզերքի Բարձրագույն Խորհուրդների և Կարմայական Վարչության համապատասխան որոշումները:

Ներկայումս մեր Դեպանորդի նուրբ մարմիններին ամրակցված Լույսի կիզակետը փոխանցում է իր նախատեսված հզորության սոսկ 10 տոկոսի չափով:

Ինչու՞ է այդպես...

Պատճառն այն է, որ ֆիզիկական ոլորտում մեր պլանների իրականացման համար պայմաններ չկան:

Մենք երկար ենք խոսել այն հնարավորության մասին, որը 2005 թվականին ընձեռվեց Ռուսաստանին:

Սակայն անհրաժեշտ էր, որ ֆիզիկական ոլորտում այդ հնարավորության իրականացման համար համապատասխան պայմաններ ստեղծվեին:

Մենք բազմիցս խնդրեցինք հոգ տանել մեր դեպանորդի մասին, ինչը պահանջում էր նվիրյալ սրտերի, այնպիսի սրտերի առկայություն, որոնք պատրաստ են ինքնագոհողության գնալ՝ հանուն Լույսի, հանուն Վեհապետների պլանների իրականացման:

Ինչպե՞ս է աշխատում Լույսի կիզակետը. նախ պետք է գտնվեն նկրտում ունեցող, նվիրյալ սրտեր, որոնք մեր դեպանորդի նկատմամբ տաժած սիրո զգացման, երախտագիտության, հարգանքի ու ակնածանքի շնորհիվ ունակ են դառնում ստանալու Աստծո էներգիայի մի մասը, որը նախատեսված է մեր Լույսի կիզակետի միջոցով տարածել ֆիզիկական աշխարհում:

Եվ մեր էներգիայի նկատմամբ ընկալունակ հոգիների քանակի աճին զուգընթաց մենք սկսում ենք մեծացնել էներգիայի աղբյուրի հզորությունը, ինչի արդյունքում Լույսի կիզակետով բավարար քանակի էներգիա է ներմղվում ֆիզիկական աշխարհ:

Այդ ընթացքում մեզ նվիրված սաներից յուրաքանչյուրն ավելի ու ավելի շատ Աստծո էներգիա է ստանում՝ նման այն բանին, ինչպես ատոմակայանից դեպի դուրս տարածվող լարերով հոսանքը հասնում է բազմաթիվ սպառողների, աշխատեցնում մեխանիզմներն ու մեքենաները, լուսավորում տներն ու փողոցները:

Ճիշտ նույն կերպ՝ գործին պատրաստ սրտերի միջոցով, Աստծո էներգիայով հագեցվում է տարածությունը: Ֆիզիկական ոլորտի թրթռանքները փոխվում են, ինչի արդյունքում այն արատավոր բաները, որոնք այժմ տեղի են ունենում Երկրում, կանխարգելվում են տարածությունը հագեցրած Աստծո Լույսով: Ճիշտ այնպես, ինչպես հանցագործների համար համեմատաբար դժվար է լինում օրը ցերեկով մութ գործեր կատարելը:

Այնուհանդերձ տեղի չունեցավ այն, ինչ մենք ակնկալում էինք:

Մեր Ուսմունքը մարդկանց պահանջարկին չհամապատասխանեց:

Թեև մեր Ուսմունքը շատերն էին կարդում, սակայն չգտնվեցին նրանք, որոնց սրտերում լիարժեքորեն բռնկվեց Սպասավորության բոցը:

Կրկնեմ մեկ անգամ ևս՝ Սպասավորության բոցը բռնկվում է միայն այն սրտերում, որտեղ առկա են Վեհապետների և մեր դեպանորդի նկատմամբ նվիրվածություն, սեր, երախտագիտություն, հարգանք ու ակնածանք:

Անցած տասը տարիների ընթացքում մենք չկարողացանք բավարար քանակությամբ այդպիսի նվիրյալ սրտեր գտնել:

Ուստի և Լույսի կիզակետը չէր կարող գործել ամբողջ հզորությամբ, և մարդիկ բավարար քանակի էներգիա չստացան, որպեսզի բարեփոխեն ֆիզիկական ոլորտը:

Իսկ այն բանից հետո, երբ 2012 թ-ին հաշվեհարդարի փորձ եղավ մեր դեսպանորդի նկատմամբ, ես նրան հրամայեցի անհապաղ լքել Ռուսաստանի տարածքը:

Եվ այսպես, աստվածային հնարավորությունը ներկայումս չի գործում Ռուսաստանի տարածքում:

Լույսի կիզակետը դուրս է հանված Ռուսաստանից:

Մարդկային ինտելեկտը հակված է այս կամ այն երկրի զարթոնքը կամ որևէ երկրում տեղի ունեցած տնտեսական հրաշքը կապելու գիտության ու տեխնիկայի նվաճումների, կառավարման կամ էլ առաջավոր տեխնոլոգիաների ներդրման հետ:

Սակայն այդ ամենը սոսկ հետևանքն է այն բանի, որ այս կամ այն երկրի ժողովուրդը թույլ է տալիս, որ իր տարածքում Վեհապետների դեսպանորդ ներկա գտնվի:

Մեր ոչ բոլոր դեսպանորդներն են գործում հրապարակայրեն: Նրանցից շատերը գործում են կատարելապես անհայտ, բայց և կարողանում են Աստծո էներգիա ներարկել այնտեղ, որտեղ դա անհրաժեշտ է անել՝ ըստ Վեհապետների պլանների:

Իսկ եթե որևէ երկրում մեր դեսպանորդը հետապնդվում է, հալածվում և հարգանքի չի արժանանում, ապա այդ երկիրը կանգնում է անդունդի եզրին...

Սակայն ցանկացած պահի կարելի է փոխել նման իրավիճակը:

Բարեփոխումների համար անհրաժեշտ Աստծո էներգիան անսահմանափակ է:

Սակայն ֆիզիկական ոլորտի բոլոր բարեփոխումները կարող են տեղի ունենալ միայն մարդկանց սրտերով:

Ձեր ձեռքերով և ոտքերով:

Դրա համար է ասվում, որ ապագան կախված է յուրաքանչյուրից, տառացիորեն յուրաքանչյուրից, ով հիմա կարդում է այս տողերը:

Եվ քանի որ Ռուսաստանը առանցքային երկիր է համարվել, որից կախված է ամբողջ մոլորակի ապագան, ապա այդ երկրում բարեփոխումների բացակայությունը մոտակա ժամանակներում իր համապատասխան արձագանքը կգտնի ամբողջ մոլորակի համար:

Աստվածային հնարավորությունն այս անգամ չհաջողվեց իրացնել:

Կլինի՞ այլ հնարավորություն և ե՞րբ...

Իսկ դա ձեզնից յուրաքանչյուրից է կախված, պաշտելիներս:

ԵՄ ԵՄ Շիվան...

Տեր Շիվա

21 հունիսի, 2016 թ.

Հունձքի ժամանակը

ԵՄ ԵՄ Շիվան...

Ես նորից եկել եմ...

Որպեսզի մեր հաղորդակցությունը կայանա, խնդրում եմ, ձեր գիտակցությունը բերեք պատշաճ վիճակի:

Ես լիովին հաշվի եմ առնում, որ ձեր ժամանակներում քչերն են ունակ իրենց գիտակցությունը հասցնելու այնպիսի մակարդակի, որ կարողանան ընկալել Համբարձյալ Վեհապետների էներգիաները:

Այո՛, պաշտելիներս, ձեր աշխարհն այնքան է հեռացել Աստծո Աշխարհից, որ ամեն անգամվա հետ Մեզ համար ավելի ու ավելի դժվար է դառնում այն սրտերը գտնելը, որոնք ունակ են ընկալելու Մեր էներգիաները և, հետևաբար, որսալու Մեր տված Ուսմունքի իմաստը:

Ցավոք, այն, ինչ հիմա տեղի է ունենում ձեր աշխարհում, կարելի է համեմատել ոսկե հորթի համընդհանուր պաշտման հետ:

Այն ամենը, ինչ ձեզ շրջապատում է, հատկապես խոշոր քաղաքներում, սոսկ դեկորացիաներ են, որոնց միջոցով ձեզ մատուցվում է գերիշխանություն հաստատած միակ կրոնը, այն է՝ ոսկե հորթի պաշտամունքը:

Տասնյակ Ուղերձներով Մենք բազմաթիվ անգամ ասել ենք, որ ձեզ շրջապատող պատրանքը հնազանդորեն համալարվում է ձեր գիտակցության հետ: Բայց և ձեր գիտակցությունն է ձևավորվում այդ նույն շրջակա պատրանքով:

Ուստի եթե դուք մշտապես գտնվում եք խոշոր քաղաքում, ապա չեք կարող գերծ մնալ շրջակա պատրանքի թրթռանքից: Դուք հնազանդորեն ենթարկվում եք այն կենսակերպին ու կարծրատիպերին, որոնք առկա են ձեր շրջապատում:

Մեծ հավատ և կամքի ուժ պետք է ունենալ, որ դիմակայեք այն ազդեցությանը, որով Երկրում ներկայումս ձևավորված քաղաքակրթությունն ազդում է ողջ աշխարհի և հատկապես խոշոր քաղաքների բնակիչների վրա:

Եթե մշտապես գտնվում եք այնպիսի միջավայրում, որում աններդաշնակ երաժշտություն է հնչում, անընդհատ ձեր աչքերի դեմ սխալ կերպեր են թրթռում, մշտապես բորբոքվում են մարմինների ու իրեղենի տիրանալու ցանկություններ, ապա ձեր գիտակցությունը մշտապես գտնվում է այնպիսի մակարդակում, որ Աստծուն լսել հնարավոր չէ: Թրթռանքի այդ մակարդակում հնարավոր չէ լավը վատից զանազանել:

Դուք գտնվում եք զանգվածային գիտակցության ճահճատիղմի մեջ: Եվ եթե կարճ ժամանակով եք դրանում հայտնվել, ապա դեռևս հնարավոր է դուրս պրծնել, դուրս ցատկել ճահճից: Բայց եթե արդեն մինչև կոկորդը խրված եք, ապա գործնականում փրկության ոչ մի հույս չկա:

Ոսկե հորթի պաշտամունքի միլիոնավոր զոհեր տարեցտարի լրացնում են պատմության աղբակույտերը:

Եթե լրջորեն մտորենք, ապա սա մարդկության պատմության ամենախոշոր արհավիրքն է:

Բայց չէ՞ որ Մենք նախագգուշացրել ու Մեր հանձնարարականները տվել ենք դեռևս 10 տարի առաջ, երբ դուք դեռ նոր էիք ոտք դնում ճահճատիղմի մեջ:

Ձեզ ազատ կամք է տրված: Եվ ձեր ազատ կամքով դուք կատարել եք ձեր ընտրությունը: Իսկ այլընտրանքը պարզ էր ու ակնհայտ. կա՛մ Աստծուն եք երկրպագում, կա՛մ ոսկե հորթին:

Կա՛մ ընտրում եք հավերժական Կյանքը, կա՛մ ձեր անհատականությունը զոհելու գնով ընտրում եք անցողիկ աշխարհը:

Այն բանին զուգընթաց, որ ձեր հոգում զրկում եք անհրաժեշտ աստվածային սննդից և շարունակում նրան կերակրել այն փոխնակներով, որոնք օրվա մեջ 24 ժամ հեռուստատեսությամբ, համացանցով, զվարճանքներով ու հանույքներով հանկատարորեն ձեզ մատուցում են ոսկե հորթի պաշտամունքի քրմերը, ձեր հոգին աստիճանաբար մահանում է:

Եվ վրա է հասնում այն պահը, որ դուք այլևս հոգի չեք ունենում: Դուք վերածվում եք ապագա չունեցող կենսառոբոտի:

Ամեն ինչ, պաշտելիներ՝ս, որոշվում է ձեր կատարած ընտրություններով:

Եվ եթե ընտրում եք պատրանքային աշխարհը (ձեր ազատ կամքով, իհարկե), ապա հենց այդ աշխարհում էլ մնում եք:

Եթե հավատում եք, թե ընդամենը մի կյանք եք ապրում, ուստի և ձգտում եք այդ կյանքում ստանալ բոլոր հնարավոր հանույքները, ապա դրանք ստանում եք բուն Կյանքի փոխարեն:

Դուք ձեր հոգին ծախում եք սատանային: Հանուն արդուզարդի ու հանույքների՝ ինքներդ ձեզ զրկում եք Կյանքը շարունակելու հնարավորությունից:

Խոշոր քաղաքում բնակվող հազարից մեկը հազիվ թե գտնվի, որ ունակ է իր Էվոյուցիան շարունակելու որպես Աստծո անձնավորում:

Մնացած բոլորը հոգևոր իմաստով կա՛մ արդեն մեռած են, կա՛մ անհուսալի հիվանդ են, և իրենց հոգին գտնվում է մերձիմահ վիճակում:

Ահա ոսկե հորթի հենց այդ քաղցր, ուրախ ու անհոգ պաշտամունքն էլ կարճ ժամանակում իր զոհասեղանին հավաքել է միլիոնավոր զոհեր:

Ի՛նչ արած, ամեն դեպքում Մենք մեր կողմից ամեն ինչ արեցինք, որ մարդկային քաղաքակրթությանը մատնացույց անենք Էվոյուցիոն զարգացման հնարավոր այլ ուղի:

Սակայն ժամանակն անգիջում գտնվեց, և վրա հասավ վերջնական ընտրություն կատարելու պահը:

Յուրաքանչյուրն ինքն է ընտրում՝ մահ կամ կյանք:

Բնությունն ստիպված է ազատվել այն անհատներից, որոնք ունակ չեն հետագա Էվոյուցիայի:

Հունձքի ժամանակն է արդեն: Հունձքն ընթացքի մեջ է:

Հատիկները ջոկվում են որոմից:

Էվոյուցիայի պատրաստ ամեն ինչը խնամքով հավաքվում է Աստծո շտեմարանում:

Իսկ այն ամենը, ինչ ենթակա չէ հետագա Էվոյուցիայի, լցվում է պատմության աղբանոցը:

Ուստի Ես ահա օգտագործեցի այս վերջին հնարավորությունը, որ զոհն մի քանի հոգի կարողանան լսել Ինձ և վերադառնալ հավերժական Կյանքին:

Անխտիր բոլոր հանձնարարականները Մենք տվել ենք Մեր Դեսպանորդի միջոցով փոխանցված Ուղերձներով:

Միայն մեռածը չէր լսի դրանք:

ԵՄ ԵՄ Շիվան...